

846

ARMENIAN LIBRARY
401 SHAWMUT AVE.

APR 20 1924

JUN 13 1926

OCT 16 1927

OCT 23 1927

MAR 23 1930

FEB 26 1933

SEP 3 1937

DEC 23 1945

Ampt

84
\$-68

No = 535



837 Washington St.,
ՊՈՍԹՈՆ.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

178
112.299

ԿԱՄԻԼ ՖԼԱՄՄԱՐԻՕՆ

ՈՒՐԱՆԻԱ

URANIE

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՎԷՊ

Թարգմ. ֆրանսիականից

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագառիւղ Մը. Մարտիրոսեանցի,
Միքայէլեան փողոց, № 81.
1900

ԿԱՄԻԼԼ ՖԼԱՄԱՐԻՕՆ

36

ՈՒՐԱՆԻԱ

U R A N I E

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՎԷՊ

Թարգմ. ֆրանսիականից

Հ. ԱՌԱԷԵԼԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագածիս Մշ. Մարտիրոսեանցի,
Միքայելեան փողոց, № 81.
1900

846-62

Дозволено Цензурою, Тифлисе, 13-го Ноября 1898 г.



642-2013



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿԵՔԻ ՄԱՐԾԱՆ



I

Ես տասն և եօթն տարեկան էի: Նա
կոչվում էր Ուրանիա:

Գուցէ դուք կարծում էք, թէ Ուրա-
նիան մի խարտեաչ նորաորի կոյս էր,
կապոյտ աչերով, գարնան մի երազ, Ե-
ւայի մի անմեղ, բայց հետաքրքիր գուտոր:
Ոչ. նա, պարզապէս, ինն Մուսաներից մինն
էր. նա Աստղագիտութեան նախագահ-

Մուսան էր, որի երկնային նայուածքը ողեւորում և զեկաւարում էր արեգեւական շրջանների համախմբութիւնը. նա այն հրեշտակային ոգին էր, որ սաւառնում է երկրային մարմինների վրա. նա չուներ ոչ այն մարմինը, որ յուզում է մեղ, ոչ այն սիրտը, որի բաբախումները հաղորդում են մեզ տարածութեան մէջ, ոչ ևս մարդկային կեանքի գաղջ տաքութիւնը. սակայն նա, այնուամենայնիւ, գոյութիւն ունէր մի տեսակ իդէալական, գերազոյն և միշտ մաքուր աշխարհում: Եւ չնայելով դրան, նա իր ձևով այնքան մարդկային էր, որ կարող էր խորին և ազդու տղաւորութիւն գործել պատանեկական հոգու վրա, ծնեցնելով այդ հոգու մէջ մի անհուն, անեղբ, հիացման և նոյնիսկ սիրոյ զգացում:

Երիտասարդը, որի ձեռքը դեռ չէ դիպել Դրախտի ծառի անմահ պտղին, նա, որի շրթունքներն դեռ կոյս են մնացել, որի սիրտը դեռ չէ խօսել, որի զգացումները զարթնում են նոր ցանկութիւնների անորոշ մշուշի մէջ, նախադգում է իր առանձնութեան ժամերում և նոյն իսկ

այն մտաւոր աշխատանքի ժամանակ, որով ժամանակակից դաստիարակութիւնը ծանրաբեռնում է նրա ուղեղը, նախադգում է այն խորանը, որին շուտով պէտք է երկրպագութիւն տալ և առաջուց մարմնացնում է այլ և այլ ձեւերով այն չքնաղ էակը, որ ծփում է իր երազների մթնոլորտում: Նա կամենում է, նա ցանկանում է հասնել այդ անծանօթ էակին, բայց դեռ չէ համարձակում և գուցէ բոլորովին չը համարձակի իր հիացման անմեղութեան մէջ, եթէ մի պատահական դէպք նրան օգնութեան չը հասնի:

Այդպիսի ժամանակ ամեն մի բան, որ խօսում է դեռ մեղ անծանօթ հմայքի մասին, կարող է մեզ հիացնել, գրաւել, մոլորեցնել: Մի պաղ փորագրութիւն, որ ներկայացնում է մեզ մի անարատ, մաքուր դէմքի ուրուագիծ, որ և է մի նկար, նոյնիսկ մի հին քանդակագործութիւն, մի նոր շարժումն է առաջ բերում. այդ ժամանակ մեր սրտերում արիւնը վաղ է տալիս, կամ կանգ է առնում. մի նոր միտք փայլակի նման անցնում է մեր շառագունած ճակատով և ծփալով մնում է գիտակցութեան

խորքի մէջ: Այդ է տենչանքների սկիզբն, այդ է կեանքի նախերգանքը, այդ է մի գեղեցիկ ամառնային օրուայ արշալոյսը, որ աւետում է արեգակի ծագումը: Գալով ինձ, իմ առաջին սիրոյ, իմ պատանեկական առաջին կրքի . . . չեմ ասում առարկան, այլ դրդիչ պատճառը եղաւ մի . . . ժամացոյց: Որքան էլ այդ տարօրինակ թռի, բայց այդպէս է . . . :

Ամեն օր կէս օրից յետոյ, ժամը 2-ից մինչև 4-ը, ես ստիպուած էի ձանձրալի հաշիւներով դադուել. սէտք էր ուղղել աստղերի կամ մոլորակների մասին նախընթաց գիշերն արած գիտողութիւններս: Այդ հաշիւները որքան պարզ են, նոյնքան և տաղտկալի. անում էի մեքենաբար, պատւաստ ցուցակների օգնութեամբ և բոլորովին ուրիշ բանի մասին մտածելով:

Հռչակաւոր Լը-Վէրիէն այդ ժամանակ Պարիզի գիտաբանի վերատեսուէն էր: 2ը լինելով ամենեւին արուեստագէտ, նա այնու ամենայնիւ իր աշխատութեան կարիւնեաւում կախ տուած ունէր մի ոսկեզօծ բրօնզեայ ժամացոյց, որ շատ լաւ տեսակիցն էր և առաջին կայսրութեան ժամա-

նակի գործ: Այդ ժամացոյցի պատուանդանը մի քանդակագործութիւն էր, որ ներկայացնում էր Աստղագիտութեան ծնունդը Եգիպտոսի դաշտերում: Մի միապաղաղ երկրագունդ, զողիական շրջանակով գօտեկապուած, պատուանդան ունենալով երկու սֆինքս, գրուած էր ժամացոյցի շրջանակի վրա: Երկու կողմը դարձաբուն էին եգիպտական աստուածներ, բայց այդ գեղարուեստական գործի գեղեցկութիւնը կաղմում էր մանաւանդ Ուրանիայի մի հրաշալի, չքեղ, վեհապանծ արձանիկը:

Երկնային Մուսան ոտքի էր կանգնած: Աջ ձեռքով նա չափում էր կոմպասի օգնութեամբ աստեղադարդ կամարի աստիճանները. նրա ձախ ձեռքը խոնարհուած մի փոքր աստղագիտական ակնոցիկ էր կրում: Դեռ այդպիսի գեղանի դէմք չէի տեսած: Երեսի կողմից լուսաւորուած լինելով, այդ մարդը դէմքը լուջ և դաժան էր երևում: Եթէ լոյսը գալիս էր շեղակի, նա աւելի մտախոհ էր դառնում: Բայց եթէ լոյսը գալիս էր վերեից կամ կողքից, այդ կախարդիչ դէմքը լուսաւորուում էր մի խորհրդաւոր ժպիտով, նրա նայուածքը զրգ-

ուելի էր դառնում և նրա պայծառութիւնը փոխվում էր յանկարծ և ստանում ուրախութեան և երջանկութեան արտայայտութիւն: Այդ մի տեսակ ներքին երգ էր, մի բանաստեղծական մելոդիա: Արտայայտութեան այդ փոփոխութիւնները, յերաւի, կենդանութիւն էին տալիս արձանին: Մուսայ թէ գիցուհի՝ նա գեղեցիկ էր, նա հրաշալի էր, նա սքանչելի էր:

Ամեն անգամ, որ հռչակաւոր մատենադարան կանչում էր ինձ, ամենից շատ ինձ վրա տպաւորութիւն գործողը նրա տիեզերական փառքը չէր: Ես մոռանում էի լողարիֆմի ֆորմուլաները և մինչև անգամ նեպաոն մոլորակի անմահ գիւտը, հիանալով արձանի վրա: Այդ արտայայտիչ դէմքը գրաւում էր իմ հայեացքը և կաշկանդում միտքս: Ես կանգնում էի դէմ յանդիման իմ Ուրանիային, գիտում էի նրան, սքանչանում էի նրա ձևերի գեղեցկութիւնով և մեկնում էի գոհ, գուցէ և երջանիկ: Նա հիացնում էր ինձ, բայց և մի ախուր գագայումն էր ներշնչում:

Մի երեկոյ—այն երեկոն երբ ես այն գիւտն արի, թէ դէմքը հրաշալի փոփոխու-

թիւնների է կնթարկվում լուսաւորութեան համեմատ—ես գտայ կարիներտի դուռը լայն բացուած. մի լապտեր դրած էր վառարանի վրա և լուսաւորում էր Մուսան այնպէս, որ նա ամենաշլացուցիչ կերպարանքներից մինն էր դարձել: Ձեղակի լոյսը գլոււմ էր հանդարտութեամբ ճակատը, չրթունքը, այտերը և պարանոցը: Արտայայտութիւնը սքանչելի էր: Ես մօտեցայ և անշարժ դիտեցի նրան: Յետոյ գլխումս միտք ծնեց տեղափոխել լամպան և լոյսը խաղացնել տալ ուսերի, թեւերի, վզի և մազերի վրա:

Արձանը կարծես կենդանացել էր, մտածում էր, զարթնում և ժպտում: Օտարոտի զգացմամբ համակուած էի. այլ ես սքանչացող չէի, այլ սիրահար: Ես շատ կը զարմանայի այն ժամանակ, եթէ մինը ինձ հաւատացնէր թէ այդ իսկական սէր չէր և թէ այդ պլատոնականութիւնը մի երեխայական անուրջ էր: Վերատեսուել վրա հասաւ. այնքան էլ կարծես զարմացած չէր, ինչքան ես երկնչում էի. միայն խորին արհամարհական կերպով ասաց. «չը լինի թէ բանաստեղծ էք»:

Ես կարող էի նրան պատասխանել Կեպ-

լէրի, Գալիլէյի, Ալամրէրի, երկու չէրէլ-ների օրինակներով, որոնք միաժամանակ և բանաստեղծ էին և աստղագէտ. ըսյց չ'արի, որովհետեւ, անկասկած, մեր մեծ երկրաշափը Դանտի, Արիօտի, չիւգօյի հրաշալի պօէմաների վրա նոյն արհամարհական աչքով էր նայում, ինչպէս Նոր-Երկրի մի շուն կարող է նայել իր բերանին մօտեցրած մի բաժակ զինու վրա:

Եթէ իմանայիր, որքան հալածում էր ինձ Ուրանիայի այդ չքնաղ գէմքը: Նրա ժպիտն այնքան շնորհալի էր! Բացի դրանից, նրա բրօնզեայ աշերը երբեմն ճշմարիտ նայուածք ունէին: Միայն խօսելն էր պակաս: Արդ, յաջորդ գիշերը, հազիւ քունս տարել էր, երբ ես նորից տեսայ իմ առաջ նրան, վեհ գիցուհուն և այս անգամ նա խօսեց ինձ հետ:

Ոհ, նա, յիրաւի, կենդանի էր: Եւ որպիսի գեղեցիկ բերան. ամեն մի խօսքը կարելի էր համբուրել... «Եկ, ասաց ինձ, եկ երկինքը, բարձրը, հեռու երկրից. դու կը տիրապետես այս ստորին աշխարհին, դու կը գիտես անհուն տիեզերքը իր մեծութեան մէջ: Տես, ահա»:

II

Այդ ժամանակ ես տեսայ Երկիրը, որ գլորվում էր անսահմանութեան անդնդային խորութեան մէջ. գիտաբանի գմբէթները, լուսաւորուած Պարիզը արագաբար իջնում էին. ինձ անշարժ զգալով հանդերձ, ես նոյն տպաւորութիւնն զգացի, ինչ որ մարդ կարող է զգալ օդապարիկում նստած, երբ բարձրանալով օդի մէջ՝

տեսնում է Երկրի իջնելը: Ես բարձրանում էի, երկար ժամանակ բարձրանում էի, տարուելով մի մոզական ճախրով դէպի անմատչելի դենիար: Ուրանիան իմ մօտ էր, միայն մի քիչ աւելի բարձր. նա քաղցրութեամբ նայում էր ինձ և ցոյց էր տալիս ներքևի թաղաւորութիւնները: Օրը ծագել էր: Ես ճանաչեցի Փրանսիան, Հուենուրը, Գերմանիան, Աւստրիան, Իտալիան, Միջերկրականը, Սպանիան, Ատլանտեան Ովկիանոսը, Անգլիան: Բայց այդ բոլոր գաճաճային աշխարհադրութիւնը արագ անհետանում էր: Զուտով երկրագունդը վերածուեց այն մեծութեան, որ ունի լուսինը իր վերջին քառորդում. մի քիչ յետոյ փոքրիկ լիալուսնի մեծութիւնն ստացաւ:

«Ահա, ասաց ինձ Ուրանիան, այդ հռչակաւոր երկրագունդը, որի վրա յուզւում են այնքան կրքեր և որն իր նեղ շրջանի մէջ պարունակում է այնքան միլիոն էակների մտածմունքը, որոնց տեսութիւնը չէ անցնում երբէք այդ նեղ շրջանի միւս կողմը: Նայիր թէ ինչպէս նրա ակնյայտնի մեծութիւնը նուազում է,

որչափ մեր հորիզոնը լայնանում է: Մենք արդէն Եւրոպան չենք ջոկում Ասիայից: Ահա Վանադան և Հիւսիսային-Ամերիկան: Որքան չնչին է այդ ամենը»:

Լուսնի մօտից անցնելիս, ես նշմարեցի մեր արբանեակի լեռնոտ տեսարանները, սարերի գագաթները, որոնք շողում էին լոյսով, խոր հովիտները՝ ծածկուած ստուերով. ևս կը ցանկայի կանգ առնել այնտեղ, մեր դրացի բնակութիւնն աւելի մօտից հետազօտելու համար. սակայն, Ուրանիան, արհամարհելով մինչև անգամ մի սոսկ նայուածք ձգել նրա վրա, քաշ էր տալիս ինձ արագ թռիչքով դէպի ստողային աշխարհները:

Զարունակ բարձրանում էինք. Երկիրը, նսեմանալով հեռահեռէ, որչափ մենք նրանից հեռանում էինք, ի վերջոյ մի հասարակ աստղի երևոյթը ստացաւ. նա փայլում էր արեգակային լուսաւորութեամբ դատարկ և սև անհունութեան ծոցի մէջ: Մենք մեր երեսը դարձրել էինք դէպի Արեգակը, որ պայծառ փայլում էր տարածութեան մէջ առանց լուսաւորելու նրան և մենք տեսնում էինք նրա հեռ միասին

և աստղերը, և մոլորակները, որոնք չէին ջնջվում արեգակի լոյսից, որովհետև սա այլևս չէր լուսավորում աներևոյթ եթերը: Հրեշտակային աստուածունհին ցոյց տուեց ինձ Փայլածուն՝ Արեգակի դրացութեան մէջ, Արուսեակը՝ որ փայլում էր ներհակ կողմից, Երկիրը՝ հաւասար Արուսեակին իր երևոյթով և փայլով, Մարսը կամ Հրատը, որի միջօրէականները և ջրանցքները ճանաչեցի, Լուսնոյթազը իր չորս ահագին լուսիններով, Երեակը, Ուրանիօնը...

«Քոյր այս աշխարհները, ասաց ինձ Ուրանիան, որոնք թաւալվում են արագութեամբ Արեգակի շուրջը, պահում են դատարկութեան մէջ նրա ձգողական գործութեամբ: Այդ մի ներդաշնակ խումբ է, որ թաւալվում է կենդրոնի շուրջը: Երկիրը միայն մի ծփուն կղզի է, արեգակային այս հայրենիքի մի գիւղիկը և այդ արեգակային կայսրութիւնը ինքն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի գաւառ՝ աստղային անհունութեան ծոցում»:

Մենք բարձրանում էինք միշտ: Արեգակը և իր համակարգութիւնը արագութեամբ հեռանում էին: Երկիրը միայն մի

կէտ էր ներկայացնում: Նոյն իսկ Լուսնոյթազը, այդ հսկայական աշխարհը, փոքրացած երևաց, ինչպէս Հրատը և Արուսեակը. նա ստացաւ մի փոքրիկ կէտի երևոյթ, որ հազիւ մի քիչ խոշոր էր երկրային կէտից:

Մենք անցանք Երեակի մօտից, որ զօտեկապում էր իր հսկայական մանեակներով և որի վկայութիւնը միայն բաւական է ապացուցանելու արեգակի մէջ տիրող անհուն և աներեւակայելի բազմազանութիւնը: Երեակն ինքը միայնակ մի ճշմարիտ համակարգութիւն է, հիւլէներից կազմուած իր մանեակներով, որոնք թաւալվում են սարսափելի արագութեամբ և իր ութ արբանեակներով, որոնք ընկերանում են նրան իւրեւ մի երկնային պահակախումբ:

Ինչքան որ բարձրանում էինք, այնքան մեր արեգակը նուազում էր մեծութեամբ: Չուտով նա աստղի աստիճանին հասաւ, յետոյ կորցրեց բոլոր վեհափառութիւնը և աստղային ժողովրդի վրա ունեցած բոլոր գերազանցութիւնը և միւս աստղների պէս հազիւ փայլող մի աստղ դարձաւ: Ես զի-

642 - 2013



տում էի այդ աստղադարձ անհուն տարածութիւնը, որի ծոցում մենք բարձրանում էինք շարունակ և ես աշխատում էի ճանաչել աստղատունները, բայց նրանք զգալի կերպով փոխում էին իրանց ձևերը, առաջ եկող պերսպէկտիվի տարրերութեան պատճառով: Կաթնածիրը (յարդգողը) գլորուել էր մեր ճախրի ներքև իրքև անեղբուրթեան խորքի մէջ թափուող արեգակների հեղեղի մի ջրվէժ. այն աստղերը, որոնց մօտենում էինք, նրանցից լոյսը թափվում էր ֆանտաստիկական ճաճանչներով, և նրանք արձակում էին ոսկեայ և արծաթեայ ցոլացումներ, իբրև լոյսի գետեր, կուրացնելով մեզ ճաճանշաւոր փայլով: Ինձ թուաց թէ մեր արեգակը, որ անզգայարար մի բոլորովին փոքր աստղ էր դարձել, միանում է Յուլ աստղատան հետ, մինչդեռ մի նոր լոյս, աղօտ, կապտաւուն և բաւական օտարոտի գալիս էր այն կողմից՝ դէպի ուր տանում էր ինձ Ուրանիան: Այդ փայլը ոչինչ երկըրային բան չունէր և նրա նման ես ոչինչ չէի տեսել երկրի կողմերում, ոչ վերջալուսի փոփոխական ցոլքերի մէջ փո-

թորիկից յետոյ, ոչ առաւօտեան մթնշաղի ժամանակ, ոչ ես պայծառ լուսնի խաղաղ և անդորր ժամերին՝ ծովի ջինջ հայելու մէջ: Այս վերջին երևոյթը գուցէ արդիւնք էր այն տեսարանի, որին մօտենում էի ես, բայց այդ տարօրինակ չքնաղ լոյսը գունաւոր էր. նա հեազհետէ, իրօք, դառնում էր կապոյտ և կապոյտ, դառնում էր ոչ թէ երկնային դոյնի ցոլացումից, կամ ոչ թէ այն կօնտրաստի պատճառով, որը, օրինակ, նկատվում է ելեկտրական լոյսը գաղի լոյսի հետ համեմատելիս, ոչ. նա կապոյտ էր այնպէս, որ կարծես ինքն Արեգակը կապոյտ լինէր:

Որքան եղաւ ապշութիւնս, երբ ես նկատեցի, որ արդարև, մօտենում ենք մի բացարձակ կապոյտ արեգակի, որի փայլող սկաւառակը կարծես կարուած լինէր մեր երկրային երկնքի ամենալաւ մասից և, որը, լուսաճաճանշ, աչքի էր ընկնում այստեղի աստղադարձ երկնքի բոլորովին սև ֆօնի վրա: Այդ շափիղեայ արեգակը մոլորակների մի համակարգութեան կենդրոնն էր, որոնք լուսաւորվում էին նրա լոյսով: Մենք անցնում էինք այդ մոլո-

բակներից մինի մօտով: Կապոյտ արեգակը նկատելի կերպով մեծանում էր, բայց տարօրինակ նորութիւն! այն լոյսը, որով նա լուսաւորում է այդ մոլորակը, մի օրոշ կողմից բաղկացած էր կանաչ գունաւորութիւնից: Նորից նայեցի երկնքին և նկատեցի մի երկրորդ արեգակ, որի գոյնը գեղեցիկ կանաչ գմբուխտի էր: Աչքերիս չէի հաւատում:

«Մենք տնցնում ենք, ասաց ինձ Ուրանիան, Գամմա Անդրոմէդեան արեգակային համակարգութիւնը, որի միայն մի մասնն էս տեսնում դու, որովհետեւ, իսկապէս նա բաղկացած է ոչ թէ այս երկու, այլ երեք արեգակներից. կապոյտ, կանաչ և դեղին—նարնջագոյն: Կապոյտ արեգակը, որ ամենափոքրն է, թաւալվում է կանաչ արեգակի շուրջը և սա հոլովում է իր ընկերների հետ նարնջագոյն մեծ արեգակի շուրջը, որ մի վայրկեանից յետոյ կը տեսնես»:

Եւ, ճշմարիտ, ես նշմարեցի մի երրորդ արեգակ, գունաւորուած այն վառ-վառն փայլով, որի հակադրութիւնը իր երկու ընկերակիցների հետ արտադրում

էր այդ նորանշան լուսաւորութիւնը: Ես լաւ ճանաչում էի այդ աստղային հետաքրքրաշարժ համակարգութիւնը, քանի որ շատ անգամ զննել էի նրան հեռագիտակով, բայց նրա այդ իսկական պայծառութեան մասին գաղափար չունէի: Ո՛րպիսի հրեղէն հնոց, ճրպիսի շլացում: Գոյների ճրպիսի աշխուժութիւն կապոյտ լոյսի այդ տարօրինակ աղբւրի մէջ, երկրորդ արեգակի այդ կանաչ լուսաւորութեան և երրորդի այդ կարմիր-ոսկեայ ճաճանչի մէջ:

Բայց ինչպէս ասացի, մենք մօտեցել էինք չափիղեայ արեգակի համակարգութեան պատկանող աշխարհներից մինին: Ամեն ինչ կապուտակ էր, տեսարանները, ջրերը, բոյսերը, ժայռերը, որոնք թեթեւ կերպով կանաչի էին տալիս երկրորդ արեգակով լուսաւորուած կողմից և օրոնց հաղիւ հասնում էին հեռու հորիզոնում ծագող արեգակի ճառագայթները: Որչափ թափանցում էինք այդ աշխարհի մթնոլորտի մէջ, մի քաղցր և մեղմ երաժշտութիւն բարձրանում էր օդում, իբրեւ մի բուրմունք, իբրեւ մի երազ: Երբէք այդ տե-

սակ բան չէի լսել: Միքաղցր մեղօգիա, խորին, հեռաւոր, կարծես բոլորում էր տաւիղների և քնարների մի ամբողջ խմբից: Այդ մի բնախոր երգեցողութիւն էր, որ առաջին վայրկեանից դմայլեցնում էր և լցնում էր մարդու հոգին բերկրանքով: Ինձ թւում էր, որ ես յաւիտեան կմնայի այնտեղ լսելու համար. չէի համարձակում իմ առաջնորդիս մի խօսք ուղղել, վախեանալով որ չը լինի այդ երգի ամենափոքր նօտան ևս կօրցնեմ: Ուրանիան այդ նկատեց: Նա տարածեց ձեռքը գէպի մի լիճ և մատով ցոյց տուեց ինձ թեաւոր էակների մի խումբ, որոնք ստառոնում էին կապուտակ ջրերի վրա:

Այդ էակները երկրային-մարդկային ձև չունէին: Նրանք յայտնապէս օդի մէջ ապրելու համար կողմակերպուած էակներ էին: Նրանք կարծես լոյսից էին հիւսուած: Հեռուից, ես նրանց ճալուռների տեղ ընդունեցի. նրանք կայտառ և շքեղ ձև ունէին, թեքերը լայն, առոյգ և թեթեւ: Բայց աւելի մօտիկից դնելով, ես տեսայ, որ նրանց հասակը մերկիւնից պակաս չէր և նրանց նայուածքի արտայայտութիւնից

իմացայ, որ նրանք կենդանիներ չեն: Նրանց գլուխները նոյնպէս նման էին ճալուռներին և այդ օդային էակների նման որունքներ չունէին: Իմ լսած հիանալի երաժշտութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ նրանց թռչիւքի ձայնը: Նրանք բազմաթիւ էին, գուցէ շատ հազարաւորներ:

Սարերի գագաթների վրա տեսնվում էին բոյսեր, որոնք ոչ ծառեր էին, ոչ ծաղիկներ և որոնց վտիտ ցօղունները ահագին բարձրութեան էին հասնում և այդ ճիւղաւորուած ցօղունները կրում էին, կարծես բազկատարած, լայն բաժակներ՝ զամբիւղների ձևով: Այդ բոյսերը շնչաւոր էին. գոնէ իբրեւ մեր պատկառուկ (միմոզա) բոյսերը նրանք շարժումներով արտայայտում էին իրանց ներքին տպաւորութիւնները: Այդ պուրակները կատարեալ բուսական քաղաքներ էին կազմում: Այդ աշխարհի բնակիչները բացի այդ պուրակներից՝ ուրիշ բնակարան չունէին և այդ հոտաւէտ բոյսերի ծոցում նրանք հանգըստանում էին, երբ չէին ծփում օդի մէջ:

«Այս աշխարհը քեզ ֆանտաստիկական է երևում, ասաց Ուրանիան, և գու քեզ

հարց ես տալիս, թէ այդ էակները ինչ իդէաներ, ինչ բարք, ինչ պատմութիւն, ինչ տեսակ արուեստ, գրականութիւն և գիտութիւն կարող են ունենալ: Այդ բոլոր հարցերին պատասխանելը երկար կը լինէր: Միայն իմացիր, որ նրանց աչքերը ձեր ամենալաւ հեռագրատակներից գերազանց են, որ նրանց ջղային սիստեման երեւում է, երբ մի գիսաւոր աստղ է անցնում և ելեքարական այնպիսի իրողութիւններ է երևան հանում, որ երկրի վրայ դուք երբէք չէք կարող իմանալ: Այն օրգանները, որ տեսնում ես թե երից վերձեռքի տեղ են ծառայում, աւելի ճարպիկ կերպով քան ձերը: Տպագրութեան փոխարէն նրանք ունեն գէպքերի ուղղակի լուսանկարութիւնը և մինչև անգամ խօսքերի ֆօնէտիկական (ձայնական) որոշումը (fixation): Նրանք զրադուած են գիտնական հետազօտութիւններով, այսինքն բնութեան ուսումնասիրութեամբ: Երկրային կեանքը լափող երեք կիրքերը, այն է՝ հարստութեան ազատ ցանկութիւնը, քաղաքական փառասիրութիւնը և սէնը, նրանց անժանօթ են, որովհետեւ ասպ-

րելու համար ոչնչի պէտք չունեն, որովհետեւ միջազգային բաժանումը կայ և բացի մի վարչական խորհրդից, ուրիշ տեսակ կառավարութիւն չը կայ և, վերջապէս, որովհետեւ նրանք երկսեռ են (androgyn):

— Երկսեռ, հարցրի ես: Եւ վստահացայ աւելացնել. մի՞թէ այդ լաւ է:

— Այդ «-բէշ բա» է: Բայց գոնէ մարդկութեան մէջ տիրապետող շարիքների փոքրագոյնն է այդ:

«Պէտք է, շարունակեց նա, բոլորովին թօթափել երկրային գաղափարները և զգացումները, որպէսզի ընդունակ լինես ըմբռնել այն անսահման բազմակերպութիւնը, որ ստեղծագործութեան զանազան ձևերը ցոյց են տալիս: Խնչպէս ձեր մոլորակի վրա տեսականները հասակից հասակ են անցել, երկրաբանական ամենաառաջին տարեշրջանների տարօրինակ էակներից սկսած մինչև մարդկութեան երևալը, ինչպէս և այսօր երկրի կենդանական և բուսական ազգաբնակչութիւնը բաղկացած է զանազան տեսակներից, սկսած մարդից մինչև բուսոտը, թռչունից մինչև ձուկը, փղից մինչև թիթեռնիկը,

նոյնպէս և աւելի մի ընդարձակ տարածութեան վրա, երկնքի անհամար աշխարհներն մէջ, բնութեան զօրութիւնները ծընունդ են տուել էակների և իրերի մի անսահման բազմակերպութեան: Ամեն մի աշխարհում էակների ձեր հետեանք է իւրաքանչիւր աշխարհագրիկ յատուկ տարերքների, այն է նիւթի, տարութեան, լոյսի, ելեքտրականութեան, խտութեան, ծանրութեան:

«Ձեռքը, օրգանները, զգայարանների թիւը—դուք միայն հինգ հատ զգայարանք ունէք և շատ ողորմելի—կախուած են իւրաքանչիւր շրջանի կենդանական պայմաններից: Կեանքը Երկրի վրա՝ երկրային է, չրատի վրա—հրատային, Երեւելի վրա—երևակային, Նեպտունի վրա—նեպտունային, այսինքն իւրաքանչիւր բնականութեան յարմարեցրած, կամ աւելի լաւ է սեղ, իւրաքանչիւր աշխարհ արտադրել և զարգացրել է այդ կեանքը իր օրգանական վիճակի համաձայն և հետեւելով այն նախնական օրէնքին, որին հնազանդում է ամբողջ բնութիւնը—Առաջադիմութեան օրէնքին»:

Մինչ խօսում էր ինձ հետ, ես նայուածքովս հետեւում էի եթերական էակների թուշելուն դէպի ծաղկեալ քաղաքը և զարմացմամբ տեսնում էի, որ բոյսերը շարժվում են, բարձրանում և իջնում նրանց ընդունելու համար. կանաչ արեգակը իջել էր հորիզոնի ներքև և նարնջագոյն արեգակը բարձրացել էր երկնական մարի վրա. տեսարանը զարդարուած էր մի դիւթական գունաւորութեամբ, որի վրա սաւառնում էր մի արագին լուսին՝ կէս-նարնջագոյն, կէս-կանաչ: Այդ ժամանակ մթնոլորտը լցնող անհուն մելոդիան զաւարեց և խորին լռութեան մէջ ես լսեցի մի երգեցողութիւն՝ այնպիսի մի մարտիր ձայնով, որի հետ ոչ մի մարդկային ձայն համեմատուել չէ կարող:

«Ինչ հրաշալի սիստեմ է, գոչեցի ես, այդ տեսակ ջահերով լուսաւորուած աշխարհը: Ուրեմն դրանք են երեքդատիկ, քառապատիկ, բազմապատիկ աստղերը, որոնք տեսնվում են մօտից»:

«Այդ աստղերը հոյակապ արեգակներ են, ասաց աստուածուհին: Փոխադարձ ձգողութեան կապերով ընկերացած, դուք

նրանց տեսնում էք երկրից, օրօրունկիս զոյգ զոյգ երկնքի ծոցում, միշտ գեղեցիկ, միշտ լուսաւոր, միշտ մաքուր:

«Կախուած անհունութեան մէջ, նրանք յենվում են միմեանց վրա առանց երբէք իրար զիպչելու, որպէս թէ նրանց միութիւնը, որ աւելի բարոյական է, քան նիւթական, ղեկավարուելիս լինէր մի գերագոյն և աներևոյթ ոկղբունքով. հետեւելով ներդաշնակ կօր գծերին, նրանք թաւալվում են տակտով միմեանց շուրջը, իրեւ երկնային զոյգեր, որոնք բացուել են ստեղծագործութեան պարունքին անհունութեան աստեղադարպ գաշտերի մէջ:

«Մինչդեռ ձերինի նման սլարդ արեգակները փայլում են միայնակ, հաստատ, հանդարտ, տարածութեան անապատների մէջ, կրկնապատիկ և բազմապատիկ արեգակները իրանց շարժումով, իրանց գոյնով և կեանքով կարծես կենդանութիւն են ներշնչում դատարկ յաւիտենականութեան լուռ երկիրներին: Այդ աստղային ժամացոյցները ցոյց են տալիս ձեզ ուրիշ տիեզերքների դարերը և դարազլուխները:

«Յայց, աւելացրեց նա, շարունակենք

մեր ճանապարհորդութիւնը. մենք երկրից միայն մի քանի տրիլիօն մղոնով հեռու ենք:

—Մի քանի՞ «բիլիօն»:

—Այո, եթէ մենք կարողանայինք լսել այստեղից ձեր մոլորակի աղմուկները, նրա հրաբուխների զզրդիւնը, թնդանօթաձգութեան որոտումների ձայնը կամ ամբոխների ժայթքումները յեղափոխութեան օրերում, կամ եկեղեցիների բարեպաշտական երգերը, հեռաւորութիւնն այնքան է, որ եթէ մինչև անգամ ընդունենք թէ այդ աղաղակները կարող են անցնել այդ հեռաւորութիւնը այն արագութեամբ, որով ձայնը անցնում է օդի մէջ, այնու ամենայնիւ 15 միլիօն տարի է պէտք այստեղ հասնելու համար: Այսօր մենք միայն կը լսէինք այն, ինչ որ 15 միլիօն տարի առաջ երկրի վրա տեղի է ունեցել:

«Սակայն տիեզերքի անհունութեան հետ համեմատելով, մենք դեռ քո հայրենիքին աւելի մօտ զրացիներ ենք:

«Ահա տես ձեր արեգակը ներքեում, բոլորովին մի փոքր աստղ: Մենք դեռ դուրս չենք եկել այն տեղերից, որին նա

պատկանում է իր մոլորակների համակարգում թիւնով:

«Այս տիեզերքը բաղկացած է արեգակների բազմաթիւ միլլիարդներից, և նրանք հեռու են միմեանցից արիլլիօն մղոններով:

«Նրա տարածութիւնը այնքան ահագին է, որ փայլակը՝ եթէ մի մանրերկրորդում երեք հարիւր հազար կիլօմէտր տեղ անցնելու լինի, պէտք է տասն և հինգ հազար տարի գործադրէ այդ տարածութիւնը անցնելու համար:

«Եւ սակայն, ամեն տեղ արեգակներ են, որտեղ էլ ուղղենք մեր նայուածքը, ամեն տեղ լոյսի, ջերմութեան և կեանքի աղբիւրներ, անսպառելի բազմակերպութեան աղբիւրներ, ամեն տեսակ փայլի, մեծութեան և հասակի արեգակներ, որոնք կախ ընկած պահվում են յաւիտենական դատարկութեան մէջ, լուսածին եթերի մէջ, ամենքի փոխադարձ ձգողութեամբ և իւրաքանչիւրի շարժմամբ:

«Ամեն մի աստղ, որ մի ահագին արեգակ է, հոլովում է իր շուրջը, իրրեւ մի հրեղէն գունդ և շարժւում է գէպի մի նպատակ:

«Ձեր արեգակը ընթանում է և տանում է Ձեզ գէպի հերքուլէսի աստեղատունը. այն արեգակը, որի սիստէմով այժմ մենք տնցանք, ընթանում է գէպի Յազմաստեղքի հարաւային մասը. Սիրիուսը գլորվում է գէպի Ազաւնին, իսկ Պօլաքսը գէպի Կաթնածիրը. բոլոր այդ միլլիօնաւոր, միլլիարդաւոր արեգակները վազում են անսահմանութեան միջով այնպիսի արագութեամբ, որ հասնում է երկու, երեք և չորս հարիւր հազար մետրի ամեն մի մանրերկրորդում:

«Տիեզերքի հաւասարակշռութիւնը պահանջը ջարժումն է. նա է նրա կազմութեան, եռանդի և կեանքի սկզբնապատճառը»:

III

Վաղուց արդէն եռադոյն համակարգութիւնը անհետացել էր մեր աչքից: Մենք անցանք աշխարհների մի մեծ բաղմութեան մօտից, որոնք մեր երկրային հայրենիքից շատ տարբեր էին: Ոմանք ինձ երեացին ամբողջովին ջրով ծածկուած և ջրային էակներով բնակուած, ուրիշները՝ միայն բոյսերով բնակուած: Մի քանիսը բոլորովին զուրկ են ջրից. այդ այնպիսի-

ներն են, որոնք պատկանում են ջրածին շունեցող համակարգութիւններին, ինչպէս Հերկուլոսի աստղատան Ալֆա աստղը: Մի քանիսը հրեղէն են երևում: Չատերի մօտ մենք կանգ առինք: Ո՛րպիսի աներեւակայելի բաղմազանութիւն:

Նրանցից մէկի վրա՝ ժայռերը, բոյսերը, տեսարանները անդրադարձնում են գիշերով այն լոյսը, որ ստացել են ցերեկով և ամբարել: Գուցէ ֆօսֆօրը այդ մարմինների քիմիական բաղադրութեան նշանաւոր մասն է կազմում: Այդ շատ տարօրինակ մի աշխարհ է, ուր գիշերը անծանօթ է, թէև նա շունի արբանեակներ: Երևում է, որ նրա բնակիչները օրդանական շատ թանկագին մաքրութիւն են վայելում, որովհետև նրանք այն կերպով են կազմուած, որ ըմբռնում են օրդանիզմի կենդանական պահպանողութեան բոլոր պաշտօնները (ֆունկցիա): Մարմնի իւրաքանչիւր մասնիկից, այսպէս ասած, մի ջիղ է գնում, որ փոխադրում է ուղեղին իր ստացած բաղմազան տպաւորութիւնները, այնպէս որ մարդը ներքուստ տեսնում է իրան և ճանաչում է

հիւանդութիւնների բոլոր պատճառները հէնց նրանց սկզբում. ամենափոքր տանջանքները խեղդվում են այնտեղ նոյն իսկ իրանց սաղմի մէջ:

Մի ուրիշ երկրաբանի վրա, որ մենք անցանք նոյնպէս գիշերով, այսինքն նրա գիշերային կիսապնդի կողմից, մարդկային աչքերը կազմաւած են այն կերպով, որ շատ քիչ, այնպէս որ, կարծես թէ իրանց տարօրինակ օջախից շառաւիղի նման բղխում լինէր ֆոսֆորային մի էութիւն: Բազմաթիւ անձերից բաղկացած գիշերային մի այգալիսի ժողով ներկայացնում է կատարելապէս ֆանտաստիքական պատկեր, որովհետեւ աչքերի լոյսը, ինչպէս և գոյնը փոխվում են նրանց ոգևորող կրքերի համեմատ: Բացի դրանից այդ նայուածքների զօրութիւնն այնպէս է, որ նրանք ելեքտրական և մագնիսական ազդեցութիւն են գործում, այն ևս փոփոխական արագութեամբ և, որոշ պարագաներում, նրանք կարող են կաշտակնահար անել, մեռցնել այն զոհը, որի վրա կենդրոնացնում են իրանց կամքի ամբողջ սաստկութիւնը:

Մի քիչ աւելի հեռու, երկնային առաջնորդս ցոյց տուեց ինձ մի աշխարհ, որտեղ գործարանաւորութիւնները վայելում են մի թանկագին կարողութիւն, այն, որ հոգին կարողանում է փոխադրուել մի մարմնից միւսը առանց անցնելու մահուան հանգամանքից, որ շատ անգամ տհաճելի է և տխուր: Մի գիտնական, որ իր ամբողջ կեանքը աշխատել է մարդկութեան կրթութեան համար և տեսնում է, թէ մօտենում է գերեզմանին առանց իր ազնիւ ձեռնարկութիւնները աւարտել կարողանալու, կարող է իր մարմինը փոխել մի մատաղ պատանու հետ և վերսկսել մի նոր կեանք, աւելի օգտակար քան առաջինը: Այդ այլակերպութեան համար բաւական է ունենալ պատանու յօժարութիւնը և ձեռնհաս բժշկի մագնիսական գործողութիւնը: Կամ տեսնում ենք որ երկու էակներ, որոնք միացած են սիրոյ զօրեղ և քաղցր կապերով, մարմնի այդ տեսակ մի փոխանակութիւն են կատարում շատ տարիների միութիւնից յետոյ, այնպէս որ կեանքի մնացորդ շրջանի համար սղամարդի հոգին մըտ-

նում է կնոջ մարմնի մէջ բնակուելու և, ընդհակառակը: Կեանքի մտերմական փորձառութիւնն անհամեմատ աւելի կատարեալ է դառնում նրանց ամեն մէկի համար: Կամ տեսնում ենք զիտնականներ, պատմագիրներ, որոնք ցանկանում են ապրել երկու դար, փոխանակ մէկի, ընկզմում են արուեստական թմրութեան կամ կեղծ քնի մէջ, և այդ միջոցով կարողանում են տարուայ կէսը կամ աւելի շատ կանգնեցնել իրանց կեանքը:

Մի քանիսը մինչև անգամ կարողանում են այդ կերպով երեք անգամ աւելի երկար ապրել հարիւր տարի կանոնաւոր ապրողներէց:

Մի քանի վայրկեան յետոյ, անցնելով մի ուրիշ համակարգութեան մօտից, մենք հանդիպեցինք գործարանաւորութիւնների մի այլ տեսակի, որ բոլորովին ուրիշ էր և, անտարակոյս, մերինից շատ գերազանց: Այդ մեր տեսած մոլորակը, որ զուտ ջրածնից բաղկացած մի փայլուն արեգակի լուսով լուսաւորուած էր, այնպիսի բնակիչներ ունի, որոնք իրանց միտքը արտայայտելու և հասկացնել տա-

լու համար պէտք չունին խօսելու: Քանի քանի անգամ մեզ պատահել է այն բանը, որ մի փայլուն կամ մի հանճարեղ միտք ծագել է մեր ուղեղում և մենք ցանկացել ենք խելոյն արտայայտել այդ միտքը կամ զբի առնել, բայց այդ ժամանակամիջոցում երբ պէտք է գրենք կամ խօսենք, զգացել ենք որ յղացած լեզան թռչում է, անհետանում է, մթնանում և կերպարանափոխվում: Այդ մոլորակի բնակիչները մի վեցերորդ զգայարանք ունեն, որ կարելի է ինքնահեռագրական (autotélégraphique) կոչել, որի զօրութեամբ եթէ ինքն հեղինակը ընդգիմութիւն չէ ցոյց տալիս, միտքը կամ մտածմունքը հաղորդվում է դուրս և դրոշմվում է մի օրգանի վրա, որ գրեթէ մեր ճակատի տեղն է բռնում ու կարգացվում է: Այդ լուռ խօսակցութիւնները շատ անգամ աւելի խորին և աւելի թանկալին են, որովհետև նրանք միշտ անկեղծ են:

Մենք միամտաբար տրամադրուած ենք կարծելու, թէ մարդկային գործարանաւորութիւնը ամենակատարեալն է Երկրի վրա: Այլ սակայն միթէ քիչ է պատա-

հում մեզ ամիսոսալ, որ երբեմն ստիպուած ենք լինում լսել, մեր կամքի հակառակ, անհաճոյ խօսքեր, անմիտ ճառեր, ռումբի պէս փքուած դատարկ քարոզներ, վատ երաժշտութիւն, բամբասանք և զրպարտութիւն: Մեր քերականները թող քարոզեն թէ մենք կարող ենք «փակել մեր ականջը» և չը լսել այդ խօսքերը. բայց, դժբախտաբար, այդ անկարելի է. Գուք չէք կարող փակել ձեր ականջները աչքի պէս: Այդտեղ մի թերութիւն կայ: Ես չաօս դարմացած էի նկատելով մի մոլորակ, որտեղ բնութիւնը չէ մոռացել այդ մանրամասնութիւնը: Որովհետեւ այդտեղ կանգ առինք մի բոսլէ, Ուրանիան ցոյց տուեց ինձ այդ ականջները, որոնք փակվում էին ինչպէս արտեանունքներ և արմատականապէս խափանում էին ձայնի փոխադրութիւնը: «Այդտեղ, ասաց նա, աւելի քիչ խուլ բարկութիւն կայ քան ձեզ մօտ, բայց քաղաքական կուսակցութիւնների մէջ եղած բաժանումները այդտեղ աւելի ակնյայտ են, հակառակորդները չեն կամենում ոչինչ լսել և, իրօք, նրանց աջողում է

այդ, չը նայելով ամենաճարպիկ փաստաբաններին և ճարտար բեմասացներին»:

Մի ուրիշ աշխարհի վրա, որի մըթնոլորտը մշտապէս ելեքտրականացած է, որի ջերմութեան աստիճանը չաօս բարձր է և որտեղ բնակիչները զգեստ հագնելու ոչ մի բանաւոր պատճառ չեն ունեցել, որոշ կիրքերը արտայայտվում են մարմնի մի մասի լուսաւորութեամբ: Այդտեղ կատարվում է մեծ չափով այն, ինչ որ կատարվում է փոքր չափով մեր երկրային մարգագետինների վրա, ուր, ամառային մեղմ երեկոներին, տեսնում ենք լուսաւոր միջատները մոխիր են դառնում լուսութեամբ սիրահարական բոցի մէջ:—Լուսաւոր զայգերի տեսքը հետաքրքիր է նկատել երեկոները մեծ քաղաքներում: Փօսֆորային էութեան գոյնը զանազանվում է նայելով սեւին, իսկ սաստկութիւնը կախուած է հասակից և տեմպերամենտից: Ուժեղ սեռը այրվում է աւելի կամ նուազ ստատիկ կարմիր բոցով, իսկ շնորհալի սեռը՝ կապտագոյն, երբեմն գունատ և աղօտ բոցով: Մեր ուսատիկները միայն կարող են մի դա-

զափար տալ, թէ և շատ նախնական, այն տալաւորութիւններն մասին, որոնք զգում են այդ յատուկ էակները. ես իմ աչքերիս չէի հաւատում, երբ մենք անցանք այդ մոլորակի մթնոլորտով: Բայց ես ապշած մնացի ոտք կոխելով այդ եղական աշխարհի արբանեակի վրա:

Այդ մի առանձնակեաց լուսին էր, լուսաւորուած մի տեսակ աղջամղջային արեգակով: Մեր աչքերին երևաց մի մուսլ հովիտ: Հովտի երկու կողքերին սփռուած ծառերից կախ էին ընկած մարդկային էակներ, փաթաթուած սաւանների մէջ: Նրանք իրանք էին կապել իրանց մաղերը ճիւղերից և քնում էին ամենախոր քնով: Այն՝ ինչ որ ես առաջ պատանքի կամ սաւանի տեղ ընդունեցի, մի հիստուածք էր, կազմուած իրանց խճճուած և ճերմակած երկար մաղերից: Տեսնելով իմ զարմանքս այդպիսի վիճակի մասին, Ուրանիան ինձ հասկացրեց թէ այդ է նրանց թաղման և յարութեան սովորական ձևը: Այո, այդ աշխարհում, մարդկային էակները օժտուած են այն միջատների օրգանական կարողութիւնով, որոնց

չնորհուած է ընդունակութիւն քնանալ հարսնեակի վիճակում, թեաւոր թիթեռնակի փոխուելու համար: Այդտեղ կարծես թէ մարդկային ցեղը երկու տեսակ է կամ երկու ֆազիս ունի. առաջին ֆազիսի ներկայացուցիչներն, այն է ամենակոշտ և ամենանիւթական արարածներն միակ ցանկութիւնն է քնել, որպէսզի ամենափառաւոր այլափոխութեան մէջ յարութիւն առնեն: Այդ աշխարհի ամեն մի տարին հաւասար է երկրային գրեթէ երկու հարիւր տարիներին: Այդտեղ տարուայ երկու երրորդական մասը ապրում են ստորին վիճակի մէջ, մի երրորդ մասը (ձմեռը) հարսնեակի վիճակում, իսկ յետագայ զարնան, կախուածները անզգայաբար զգում են կեանքի վերադարձը իրանց այլափոխուած մարմնի մէջ: Նրանք շարժվում են, զարթնում են, թողնում են ծառի վրա իրանց հիստուածքը և դուրս գալով իբրև հրաշալի թեաւոր էակներ, թռչում են եթերային երկնքում, այդտեղ փիւնիկեան մի նոր տարի ապրելու համար, այսինքն մեր արագ մոլորակի երկու հարիւր տարին:

Այսպէս մենք անցանք բաղմաթիւ համակարգութիւնների մօտից և ինձ թվում էր թէ ամբողջ յաւիտենականութիւնը բաւական չի լինի միջոց տալու ինձ վայելել Երկրին անծանօթ այդ բոլոր էակները աեսքը. բայց առաջնորդս հազիւ ժամանակ էր տալիս ինձ ուշքս վրաս հաւարելու և շարունակ երևում էին նոր արեգակներ և նոր աշխարհներ: Մեր ուղեւորութեան մէջ մենք համարեա չփվում էինք թափանցիկ գիտաւորների հետ, որոնք թափառում էին իրրեւ շունչ մի համակարգութիւնից միւսը և մի քանի անգամ ես զգացի, թէ ինչպէս ինձ քաշում են դէպ իրանց այս և այն հրաշալի մոլորակները, գրաւելով ինձ իրանց հիանալի տեսարաններով և խոստանալով ծանօթացնել ինձ նորանոր մարդկութիւնների հետ: Մեր գործարանաւորութեան միակ պաշարը կազմող հինգ լեղձ անկատար զգայարանները, յիւրաւի, խիստ աննշան են այն էակների ըմբռնողութեան հարստութեան առաջ, որոնք օժտուած են տասն և հինգ, տասն և ութ և մինչև անգամ քսանվեց զանազան զգայարաններով և որոնց մենք հանդիպեցինք երկնքի շատ աշխարհների վրա: Սակայն երկնային Մուսան անդադրում կերպով քաշում է ինձ դէպի բարձր, միշտ աւելի հեռու, մինչև վերջապէս մենք հասանք մի տեղ, որ ինձ թուաց թէ տիեզերքի արուարձանն է:

Արեգակներն աւելի հազուադիւս դարձան, աւելի նուազ լուսաւոր, աւելի աղօտ. խաւարը աւելի սաստկացաւ աստղների մէջ և շուտով մենք մեզ գտանք մի ճշմարիտ անապատի ծոցում. այն միլլիարդաւոր աստղերը, որոնք կազմում են Երկրի երեւելի տիեզերքը, հեռացել էին և վերածուել բոլորը մի փոքր կաթնածիրի՝ առանձնացած անհուն դատարկութեան մէջ:

«Վերջապէս, ահա հասանք ստեղծագործութեան սահմաններին», գոչեցի ես: — Նայիր, պատասխանեց Ուրանիան, ցոյց տալով ինձ դէնիար:

IV

Բայց ի՞նչ: Միթէ այս ճշմարիտ է: Մի ուրիշ տիեզերք իջնում էր դէպի մեզ: Մի Խիոնաւոր արեգակներ համախմբուած միասին սաւառնում էին, իբրեւ նոր երկնային արշեպեղազոս և հետզհետէ աճում էին ինչպէս աստղերի ընդարձակ ամպ, որչափ մենք բարձրանում էինք: Ես փորձեցի զննել նայուածքովս չորս կողմը, բոլոր խորութիւնները, անհուն տարածութիւնը և ամեն տեղ ես նկատում էի

համանման լուսաւորութիւններ, և տարածութիւնների մէջ սփռուած աստղերի կոյտեր:

Այն նոր տիեզերքը, որի մէջ թափանցում էինք, բաղկացած էր գլխաւորապէս կարմիր, յակնթեայ և նռնեզոյն արեգակներից: Չատերը կատարելապէս արեան գոյն ունէին:

Կայծակի արագութեամբ մենք թռչում էինք արեգակից արեգակ, և շարունակ ցնցւում էինք ելեքտրական անընդհատ հոսանքից, որ հասնում էր մեզ հիւսիսափայլի ճառագայթի նման: Որպիտ տարօրինակ բնակատեղ պէտք է լինեն այդ աշխարհները, որոնք լուսաւորուած են միայն և եթէ կարմիր արեներով: Յետոյ, այդ տիեզերքի մի բաժնում մենք նկատեցինք մի երկրորդական խումբ բաղկացած վարդագոյն և կապուտակ աստղների ահագին թուից: Յանկարծ մի մեծ դիսաւոր աստղ, որի գլուխը նմանում էր մի հսկայական բերանի, թաւալուեց դէպի մեզ և շրջապատեց մեզ: Զարհուրանքից ես սեղմուեցի աստուածուհու կողքերին, բայց նա մի ըոպէ

անհետացաւ աչքիցս մի լուսաւոր մշուշի մէջ: Սակայն մենք նորից դառնք միմեանց մի մութ անապատում, որովհետեւ այդ երկրորդ տիեզերքը առաջինի պէս հեռացել էր:

«Ստեղծագործութիւնը, ասաց ինձ, բաղկացած է տիեզերքների անսահման թուից, որոնք բաժանուած են միմեանցից ոչնչութեան անդունդներով:

— Ահա՛ն է թիւ:

— Մատեմատիկական առարկութիւն է, աւելացրեց նա. ի հարկէ, մի թիւ, որքան և մեծ լինի, չէ կարող այժմ անսահման լինել, որովհետեւ միշտ կարելի է մտքով աւելացնել նրա վրա մի միութիւն, կամ կրկնապատկել, եռապատկել և հարիւրապատկել: Բայց յիշիր, որ այժմեան բոլոր լույսի մի դուռն է, որի շէմքի վրայ ապագան հանդիպում է անցեալի հետ: Յաւիտենականութիւնը անվախճան է, ուստի և տիեզերքների թիւը նայնպէս անվերջ կը լինի: Բացի դրանից, աստղերը, արեգակները, տիեզերքները Է- չեն կազմում: Աւելի ճիշդն ասած, նրանք անթիւ են:

«Նայիր. Դու դեռ տեսնում ես միշտ և ամենուրեք երկնային կղզիների նոր արշիպեղադոսներ, նոր տիեզերքներ:

— Ինձ թւում է, ո՛ր Ուրանիա, որ արդէն վաղուց ի վեր և շատ մեծ արագութեամբ, մենք բարձրանում ենք դէպի մի անեղր երկինք:

— Մենք կարող ենք հեշտ այդպէս վեր ելնել, ասաց նա, և երբէք վերջնական սահմանի չենք հասնի:

«Մենք կարող ենք թափառել այստեղ այնտեղ, աջ և ահեակ, մեր առաջ, մեր ետեւ, ներքեւ, վերեւ, ինչ ուղղութեամբ կամենաւ. երբէք, ոչ մի տեղ չենք հանդիպի որ և է սահմանադրի:

«Երբէք, երբէք վերջ չը կայ:

«Գիտես, որտեղ ենք այժմ: Գիտես որքան ճանապարհ ենք կտրել»:

«Մենք գտնվում ենք... անսահմանութեան նախադաւթում, ինչպէս գտնվում էինք Երկրի վրայ: Մէնք ճիշտն ասած չէնք...»

—
Մի մեծ յուզում շրջապատել էր հո-

գլխ: Ուրանիայի վերջին խօսքերը մինչև ուղեղս թափանցել էին իբրև սառուց: «Բնաւ վերջ չկայ, բնաւ, բնաւ, գոռացի ես: Եւ ես չէի կարողանում ոչ ուրիշ բան խօսել, ոչ մտածել: Սակայն տեսարանի վեհապանծութիւնը նորից երևաց աչքիս և թմրութիւնս փոխուեց սքանչացման:

«Աստղագիտութիւնը, ազադակեցի ես, — ամեն բան է: Իմանալ այդ բաները, ասլրել անսահմանութեան մէջ: Ո՛ր, Ուրա-նիա: Ինչ բան է մարդկային բոլոր մնացած իմացողութիւնները այդ գիտութեան առաջ: Ստուերներ, ուրուականներ:

— Ոհ, չչնչեց նա: Դու կը դարձնես Երկրի վրայ, դու գեռ ժամանակ կունենաս սքանչանալու և արժանապէս, քո ուսուցիչների գիտութեան վրա, բայց լաւ իմացիր, որ ձեր դպրոցների և գիտաբանների այժմեան աստղագիտութիւնը, նիւտօնների, Լապլասների, Լէվէրիների գեղեցիկ գիտութիւնը գեռ վերջնական գիտութիւնը չէ:

«Այդ չէ, որդեակս, այն նպատակը, որին ես ձգտում եմ չիալարկոսի և Պտոլոմէոսի ժամանակից: Նայիր այդ միլիո-

նաւոր արեգակներին, որոնք նման են Երկրին կենդանութիւն տուող արեգակին և նրա նման նոյնպէս շարժման, գործու-նէութեան, պայծառութեան աղբիւրներ են. ահա դրանք են ապագայ գիտութեան առարկան. — ասէ՛ր ասէ՛ր ուսումնասիրութիւնը: Մինչև այսօր դուք գեռ չէք թափանցել տաճարի մէջ: Թուանշանները նպատակ չեն, այլ միջոց. նրանք չեն ներկայացնում բնութեան շինուածքը, բայց մեթոդները, շինութեան նիւթերը: Դու հանգիստեա պիտի լինես մի նոր օրուայ արշալոյսին: Մատեմատիկական աստղագիտութիւնը տեղի պէտք է սոյ ֆիզիքական աստղագիտութեան, բնութեան ճշմարիտ ուսումնասիրութեան:

«Այո, աւելացրեց նա, այն աստղագէտները, որոնք հաշվում են աստղների երևոյթական շարժումները, երբ ամեն օր սրանք անցնում են միջօրէականից, որոնք նախագուշակում են խաւարումների, երկնային երևոյթների, պարբերական գիսաւորների երևալը, որոնք այնքան զգուշութեամբ գիտում են աստղների և

մոլորակների ճիշտ դիրքը, որոնք գրանուծ են նոր դիտարար աստղեր, մոլորակներ, արբանեակներ, փոփոխական աստղեր, որոնք հետազոտում և գտնում են Լուսնի և մոլորակների ձգողական զորութիւնից առաջացած փոփոխութիւնները, որոնք իրանց ժամերը նուիրում են աշխարհիս սիստեմի հիմնական տարերքը որոշելու — գրանք ամենքը, գիտող թէ հաշվող՝ նիւթեր պատրաստողներ են, նոր աստղագիտութեան կարապետներ են: «Այդ՝ արագին աշխատութիւններ են, սրանչացման արժանի գործեր, որոնք լուսաւորում են մարդկային մտքի ամենարարձր կարողութիւնները: Բայց գրանք, մատեմատիկոսները և երկրաչափները, անցեալի դօրքն են կազմում: Սրանից յետոյ գիտնականների սրտերը պէտք է բարախեն մի աւելի ազնիւ աշխարհակալութեան համար: Բոլոր այդ մեծ մտքերը ուսումնասիրելով Երկինքը, իսկապէս գուրս չեն եկել Երկրից: Աստղագիտութեան նպատակը այն չէ, որ մեզ ցոյց տայ լուսաւոր կէտերի երկացող դիրքը, ոչ ևս առաջուց գուշակէ խաւարումները,

Լուսնի ֆազերը. ոչ. այդ բոլորը լաւ է, բայց անբաւարար:

«Եթէ Երկրի վրայ կեանքը գոյութիւն չունենար, այդ մոլորակը որեւէ շահեկանութիւնից զրկուած կը լինէր ամեն մարի համար. նոյն մտածողութիւնը կարելի է անել այն բոլոր աշխարհների մասին, որոնք թաւարկում են միլիարդաւոր արեգակների շուրջը անհունութեան խորութիւնների մէջ: Կեանքը ամբողջ ստեղծագործութեան նպատակն է: Եթէ ոչ կեանք լինէր, ոչ մտածմունք, այդ բոլորը կը լինէր չը գոյ և չեղած: Ստեղծագործութիւնը մի պօէմա է, որի իւրաքանչիւր տառը մի արեգակ է:

«Դու սահմանուած ես հանգիստաւս լինել գիտութեան հիմնական կերպարանափոխութեան: Նիւթը պիտի չքանայ և նրա տեղ պէտք է բռնէ ոգին»:

— Տիեզերական կեանքը, առաջի ես. միթէ՞ մեր արեգակային սիստեմի բոլոր մոլորակները բնակուած են... Միթէ՞ անսահմանութեան մէջ սփռուած միլիարդաւոր աշխարհները բնակուած են... Միթէ՞ այդ մարդկութիւնները մերինին նման

են... Արդեօք կը գայ մի օր, որ նրանց հետ ծանօթանանք:

—Այն ժամանակամիջոցը, որ դու ապրում ես Ներկրի վրայ, երկրային մարդկութեան նոյն իսկ ամբողջ տեղութիւնը, յաւիտենականութեան մէջ մի վայրկեան է»:

Իմ հարցման դրուած այդ պատասխանը չը հասկացայ:

«Ոչ մի բանաւոր պատճառ չը կայ, աւելացրեց Ուրանիան, որ բոլոր այդ աշխարհները հէնց այժմ բնակուած լինեն: Ներկայ ժամանակը աւելի կարեւորութիւն չունի քան առաջուանը և սրանից յետոյ եկող ժամանակները:

«Ներկրի գոյութեան տեղութիւնը աւելի երկար պիտի լինի—գուցէ տասն անգամ աւելի երկար—քան նրա մարդկային կենդանութեան չըջանի տեղութիւնը: Անհունութեան մէջ պատահմամբ վերառած տասնեակ աշխարհների մէջ հազիւ մէկը կարող է ներկայումս իմացական ցեղով բնակուած լինել: Մի քանիսն արդէն բնակուած եղել են. ուրիշները կը լինեն արդէն ապագայում. ոմանք պատրաստվում, ոմանք անցել են

արդէն բոլոր ֆազերը. այստեղ օրօրոցներ, այնտեղ գերեզմաններ: Բացի դրանից, բնութեան ստեղծագործական դրութեան մէջ անսահման բազմակերպութիւն է նկատվում և երկրային կեանքը բնաւ չէ կարող անդր-երկրային կեանքի տիպար լինել: Էակները կարող են ապրել, մտածել բոլորովին ուրիշ կողմակերպութեամբ և ձեր մոլորակի կազմակերպութիւնից տարբեր կերպով: Ուրիշ աշխարհների բնակիչները չունեն ոչ ձեր ձեւը, ոչ դրայարանքը. նրանք տարբեր են:

«Կը գայ մի օր և շատ մօտիկ է նա, որովհետեւ դու կոչուած ես տեսնելու այդ օրը, երբ տիեզերքի զանազան գաւառների կեանքի պայմանների ուսումնասիրութիւնը Աստղագիտութեան էական առարկան և գլխաւոր հմայքը կը դառնայ: Զուտով, փոխանակ պարզապէս զբաղուելու ձեր դրացի մոլորակների հեռւորութեան, շարժման և նիւթական զանգուածի ուսումնասիրութեամբ, աստղագէտները երեւան կը հանեն նրանց ֆիզիքական կազմութեան, նրանց աշխարհագրական կերպարանքը, նրանց կլիման, մէտէօրո-

լօգիան, կը թափանցեն նրանց կենդանական կազմակերպութեան գաղտնիքի մէջ և կը վիճեն նրանց բնակիչներին մասին: Նրանք կը գտնեն, որ չրատը և Արուսեակը այժմ բնակուած են մտածող էակներով, որ Լուսնիթազը իր օրգանական պատրաստութեան նախնական շրջանի մէջ է, որ Երևակը հոլովում է բոլորովին տարբեր պայմանների մէջ ամենեին ոչ նման այն պայմաններին, որոնց ազդեցութեամբ ծագել է կեանքը Երկրի վրա, որ նա թէև երբէք չի ունենայ Երկրի վիճակը, բայց այնուամենայնիւ կարող է բնակուած լինել կենդանի էակներով, որոնք ոչ մի նմանութիւն չեն ունենայ երկրային գործարանաւորութիւնների հետ: Նոր մեթոդները ցոյց կը տան աստղների ֆիզիքական և քիմիական կազմութիւնը, մթնոլորտների բնութիւնը: Կատարելագործուած գործիքները կը թոյլատրեն մինչև անգամ ցոյց տալ այդ մոլորակային մարդկութիւնների գոյութեան ուղղակի ապացոյցները և նրանց հետ հաղորդակցութեան մէջ մտնելու միջոցները: Ահա այն գիտնական կերպա-

րանափոխութիւնը, որով նշանաւոր կը դառնայ տասնեկիններորդ դարի վերջը և քսաներորդի սկիզբը:»

Ես լսում էի հիացած երկնային Մուսայի խօսքերը, որոնք լուսաբանում էին ինձ համար բոլորովին նոր լոյսով Աստղագիտութեան ճակատագիրը և մի աւելի կենդանի եռանդ էին ներշնչում ինձ: Ես աչքիս առաջ ունէի անհամար աշխարհների պանօրաման, որոնք թաւալում են տարածութեան մէջ և ըմբռնում էի թէ գիտութեան նպատակը պէտք է լինի մեզ ծանօթացնել այդ հեռաւոր տիեզերքի հետ, մեզ ապրեցնել տալ այդ անհուն հորիզոնների մէջ: Գեղեցկուհի աստուածուհին շարունակեց.

«Աստղագիտութեան պաշտօնը աւելի վիհ կը լինի: Երբ նա ձեզ զգացնել կը տայ, երբ նա ձեզ ցոյց կը տայ թէ Երկիրը լոկ երկնային հայրենիքի մի քաղաքն է և մարդը երկնքի քաղաքացի է, նա աւելի հեռուն կը դնայ: Գտնելով այն պլանը, որի վրայ կառուցուած է ֆիզիքական տիեզերքը, նա ցոյց կը տայ թէ բարոյական տիեզերքը հաստատուած է

միևնոյն պլանի վրա, թէ երկու աշխարհն
ևս կազմում են մի աշխարհ և թէ հոգին
կառավարում է նիւթը: Այն ինչ որ նա
արած կը լինի տարածութեան համար,
նա կանի ժամանակի համար: Տարածու-
թեան անհունութիւնը գնահատելուց յի-
տոյ երբ ցոյց կը արուի որ միևնոյն օրէնք-
ները թաղաւորում են միաժամանակ ամեն
տեղ և անսահման տիեզերքը վերածում
են մի միութեան, դուք կը հասկանաք
որ անցեալի և ապագայի դարերը ընկե-
լացած են ներկայ ժամանակին և մտա-
ծող մենատարրերը (մօնաղները) յաւի-
տեան կապրեն յաջորդական և առաջա-
գիմական կերպարանափոխութեան շնոր-
հով. դուք կը հասկանաք, որ կան մըտ-
քեր անհամեմատ աւելի բարձր երկրային
մարդկութեան ամենամեծ մտքերից և
ամեն բան առաջադիմում է գէպի գերա-
գոյն կատարելագործութիւնը. դուք կը
հասկանաք նոյնպէս, որ նիւթական աշ-
խարհը միայն առերևոյթային է և իրա-
կան էակը բաղկացած է մի աներևոյթ,
անկշիռ և անշօշափելի գօրութիւնից:

«Ուրեմն աստղագիտութիւնը յայտնա-

պէս և ամենից առաջ փիլիսոփայութեան
զեկավարողն կը լինի: Աստղագիտական
իմացողութիւնից դուրս մտածողները ճշ-
մարտութեան կողքից միայն կանցնեն,
իսկ նրա ջահին հաւատարմութեամբ հե-
տեղները յաջորդաբար կը բարձրանան
մեծ խնդիրների լուծման սանդղներով:

«Աստղագիտական փիլիսոփայութիւնը
կը դառնայ գերագոյն մտքերի կրօնը:

«Դու պէտք է հանդիսատես լինես,
աւելացրեց նա, գիտութեան այդ կրկնակ
կերպարանափոխութեան: Երբ դու կը
լքանես հոգեղէն աշխարհը, այդ աստղա-
գիտական գիտութիւնը, որով դու այդպէս
հիացած ես, ամբողջովին վերանորոգուած
կը լինի իր ձևով, ինչպէս և ոչով:

«Բայդ այդ դեռ ամենը չէ: Վաղեմի
գիտութեան այդ վերանորոգութիւնը շատ
քիչ կը նպաստէր մարդկութեան ընդհա-
նուր առաջադիմութեան, եթէ այն վեհ
իմացողութիւնները, որոնք զարգացնում
են միտքը, լուսաւորում են հոգին և նրան
ազատում են կեանքի սնոտիութիւններից,
մնային մասնագէտ աստղագէտների նեղ
շրջանում: Այդ ժամանակն ևս կանցնի:

Փականքը պէտք է կործանուի: Պէտք է ջահը բռնել ձեռքին, շատացնել նրա փայլը, լուսաւորել նրանով հասարակական տեղերը, բողոքաւարդ փողոցները, մինչև անգամ խուլ անկիւնները: Ամեն մարդ կոչուած է լոյս ստանալ, ամեն մարդ ծարաւ է լոյսի, մանաւանդ նուաստները, մանաւանդ բախտի խորթ որդիները, որովհետև սրանք ամենից շատ մտածողներն են, սրանք ծարաւ են գիտութեան, մինչդեռ գոհ եղողները չեն էլ կասկածում այդ իրանց ագիտութեան մէջ: Այս, Աստղագիտութեան լոյսը պէտք է սփռուի աշխարհի վրա: Ես պէտք է թափանցեմ մինչև ամբողջը, լուսաւորեմ խղճմամանքները, բարձրացնեմ սրտերը: Եւ այդ կը լինի նրա ամենավեհ կոչումը. այդ կը լինի նրա բարերարութիւնը»:

V

Այդպէս խօսեց իմ երկնային առաջնորդը: Նրա գէմքը գեղեցիկ էր ինչպէս օրը, նրա աչքերը փայլում էին լուսաւոր շողով, նրա ձայնը աստուածային երաժշտութեան էր նման: Ես անսնում էի որ աշխարհները հոլովում են մեր շուրջը տարածութեան մէջ և զգում էի որ մի անհուն ներդաշնակութիւն կառավարում է բնութիւնը:

«Այժմ, ասաց Ուրանիան, ցոյց տալով ինձ մատով այն տեղը, ուր մեր երկ-

լային արեգակը անհետացել էր,— վերագառնանք Երկիր: Բայց դեռ նայիր: Դու հասկացար, որ տարածութիւնն անվերջ է. այժմ պէտք է խմանաս, որ ժամանակը յաւիտենական է»:

Մենք անցանք աստղատներից և վերագործանք զէպի արեգակային համակարգութիւնը: Եւ, իրօք, ես տեսայ Արեգակի վեր երևալը մի փոքր աստղի երևոյթով:

«Ես կամենում եմ տալ քեզ մի բոլորէ թէ ոչ աստուածային, զէթ հրեշտակային նայուածք, ասաց նա: Քո հոգին զգալու է եթերական ճոճումները, որոնք կազմում են լոյսը և գիտութիւնը այն բանի, թէ ինչպէս ամեն մի աշխարհի պատմութիւնը յաւիտենական է Աստուծոյ մէջ: Տեսնելը՝ գիտենալ է: Տես»:

Ինչպէս խոշորացոյցը մեզ ցոյց է տալիս մըջիւնին փղի մեծութեամբ, ինչպէս նա թափանցելով մինչև անեղը խորութիւնները, կարողանում է աներևոյթը երևելի դարձնել, նոյնպէս և Մուսայի հրամանին վրա, իմ տեսութիւնը յանկարծ օժտուեց մի անակնկալ ըմբռնողութեան կարողութիւնով և որոշեց տա-

լածութեան մէջ, լուսարոյ արեգակի կողքին, Երկիրը, որն աներևոյթից երևելի դարձաւ:

Ես նրան ճանաչեցի և որչափ նայում էի, նրա սկաւառակը աւելի մեծանում էր, ներկայացնելով լուսնի այն երևոյթը, որ նա ունենում է լիալուսնի ֆազից մի քանի օր առաջ: Հուտով ես կարողացայ որոշել այդ հետզհետէ մեծացող սկաւառակի վրա աշխարհագրական գլխաւոր մասերը, հիւսիսային բևեռի ձիւնոտ բլուրները, Եւրոպայի և Ասիայի գծագրութիւնները, Հիւսիսային ծովը, Ատլանտիան Ովկիանոսը և Միջերկրական ծովը: Որքան աւելի շատ էի լարում ուշադրութիւնս, այնքան աւելի լաւ էի տեսնում: Մանրամասնութիւններն աւելի և աւելի նշմարելի էին դառնում. կարծես թէ հետզհետէ ես փոփոխում էի աւելի զօրեղ հեռագիտակներ: Ես ճանաչեցի Փրանսիայի աշխարհագրական ձևը, բայց մեր սիրուն հայրենիքը ինձ երեսց ամբողջովին կանաչադարդ—Հռենոսից մինչև Ովկիանոսը և Ղամանշից մինչև Միջերկրականը—այնպէս որ նա մի իսիտ և ահագին անտառի

կերպարանք ունէր: Սակայն ես հետզհետէ նշմարում էի ամենափոքր մանրամասնութիւնները, որովհետեւ Ալպեան, Պիլքենեան լեռները, Ռոնը, Հռենոսը, Լուարը հեշտութեամբ ճանաչվում էին:

«Արիւր սաստկութեամբ ուշադրութիւնդ», կրկնեց ընկերուհիս:

Եւ արտասանելով այդ խօսքերը, նա գրեց ճակատիս վրա իր նուրբ մատերի ծայրերը, որպէս թէ կամենալով մագնիսացնել ուղեզս և իմ ըմբռնողութեան կարողութիւններին աւելի զօրութիւն տալ:

Այդ ժամանակ ես աւելի թափանցող եղայ և իմ առաջ պատկերացած տեսարանի բոլոր մանրամասնութիւնները զիտեցի և ի՜նչ տեսայ, Աստուած իմ. Յուլիոս Կեսարի ժամանակի Գաղղիան: Այդ այն պատերազմի ժամանակն էր, որ անկախութեան համար մղում էր հայրենասէր Վէրսինգէտորքսը:

Այդ պատկերները ես տեսնում էրա՝ ձրից այնպէս, ինչպէս մենք տեսնում ենք լուսնային սարերը և անդունդները հեռադիտակով, ինչպէս տեսնում ենք մի որևէ տեղ օդապարիկի նաւակից. ես այժմ գե-

ղեցիկ կերպով ջոկում էի Գաղղիան, Օվէրնը, մարած հրարուխները, լճերը և միաքրս առանց զժուարութեան պատկերացնում էր գաղղիական կեանքից այն տեսարանը, որի մի փոքր հատուածին ծանօթ էի:

«Մենք այժմ Երկրից հեռու ենք այնքան տարածութիւնով, ասաց ինձ Ուրանիան, որ լոյսը այնտեղից մինչև այստեղ հասնելու համար պէտք է այնքան ժամանակ բանեցնի, որքանով մենք հեռու ենք Յուլիոս Կեսարի ժամանակից: Երկրից այդ ժամանակ դուրս եկող լոյսի ճառագայթները այժմ են միայն մեզ հասնում: Եւ սակայն լոյսը եթեքական տարածութեան մէջ իր ճանապարհորդութիւնը կատարում է իւրաքանչիւր մանրէկրորդում երեք հարիւր հազար կիլոմէտր արագութեամբ: Այդ շատ արագ է, գրանից էլ արագագոյն անկարելի է, բայց այդ իսկոյն չէ: Երկրի աստղագէտները, որոնք այժմ զիտում են մեր կանգնած տեղի աստղերը նրանց այնպէս չեն տեսնում, ինչպէս են այժմ, այլ ինչպէս էին այն ըսպէն, երբ գնացին ճառագայթները, որոնք հասնում

են միայն այսօր, այսինքն ինչպէս էին տասն և ութ դար սրանից առաջ:

«Ոչ Երկրից, ոչ ևս որեւէ մի տարածութիւնից, երբէք չէ կարելի տեսնել աստղերը այնպէս, ինչպէս կան, այլ ինչպէս եղել են: Երբէք չէ կարելի իմանալ նրանց ներկան, այլ միայն անցեալը, որն այնքան հեռու է, որքան հեռու են իրանք մեզնից:

«Դուք շատ մանրակրկիտ կերպով գրննում էք հեռադիտակով այնպիսի աստղեր, որոնք վաղուց գոյութիւն չունեն: Նոյն իսկ գոյութիւն չունեն այն աստղերից շատերը, որոնց դուք տեսնում էք աչքով, առանց հեռադիտակի: Զատ ամպային կոյտեր, որոնց նիւթը դուք վերլուծում էք սպեկտրոսկոպով, վաղուց արեգակներ են դարձել: Ձեր գեղեցիկ կարմիր աստղերից շատերը այժմ հանգած են և մեռած. եթէ նրանց մօտենաք, այլ ևս չէք տեսնի նրանց:

«Առյուծ այն ճառագայթները, որոնք բղխում են անհուն տարածութեան մէջ սփռուած բոլոր արեգակներից, այն լոյսը, որ անդրադառնում է այդ արեգակներով

լուսաւորուած աշխարհներից, բերում են իրանց հետ անսահման երկնքի մէջ բոլոր դարերի, բոլոր օրերի, բոլոր բուսական ֆոտոգրաֆիական պատկերները: Նայելով մի աստղի վրա, դուք նրան տեսնում էք այնպէս, ինչպէս էր այն բուսին, երբ նա ուղարկում էր իր ֆոտոգրաֆիան, որն դուք ստանում էք այժմ, ճիշդ այնպէս, ինչպէս լսելով զանգակի դողանջիւնը, դուք լսում էք նրա ձայնը գուրս գալուց յետոյ և այնքան ուշ, որքան դուք հեռու էք գտնվում:

«Դրանից հետևում է, որ բոլոր աշխարհների պատմութիւնը ճանապարհորդում է այժմ տարածութեան մէջ և միշտ պէտք է մնայ նրա մէջ, որ բոլոր անցեալ դէպքերը ներկայ են յաւիտենականութեան ծոցում և անեղծ. ինչ որ եղել է, կայ և այժմ, և կը լինի յաւիտեան:

«Տիեզերքի տեղութիւնն անվախճան կը լինի: Երկիրը կը վերջանայ, և մի օր միայն մի գերեզման կը լինի: Բայց նոր արեգակներ և նոր երկիրներ կը լինեն. նոր գարուններ և նոր ժպիտներ, և միշտ

կեանքը կը ծաղկի տիեզերքի մէջ անվերջ և անսահման:

«Ես կամեցայ քեզ ցոյց տալ, շարժանակեց նա մի քիչ յետոյ, թէ ինչպէս ժամանակը յաւիտենական է: Դու զգացիր տարածութեան անսահմանութիւնը: Դու հասկացար տիեզերքի մեծութիւնը: Այժմ քո երկնային ճանապարհորդութիւնը լրացած է: Մօտենանք Երկրին և վերադարձիւր քո հայրենիքը:

«Քեզ համար, կրկնեց նա, իմացիր, որ ուսումը ամեն մտաւոր արժէքի միակ աղբիւրն է և մարդկային սրտի գիտութիւնը տանում է դէպի ներողամտութիւն և բարութիւն. երբէք մի եղիր ոչ աղքատ, ոչ հարուստ. պահպանիր քեզ ամեն փառասիրութիւնից, ինչպէս և ամեն նուաստութիւնից. եղիր անկախ, որովհետեւ անկախութիւնը բարիքներից ամենաշքնաղն է և երջանկութեան միակ պայմանը»:

Ուրանիան խօսում էր իր քաղցր ձայնով: Բայց այդ բոլոր տարօրինակ պատկերներից արտադրուած յուզմունքը այնպէս շարժել էր ուղեղս, որ յանկարծ

ամբողջ մարմինս բռնուեց մի խորին սառնուումով: Մարտուռը գլխից մինչև ոտերս անցաւ և անտալախոյս նա առաջ բերաւ իմ յանկարծակի զարթնելը, սաստիկ յուզմունքի մէջ... Աւագ. այդ չքնաղ երկնային ճանապարհորդութիւնս վերջացել էր:

Ես որոնեցի Ուրանիային և այլ ևս չը գտայ նրան: Լուսնի մի պայծառ ճառագայթ, թափանցելով պատուհանից սենեակս, զգվում էր վարագոյրի եզրը և կարծես գծագրում էր իմ երկնային առաջնորդի օդային անորոշ ձեւը. բայց այդ միայն լուսնի փայլն էր:



Երբ երկրորդ օրը վերադարձայ գիտարանը, իմ առաջին մղումս եղաւ որեւէ պատրուակով վազել վերատեսչի կարիները և նորից տեսնել չքնաղ Մուսային, որ ինձ պարգեւել էր այդպիսի մի երազ...

Ժամացոյցը աներևոյթացել էր:

Նրա տեղ զրուած էր հուշակաւոր աստղագէտի սպիտակ մարմարիօնէ կիսանդրին:

Ես որոնեցի ուրիշ տեղերում, և հազար ու մի պատրուակներով, մինչև անգամ որոնեցի սենեակները, բայց նա չբկար ու չբկար:

Ամբողջ օրեր, շաբաթներ որոնում էի, բայց չը կարգադայ ոչ տեսնել նրան և և ոչ ևս իմանալ թէ ինչ է եղել:

Ես մի բարեկամ, մի մտերիմ ունեի, գրեթե ինձ հասակակից, թէև իր աճող մօրուքի պատճառով ինձանից հասակով էր երեսում. նա ևս իր էալով լեռ համակուած էր և գուցէ ինձանից աւելի երազող էր և զիտարանի ամբողջ պաշտօնէութեան մէջ միակն էր, որի հետ մտերմաբար կապուած էի: Նա հաղորդակից էր իմ ուրախութիւններին և վշտերին: Մենք միեւնոյն ճաշակը, միեւնոյն իրէալներն, միեւնոյն զգացմունքներն ունէինք: Նա հասկացել էր պատանեկական սքանչացումս մի արձանի համար, այն մարմնացումը, որով իմ երեսակայութիւնը նրան կենդանացրել էր և մեղամոգձութիւնս, որով համակուած էի այդպէս յանկարծ էրրցնելով իմ սիրելի Ուրանիային, հէնց այն բոպէին, երբ այնպէս մոլեգնաբար

յարուած էի նրան: Ինձ հետ միասին մի քանի անգամ հիացել էր տեսնելով այն ազդեցութիւնը որ լոյսը գործում էր այդ երկնային կերպարանքի վրա. նա ժպտում էր իմ ոգեւորութեան վրա իբրև մի անդրանիկ եղբայր, երբեմն մինչև անգամ մի քիչ ջրգրացնում էր ինձ և իմ դէպի արձանը ունեցած քնքոյշ սիրոյ համար, անուանում էր ինձ «Կամիլ Պիգմալիօն»: Բայց իրողապէս, ես լաւ տեսնում էի որ ինքն ևս սիրում է այդ արձանը:

Այդ բարեկամը, որին, աւանդ, մի քանի տարուց յետոյ, պէտք է կորցնէի երիտասարդութեան ծաղիկ հասակի մէջ, այդ բարի Գէորգ Սպէրս, մի փայլուն միտք և մի մեծ սիրտ, որի յիշատակը յաւիտեան սիրելի կը մնայ ինձ, այն ժամանակ վերատեսչի մասնաւոր քարտուղարն էր և նա իր անկեղծ համակրութեան մի նոր ապացոյցը տուեց ինձ այդ պարագայում:

Մի օր, մտնելով սենեակս, ես աչքերիս չը հաւատացի. հռչակաւոր ժամացոյցը դրուած էր իմ վառարանի վրա, այնտեղ, ուղղակի իմ առաջ...:

Այո, այդ նա էր: Բայց ինչպէս էր

ընկել այստեղ: Ի՞նչ ճանապարհով էր մտել: Ո՞րտեղից էր գալիս:

Ես իմացայ, որ Նեպտունի գիւտի հռչակաւոր հեղինակը ուղարկել էր նրան այստեղի գլխաւոր ժամագործներից մինի մօտ նորոգելու. այդ ժամագործը ստացել էր Զինաստանից մի հին աստղագիտական ժամացոյց, որ շատ մեծ կարեւորութիւն ունէր և առաջարկել էր փոխանակութիւն, որն և ընդունուել էր: Գէորգ Սպէրճ, որին յանձնուած էր այդ փոխանակութեան գործը, նորից գնել էր Ուրանիան ինձ ընծայելու համար ի յիշատակ իմ նրան տուած մատեմատիկայի դասերի:

Ո՞րպիսի ուրախութեամբ ես նորից տեսայ Ուրանիային: Ինչ երջանկութեամբ ես անյազարար նայում էի նրա վրա: Այդ օրից Երկնքի Մուսայի այդ չքնաղ մարմնացումը միշտ աչքիս առաջին է: Իմ պարապմունքի ժամերին գեղեցիկ արձանը միշտ առաջիս էր, և կարծես յիշեցնում էր ինձ աստուածուհու ճառը, որ բացեց իմ առաջ Աստղագիտութեան ապագայ ճակատագիրը ու ղեկավարում էր երի-

տասարդական զիտնական ձգտումներս: Անպագայում, աւելի կըրօտ և հրատապ զգացումներ կարողացան մոլորեցնել, գրաւել, յուզել միտքս ու ուշս, բայց ես երբէք չը կարողացայ մոռանալ այն իդէալական զգացումը, որ ներշնչել էր ինձ աստղների Մուսան. ես չեմ մոռացել ոչ երկնային ճանապարհորդութիւնը, ուր նա քաշ տուեց և տարեց ինձ, ոչ այն անակնկալ պանօրաման, որ պարզեց իմ առաջ, ոչ այն ճշմարտութիւնները, որ նա յայտնեց ինձ տիեզերքի տարածութեան և բաղկացութեան մասին և ոչ էլ այն երջանկութիւնը, որ նա պարգևեց ինձ, յատկացնելով ինձ վերջնականապէս բնութեան և գիտութեան խաղաղ գիտողութեան ասպարէզը:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԷՈՐԳ ՄՊԷԲՕ

I

Կ Ե Ա Ն Ք Ը

Մայր մանող արեգակի ջերմ լոյսը
ծփում էր մթնոլորտի մէջ իբրև մի հրա-
շալի ոսկեճաճանճ: Պասսիի բարձրութիւ-
նից նայուածքը տարածւում էր այն ան-
հուն քաղաքի վրա, որ այդ ժամանակ,
աւելի քան երբ և իցէ, ոչ թէ քաղաք
էր, բայց մի ամբողջ աշխարհ: 1867 թ.
Աշխարհահանդէսը կենդրոնացել էր այդ
ժամանակ կայսերական Պարիզում աշ-
խարհի բոլոր հմայքները և զուարճու-

թիւնները: Քաղաքակրթութեան ծաղիկները փայլում էին այդտեղ իրանց ամենավառ գոյներով և հալվում էին իրանց անուշաբուրութեան սաստկութիւնից, կարծես թէ ընկճուելով պատանեկութեան, կեանքի առատութիւնից: Եւրոպայի վեհապետները եկել էին այդտեղ ականատես լինելու այն փառաւոր հրաւառութեան, որ կայսրութեան վերջինն եղաւ. գլխութիւնը, արդիւնազորութիւնը անսպառելի առատաձեռնութեամբ շռայլում էին իրանց մարգարիտները: Կարծես թէ էակները և իրերը համաճարակ արբեցողութիւն էր: Զօրագունդերը ճեմում էին երաժշտութիւն նուագելով. ճեպակառքերը վազում էին ամեն կողմ. միլիօնաւոր մարդիկ շարժվում էին ճանապարհների, հրապարակների և բուլուարների փոշիների մէջ, բայց հէնց այդ փոշին, մայր մտնող արեգակի ճառագայթներով ոսկեզօծուած, նմանում էր մի պսակի, որ թափաղրում էր հոյակապ քաղաքը: Բարձրաբերձ շինութիւնները, գմբէթները, աշտարակները, զանգակատները բոցավառ աստղի ճաճանչներով լուսաւորուած

էին. հեռուից լսվում էր նուագածութեան մրմունջը, որ խառնվում էր ձայների և զանազան աղաղակների շփոթութեան հետ և այդ պայծառ երեկոն, լրացնելով ամառային հիանալի օրը, ներշնչում էր հոգու մէջ բաւարարութեան, խաղաղութեան և երջանկութեան զգացում: Դրա մէջ կարծես արտայայտվում էր մի մեծ և իր կեանքի ու երջանկութեան դազաթնակէտին հասած ազգի կենդանութեան խորհրդաւոր (սիմվոլական) բովանդակութիւնը:

Պատիի բարձրութիւնից, վերամբարձ և Բաբելոնի այգիների նման կախ ընկած մի պարտիզի տէրրատից, որի ներքոյ խաղաղ հոսում էր մի գետ, երկու մարդկային էակներ, կռթնելով քարէ ցանկապատին, լռելիայն դիտում էին այդ հոգեպարար տեսարանը: Ծովացեալ մարդկութեան տարածութեան վրա տիրապետելով, զգալով իրանց այդ խաղաղ առանձնութեան մէջ աւելի երջանիկ քան այդ մրկայոյզ կոյտի բոլոր շամանդաները, նրանք կարծես չէին պատկանում այդ գոհհիլ աշխարհին և սաւառնում

էին իրանց երջանկութեան վճիռ միտնու-
լորտի մէջ աւելի բարձր՝ աշխարհի ու-
նայնութիւնից: Նրանց մտքերը մտածում
էին. նրանց սրտերը սիրում էին, կամ
միևնոյն իրողութիւնը աւելի ամփոփ ար-
տայայտելու համար—նրանց հոգիներն
ապրում էին:

Մատաղահաս աղջիկը իր տաճն և ութ
ամեայ գարունքի դեռափթիթ գեղեցկու-
թեան մէջ, երջանիկ՝ որ ապրում է, ևս
առաւել երջանիկ, որ սիրում է, մտախոհ
դիտում էր մայր մանող արեգակի փա-
ռաբանական տեսարանը: Նրա հոգը չէին
այդ միլիօնաւոր մարդկային էակները,
որոնք շարժւում էին իր ոտքերի տակ.
նա սեեւել էր իր նայուածքը արեգակի
բոցավառ սկաւառակի վրա, որ արե-
մուտքի ծիրանեգոյն ամպերի ետե թաղ-
նելում էր. նա շնչում էր պարտիզի վար-
դերի անուշաբուրութիւնը և իր ամբողջ
էութեամբ զգում էր այն մտերիւմ երջան-
կութեան բարիքը, որ երգում էր իր սրտի
մէջ սիրոյ մի հիսնալի շարական: Նրա
դեղձանիկ մաղերը չըջապատելով ճակա-
տը, մի տեսակ պսակ էին հիւսում և ա-

լեծածան՝ թափւում էին նուրբ և չքեղ
իրանի վրա. նրա կապոյտ աչքերը, եղբա-
ւորուած երկար սև յօնքերով, երկնքի
կապտաւուն լոյս էին կարծես ցայտում.
նրա բազուկները, պարանոցը, կաթնա-
ծիրի սպիտակութեամբ վարդագոյն փայ-
լի մի մարմին էին նշմարել տալիս. նրա
այտերը, ախանջները հրավառ էին. նրա
մարմնի ամբողջութիւնը լիչեցնում էր մի
քիչ տաճնութեան ուրախ դարի նկարիչների
այն փոքր մարքիզոհիներին, որոնք ծըն-
վում էին մի անծանօթ կեանքի համար,
որի վայելելը երկար ժամանակ չէր վի-
ճակուած նրանց:

Նրա ընկերը, որ փոքր ինչ առաջ
գրկել էր նրա իրանը և դիտում էր նրա
հետ միասին Պարիզի պատկերը, ախանջ
էր դնում կայսերական սահակագնդի ե-
րաժշտութեան ներդաշնակ հնչիւններին,
այժմ նստած է նրա կողքին: Նա կար-
ծես մոռացել էր Պարիզը և արեւի մայր
մտները և միայն իր շնորհալի բարեկա-
մուհուն էր տեսնում և առանց նկատե-
լու, նայում էր նրան ականապիշ մի տա-
րօրինակ քնքոյշ նայուածքով, հիացմամբ,

կարծես թէ առաջին անգամ լինէր տեսնում. նա չէր կարողանում պոկել իր աչքերը նրա նազելի պրօֆիլից և գգվում էր նրան իր նայուածքով, մաղնխացնում էր իր քնքշեւթեամբ:

Երիտասարդ ուսանողն ընկղմուած էր այդ դիտողութեան մէջ: Բայց միթէ քուսանեհինգ տարեկան հասակում նա գեռ ուսանող էր: Ի՞նչ անենք, միթէ չէ կարելի ամբողջ կեանքը ուսանող մնալ: Միթէ մեր այն ժամանակուայ ուսուցիչ Չէվրեօլը գեռ երէկ, իր հարիւր երեք ամեայ հասակում, չէր անուանում իրան ֆրանսիացի ուսանողների երիցազոյնը: Գէորգ Սպէրօն շատ վաղ էր վերջացրել իր լիսէական ուսումը, որ նրան ոչինչ չէր սովորեցրել, բացի աշխատելը և շարունակում էր անխոնջ եռանդով ուսումնասիրել բնական գիտութիւնների մեծ առեղծուածները: Մանաւանդ աստղագիտութիւնը գրաւել էր ամենից առաջ նրա միտքը և, ինչպէս կը յիշի ընթերցողը, ես նրա հետ ծանօթացի Պարիզի Դիտարանում, որտեղ մտել էր նա տասնևիկեց տարեկան հասակից և որտեղ գրա-

ւել էր իր ընկերների ուշադրութիւնը նրանով, որ ցոյց չէր տուել որեւէ փառասիրութիւն և առաջ անցնելու որեւէ փափագ: Տասնևիկեց տարեկան, ինչպէս և քսանեհինգ տարեկան հասակում, նա զգում էր իրան, իբրև գերեզմանի չէմքում և գուցէ այնպէս էր դատում թէ կեանքը անցողական լինելով, աւելորդ է դիտութիւնից բացի ուրիշ՝ բան ցանկանալ. աւելորդ է ուսումի և ճանաչելու երջանկութիւնից բացի ուրիշ փափագ ունենալ: Նա բնաւորութեամբ շատ խառնվող չէր, թէև, իրապէս, գուարթ և կատարեալ երեխայական բնաւորութիւն ունէր: Խիստ զգայուն լինելով, նրա յարաբերութիւնները մարդկանց հետ շատ խնամուած էին, որովհետև ամենաթեթև հիասթափութիւնը նրան կատարեալ տանջանք էր պատճառում: Նրա խիստ փոքր և գեղեցիկ գծագրուած բերանը կարծես ժպտում էր, եթէ ուշադրութեամբ քննէինք նրա շրթունքների անկիւնները. այլապէս, նա աւելի մտախոհ էր երևում և լռակեաց: Նրա աչքերը, որոնց անորոշ գոյնը յիշեցնում էին ծովի հորիզոնի կա-

պուլանն առնող կանաչը, փոփոխվում էին լոյսի և ներքին յուզմունքների համեմատ, ոգևորուած էին մի ներքին կենդանի բույսով և սովորաբար մեծ քաղցրութիւն էին ցոյց տալիս, սաէայն, որոշ հանգամանքներում, կարծում էիր թէ կայծակի կրակով վառուած են կամ կապարի պէս ցուրտ են: Նայուածքը խոր էր, երբեմն անքննելի և մինչև անգամ օտարօտի, խորհրդաւոր: Ականջը փոքր էր, գեղեցիկ եղբաւորուած, թեթեւ կերպով վեր ցըցուած, մի բան, որ վերլուծողների կարծիքով ցոյց է տալիս մտքի նրբութիւն: Ճակատը լայն էր, թէև գլուխը աւելի փոքր էր քան մեծ, բայց մեծ էր երևում խճճուած մազերի խոպոպիկների պատճառով: Մօրուքը շագանակագոյն էր, ինպէս մաղերը, նոյնպէս թեթեւ կերպով խճճուած: Միջահասակ էր թէև, բայց ամբողջ մարմինը մի առանձին չքեղութիւն ունէր, մի տեսակ բնածին աղնութիւն, թէև նա երբէք չէր աշխատում և չէր սիրում աչքի ընկնել:

Մենք նրա հետ բնաւ ընկերութիւն չէինք արել ոչ ես, ոչ բարեկամներս այդ

ժամանակ: Երձակուրդի օրերին, գուարճութեան ժամերին, նա երբէք չըկար: Մշտապէս ընկղմուած իր ուսմունքի մէջ, կարծես թէ նա վճռել էր անպատճառ գտնել փիլիսոփայական քարը, կամ բոլորակի քառանկիւնութիւնը և կամ յաւիտենական շարժումը: Հեմ կարծում որ նա ունեցած լինի բարեկամ, բացի գուցէ ինձանից, այն ես դեռ ապահով չէի թէ վայելում էի նրա բոլոր վստահութիւնը: Գուցէ նա իր կեանքում չէ ունեցել ուրիշ մտերմական գէպքեր, բացի այն, որի պատմութիւնն եմ անում այսօր և որն ես կարողացայ ճշգրութեամբ իմանալ, եթէ ոչ իբրեւ մտերիմ, գէթ իբրեւ վկայ:

Հոգու խնդիրը նրա մտածողութեան անընդհատ առարկան էր: Մերթ նա խորասուզվում էր անմահութի հետազօտութեան մէջ ուղեղի այնպիսի սաստկութեամբ, որ իր գանգի տակ զգում էր մի մեծ սարսուռ, այնպէս որ նրա բոլոր մտածողական կարողութիւնները կարծես դադարում էին գործելուց: Այդ պատահում էր մանաւանդ այն գէպքում, երբ երկար ժամանակ վերլուծելով անմահու-

Թեան պայմանները, յանկարծ տեսնում էր որ իր առաջից անհետանում է այժմեան անցաւոր կեանքը և իր մտաւոր տեսողութեան առաջ բացվում է անվախճան յաւիտենականութիւնը: Տեսնելով այդպէս մարդկային հոգին լի յաւիտենականութեան մէջ, նա տոչորվում էր գիտութեան ծարաւով: Նրան այնքան չէր զարհուրեցնում ոչ մահուան միտքը, ոչ այն երեւակայութիւնը, թէ իր մարմինը պաղ, փաթաթած պատանքի մէջ, դնուելու է դադաղում, յետոյ մի նեղ փոսում, վերջին և տխուր բնակարանում, խոտի տակ, ուր չղջիկը մրմռում է, որքան ապագայի անտուգութիւնը: «Ի՞նչ պէտք է դառնամ, ի՞նչ են դառնալու, կրկնում էր անդադար: Եթէ մենք պէտք է մեռնենք առանց բոլորովին հետք թողնելու, այն ժամանակ ի՞նչ յիմար կօմէզիա է այս կեանքը իր կռիւներով, ձգտումներով և յոյսերով: Եթէ մենք անմահ ենք, ի՞նչ պիտի շինենք անվերջ յաւիտենականութեան ժամանակ: Հարիւր տարի սրանից յետոյ զրտեղ պիտի լինեմ ես, զրտեղ են լինելու երկրի այժմեան բնակիչները, ինչ-

պէս և բոլոր աշխարհների բնակիչները: Մեռնել ընդ միշտ վերջնականապէս, ապրելով միայն մի րոպէ—այդ ի՞նչ ծաղր է: Հարիւր անգամ աւելի լաւ չէր երբէք չըծնուել և այնքան չը տանջուել: Բայց եթէ մեր ճակատագիրն է ապրել յաւիտեան, եթէ մենք չենք կարող ոչինչ փոփոխութիւն անել մեզ վրա ծանրացող նախասահմանութեան մէջ, եթէ մենք մեր առաջ պէտք է ունենանք միշտ անվերջ յաւիտենականութիւնը, ի՞նչպէս տանենք այդ տեսակ ճակատագրի ծանրութիւնը: Եւ միթէ այդ է՞ մեզ վիճակուած: Ուրեմն եթէ մի օր մենք յոգնենք ապրելուց, չը պիտի կարողանանք դադարեցնել մեր կեանքը, փախչել այդ կեանքից, վերջացնել այդ կեանքը. այդ աւելի անտանելի անգթութիւն է, քան անցաւոր կեանքը, որ անհետանում է իբրեւ մի միջատ, որ երեկոյեան մթնշաղկին մի վայրկեան երեւում է մեր առաջ և ընդ միշտ աներևոյութանում: Ուրեմն ի՞նչի համար ենք մենք ծնուել: Միթէ նրա համար, որ տանջուենք անյայտութեան կասկածներով, որ միշտ համոզուենք, թէ մեր յոյսերից ոչ մինը,

խոր քննութիւնից յետոյ, կանգուն չէ մնում, որ ապրենք, իբրեւ իդիօտներ, եթէ մենք չենք մտածում, կամ մտածում ենք իբրեւ խելագարներ: Ոչ մի բանի մէջ ոչ նպատակ, ոչ լօգիկա... Եւ դեռ խօսում են «ամենաբարի Աստուծո՛ւ» մասին: Եւ դեռ աշխարհում կան կրօններ, իրանց քահանաներով, հովիւներով, բարբիներով, բօնդերով: Մինչդեռ մարդկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յիմարացողների և յիմարացնողների մի ցեղ: Կրօնները—նոյնն են, ինչ որ թագաւորութիւնները. իսկ նրանց քուրմերը—նոյնն են, ինչ որ ղիւնուորները: Բոլոր ազգերը սպառազինուած են ռաից մինչև գլուխ, որ միմեանց կոտորեն անխնայ, կատաղի զաղանների նրման: Էհ, գուցէ ամենախելօք բանն է, որ կարող էին անել. այդ ամենալաւ երախտագիտութիւնը կը լինի, որ նրանք կարող են ցոյց տալ բնութեան այն յիմար պարզեւի համար, որ նա չնորհել է նրանց կեանք տալով:»

Ես փորձում էի ամօքել նրա տանջանքները, նրա խռովութիւնները, որովհետեւ այդ խնդրի վերաբերմամբ ես ու-

նէի իմ սեպհական փիլիսոփայութիւնը, որ մի որոշ չափով գոհացում էր տալիս ինձ:

«Մահուան երկիւղը, ասում էի նրան, ինձ բոլորովին ցնորական է երևում: Միայն երկու ենթադրութիւն կարելի է անել: Քնելով ամեն զիշեր, մենք կարող ենք երկրորդ օրը այլևս չը զարթնել և, սակայն, այդ միտքը չէ արգելում մեզ քնելու: Ուստի ենթադրենք նախ և առաջ, որ մեր կեանքի հետ ամեն բան վերջանում է և մենք այլևս չենք զարթնելու ամենեին, ուրեմն այդ մի քուն է, որ մեզ համար երբէք չի վերջանայ, որ կը յաւատեւի յաւիտեան և մենք նրա մասին երբէք ոչինչ չենք իմանայ: Երկրորդ՝ ենթադրենք, որ հոգին կը մնայ կենդանի, այդ ժամանակ մենք մի տեղ դարձեալ կը զարթնենք, որ մեր գործունէութիւնը շարունակենք: Այդ դէպքում, զարթնելը չէ կարող զարհուրելի լինել. նա, ընդհակառակը, աւելի գրաւիչ պէտք է լինի, որովհետեւ ամեն գոյութիւն բնութեան մէջ իր բանաւոր պատճառն (raison d'être) ունի և նպատակը. և ամեն արարած, ամենաշնչինից սկսած մինչև ամենաազնիւր,

ուրախութիւն և երջանկութիւն է գրա-
նուած իր կարողութիւնների գործադրու-
թեան մէջ»:

Այս պատճառաբանութիւնը կարծես
հանդարտեցնում էր նրան: Բայց կասկա-
ծի անհանգստութիւնները դարձեալ երե-
ւում էին մի փոքր ժամանակից յետոյ և
փշի նման խայթում էին: Երբեմն միայ-
նակ թափառում էր Պարիզի ընդարձակ
գերեզմանատներում, որոնելով գերեզման-
ների մէջ անապատ ճեմելիքները, խելով
քամու ձայնը ծառերի մէջ, մեռած տե-
րեների խշշոցը շաւիղների վրա, պտտե-
ցնելով նայուածքը միմեանց հետ սեղ-
մուած բազմանկիւն դամբարանների վրա,
որոնք շինուած են մեռեալների հասակի
շափով և մարդկային ոչնչութիւնն են
ներկայացնում: Զատ անգամ նա հեռա-
նում էր քաղաքից դուրս՝ շրջակայքը, ան-
տառների մէջ մտնում և ամբողջ ժամե-
րով շրջագայում էր, ինքն իր հետ խօ-
սելով և երբեմն-երբեմն հառաչելով: Այդ-
տեղ նա մտնում էր մինչև կէս գիշեր, դե-
գերում էր մինչև լուսնի երևալը, այդ գի-
շերային արեգակի գունաթափ ճառա-

գայթնների երևալը, որ կարծես մեռելի-
նի համար է ստեղծուած: Երբեմն ևս մի
ամբողջ օր մտնում էր Պանտէօնի հրապա-
րակում գտնվող իր գործարանի մէջ, որ
թէ իր աշխատութեան սենեակն էր, թէ
ննջարանը և թէ ընդունարանը և մինչև
գիշերուայ ժամը մէկը հետադառնում էր
կլինիկայից բերած մի գանգ և խոշորա-
ցոյցով քննում էր նրա գորշ նիւթի ամե-
փոքր մասերը:

Դրական կոշուած գիտութիւնների ա-
նորոշութիւնը, իր խելքի ամբողջ ոյժի
կենդրոնացումը այդ խնդիրների լուծման
վրա նրան սոսկալի յուսահատութեան մէջ
էին ձգում այն ժամանակ և մի քանի անգամ
ես նրան գտել եմ կատարեալ դալկութեան
մէջ, աչքերը հրավառ և բորբոքուած,
դարկերակը անկանոն, և տենդային յուզ-
մունքի մէջ: Այդ ճգնաժամերի միջին ժա-
մանակ, ստիպուած լինելով մի քանի ժա-
մուայ համար թողնել նրան, կարծում էի
վերադառնալով առաւօտեան ժամի 5-ին,
թէ այլևս նրան կենդանի չեմ գտնի: Եւ
ճշմարիտ, նա իր առաջ դրած ունէր մի
բաժակ թոյն, որ աշխատեց խփոյն թաք-

ցնել, երբ ես ներս մտայ: Բայց իսկոյն, հանդարտութեամբ, հոգու կատարեալ անդորրութեամբ և ժպտալով ասաց ինձ. «Ինչի՞ է պէտք, եթէ մենք հէնց անմահ լինենք, միևնոյն է, դրանից էլ մի բան դուրս չի գայ. ես կամենում էի միայն շուտ ճաշակել այդ անմահութիւնը»: Այդ օրը նա խոստովանեց ինձ, որ փափագ էր զգացել մագերից բռնած բարձրանալ դէպի առաստաղը և այդտեղից մարմնի ամբողջ ծանրութեամբ ընկնել յատակի վրա:

Այն անտարբերութիւնը, որով հասարակութիւնը վերաբերւում է մարդկային ճակատագրի այդ մեծ առեղծուածին, մի հարց, որ նրա աչքում գերակշիռ նշանակութիւն ունէր, որովհետեւ խօսքը մեր գոյութեան կամ ոչնչութեան մասին է, սովորաբար մեծ յուսահատութեան մէջ էր ձգում նրան: Ամեն տեղ նա տեսնում էր, որ մարդիկ զբաղուած են միայն նիւթական շահերով, խորասուզուած են յատկապէս «փող աշխատելու» յիմար մտքի մէջ և նուիրում են իրանց բոլոր տարիները, օրերը, բոլոր ժամերը, վայրկեանները այդ զանազան ձևերի տակ քօղար-

կուած շահերին. նա չէր գտնում ոչ մի տեղ ոչ մի աղատ, անկախ, հոգեւոր կեանքով ապրող միտք: Նրան թւում էր, որ մտածող էակները կարող էին, որպէս-էն, մարմնաւոր կեանքով ապրելով հանդերձ, — որովհետեւ այլապէս անկարելի էր — գոնէ ստրուկ չը լինել այդ կոպիտ գործարանաւորութեան և իրանց գոյութեան լաւագոյն ժամերը նուիրել մտաւոր կեանքին:

Այն ժամանակ, երբ սկսւում է այս պատմութիւնը, Գէորգ Սպէրօն արդէն հռչակաւոր էր և նոյն իսկ մեծ փառք էր ձեռք բերել իր հրատարակած ինքնուրոյն գիտնական աշխատութիւններով, և բարձր գրականական երկասիրութիւններով, որոնք նրա անունը ամբողջ աշխարհում հռչակաւոր էին դարձրել: Թէև նա դեռ քսանհինգ տարեկան չը կար, բայց արդէն մի միլիօնից աւելի ընթերցողներ կարգացել էին նրա աշխատութիւնները, որ նա հասարակ ամբօխի համար չէր գրել և սակայն մեծ աջողութիւն էր գտել կրթուել ցանկացող մեծամասնութեան, ինչպէս և լու-

սաւոր փոքրամասնութեան կողմից: Նրան հռչակել էին իբրեւ մի նոր դպրոցի հիմնադիր և ականաւոր կրեօղիոսներ, չը ճանաչելով ոչ նրա անձնաւորութիւնը, ոչ հասակը, խօսում էին նրա «վարդապետութիւններ» մասին:

Թէ ինչպէս էր պատահել, որ այդ եղակի փիլիսոփան, այդ խտաբարոյ ուսանողը, ընկել էր մի մատաղահաս աղջրկայ ոտքերը արեմտի ժամանակ, միայնակ նրա հետ այն տէրրասի վրա, որտեղ նրանց հանդիպեցինք—այդ կը տեսնուի մեր պատմութեան շարունակութիւնից:

II

Տ Ե Ս Ի Լ Ը

Նրանց առաջին հանդիպումը ճշմարիտ որ տարօրինակ էր եղել: Երիտասարդ բնագէտը լինելով բնութեան գեղեցկութիւնների ջերմեւանդ դիտող, միշտ հետախոյզ մեծ և վեհ տեսարանների, անցեալ ամառ, ձեռնարկել էր Նօրվէլիայում մի ուղեորութիւն կատարելու. նա նպատակ ունէր այցելել այն անապատային ֆիօրդները, ուր կատաղի ծովը մռնչում է, այն ձիւնապատ սարերը,

որոնց կուսական ճակատները բարձրանում են մինչև ամպերը և մանաւանդ ջերմ ցանկութիւն ունէր ուսումնասիրել մասնաւորապէս հիւսիսափայլները, մեր մոլորակի կեանքի այդ վիթխարի արտայայտութիւնը: Այդ ճանապարհորդութեան մէջ ես նրան ընկերակցում էի: Արեգակի մայր մասնէր խաղաղ և հեռաւոր ֆիօրդների ետեւում, պայծառ աստղի ծագելը լեռների վրա, անասելի կերպով զբաւում էին նրա արտիստիկական և բանաստեղծական հոգին: Մենք մնացինք այդտեղ մի ամսից աւելի, պտտելով այն գեղանկար տեղերը, որոնք տարածվում են Քրիստինիայից մինչև Սկանդինաւեան Ալպերը: Արդ, Նօրվէգիան հիւսիսի այն դաւակի հայրենիքն էր, որին վիճակուած էր այնքան բուռն ազդեցութիւն գործել բարեկամիս վրա և արթնացնել նրա քնած միտքը: Նա ապրում էր հէնց այդտեղ, մի քանի քայլով հեռու մեզնից, բայց չնայելով դրան՝ միայն մեր մեկնելու օրը պատահմունքը, նախնիքների այդ աստուածը, առիթ տուեց նրանց միմեանց տեսնել:

Վաղորդեան արեգակի ճառագայթները

ոսկեղօծել էին հեռաւոր լեռների գագաթները: Մատաղահաս Նօրվէգիայի օրիորդը իր մօր ընկերակցութեամբ բարձրանում է այն սարերից մէկի վրա, ուր հաղարաւոր տուրիստներ գնում են սովորաբար արեգակի ծագումը տեսնելու: Այդ օրը արեգակի ծագումը հրաշայլ էր: Իկլեան—այդպէս էր նորատի աղջկայ անունունը—մենակ հեռացել էր և բարձրացել մի առանձին լեռնիկի վրա, որ աւելի լաւ դիտէ շրջակայքը և պէյզաժի մանրամասնութիւնները, և երբ իր նայուածքով ըմբռնելով ամբողջ հորիզօնը, երեսը դարձնում է արեգակի հակադիր կողմը, նա յանկարծ նշմարում է երկնքի մէջ իր սեպհական պատկերը, իր ամբողջ կերպարանքը, որ շատ լաւ ճանաչվում էր. այդ պատկերը շատ նման էր իրան և նկարուած էր ոչ թէ սարերի, երկրի, այլ ուղղակի երկնքի վրա: Մի լուսաւոր բոլորակ՝ փառքի պսակի նման շրջապատում էր գլուխը և ուսերը և մի ուրիշ աւելի մեծ եթերական բոլորակ, ծիրանի գոյնով ներկուած, եզրաւորում էր այդ չքնաղ պատկերը:

Ասլաժ, յուզուած այդ տարօրինակ տեսիլքից և դեռ արեգակի ծագման վեհապահն՝ տեսարանի թարմ աղբեցուցիչ տակ գտնուելով, նա խսկոյն չընշմարեց, որ մի ուրիշ դէմք, մարդկային դէմքի մի պրօֆիլ, նկարուել էր իր դէմքի կըշտին, անշարժ կանգնած մի ուրուական, որ դիտում էր իրան և նմանում էր այն սրբերի արձաններին, որոնք ամբողջ հասակով կանգնած են եկեղեցիների կոթողների վրա: Այդ առնացի դէմքը և իր դէմքը շրջանակուած էին միեւնոյն օդային ծիածանազարդ բոլորակով: Յանկարծ իկլէան նշմարեց օդի մէջ այդ զարմանալի արական պրօֆիլը և կարծեց թէ մի ֆանտաստիկական տեսիլքի խաղալիկ է եղել և հիացած, զարմացման և գրեթէ զարհուրանքի մի շարժում արեց: Իր օդային պատկերը ճշգուծեամբ կրկնեց իր այդ շարժումը, բայց միեւնոյն ժամանակ նա տեսաւ, որ այրական դէմքը ձեռքը տարաւ գլխարկին և հանելով, գլուխ տուեց իրան. դրանից յետոյ տղամարդի պատկերը սկսեց հետզհետէ նսեմանալ և շուտով անհետացաւ իր պատկերի հետ միասին:

Թափօր լերան այլակերպուած իւնը, երբ Ֆիտուսի աշակերտները յանկարծ նշմարեցին երկնքում վարդապետի պատկերը Մովսէսի և Եղիայի պատկերների հետ միասին, այնքան խորին ապշուածեան մէջ չը ձգեց այդ վկաներին, ինչպէս Նօրմէզիայի այդ անմեղ կոյսին, ի տես այդ զարմանալի օդային երևոյթի, որի պատճառը ծանօթ է բոլոր միջնորոտարաններին:

Այդ տեսիլը, իբրև մի գեղեցիկ անուրջ, անջնջելի կերպով տպաւորուեց նրա մտքի խորութեան մէջ: Նա կանչեց իր հօրը, որ մի քիչ ներքև կանգնած մնացել էր, բայց երբ սա եկաւ, ամեն բան աներևոյթացել էր: Իկլէան խնդրեց նրան բացատրել այդ երևոյթը, բայց զուր. հայրը կասկածանքով վերաբերուեց և մինչև անգամ բացասեց նրա իրականութիւնը: Այդ ընտիր հայրը, որ մի պաշտօնավոր սպայ էր, պատկանում էր այն գոռոզ սկեպտիկների թուին, որոնք ուղղակի հերքում են այն ամենը, ինչ որ չը գիտեն կամ չեն հասկանում: Մեր գեղեցկուհին որքան աշխատեց համոզել նրան թէ հէնց խսկոյն

իր պատկերը տեսել է երկնքում, մինչև անդամ մի երիտասարդ և լաւ կազմուածքով տղամարդի պատկերը, որքան մանրամասն կերպով պատմեց այդ երեոյթի պարագաները և կցեց որ պատկերները իրան քննականից աւելի մեծ էին երեւցել և նման էին հսկայական ուրուականների, յարգելի սպան վճռապէս և արժանապատուութեամբ պատասխանեց թէ այդ բոլորը տեսական (օպտիական) պատրանքներ են, երեւկայութեան ծնունդ և վատ քնի հետեանք:

Սակայն այդ օրն երեկոյեան, երբ մենք շողենաւ մտանք, ես նկատեցի, որ մի ջահել աղջիկ, գանգուր մազերով, շատ զարմացած կերպով նայում էր բարեկամիս: Նա կանգնած էր ափում, թեւ տուած հօրը և այնպէս էր արձանացած որ կարծես Ղովտի կինը լինէր, աղի արձան կտրած: Ես ցոյց տուի նրան Գէորգին հէնց որ նաւը հասանք և հաղիւ ոտ գլուխը դարձրեց դէպի նա, որ ջահել աղջիկը այնպէս շառագունեց, որ խկոյն նայուածքը դարձրեց դէպի նաւի խարխալը, որ այդ բոպէին շարժվում էր և ճա-

նապարհ էր ընկնում: 2ը գիտեմ Սպէրօն նկատեց այդ, թէ ոչ: Իրողութիւնն այս է, որ առաւօտեան մեզանից ոչ մէկը չէինք տեսել այդ օդային երեոյթը, գէթ այն բոպէին, երբ երիտասարդ աղջիկը մեզ մօտ էր հասել, և նա ծածկուած էր մեր նայուածքից մացառների մի խիտ կոյտով: Մենք աւելի գրաւուած էինք Արեւելի կողմով, արեգակի ծագման գեղեցկութիւնը դիտելով: Սակայն Սպէրօն ողջունեց Նօրվէգիան, որ ափսոսանքով էր թողնում, ձեռքի այն շարժումով, որով ողջունել էր արեգակի ծագումը և անծանօթ աղջիկը այդ ողջոյնը իր համար ընդունեց:

Երկու ամիս յետոյ Պարիզում, Կ... կոմսը իր տան մի մեծ հիւրընկալութիւն ունէր իր համաքաղաքացուհի Քրիստինէ Նիլսօնի մի նոր յաղթութեան առիթով: Հրաւիրեալների թւում կային և նորատի նորվէգուհին իր հօր հետ, որ եկել էին ձմեռուայ մի մասը անցնելու Պարիզում. նրանք վաղուց ծանօթ էին միմեանց հետ, իբրև հայրենակիցներ. չէ որ Չվէգիան և Նօրվէգիան քոյրեր են: Սակայն մենք

առաջին անգամ էինք դնում այդ տունը և նոյն իսկ մեր հրաւերի պատճառը Սպէրօի վերջին գրքի հրատարակութիւնն էր, որ փայլուն աջողութիւն էր ունեցել: Մըտածող, երագող, իր հայրենիքում հիմնաւոր կրթութիւն ստացած և դեռ գիտութեան ծարսու Իկլէան արդէն կարգացել էր, վերակարգացել հետաքրքրութեամբ այդ մի քիչ միտախրական գիրքը, որի մէջ նոր մետաֆիզիկոսն բացատրում էր իւր հոգու անձկութիւնները, գոհացում չբոստանալով Պասկալի «մտածողութիւնները»: Աւելացնենք, որ օրիորդն ինքը, մի քանի ամիս առաջ, աջողութեամբ քննութիւն էր տուել գիտնական աստիճան ստանալու համար և յետոյ, թողնելով բժշկութեան ուսումը, որ առաջ գրաւել էր նրան, անձնատուր էր եղել եռանդով հոգեբանական բնախօսութեան հետազոտութեան (physiologie psychologique):

Երբ «պ. Գէորգ Սպէրօ» անունը լսուեց, Իկլէային այնպէս թուաց թէ այդ մանողը մի վաղածանօթ բարեկամ էր և իր սրտի մտերիմը: Նա ցնցուեց, կար-

ծես ելեքարական հոսանք անցած լինէր իր մարմնի միջով: Իսկ նա, Սպէրօն, որ բոլորովին աշխարհակեաց մարդ չէր, որ ծանօթ հասարակութեան մէջ նեղվում էր, չէր սիրում ոչ պարել, ոչ խաղալ, ոչ զրոյց անել, մնացել էր ամբողջ ժամանակը կանգնած սրահի մի անկիւնում մի քանի բարեկամների մօտ, խիստ անտարբեր դէպի պարերը և կադրիլները, աւելի ուշադիր՝ նորագոյն մուզիկայի երկու երեք գլխաւոր գործերին, որոնք նուազում էին զգացումով. այդպէս, ամբողջ երեկոն անցաւ առանց որ նա մօտենար օրիորդին, թէև նկատել էր նրան և այդ փայլուն երեկոյթի մէջ միմիայն նրան էր տեսնում: Նրանց նայուածքը մի քանի անգամ հանդիպել էին միմեանց: Վերջապէս, գիշերուայ ժամը 2-ին, երբ խօսակցութիւններն աւելի մտերմական դարձան, նա համարձակութիւն առաւ մօտենալու Իկլէային, առանց սակայն որեւէ խօսք ուղղելու նրան: Իկլէան ինքն կանխեց խօսելու նրա հետ, նրա գրքի եզրակացութեան մասին ունեցած մի կասկած փարատելու համար:

Չոյուած, բայց աւելի դարմացած, իմանալով որ մետաֆիզիքական էջերն ունեն և իրանց ընթերցողունհին—և այդ հասակի մի ընթերցողունհի—հեղինակը պատասխանեց, բայց շատ ձախորդ կերպով, թէ այդ տեսակ հետադատութիւնները մի քիչ լուրջ են կանացի խելքի համար: Իկլէան առարկեց որ կանայքը, ջահիլ աղջկերքը հօ միշտ դբադուած չեն պըջրանքի վարժութեամբ, որ նրանց մէջ նա ճանաչում է այնպիսիներին, որոնք մտածում են, որոնում են, աշխատում են, ուսումնասիրում են: Նա ջերմ կերպով պաշտպանեց կանանց այն արհամարհանքի դէմ, որով վերաբերվում են նրանց տղամարդկանցից ոմանք, համարելով նրանց անընդունակ մտաւոր գործունէութեան, և որովհետեւ նրա խօսակիցը, իսկապէս, այդ տեսակ հայեցումաւքի հակառակորդ չէր, ուստի առանց մեծ ջանքի, Իկլէան յաղթական դուրս եկաւ այդ վիճաբանութեան միջից:

Այդ նոր գիրքը, որի արագ և փառաւոր աջողութիւնը, չը նայելով առարկայի լըջութեան, հուշակի փառքով էր պսակել

Գէորգ Սպէրօի անունը, ակումբների մէջ նշանաւոր գրողին ամեն տեղ ընդունել էր տալիս կենդանի համակրութեամբ: Երկու երիտասարդները հազիւ մի երկու խօսք էին փոխանակել միմեանց հետ, որ Սպէրօն բարեկամների ուշադրութեան առարկան դարձաւ և ստիպուեց պատասխանել զանազան հարցերի, որոնք ընդհատեցին նրանց առանձնակի խօսակցութիւնը: Օրուայ ամենաականաւոր կրթիկոսներից մինը, Սէն-Բեօլ, հէնց նոր՝ մի երկար յօդուած էր նուիրել այդ աշխատութեան և նոյն իսկ գրքի բովանդակութիւնը ընդհանուր խօսակցութեան առարկայ էր դարձել: Իկլէան մէկուսի կանգնել էր: Նա զգում էր—և կանայք երբէք չեն խարվում այդ պարագաներում—որ հերոսը արդէն նշմարել էր իրան, որ նրա միտքը արդէն կապուել էր իր մտքի հետ մի աներևոյթ թելով և պատասխանելով իրան ուղղած ընդհանուր և դատարկարան հարցերին, նրա ուշքը, միտքը շատ հեռու էր այդ խօսակցութիւնից: Այդ առաջին յաղթութիւնը բաւական էր իրան և աւելին չէր ցանկա-

նում: Բացի դրանից Իկլէան նրա պրօֆիլի մէջ ճանաչել էր օդային երևոյթի խորհրդաւոր ուրուականին և Քրիստինիայի երիտասարդ ճանապարհորդին:

Այդ առաջին տեսակցութեան ժամանակ Սպէրօն չըզլացաւ հաղորդել նրան այն սքանչացումը, որ ունեցել էր Նորվեգիայի հրաշալի տեղերը տեսնելով և պատմեց իր ճանապարհորդութիւնը: Իկլէան անհամբեր սպասում էր լսելու նրանից մի խօսք, մի որևէ ականարկ այն եթերական երևոյթի մասին, որ ապշեցրել էր իրան, և չէր կարողանում մեկնել նրա լուծութիւնը, ծածկապահութիւնը այդ մասին: Սպէրօն, նկատած չլինելով *անկէպայե* *) երևոյթը այն բոլէին, երբ իր պատկերն ևս գծագրուել էր նրա պատկերի հետ, տեղիք չէր ունեցել դարմանալու մի այնպիսի երևոյթի մասին, որ նա գիտել էր շատ անգամ և աւելի աջող պայմանների մէջ օդապարիկի նաւակի վրայից և առանձին մի բան նկատած չըլինե-

*) Anthélie. Այն օդային երևոյթը, որի մասին խօսուեց:

լով, չէր կարող ի հարկէ, այդ մասին ոչինչ ասել: Նաւը նստելու բոլէն ևս չէր մնացել նրա յիշողութեան մէջ և թէև խարտեաչ զեղեցկունսն բոլորովին անծանօթ չերևաց իրան, բայց դարձեալ չէր յիշում թէ մի որևէ տեղ տեսել է նրան: Իսկ ես անմիջապէս ճանաչեցի նրան: Գէորգը սկսեց նրա հետ խօսել նրա հայրենիքի լճերի, գետերի, ֆիօրդների, սարերի մասին, իմացաւ որ Իկլէայի մայրը մեռել էր շատ երիտասարդ՝ օրտի հիւանդութիւնից և նրա հայրը Պարիզում ապրելը աւելի գերադաս էր համարում ուրիշ երկրում ապրելուց և, անտարակոյս, շատ քիչ ֆանգամ կը կարողանայ վերադառնալ հայրենիք:

Ճաշակների և զաղափարների դարմանալի միութիւնը, փոխադարձ եռանդուն համակրութիւնը, փոխադարձ յարգանքը շուտով հաստատեցին երկուսի մէջ անկեղծ մտերիմ յարաբերութիւններ: Դաստիարակուած լինելով անգլիական եղանակով, Իկլէան վայելում էր մտքի այն անկախութիւնը և գործողութեան ազատութիւնը, որ ֆրանսիացունսները ճանա-

շում են միայն ամուսնութիւնից յետոյ, ուստի և այն ընկերական պատշաճութիւնները, որոնք Ֆրանսիայում սահմանուած են իբրև անմեղութիւնը և առաքինութիւնը պաշտպանելու, նրան երբէք չէին կաշկանդում: Նրան հասակակից երկու բարեկամուհիները մինչև անգամ միայնակ եկել էին Պարիզ իրանց երաժշտական կրթութիւնը կատարելագործելու համար և ապրում էին միասին, Նոր-Քաբելօնի մէջ, լիակատար ապահովութեամբ, առանց մի բոպէ կասկածելու այն վտանգների մասին, որոնցով կարծում են թէ լի է Պարիզը: Երիտասարդ աղջիկը ընդունում էր Գէորգ Սպէրօի այցելութիւնը ինչպէս իր հայրն ինքն կարող էր ընդունել և մի-երկու շաբաթուայ ընթացքում նրանց բնաւորութեան և ճաշակների մեծ նմանութեան շնորհիւ, երկուսն ևս կենդրոնացրել էին իրանց ուշադրութիւնը միեւնոյն հարցերի, միեւնոյն զբաղմունքների վրա և նոյն իսկ միակերպ էին մտածում: Գրեթէ ամեն օր, կէսօրից յետոյ, կարծէք քաշուելով մի-նորքին ձգողական ոյժից, Սպէրօն ուղղվում

էր Լատինական թաղից դէպի Սէնի փերը և գնում էր մինչև Տրօկադերի պալատը, և անց էր կացնում շատ ժամեր Իկլէայի հետ, կամ գրատան մէջ, կամ պարտիզի տէրրասի վրա, կամ ծառատաններում զրօսանք կատարելով:

Իկլէայի հոգու մէջ դրոշմուել էր երկնային երեւոյթի առաջին տպաւորութիւնը: Նա նայում էր երիտասարդ գիտնականի վրա իբրև աստուածութեան կամ իբրև մի հերոսի, գէթ իր ժամանակակիցներից շատ բարձր մի մարդի վրա: Նրա գրուածների ընթերցանութիւնը սաստկացրեց այդ տպաւորութիւնը և աւելի աճեցրեց. նա զգաց դէպի Սպէրօն ոչ թէ սքանչացում, այլ կատարեալ պաշտումն: Երբ անձնապէս ծանօթացաւ նրա հետ, մեծ մարդը չիջաւ իր պատուանդանից: Նա իր զբաղմունքների, գրական աշխատութիւնների և հետազոտութիւնների մէջ թվում էր Իկլէային վերին աստիճանի վեհ և իդէալական, բայց միեւնոյն ժամանակ խիստ պարզ, անկեղծ, բարի և ներողամիտ դէպի ամենքը: Իկլէան ոչ մի առիթ ձեռքից չէր տալիս իմանալու,

Թէ ինչպէս են վերաբերվում ուրիշները դէպի նրան. և երբ նա լսում էր նրա մի քանի նախանձոտ հակառակորդների անարդար յարձակումները, իկէայի մէջ ծագում էր գրեթէ մայրական սիրոյ զգացում դէպի նա: Սակայն կարելի է առհասարակ որ ջահել աղջկայ սրտում գոյութիւն ունենայ այդպիսի հովանաւորող սիրոյ զգացում: Զրգիտեմ, բայց իկէան ամենից առաջ այդպիսի քնքոյշ սիրով սիրեց Սպէրօին: Կարծեմ փոքր ինչ վերեւում ասացի, որ այդ մտածողի բնաւորութեան էութեան մէջ մի քիչ մեկամաղձութիւն կար, հոգու այն մեկամաղձութիւնը, որի մասին խօսում է Պասկալը և որը կարելի է անուանել երկնքի նոստալգիա (nostalgie)*): Եւ ճշմարիտ նա որոնում էր մշտապէս յաւիտենական առեղծուածի, չամէտի To be or not to be «Լեւել չեւել»-ի լուծումը: Երբեմն նրան տեսնում էին ախուր, մահացու կերպով վշտահար: Բայց, տարօրինակ հակա-

*) Երկնքի հայրենիքի մասին ունեցած տրիսթիան:

սութիւն. երբ նրա սեւ մտածմունքները սպառնում էին հետադատութեան մէջ, երբ սպառնում ուղեղը կորցնում էր դեռ ճօճելու կարողութիւնը, նա մի տեսակ հանգստութիւն, մի տեսակ վերածնութիւն էր զգում. նրա արեան շրջանառութիւնը աւելի արագանում էր, փիլիսոփան անհետանում էր և նրա տեղ երեւում էր մի միամիտ, ուրախ երեխայ, որ զուարճանում էր ամեն բանով, որ կանացի ճաշակներ ունէր, որ սիրում էր ծաղիկները, անուշահոտութիւնները, երաժշտութիւնը, երազելը և շատ անգամ ամբողջ ժամեր անցնում էր մի տկար բոյսի կեանքը և կաղմութիւնը քննելու և կամ զարմանալի անհոգութիւն էր ցոյց տալիս:

III

To be or not to be

(Լինել Թի ՉԼինել)

Ճիշդ նրա մտաւոր կեանքի այդ ֆա-
զիսն էր, որ այնպէս մտերմաբար մո-
տեցրել էր երկու էակներին: Հիւսիսի
այդ գեղեցիկ արարածը, Իլլէան, երջա-
նիկ՝ որ ապրում էր գարնան ծաղիկ հա-
սակում, բացուելով իրրեւ կոկոն կեանքի
լոյսի համար և հնչեցնելով բնութեան
բոլոր մեղեդիները իրրեւ քնար, դեռ եր-
բեմն երազում էր իր հայրենիքի հիւրի-
ների և փերինների մասին, իր մանկու-

թեան պահապան հրեշտակների և քրիս-
տոնէական կրօնի խորհուրդների մասին.
Բայց նրա բարեպաշտութիւնը, մանկա-
կական հաւատը չէր մթնացնում նրա միտ-
քը, նա մտածում էր ազատարար, ան-
կեղծութեամբ որոնում էր ճշմարտու-
թիւնը, և թէև գուցէ ավստոսում էր որ
այլ ևս չէ կարողանում հաւատալ քարո-
ղիչների դրախտին, սակայն նա վառուած
էր ապրելու ջերմ ցանկութիւնով: Մահը
նրան մի անգութ անարդարութիւն էր
թւում: Նա չէր կարողանում երբէք ա-
ռանց դողալու երեակայել իր մօրը՝ տա-
րածուած մահուան անկողնի վրա, իր
երեսնամեայ հասակի ամբողջ փայլի մէջ,
իրրեւ մի գեղեցիկ ծաղիկ, որ մահուան
անգութ մանգաղով հնձուել էր և տա-
րուել մի անոյշարոյր ու կանաչ գերեզ-
մանատուն, լի թռչնիկների դայլայլիկ-
ներով. ջնջուել էր յանկարծ կեանքի գրք-
քից, մինչ ամբողջ բնութիւնը շարունա-
կում էր երգել, փայլել. երբէք, առանց
ամբողջ մարմնով ցնցուելու, չէր կարո-
ղանում երեակայել իր մօր գունատ դէմ-
քը: Ոչ, իր մայրը չէր մեռել. Ոչ, ինքն

ևս մեռնելու չէ, ոչ երեսուն տարեկանում, ոչ յետոյ: Իսկ նա, Սպէրօն: Նա, մեռնի՛ր. այդ վեհ իմացականութիւնը կանգ առնի սրտի կամ շնչառութեան դադարումս: Ոչ, այդ անկարելի էր: Մարդիկ սխալվում են, նրանք երբ և իցէ կիմանան ճշմարտութիւնը:

Իկլէան ինքն ևս երբեմն մտածում էր այդ գաղտնիքների մասին, բայց իր միտքը արտայայտում էր աւելի էսթէտիկական և զգայական, քան գիտնական ձևով. այնուամենայնիւ նա շարունակ մտածում էր այդ խնդիրների մասին: Բոլոր իր հարցերը, կասկածները, իր խօսակցութիւնների գաղտնի նպատակը, գուցէ մինչև անգամ գէպի իր բարեկամը ունեցած ջերմ համակրութիւնը, այդ բոլորի պատճառը գիտութեան այն ծարաւն էր, որով պապակիւմ էր նրա հոգին: Իկլէան յոյս ունէր Սպէրօի վրա, որովհետև նրա գրքուածների մէջ արդէն գտել էր շատ նշանաւոր խնդիրների լուծումը: Այդ գրքուածները ծանօթացրել էին նրան տիեզերքի հետ և այդ ծանօթութիւնն աւելի վեհ, աւելի գեղեցիկ, աւելի կենդանի և

աւելի բանաստեղծական էր, քան նախնիքների ենթադրութիւնները և ցնորքները: Այն օրից, երբ Իկլէան իմացաւ նրա գրուածներից թէ նրա կեանքի միակ նպատակը՝ ճշմարտութիւն գտնելն է, նա ապահով էր, որ Սպէրօն կը գտնի այդ ճշմարտութիւնը, ուստի և նրա միտքը կապուեց Սպէրօի մտքի հետ, գուցէ աւելի սերտ կապով, քան նրա սիրտը:

Արդէն երեք ամիս անցել էր, որ նրանք ապրում էին այդպէս, ընդհանուր մտաւոր կեանքով, գրեթէ ամեն օր ամբողջ ժամեր անցկացնելով ինքնուրոյն աշխատութիւնների, յիշատակագրերի, զանազան լեզուներով գրուած գիտնական-փիլիսոփայական գրուածների ընթերցանութեամբ, ուսումնասիրելով հիւլէական տեսութիւնը, օրգանական քիմիան, թէրմօ-գինամիկան և այն զանազան գիտութիւնները, որոնց նպատակն է էակի և կեանքի իմացողութիւնը. նրանք վիճաբանում էին ենթադրութիւնների (հիպօթեզների) առերևոյթային կամ իրական հակասութիւնների մասին. երբեմն գտնում էին զուտ զրականական հեղի-

նակներն մէջ այնպիսի հայեացքներ, որոնք զարմանալի կերպով համաձայնվում էին ապագայում հաստատուած գիտնական արժիւթների հետ և հիացած մնում էին այդ տեսակ հանճարեղ հեղինակների տարօրինակ կանխագիտութեան վրա: Այդ ընթերցանութիւնները, այդ հետազոտութիւնները, այդ համեմատութիւններն աւելի շահեկան էին նրանց համար այն պատճառով, որ նրանց միտքը հետզհետէ զարգանալով, նրանք հարկադրուած էին տեսնում իրանց դէն ձգել գրողների ինքնատաներորդականը, որովհետեւ նրանց աշխատութիւնները դատարկ և անբովանդակ էին, և նոյն իսկ մնացած մի տասներորդի կէսն ևս պէտք էր լինում դարձեալ դէն ձգել, որովհետեւ շատ հարեանցի և թեթեւ կերպով էին գրուած: Աւելելով այդպէս գրականական դաշտը, նրանք զգացին, որ վեհ մտքերի այդ նեղ շրջանում աւելի հաճելի է ապրել: Գուցէ այդ հաճութիւն հետ միացած էր և գոռոզութեան մի թեթեւ զգացում:

Մի օր Սպէրօն սովորականից աւելի շուտ եկաւ: Եւրիստ, գոչեց նա. բայց իս-

կոյն զգաստանալով, հանդիստ կերպով յայտնեց. «Աստուծո՛ւ, այդպէ՛ս է...»

Յենուելով բուխարու վրա, որտեղ պլպլում էր կրակը, և մինչ իր ընկերուհին դիտում էր նրան հետաքրքրութեամբ իր իր մեծ աչքերով, նա սկսեց խօսել մի տեսակ անգիտակցական հանդիսաւորութեամբ, կարծես թէ իր սեպհական հոգու հետ էր զրոյց անում, անտառի առանձնութեան մէջ:

«Մեր բոլոր տեսածը միայն առերևոյթ է: Իրականութիւնը այդպէս չէ:

«Մեզ թւում է որ Արեգակը պտտում է մեր շուրջը, ծագում է առաւօտը և մայր է մտնում երեկոյեան, իսկ երկիրը, որի վրա մենք գտնվում ենք, անշարժ է: Բայց իսկականը դրա հակառակն է: Մենք բնակվում ենք մի պտտող և թռչող գործիքի վրա, որ արձակուած է տարածութեան մէջ թնդանօթի գնդակի արագութիւնից եօթանասունհինգ անգամ աւելի արագութեամբ:

«Մի ներդաշնակ համերգ հէնց այս բոլորիս կախարդեց մեզ: Բայց հնչիւն ասած բանը իսկապէս չիկայ, այլ նա ար-

տաղըրութիւն է այն տալաւորութեան, որ գործում են մեր զգայարանքների վրա օդի ճօճումները, որոնք իրանք ևս անլսելի են: Առանց լսողական ջղի և առանց ուղեղի, հնչիւն ասած բանը չէր լինի: Իսկապէս գոյութիւն ունի միայն շարժումը:

«Ծիածանը տարածում է մեր առաջ իր լուսաճաճանշ աղեղը. վարդը և շուշանը, թրջուած անձրեւից՝ փայլում են արեւում. կանաչ մարգը, ոսկեփայլ հասկերը դաշտերին բազմակերպութիւն են ընծայում իրանց հրաշալի գոյներով և երանգներով: Բայց չէ՞ որ գոյն ասած բանը չըկայ, չէ՞ որ լոյս չըկայ, այլ կան միայն եթերի ճօճումները, որոնք շարժում են տեսողական ջիղը: Երեւոյթները խաբուսիկ են: Արեգակը ջերմացնում է և պտղաբերում, կրակը այրում է, բայց չըկայ տաքութիւն, այլ կան միայն զգայութիւններ: Տաքութիւնը, ինչպէս և լոյսը ուրիշ բան չեն, եթէ ոչ շարժման մի տեսակը, — աներեւոյթ, բայց գերազոյն, ամեն տեղ թագաւորող շարժումներ:

«Ահա ձեզ երկաթէ մի ձող, այն տե-

սակից, որ սովորաբար գործ են ածում շինութիւնների համար: Այդ ձողը դրուած է դատարկութեան կամ օդի մէջ, տասը մետր բարձրութեան վրա, և նրա երկու ծայրերը յենվում են երկու հակադէմ պատերի վրա: Նա «ամուր է և հաստատ»: Նրա միջից կախ են տուել մի ծանրութիւն, հազար, երկու հազար, տասն հազար քիլօգրամ և այդ ահագին ծանրութիւնը նա չէ զգում, այնպէս որ հազիւ կարելի է լինում նկատել, որ մի քիչ ծռուած է: Սակայն այդ ձողը բաղկացած է մասնիկներից, որոնք միմեանց չեն կըպչում, մշտնջենաւոր ճօճում են, հեռանում են միմեանցից տաքութեան ազդեցութեան տակ և մօտենում են միմեանց՝ ցրտի ազդեցութեան տակ: Ուրեմն, ասացէք ինձ խնդրեմ, ինչ բան է կաղմում այդ ձողի ամրութիւնը: Նրա նիւթական հիւլէնքը: — Ի հարկէ ոչ, որովհետեւ նրանք միմեանց չեն դիպչում: Այդ ամրութիւնը կայանում է մասնիկների ձգողութեան զօրութեան մէջ, այսինքն աննիւթական զօրութեան մէջ:

«Բացարձակապէս խօսելով, հաստա-

տուն մարմին չըկայ բոլորովին: Վեր առնենք մեր ձեռքը երկաթէ մի ծանր գընդակ. այդ գնդակը բաղկացած է աներեւոյթ մասնիկներից (molecules), որոնք միմեանց չեն կաշում, որոնք բաղկացած են հիւլէներից (ատոմներից) և որոնք նոյնպէս միմեանց չեն կաշում: Ուրեմն այդ գնդակի մակերեւոյթի ունեցած անընդհատութիւնը և նրա առերեւոյթ ամբողջութիւնը միայն ցնորք են: Եթէ մի միտք կարողանար թափանցել նրա ներքին կազմութեան մէջ և տեսնել այդ կազմութեանը, մեր գնդակը նրան կը ներկայանար իբրև մօլեկուլների մի երամ, որոնք ամառուայ օրերին վխտում են օդի մէջ: Գընդակը հաստատուն է երեւում մեզ. բայց տաքացնենք — նա կը շոգիանայ, առանց սակայն իր բնութիւնը փոխելու. հոսանուտ կամ գազ, նա միշտ կը մնայ երկաթ:

«Այս բոլորիս մենք մի տան մէջ ենք: Այս պատկերը, այս յատակները, գորգերը, կարասիները, մարմարեայ բռնաբանները, բոլորը բաղկացած են մասնիկներից, որոնք միմեանց չեն կաշում և այդ բոլոր բաղկացուցիչ մասնիկները գտնվում են

շարժման մէջ, հոլովում են միմեանց շուրջը:

«Նոյն դէպքն է ներկայացնում և մեր մարմինը: Նա կազմուած է մասնիկների մշտնջենաւոր շրջանառութիւնից: Նա մի բոց է, որ մշտապէս այրվում է և վերանորոգվում. նա մի գետ է, որի ափին գալիս են նստում, կարծելով որ միշտ միևնույն ջուրն են տեսնում, բայց մշտական հոսանքի պատճառով ջուրը միշտ փոխվում է:

«Մեր արեան ամեն մի գնդակը մի ամբողջ աշխարհ է (և այդ տեսակ աշխարհ մենք ունենք հինգ միլիօն ամեն մի խորանարդ հազարամետրի մէջ): Մեր բաղկերակներում և երակներում, մեր մսի և ուղեղի մէջ ամեն բան շարժվում է յաջորդաբար, առանց կանգ և հանգիստ առնելու, ամեն բան ընթանում է, գլորվում է մի կենսական մրրկի մէջ, որ համեմատաբար նոյնքան արագ է, ինչքան և երկնային մարմինների մրրկի: Մասնիկ առ մասնիկ մեր ուղեղը, մեր գանգը, մեր աչքերը, մեր ջղերը, մեր ամբողջ միտք վերանորոգվում են անընդհատ և այնպէս

արագ, որ մի քանի ամսում մարմինն ամբողջովին վերակազմվում է:

«Մասնական կամ մօլեկուլային ձգողութեան վրա հիմնուած նկատումներից հաշուել են, որ ջրի ամենավոքը կաթիլի մէջ, որ անտեսանելի է աչքին, և որի ծաւալը հազիւ խորանարդ հազարամետրի մի հազարերորդ մասն լինի, այդ տեսակ մի կաթիլի մէջ երկուհարիւր և հինգ միլիօն մասնիկներից կամ մօլեկուլներից աւելի կայ:

«Մի գնդասեղի գլխում, ութ սէստիլիօնից պակաս հիւլէ չը կայ, այսինքն ութ հազար միլլիարդների միլլիարդ, կամ մի քառակուսի միլլիարդ, բազմապատկած ութ հազարով, և այդ հիւլէները անջատուած են միմեանցից անջրպետներով, որոնք աւելի մեծ են քան իրանց ծաւալը, բայց այդ ծաւալը տեսնելու անզօր են նոյն իսկ ամենագօր խոշորացոյցները: Եթէ մի գնդասեղի գլխում պարունակուած ատօմների (հիւլէների) թիւը կամենայինք հաշուել, իւրաքանչիւր մաներկրորդում մի միլլիարդ թուելով, այդ գործողութիւնը պէտք է շարունակէինք երկուհարիւր յի-

սուններէք հազար տարի՝ համբելը վերջացնելու համար:

«Ջրի մի կաթիլում, գնդասեղի գլխում, անհամեմատաբար աւելի շատ հիւլէներ կան քան աստղներ բոլոր երկրն: Երբ, որոնք միայն յայտնի են ամենախոշոր հեռագիտակ ունեցող աստղագէտներին:

«Ո՞վ է բռնած պահում Երկիրը, Արեգակը և բոլոր տիեզերքի աստղները յաւիտենական դատարկութեան մէջ: Ո՞վ է պահում երկու պատի մէջ տեղ ձգած այդ երկար երկաթէ ձողը, որի վրա բազմաթիւ դատիկոններ պէտք է չինեն: Ո՞վ է պահում բոլոր մարմինների ձեւը.— Զօրութիւնը:

«Տիեզերքը, իրերը և էակները, բոլորը ինչ որ մենք տեսնում ենք, բաղկացած են աներևոյթ և անկշիւ հիւլէներից: Տիեզերքը մարմնացած զինամիզմ է: Աստուած—տիեզերքի հոգին է. in eo vivimus movemur et sumus. *Նրանով ենք ապրում, շարժվում և էմք:*

«Ինչպէս հոգին մարմնի շարժիչ զօրութիւնն է, անիմանալի էակը տիեզեր-

քը շարժող զօրութիւնն է: Աշխարհի ստեղծագործութեան զուտ մեքենական տեսութիւնը միշտ անբաւարար է մնում իրերը խոր ուսումնասիրողի և մտածողի համար: Աշխարհա է, մարդկային կամքը տկար է, կօսմիական (տիեզերական) զօրութիւնների յարաբերութեամբ: Սակայն, երբ ուղարկվում է մի գնացք Պարիզից Մարսէյլ, մինաւ՝ Մարսէյլից Մուէզ, ես իմ կամքով, ազատաբար փոխադրում եմ երկրային կոյտի մի անսահման փոքր մասը և դրանով փոխում եմ լուսնի շարժումը իր պարունակի (օրրիւի) մէջ: Տասնեփններորդ դարի կոյրեր, յիշեցէք Մանտուանցու Կարապի երգը—*Mens agitat molem!*

«Երբ ես լուծեմ նիւթը, վերջ ի վերջոյ կը հասնեմ աներեւոյթ՝ հիւլէին, նիւթը կ'ոչնչանայ և կ'անհետանայ իբրեւ ծուխ: Եթէ իմ աչքերը կարողութիւն ունենային տեսնել իրականութիւնը, նրանք կը թափանցէին պատի մէջ և կը տեսնէին միւս կողմը, որովհետեւ պատը բաղկացած է ուրոյն-ուրոյն մասնիկներից. ինձ համար բոլոր մարմինները թափանցիկ կը լինէին,

որովհետեւ նրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ հիւլէների յորձանք: Բայց մեր մարմնաւոր աչքերը չեն տեսնում այն՝ ինչ որ կայ: Մտքի աչքով միայն կարելի է տեսնել: Չբխտահանանք միայն մեր զգայարանների վկայութեան. ցերեկը մեր գըլխի վրայ այնքան աստղեր կան, ինչքան և գիշերը, բայց մենք նրանց չենք տեսնում:

«Բնութեան մէջ չըկայ ոչ աստղագիտութիւն, ոչ ֆիզիկա, ոչ քիմիա, ոչ մեքանիկա. դրանք բոլորը մարդկային իմացողութեան մեթօդներն են: Տիեզերքը ներկայացնում է միակ և անբաժան ամբողջութիւն: Անսահման մեծը հաւասար է անսահման փոքրին: Տարածութիւնն անսահման է, բայց մեծ չէ: Տեղութիւնը յաւիտենական է, առանց երկար լինելու: Աստղեր և հիւլէներ—մի են և նոյնը:

«Տիեզերքի միութիւնը կայանում է մի աներեւոյթ, անկշիռ և աննիւթական զօրութեան մէջ, որ շարժում է հիւլէները: Եթէ մի հատիկ հիւլէ դադարէր այդ զօրութիւնից շարժուելու, տիեզերքը կանգ կառնէր: Երկիրը պտտում է Արեգակի շուրջը, Արեգակը ինքը թաւալվում է մի

աստղային օջախի շուրջը, որ նոյնպէս շարժուն է. միլիօնաւոր, միլիարդաւոր արեգակները, որոնք լցնում են տիեզերքը, աւելի արագ են վազում, քան վառօդի գնդակները. այդ աստղերը, որոնք մեզ անշարժ են թւում, արեգակներ են, ձգողութեամբ յաւիտենական դատարկութեան մէջ՝ օրական տասն, քսան, երեսուն միլիօն կիլոմէտր արագութեամբ. ամենքը — արեգակներ, մոլորակներ, երկիրներ, արբանեակներ, թափառող գիսաւորներ վազ են տալիս դէպի մի անծանօթ նպատակ, դէպի մի որոշ կէտ, դէպի ծանրութեան այն կենտրոնը, որ որոնում են վերլուծողները, մի կէտ, որ խոյս է տալիս, որչափ նրա ետեւից են ընկնում և իրողապէս ոչ մի տեղ գոյութիւն չունի: Մարմինները կազմող հիւլէները շարժվում են համեմատաբար նոյնչափ արագ, ինչպէս աստղները երկնքում: Չարժուժը կառավարում է ամենը, կազմում է ամենը:

«Անէրեայն հիւլէն դարձնում Գործարարն է: Մարդկային արարածն էապէս բաղկացնողը, նրան կազմակերպողը՝ նրա նիւթական

գոյացութիւնը չէ բնաւ, ոչ ևս պրօտօպլազման, ոչ խշտիկները, ոչ ևս ածխածիւթութիւն, թթուածնի, ջրածնի, բորակածնի հրաշալի և բեղմնաւոր միաւորութիւնները. ոչ, այլ ոգեկան (animique), աներեւոյթ և աննիւթական Զարգացումն է: Նա է, որ համախմբում է, ուղղում է և միացրած է պահում այն անհամար մասնիկները, որոնք կազմում են կենդանի մարմնի հիանալի ներդաշնակութիւնը:

«Նիւթը և գործունէութիւնը (energie) երբէք միմեանցից բաժանուած չեն տեսնուած. մէկի գոյութիւնը առաջ է բերում միւսի գոյութիւնը. գուցէ թէ մէկը և թէ միւսը իրողապէս համանման են:

«Թէ մեր մարմինը լուծվում է անմիջապէս մահից յետոյ, ինչպէս նա լուծվում է յամրաբար և վերանորոգվում է մշտնջենապէս կենդանութեան ժամանակ, այդ հոգ չէ: Հոգին մնում է միշտ կենդանի: Ատոմային Զարգացող Հիւլէն (Atome psychique organisateur) այդ դարձնում է: Նա ևս անեղծանելի է:

«Ինչ որ մենք տեսնում ենք, խաբուսիկ է: ԵՐԵՎԱՆԸ ԵՆԵՐԵՎՈՅԹԻՑ Է:»

Գէորգն սկսեց ման գալ մեծ քայլերով: Երիտասարդ աղջիկը ունկնդիր էր եղել նրան, իբրև մի առաքեալի, և այն ևս իբրև սիրեցեալ առաքեալի: Զունչը քաշած, անշարժ և լուռ մնացել էր այնպէս որ Սպէրօն կարծես թէ նրա ներկայութիւնը չէր նկատոււմ, թէև միայն նրա համար էր խօսոււմ: Իկլէան մօտեցաւ նրան, բռնեց ձեռքը և բացականչեց. «Ոհ, եթէ դու դեռ չես գտել ճշմարտութիւնը, նա քեզանից փախչել չէ կարող»: Յետոյ, բորբոքուելով ինքն իրան և ամեն բանի մասին ունեցած իր սովորական ժուժկալութեան վրա ակնարկելով՝ «Դու կարծում ես, աւելացրեց նա, որ անկարելի է հողեղէն մարդուն հասնել ճշմարտութեան, նրա համար, որ մենք միայն հինգ զգայարանք ունենք, որ մեր բնութեան արտայայտութիւնների մի ամբողջ շարք անծանօթ են մնում մեր մօքի համար, չունենալով որևէ ճանապարհ մեզ հասնելու: Ինչպէս մենք չենք կարող տեսնել եթէ զրկուած լինէինք տեսողական ջղից և լսել, եթէ զրկուած լինէինք լսողական ջղից և այլն, նոյնպէս և որևէ

մի այլ զօրութեան արտայայտութիւնը, որ կը ներգործէր մեր օրգանիզմի լարերի վրա, բայց նրանց ճօճեցնել չէր տայ, բոլորովին անծանօթ կը մնար մեզ համար: Ես գիշում եմ քեզ, և ընդունում եմ քեզ հետ միասին, որ մի քանի աշխարհների բնակիչները կարող են մեզանից աւելի շատ առաջացած լինել: Բայց ինձ թւում է որ դու, թէև հողեղէն, գտել ես ճշմարտութիւնը:

— Թանկագին սիրուհիս, պատասխանեց նա նստելով նրա կողքին գրատան լայն դիվանի վրա. ուղիղ է որ մեր երկրային քնարի մի քանի լարերը պակաս են և հաւանական է, որ Սիրուսի սխտեմի մի քաղաքացի ծիծաղի մեր պահանջների վրա: Մագնիսի մի ամենափոքր կտորն աւելի շուտ և հեշտ կը գտնի մագնիսական բևեռ քան նիւտօնը և Լայքնիցը, և ծիծեռնակը Քրիստափոր Կօլումբոսից կամ Մագէլլանից աւելի լաւ է ճանաչում լայնութեան փոփոխութիւնները: Ի՞նչ ասեցի այս բոպէիս: Այն, որ երևոյթները խաբուսիկ են և որ նիւթի կեղևի միջից մեր միտքը պէտք է տեսնի

աներևոյթ զօրութիւնը: Այդ ամենաապահով բանն է: Նիւթն այն չէ, ինչ որ երևում է և զրական գիտութիւններն առաջադիմութեան հետ ծանօթ ոչ մի մարդ չէ կարող այսօր այլևս համարել իրան նիւթապաշտ: Գիտեանք տեսնել անշուշտփելին և աննիւթականը մարմինների հոծութեան միջից:

—Այն ժամանակ, կրկնեց Իկլէան, ողնաշարային պսիխիական հիւլէն, մարդկային գործարանաւորութեան հիմնական սկզբունքը, պէտք է անմահ լինի, ինչպէս և բոլոր ուրիշ հիւլէները, եթէ ընդունելու լինենք քիմիայի հիմնական հաւատալիքը: Բայց այդ հիւլէն պէտք է դանազանուի ուրիշներից, նա պէտք է ամենաբարձր կարգից լինի, որովհետեւ նրա հետ միացած է հոգին: Բայց արդեօք կունենայ նա իր գոյութեան գիտակցութիւնը: Գարեթի է արդեօք հոգին նմանեցնել մի ելեքտրական հիւլթի: Ես մի անգամ տեսայ, թէ ինչպէս կայծակը անցաւ մի սրահի միջից և ջահերը հանդերեց: Երբ նորից վառեցին, յայտնուեց որ ժամացոյցի ոսկեզօծութիւնը ջնջուել

էր, իսկ արծաթէ ջահը տեղ տեղ ոսկեզօծուել էր: Այդտեղ մի հանճարեղ զօրութիւն կայ:

—Համեմատութիւններ չանենք. նրանք ամենքը ճշմարտութիւնից շատ հեռու կը մնան: Բոլոր այն լոյսը, որ գիտութիւնը կարող է տալ մեզ այս երկրի վրա, միայն մի տկար ճառագայթ է, որ շողում է անծանօթի դռան վրա: Մենք բոլորս գիտենք, որ պէտք է մեռնենք, բայց դրան հաւատալ: Ինչպէս կարող էինք հասկանալ մահը, որ միայն վիճակի մի փոփոխութիւն է ծանօթից դէպի անծանօթը, երևոյթից դէպի աներևոյթը: Թէ հոգին գոյութիւն ունի, իբրեւ զօրութիւն, դրա մասին կասկած չը կայ: Թէ նա անբաժան է կազմակերպիչ ողնաշարային հիւլէի հետ, այդ ևս կարող ենք ընդունել: Թէ նա կարող է մարմնի լուծումից յետոյ կենդանի մնալ, այդ հասկանալի է:

—Բայց ինչ է դառնում: Ո՞ւր է գնում:

—Հոգիների մեծ մասը իրանց սեպհական գոյութեան մասին ոչինչ չը գիտեն: Մեր մոլորակի վրա բնակվող հա-

զար չորս հարիւր միլլիօն մարդկային էակներին իննսունինն հարիւրերորդ մասը չեն մտածում: Ո՛հ, Աստուած իմ, դրանց ինչին է պէտք անմահութիւնը: Ինչպէս երկաթի մասնիկը ծփում է, առանց գիտենալու, արեան մէջ, որ խփում է Լամարտինի կամ Հուգօի բազկերակի տակ, կամ թէ մի առ ժամանակ մնում է Կեսարի սրի մէջ, ինչպէս ջրածնի մասնիկը փայլում է Օպերայի հնոցի գազի մէջ, կամ ընկղմվում է ջրի կաթիլի մէջ, որ ձուկը կուլ է տալիս ծովերի մթին խորքերում, նոյնպէս և քնում են այն կենդանի հիւլէները, որոնք երբէք չեն մտածում:

«Մտածող հոգիները մտաւոր կեանքի բաժինն են: Նրանք պահպանում են մարդկութեան ժառանգութիւնը և ստացուածքը և աճեցնում են նրան ապագայի համար: Առանց իրանց գոյութիւնը ճանաչող և մտքի համար ապրող մարդկային հոգիների այդ անմահութեան, Երկրի ամբողջ պատմութիւնը միայն ոչնչութեան կը յանգէր և ամբողջ ստեղծագործութիւնը, թէ ամենավեհ աշխարհներինը և թէ մեր տկար մոլորակինը, կը դառնար մի

խաբուսիկ անհեթեթութիւն, աւելի թրշուառ և աւելի անմիտ, քան մի հողեղէն սրդի կղկղանքը: Երբ սա ունի իր գոյութեան բնական պատճառը, ինչպէս տիեզերքը կարող է չունենալ: Կարելի է երեւակայել, որ միլլիարդուոր աշխարհներ, հասնեն կեանքի և մտքի վեհ պայծառութեան, անվախճան կերպով յաջորդեն միմեանց աստղային տիեզերքի պատմութեան մէջ, միայն նրա համար որ ծնունդ տան ընդ միշտ չիրականացող յոյսերի, ընդ միշտ ոչնչացող մեծութիւնների: Որքան կամենանք մեզ երեւակայել նուաստ, բայց չենք կարող ընդունել ոչինչը իբրև մշտնջենական պրօգրէսի զերագոյն նպատակ, որ ապացուցուած է բնութեան ամբողջ պատմութեամբ: Արդ, հոգիները մոլորակային մարդկութիւնների սերմերն են:

— Իսկ կարո՞ղ են նրանք փոխադրուել մի աշխարհից միւսը:

— Ոչ մի բան այնքան դժուար չէ հասկանալ ինչ որ չըզդեցիտես. ոչ մի բան այնքան պարզ չէ ինչ որ դիտես: Ո՞վ է զարմանում այսօր տեսնելով որ ելեքտրական հեռագիրը փոխադրում է մարդկային

մտածմունքը ըռպէսպէս ծովերի և ցամաքների միջով: Ո՞վ է զարմանում տեսնելով որ լուսնի ձգողութիւնը բարձրացնում է Ուկկիանոսի ջրերը և առաջ է բերում մակընթացութիւնը ու տեղատուութիւնը: Ո՞վ է զարմանում տեսնելով՝ որ լոյսը անցնում է մի աստղից մի աստղ ամեն մի մասերկրորդում երեքհարիւր հազար կիլոմետր արագութեամբ: Սակայն միայն մտածողները կարող են գնահատել այդ հրաշալիքների մեծութիւնը. գուհիկը ոչինչ բանի վրա չի զարմանում: Եթէ մի նոր գիւտ հնարաւորութիւն տար մեզ էգուց նշաններ անել չբատի բնակիչներին և նրանցից պատասխան ստանալ, մարդկանց երեք քառորդը շատ էլ զարմացած չէին լինի միւս օրը:

Այո, կենդանական զօրութիւնները կարող են փոխադրուել մի աշխարհից միւսը, ոչ ամեն տեղ և ոչ միշտ, ի հարկէ, և ոչ ամենքը: Կան օրէնքներ և պայմաններ: Իմ կամքը կարող է բարձրացնել բազուկս, նետել մի քար, մկանունքների օգնութեամբ. եթէ ես քսան պուղանոց ծանրութիւն վեր առնեմ, դար-

ձեալ բազուկս կը բարձրացնի, բայց եթէ հազար պուղանոց, այլ ևս չեմ կարող: Ոմանց մտքերն անընդունակ են որեւէ գործունէութեան. ոմանք ձեռք են բերել գերականց ձիրքեր: Մօցարտը, վեց տարեկանում, ազգում էր իր բոլոր ունկընդիրների վրա իր երաժշտական հանճարի զօրութեամբ և հրատարակում էր ութը տարեկանում իր սօնատների առաջին երկու աշխատութիւնները, մինչդեռ աշխարհիս ամենամեծ դրամատիական հեղինակը, Չէքսպիրը, երեսուն տարեկան հասակից առաջ դեռ չէր գրել իր անուան արժանի որ և է մի բան: 2ը պէտք է կարծել, որ հոգին պատկանում է որեւէ գերբնական աշխարհի: Ամեն բան ընութեան մէջ է: Հարիւր հազար տարի չըկայ, որ երկրային մարդկութիւնը դուրս է եկել անասնական պատեանից. միլիոնաւոր տարիների ընթացքում, նախնական, երկրորդական, երրորդական պէրիօդների երկար պատմական շրջանի ընթացքում, Երկրի վրա չըկար մի հատիկ միտք այդ հոգի և վեհ տեսարանները գնահատելու համար, չըկար մի հատ մարդկային նայուածք

նրանց տեսնելու համար: Առաջագիմու-
թիւնը կամաց-կամաց բարձրացրել է բոյ-
սերի և կենդանիների ստորին հոգիները.
մարդկային էակը նորագոյն արարած է
մոլորակի վրա: Բնութիւնն անդադար ա-
ռաջագիմութեան մէջ է, տիեզերքը մի
մշտնջենական եղելութիւն է. համբառ-
նալը, դէպի բարձրը ձգտելը գերագոյն
օրէնք է . . .

«Բոլոր աշխարհները, աւելացրեց Սպէ-
րօն, այժմ բնակուած չեն: Ոմանք դեռ
արշալոյսի մէջ են, ոմանք աղջամուղջի:
Մեր արեգակնային սիսաեմի մէջ, օրինակ,
Հրատը, Արուսեակը, Երեակը և իր արբա-
նեակներից շատերը կենդանութեամբ լի
գործունէութեան մէջ են երևում. Լուսըն-
թազը իր նախնական շրջանը դեռ ան-
ցած չէ երևում. Լուսինը գուցէ այլ ևս
բնակիչներ չունի: Մեր ներկայ տարեշրը-
ջանը նոյնքան կարեորութիւն ունի տիե-
զերքի ընդհանուր պատմութեան մէջ, որ-
քան մի մրջնանոց անսահմանութեան
մէջ: Երկրի գոյութիւնից առաջ եղել են,
յաւիտենականութեան մէջ, մարդկութիւն-
ներով բնակուած աշխարհներ. երբ մեր

մոլորակը իր վերջին շունչը կը փչի և
վերջին մարդկային ընտանիքը կը ննջի
յաւիտենական քնով սառուցեալ ովկիա-
նոսի վերջին լճակի եզրում, անթիւ արե-
գակներ կը փայլեն միշտ անսահմանու-
թեան մէջ և միշտ կը լինեն առաւօտներ
և երեկոներ, գարուններ և ծաղիկներ,
յոյսեր և ուրախութիւններ: Ուրիշ արե-
գակներ, ուրիշ երկիրներ, ուրիշ մարդ-
կութիւններ: Անսահման տարածութիւնը
բնակուած է գերեզմաններով և օրօրոց-
ներով: Բայց կեանքը, միտքը, յաւիտե-
նական պրօգրէսը ստեղծագործութեան
վախճանական նպատակն են:

«Երկիրը մի աստղի արբանեակն է:
Այժմ, ինչպէս և ապագայում, մենք երկնքի
քաղաքացիներն ենք: Իմանանք մենք այդ
թէ ոչ, բայց յամենայն դէպս, մենք աստ-
ղերի բնակիչներ ենք:»



Այսպէս էին խօսակցում երկու բարե-
կամները իրանց մաածմունքը պաշարող
ծանր խնդիրների մասին: Երբ մի որ և է

լուծում ձեռք էին բերում, թէկուզ անկատար, մի ճշմարիտ երջանկութիւն էին զգում, որ անծանօթ հետազօտութեան մէջ մի քայլով առաջ են գնացել և կարողանում էին յետոյ աւելի հանդարտութեամբ զրոյց անել կեանքի սովորական բաների մասին: Նրանք երկուսն էլ հաւասարապէս գիտութեան ծարաւ մտքեր էին, որոնք երեւակայում էին, երիտասարդութեան լի ջերմեռանդութեամբ, թէ կարող են առանձնանալ աշխարհից, իշխել մարդկային տպաւորութիւնների վրա և իրանց երկնային ճախրի մէջ հասնել ճշմարտութեան աստղին, որ փայլում էր իրանց գլխի վերեւ՝ անսահմանութեան խորութիւնների մէջ:

IV.

A m o r

Այդ զուգական, բոլորովին մտերիմ կեանքը, որքան որ չքնաղ լինէր, բայց դարձեալ մի պակաս բան ունէր: Գոյութեան կամ անգոյութեան ահաւոր խընդիրների մասին եղած այդ խօսակցութիւնները, մարդկութեան վերլուծութեան մասին ունեցած մտքերի փոխանակութիւնը, երկրի գոյութեան վերջնական նպատակի մասին եղած հետազօտութիւնները, աստղադիտական գննողու-

Թիւնները և նրանցից ծագած խնդիրները գոհացում էին տալիս երբեմն նրանց մտքերին, բայց ոչ սրտերին: Երբ միմեանց կողքին նստած՝ երկար խօսակցել էին, թէ մեծ քաղաքի տեսարանի վրա իշխող պարտիզի օրրանի տակ, թէ լուսկեաց մատենադարանում, ուսանողը, հետազոտողը չէր կարողանում բաժանուել իր գուգակցից և երկուսն ևս մնում էին, ձեռք ձեռքի մէջ դրած, համր՝ և կաշոււմ էին միմեանց մի տիրապետող ոյժից ձգգուելով: Սպէրօն դիտում էր Իկլէային, աչքերը յառած նրա աչքերին, չէր կարողանում երկար ժամանակ տանել նրա հմայքի աղդեցութիւնը և հնարում էր մի պատրուակ հեռանալու նրանից, բայց էլի յանկարծ իրան գտնում էր նրա մօտ, սքանչանալով կեանքի այդ պօէմայի, երկնային լուսով ոգեւորւած այդ աղբիւրի վրա, որի վառ գոյնը՝ քաղելու պատրաստ կեռասի մասին էր մտածել տալիս, այդ սաղափային, օսլալային մարմնի վրա, որի կիսաթափանցիկ մորթու տակից երևում էր ալ արեան ամօթխած գոյնը, չընայելով կամքի զսպողութեան: Մեկնելուց յե-

տոյ, երկուսն ևս զգում էին մի տարօրինակ, վշտագին դատարկութիւն իրանց կուրծքի մէջ, մի անորոշ ցաւ, որպէս թէ իրանց փոխադարձ կեանքի համար կարեւոր մի կապ կտրուած լինէր, և երկուսն ևս վերադարձի ժամին անհամբեր սպասում էին: Սպէրօն սիրում էր նրան ոչ իրան համար, այլ նրա՝ Իկլէայի համար. նրա զգացման մէջ ոչ մի եսական բան չը կար. տածելով դէպի իր ընկերուհին նայնչափ խորին յարգանք, որչափ և անկեղծ ու ջերմ սէր, նա կարողացել էր ճնշել իր մէջ մարմնի ցանկութիւնները: Սակայն մի օր, երբ միմեանց կողքին նստած էին, մատենադարանի գրքերով և թուղցիկ թերթերով ծանրաբեռնուած մեծ դիւանի վրա և նստած էին լուռ, այնպէս պատահեց, որ այլևս ճնշուելով այնքան երկար ժամանակ զսպուած ջանքերի ծանրութեան տակ և չրկաթողանալով դիմանալ անդիմադրելի ձգողութեան, երիտասարդ հեղինակի գլուխն անզգայաբար թերուեց իր ընկերուհու ուսի վրա և գրեթէ անմիջապէս... նրանց չթննքները հանդիպեցին միմեանց...

Ո՛վ փոխադարձ սիրոյ անպատմելի ուրախութիւններ, ո՛վ երջանկութեան ծաւալով տոգորուած էակի անյագ արբեցողութիւն, անյաղթ երեակայութեան անվերջ յորդակից հրճուանքներ, սրտերի քաղցր երաժշտութիւն, որպիսի եթերական բարձունքի վրա չէք բարձրացրել այն ընտրեալներին, որոնց թողել էք վայելելու ձեր գերագոյն քաղցրութիւնները: Յանկարծ մոռանալով ստորին երկիրը, նրանք թռչում են արագութեամբ կախարդուած դրախտների մէջ, խորասուզվում են երկնային խորութիւնների մէջ և սաւառնում են յաւիտենական մեղկութեան բարձր գաւառների մէջ: Աշխարհը իր կօմեղիաներով և թշուառութիւններով այլևս գոյութիւն չունի նրանց համար: Չողջողուն երջանկութիւն. նրանք ապրում են լոյսի մէջ, կրակի մէջ, իրբն սալամանդր, իրբն փիւնիկ, ազատուած որ և է կշռից, թեթեւ ինչպէս բոցը, սպառուելով ինքն իրանց և վերածնելով իրանց աճիւնի միջից, միշտ լուսաճաճանչ, միշտ եռանդուն, անընկճելի, անխոցելի:

Այդ առաջին և այնքան երկար ժա-

մանակ զսպուած երջանկութեան թափը ձգեց երկու սիրականներին մի այնպիսի հոգեզմայլութեան մէջ, որ մի ըոպէ նրանք մոռացին մետաֆիզիկան և նրա առեղծուածները: Այդ ըոպէն ահեց վեց ամիս: Զգացումների ամենաքաղցրը, բայց և ամենախշտողը յայտնուել էր որպէս զի լրացրէ նրանց մտաւորական կեանքի թերութիւնը և միանգամից կարել էր, գրեթէ ոչնչացրել նրանց մէջ գիտութեան ծարաւը: Համբոյրի օրից սկսած, Գէորգ Սպէրօն ոչ միայն անհետացաւ բոլորովին աշխարհի տեսարանից, բայց դադարեց նաև գրելուց և ես ինքս չըկարողացի տեսնել նրան, չընայելով որ նա ինձ միշտ մի առանձին սէր և տրամադրութիւն էր ցոյց տալիս: Տրամաբանները կարող էին դրանից եզրակացնել, որ նա իր կեանքում առաջին անգամ զոհ էր, որ նա զբոսել էր մեծ խնդրի լուծումը, էակաների գոյութեան գերագոյն նպատակը:

Նրանք ապրում էին այն «զոյգի ինքնասիրութեամբ», որը հեռացնելով մարդկութիւնը մեր տեսողական կենդրոնից, զրանով նուազեցնում է նրա սակասու-

թիւնները և նրան աւելի սիրելի ու աւելի գրաւիչ է դարձնում: Գոհ իրանց փոխադարձ համակրութեամբ՝ ամեն բան ընդթեան և մարդկութեան մէջ երգում էր նրանց համար երջանկութեան և սիրոյ մի մշտնջենաւոր շարական:

Չատ անգամ երեկոյեանները, նրանք ճեմում էին Սէն գետի ափերով և լուսկեաց դիտում էին լոյսի և ստուերի հրաշալի ներգործութիւնները, Պարիզի երկնքի վերա, որ այնքան հիանալի է մթնշաղի ժամանակ, երբ աշտարակների և շինութիւնների ուրուագիծները գծագրւում են արեւմուտքի լուսաւոր ֆօնի վրա: Վարդագոյն և ծիրանեգոյն ամպեր, լուսաւորուած ծովի հեռաւոր ցոլացումով, որի վրա փայլում է ճիշդ այդ ընդէին մայր մտած արեգակը, ընծայում են Պարիզի երկնքին մի առանձնակի կերպարանք: Նա այնպէս գեղեցիկ է, ինչպէս Նեապոլի երկինքը, որ արեւմտեան կողմից ցոլանում է Միջերկրական ծովի անհուն հայելու մէջ, բայց գուցէ գեղեցկութեամբ գերազանցում է Վենետիկի երկնքից, որի լուսաւորութիւնը արեւելեան է և գունատ:

Այդպէս շրջագայելով նրանք դիտում էին ընդթիւնը, մոռանում էին աղմկալից քաղաքը և միևնոյն քայլով ման գալով, մի հատ էակ կազմելով, ստանում էին միաժամանակ միևնոյն տպաւորութիւնները, յղանում էին միևնոյն մտքերը, և լուսթեան մէջ խօսում էին միևնոյն լեզուն: Գետը հոսում էր նրանց ոտքերի տակ, օրուայ աղմուկները մարում էին, առաջին աստղները փայլում էին երկնքի վրա: Իկլէան սիրում էր նրանց անունը մի առ մի տալ Գէորգին, հետզհետէ երեւումն պէս:

Մարտ և ապրիլ ամիսները տալիս են յաճախ Պարիզին մեղմ երեկոյներ, որոնց մէջ փչում է գարունքի կարապետ առաջին զեփիւռը: Օրիսնի փայլուն աստղը, շողշողուն Սիրիուսը, Երկուրեակ՝ Կաստոր և Պօլլիքսը առկայծում են անհուն երկնքի մէջ. Բաղմաստեղքը խոնարհւում են դէպի արեւմտեան հորիզոնը, բայց Արքտիւրոսը միշտ առաջին ճանաչուած աստղն է եղել իր թափանցող փայլով և իր դիրքով Մեծ-Արջի պոչի շտրունակութեան մէջ: Երբեմն, աճող մահիկը սաւառնում էր արեւմտեան երկնքի վրա և մատաղահաս

դիտողունին հիանում էր, ինչպէս հռութիւնը Բուդի մօտ, «այդ ոսկէ մանգաղը աստղերի դաշտում»:

Աստղերը շրջապատում են Երկիրը. Երկիրը երկնքի մէջն է: Սպէրօն և իր ընկերուհին այդ լաւ զգում են և ոչ մի ուրիշ երկնային երկրի վրա գուցէ ոչ մի զոյգ նրանցից աւելի մտերմաբար չէր ապրում երկնքի և անսահմանութեան մէջ: Սակայն անզգալի կերպով գուցէ առանց ինքն իրան նկատելու, երիտասարդ փիլիսոփան վերսկսեց կամայ աւամայ, ընդամիջումներով, իր ընդհատուած ուսումնասիրութիւնները. նա վերլուծում էր այժմ իրերը խիստ օպտիմիստ տեսակէտից, մի բան որ առաջ չէր նկատում իր մէջ, չընայելով իր բնական բարութեան. նա դէն էր չափրտում այժմ անգութ եղբակացութիւնները, որսվհետեւ նրան թւում էին, որ այդ եղբակացութիւնները հետեանք են իրերի անկատար ծանօթութեան. նա դիտում էր բնութեան և մարդկութեան պանօրաման մի նոր լոյսով: Իկլէան նոյնպէս վերսկսել էր, գէթ մասնակի կերպով, այն ուսումնասիրութիւնները, որ

նրա հետ միասին սկսել էր, բայց մի նոր, անհուն զգացում լցնում էր նրա հոգին և նրա միտքը այլևս չունէր առաջուայ ազատութիւնը մտաւոր աշխատանքի համար: Խորասուզուելով մշտական համակրութեան մէջ, որ ունէր այն էակի համար, որին բոլորովին նուաճել էր, Իկլէան միայն տեսնում էր ամեն բան նրանով, գործում էր միայն նրա համար: Երեկոյեան խաղաղ ժամերին, երբ նստում էր նուազելու դաշնամուրի վրա կամ Զօպէնի մի նօկախերնը, որը ի մեծ զարմանս իւր, չէր հասկացել սիրելուց առաջ, կամ երգելու իր մաքուր և զօրեղ ձայնով նօրվէգիական երգերը, կամ Զումանի մէլօդիաները, նրան թւում էր թէ իր սիրեցեալը այն ունկնդիրն է, որ միայն ընդունակ է լսելու սրտի այդ ներշնչումները: Քանի հրաշալի ժամեր անցկացրաւ Սպէրօն Պասիի տան այդ ընդարձակ մատենադարանի մէջ, տարածուած դիւանի վրա, հետեւելով երբեմն նայուածքով գլանակի ծուխի քմահաճ թրթռումներին, մինչդեռ Իկլէան, իր երեակայութեան անձնատուր, երգում էր իր երկրի քաղցր

sondag-ը, Գօն-Ժուանի սերենազը, Լամարտինի լիճը, կամ երբ վաղեցներով իր ճարպիկ մատերը կլաւիշների վրա, նա թւցնում էր օդի մէջ Բոշէրինի մէլօ-դային երազը:

Գարունը վրա էր հասել: Մայիս ամիսը տեսել էր Պարիզում համաշխարհային հանդիսի բացումը, որի մասին խօսեցինք այս գրքի սկզբում և Պասսիի պարտիզի բարձրութիւնները պատսպարում էին սիրահար զոյգի Եղեմը: Իկլէայի հայրը, որ յանկարծ կանչուել էր Տունիս, վերադարձել էր արաբական զէնքերի մի ժողովածու բերելով Քրիստինիայի իր միւզէօնի համար: Նրա գիտաւորութիւնն էր շուտով վերադառնալ նորվեգիա, ուստի և մատաղահաս նորվեգիացի օրիորդի և իր բարեկամի մէջ համաձայնութիւն էր կայացել, որ իրանց ամուսնութիւնը կատարուի օրիորդի հայրենիքում, խորհրդաւոր յայտնութեան տարեդարձի օրը:

Նրանց սէրը ըստ իր էութեան, շատ հեռու էր այն սովորական միութիւնից, որոնք հիմնվում են՝ մի քանիսը զգայական կոպիտ հաճոյքի, մի քանիսը աշ-

խարհային ձանձրոյթի կամ վայրկենական քմահաճոյքի, իսկ մի քանիսն աւելի շատ կամ քիչ քօղարկուած շահերի վրա, որոնք և ներկայացնում են մարդկային սիրոյ մեծամասնութիւնը: Նրանց մշակուած միտքն առանձնացնում էր նրանց՝ մտածողութեան գերագոյն գաւառների մէջ. նրանց զգացումների փափկութիւնը նրանց պահում էր մի իդէալական միջնորդի մէջ, որտեղ նիւթի բոլոր ծանրութիւնները մոռացուած էին. նրանց ջղերի ծայրայեղ զգայականութիւնը, նրանց բոլոր զգացողութիւնների ընտիր նրբութիւնն ընկղմում էր նրանց այնպիսի հիացումների մէջ, որի փափկութիւնն անհուն էր թւում: Եթէ ուրիշ աշխարհներում ևս սիրում են, սէրն այնտեղ դրանից աւելի ընտիր և խոր չի կարող լինել: Ֆիզիօլօգիստի համար նրանք մի կենդանի վկայութիւն կարող էին լինել այն իրողութեան, թէ հակառակ գոհհիլ կարծիքի, բոլոր զուարճութիւնները բղխում են ուղեղից, թէ զգացումների սաստկութիւնը համապատասխանում է էակի պսիխական զգայականութեան:

Պարիզը նրանց համար ոչ թէ մի քաղաք էր, ոչ թէ մի աշխարհ, այլ մարդկային պատմութեան թատրոնը: Նրանք արդէն երկար ժամեր անց էին կացրել մեր հիանալի միլզէօններում, մանաւանդ մեր մեծ Լուվրի հին և արդի chef-d'oeuvre-ների մէջ, որտեղ արուեստը կարծես յաւերժացրել է մարդկային մտածողութեան ամբողջ պատմութիւնը, արտայայտելով նրանց անկորնչելի կոթողներով: Լուվրի հրաշալի գալէրիաները Վէրսայի գալէրիաներից աւելի լաւ են պահպանել արքայական չքեղութիւնների մթնոլորտը: Նրանք սիրում էին այնտեղ միմեանց հանդիպել. այդտեղից դնում էին հին Պարիզի հմայքների ծոցում վաղուց աներևոյթացած դարերի կեանքով ապրելու: Բոլոր նշանաւոր վայրերը, հնութիւնները, Փրանսիայի պատմութեան բոլոր յիշատակները նրանց ուխտագնացութեան առարկան դարձաւ: Ամբոխի մէջ, նրանք առանձնանում էին դիտելու անցեալը և տեսնում էին ինչ որ գրեթէ ոչ ոք չը գիտէ տեսնել:

Եւ այդպէս, ահագին քաղաքը նրանց հետ խօսում էր իր առաջնայ լեզուով,

թէ այն ժամանակ երբ նրանք կորչում էին Նօտր-Դամի աշտարակների, սիւնների, կոթողների, արարեսկների մէջ և տեսնում էին իրանց ոտքերի տակ մարդկային փեթակը քնած, երեկոյեան մթընշաղի մէջ, թէ այն ժամանակ, երբ աւելի բարձրանալով, նրանք աշխատում էին Պանտէօնի գազաթից վերակազմելու Պարիզի հին ձևը և նրա յաջորդական դարգացումը, սկսեալ հռովմէական կայսրներից, մինչև Փիլիպպոս Օգոստոսը և իր յաջորդները: Գարնան արեգակը, ծաղկած շուշանները, մայիսեան ուրախ առաւօտները, լի թռչնիկների դայլայլիկներով և ջղային գրգիռներով, ստիպում էին նրանց շատ անգամ դուրս գալ Պարիզից՝ մարգերի և անտառների մէջ ման գալու: Ժամերը սլանում էին ինչպէս զեփիւռի շունչերը, օրը չքանում էր իբրև մի անուրջ և գիշերը շարունակում էր սիրոյ աստուածային երազը: Մեր սիրահարների համար ժամերը աւելի շուտ էին չքանում, քան Լուսնթագի մերկայոյզ աշխարհում, որտեղ օրերը և գիշերները երկու անգամ աւելի արագ են հոսում

քան այստեղ և մինչև անգամ տասը ժամ չեն տևում: Ժամանակի չափը մեր մէջ է:

Մի երեկոյ երկունս ևս նստած էին Ղէվրոզ դղեակի հին աշտարակի տանիքի վրա, սեղմուած միմեանց կողքին, կենդրոնում, որտեղից առանց արգելքի կարելի է աչք ածել ամբողջ շրջակայքի վրա: Հովիտի մեղմ օդը, խառնուած մօտակայ անտառների բնական անուշաբոյրով, բարձրանում էր մինչև նրանց. սոխակը մացառների աճող ստուերի մէջ, փորձում էր իր մելօդիական երգը, որ նա ուղղում է աստղերին: Արեգակը նոր մայր էր մտել ոսկու և ծիրանու շլացման մէջ և միայն արեւմուտքը դեռ լուսաւորում էր բաւական զօրեղ լոյսով: Ամեն բան կարծես ննջում էր անհուն բնութեան ծոցում: Իկլէան մի քիչ գունատ, բայց արեւմտեան երկնքի լոյսով շողշողուն, կարծես թափանցուած էր արեգակից և ի ներքուստ լուսաւորուած, այնքան նրա մորթը սպիտակ էր և թափանցիկ: Նայուածքը մտախոհ, փոքրիկ մանկական բերանը թեթեակի բաց, նա կարծես խորասուզուած էր արեւմտեան

լոյսի դիտողութեան մէջ: Յենուած Սպէրօի կրծքին, բաղունները ձգած նրա պարանոցով, նա անձնատուր էր եղիլ իր անուրջներին, երբ մի թափառական աստղ խփեց անցկացաւ երկինքը ճիշդ աշտարակի գլխին: Իկլէան դողդողաց, մի քիչ նախապաշարուած լինելով: Արդէն ամենափայլուն աստղերը երևում էին երկնքի խորութեան մէջ. աւելի բարձր, Վէդան՝ գուտ սպիտակ. հիւսիսում՝ Կապելլան. արեւմուտքում՝ Կաստորը, Պօլլիկսը և Պիօկեօնը: Նկատվում էին նոյնպէս և Մեծ-Արջի եօթն աստղները, Կոյսի Հասկը, Բէգուլուսը: Կամաց-կամաց, մի առ մի, աստղները ծածկում էին երկնային հաստատութիւնը: Բեռնային աստղը ցոյց էր տալիս երկնադնդի միակ անշարժ կէտը: Լուսինը բարձրանում էր. նրա կարմրաւուն սկաւառակը ցոյց էր տալիս նուազող ֆաղիւր: Հրատը փայլում էր Պօլլիկսի և Բէգուլուսի մէջտեղը, հարաւ-արեւելքում. երեակը—հարաւ-արեւելքում: Աղջամուղջը հետզհետէ տեղի էր տալիս գիշերի խորհրդաւոր թափաւորութեան:

«Ձեռ գտնում, շշնջաց Իկլէան, որ

բոլոր այս աստղերը կարծես աչքեր են և մեզ են նայում:

— Երկնային աչքեր, ինչպէս քոնը: Ի՞նչ կարող են տեսնել երկրի վրա քեզանից աւելի գեղեցիկ բան... մեր սէրից աւելի գեղեցիկ բան:

— Եւ էլի ի՞նչ կարող ես տեսնել, աւելացրեց նա:

— Այո, էլի աշխարհը, ընտանիքը, ընկերութիւնը, սովորութիւնները, բարոյականութեան օրէնքները, էլ ինչ գիտեմ. ես հասկանում եմ քո մտածմունքները: Մենք մոռացել ենք բոլոր այդ բաները, որպէսզի հնազանդենք ձգողութեան, ինչպէս արեգակը, ինչպէս բոլոր այս աստղերը, ինչպէս սոխակը որ երգում է, ինչպէս համայն ընութիւնը: Զուտով մենք կը տանք այդ ընկերական սովորութիւններին իրանց պատկանող հարկը և կարող ենք յայտնապէս հրատարակել մեր սէրը: Դրանով միթէ աւելի երջանիկ կը լինենք: Հնարաւոր է աւելի երջանիկ լինել, քան ենք մենք այս բոլորի:

— Ես քոնն եմ, պատասխանեց Իկլէան: Ինձ համար ես գոյութիւն չունեմ, ես

ոչնչանում եմ քո լոյսի մէջ, քո սիրոյ մէջ, քո երջանկութեան մէջ, և ես էլ ուրիշ ոչ մի բան չեմ ցանկանում, ոչ մի բան: Ո՛չ: Ես մտածում էի այդ աստղերի մասին, այդ մեզ նայող աչքերի մասին և ինձ հարցնում էի. ո՞րտեղ են այսօր բոլոր այն մարդկային աչքերը, որոնք դիտել են դրանց, հաղարաւոր տարիներից ի վեր, ինչպէս մենք դիտում ենք այս երեկոյ, ո՞րտեղ են բոլոր այն սրտերը, որոնք բարախել են, ինչպէս ըստախում է այս վայրկեանին մեր սիրտը, որոնք միախառնուել են անվերջ համբոյրների մէջ, աներևոյթացած գիշերների գաղտնիքի մէջ:

— Նրանք բոլորը գոյութիւն ունեն: Ոչ մի բան չի կարող փշանալ: Մենք մտքով միացնում ենք երկինքը և երկիրը և իրաւունք ունենք: Բոլոր դարերում, բոլոր ազգերի մէջ, բոլոր դաւանութիւնների մէջ, մարդկութիւնը միշտ հարցրել է այդ աստղաւոր երկնքին իր ճակատագրի գաղտնիքը: Նրանք ամենքը մի տեսակ նախադուշակում էին, որ Երկիրը երկնքի մի աստղ է, ինչպէս Հրատը և

Փայլածուն, որ մենք տեսնում ենք ներքև, որոնք երկնքի երկիրներ են խաւար, լուսաւորուած մեզ նման միեւնոյն արեգակով, ինչպէս բոլոր այն աստղերը, որոնք հեռաւոր արեգակներ են: Քո միտքը զբաղուած է նոյն հարցով, որի մասին մարդկութիւնը մտածել է իր գոյութեան օրից: Բոլոր նայուածքներն որոնել են երկրնքում մեծ հանելուկի պատասխանը և գիցարանութեան առաջին օրից սկսած, Ուրանիան է, որ պատասխանել է:

«Եւ նա է, այդ աստուածային Ուրանիան, որ միշտ կը պատասխանէ: Նա բռնած ունի իր ձեռքում երկինքը և երկիրը. նա մեզ ապրեցնել է տալիս անսահմանութեան մէջ... Եւ յետոյ մարմնացնելով նրա մէջ տիեզերքի ուսումնասիրութիւնը, կարծես թէ մեր հայրերի բանաստեղծական զգացումը կամեցել է լրացնել գիտութիւնը կեանքով, շնորհքով և սիրով: Նա ամենաընտիր մուսան է: Նրա գեղեցկութիւնը կարծես մեզ ասում է, թէ աստղագիտութիւնը և անսահմանը ճշմարտապէս հասկանալու համար, պէտք է լինել... սիրահար»:

Գիշերը վրա էր հասնում: Լուսինը յամբարար բարձրանալով արեւելեան երկնակամարի վրա, տարածում էր մթնոլորտի մէջ մի լոյս, որն, անդայաբար, փոխարինում էր աղջամղջային լոյսին և տրդէն քաղաքում, իրանց ոտքերի տակ, անտառների և աւերակների ներքև, մի քանի լոյսեր այստեղ և այնտեղ երևում էին: Նրանք կանգնել էին աշտարակի գագաթի մէջտեղ: Իկէան գեղեցիկ էր, շրջանակուած իր վարսերի պսակի մէջ, որոնց խոպուիքը ծփում էին իր ուսերի վրա: Գարնանային օդի բուրումները, խառնուած մօտակայ պարտէզների մանիշակների, մեխակների, շուշանների, վարդերի անուշահոտութեան հետ, տարածվում էին օդի մէջ. մեղամաղձոտ գիշերների գաղջ փափկասիրութիւնը զգացվում էր օդի մէջ այդ բուրումների հետ միասին: Խորին առանձնութիւն և լուսթիւն էր տիրում: Մի երկար համրոյր, գոնէ հարիւրերորդը զարնանային այդ զգուող օրուայ մէջ, միացրեց նրանց շրթութունքները:

Իկէան դեռ երազում էր: Մի փա-

խուցիկ ժպիտ պայծառացրեց յանկարծ
նրա դէմքը և անհետացաւ, չբանալով
իրրէ մի անցողական պատկեր:

—Ի՞նչի մասին ես մտածում, հար-
ցրեց նա.

—Ոհ, ոչինչ. մի աշխարհային, գութ-
հիկ, մի փոքր թեթեւ միտք: Ոչինչ:

—Քայց ի՞նչ, հարցրեց, գրկախառնելով իր բազուկների մէջ:

—Դէ լաւ, կասեմ. ես ինձ հարցնում էի, թէ... այն միւս աշխարհներում բերան ունեն... որովհետեւ, տեսնում ես, համարոյրը, չրթօւնքները...»:



Այդպէս անցնում էին ժամերը, օրերը, շաբաթները, ամիսները նրանց բոլոր մտածումներների, նրանց բոլոր զգացողութիւնների, նրանց բոլոր տպաւորութիւնների սերտ միութեան մէջ: Երկուսն էս հաւասարապէս արհամարհանք տա-ծելով դէպի ստորին կլբերը և գոհ-հիկ զգացումները և բնազդամբ որոնե-լով բնութեան մէջ գտնուած ամենագե-

դեցիկ պատկերները, որպէս զի նրանցով տպաւորեն իրանց սրտերի աստուածային բովանդէքը, որանք փախչում էին շատ անգամ մարդկային յուզմունքից շատ հեռու, դէպի անտառների խոր առանձնութիւնները կամ դէպի ծովի վեհ տեսարանները: Պարիզի բոլոր շրջականները և հին ամրոցները հետզհետէ նրանց հետաքրքրութեան արշաւանքի առարկայ դարձան, որոնց մէջ նրանք, իբրեւ ազատութեան և սիրոյ ծարաւ երկու թռչուններ, գնում էին երազելու և նորից երգելու համար: Ո՛ր լուսին, որ մտախոհ փայլում եւ գաղտնակութեան լոյսով, արեւմտոցի ոսկեզօծ ճառագայթներ, և դուք, ով գիշերային լռակեաց աստղեր, որ շողշողում էք խոր ծովերի վրա, միթէ երբեկիցէ բացուելու է ձեր առաջ այդպիսի ոգեւորուած նայուածք, միթէ երբեկիցէ բարախել են ձեր առաջ մարդկային երկու սրտեր, այդքան սերտ միացած Սիրոյ յաւիտենական շնչառութեան հետ, որ զեկալարում է տիեզերքը:

Այո, այդպէս անցան իբրև մի քաղցր երազ, այդ հիանալի գարնան, ամառուայ

այդ ջերմ ամիսները: Յուլիսեան արեգակը փայլում էր իր բոլոր զօրութեամբ և հասել էր իկլէայի համար հայրենիքը մեկնելու ժամը: Որոշուած ժամանակին, նա գնաց իր հօք հետ Քրիստինիա: Եթէ թուարանութեան մէջ, մի և մի՝ անում են երկու, ճիշդ կը լինի ասել որ սիրոյ մէջ մի և մի՝ անում են մի: Բայց կարճ էին նրանք երկար ժամանակ անջատուած մնալ:

Սպէրօն նրանց հետեւեց մի քանի օրից յետոյ: Երիտասարդ գիտնականի մտադրութիւնն էր անցկացնել Նորվեգիայում օգոստոս և սեպտեմբեր ամիսները և այդտեղ շարունակել իր անցեալ տարի ձեռնարկած հետազոտութիւնը մթնոլորտային ելեքարականութեան և հիւսիսափայլների մասին, գիտողութիւններ, որոնք մասնաւորապէս հետաքրքրական էին նրա համար և հազիւ ժամանակ էր ունեցել սկսելու:

Նորվեգիայում վարած կեանքն երազների ամենաքաղցրի շարունակութիւնն եղաւ: Նրանք այցելեցին միասին այն առանձնակեաց և լռակեաց լճերը, այն

վայրերն ըլլակաները, այն ընդարձակ և մեկամաղձոտ տափաստանները, որոնք յիշեցնում են Օստիանի, հին բարդերի քնարի վրա երգած Սկովտիան: Ամեն բան նրանց խօսում էր անսահմանութիւն և սէր: Հիւսիսի խարտեաչ աղջիկը շրջապատում էր իր բարեկամին մի այնպիսի մշտնջենաւոր հմայքի պսակով, որ գուցէ մոռացնել տար նրան ընդ միշտ գիտութեան սէրը, եթէ նա ինքն ևս, ինչպէս ասացինք, չունենար անձնական մի անյազելի ծարաւ ուսման համար:

Այն փորձերը, որոնց ձեռնարկել էր անխոնջ հետազոտողը, հետաքրքրում էին իկլէային նոյնչափ, որչափ նրան և իկլէան սկսեց մասնակցել այդ փորձերին, ընկերանալով նրան իրրեւ մի անձնուէր օգնական նրա հետաքրքիր հետազոտութիւնների մէջ: Իկլէան նոյնպէս կամեցաւ հասկանալ հիւսիսափայլի այն խորհրդաւոր բոցերի բնութիւնն որոնք երեկոները փայլատակում էին մթնոլորտի լարձրութիւնների վրա և որովհետեւ այդ հետազոտութիւնների շարքը նրան տանում էին դէպի մի ցանկութիւն՝ օգապա-

բիկով մի վերելք կատարելու, որպէս զի երևոյթը նոյն իսկ իր աղբիւրում քննուի, Իկլէան ևս նոյն ցանկութիւնը զգաց: Սպէրօն փորձեց համոզելու որ ձեռք վերցընի այդ մտադրութիւնից, ի նկատի ունենալով, որ օգտավարիկային փորձերն անվտանգ չեն լինում: Բայց հէնց այդ վտանգին մասնակցելու միակ միտքը բաւական էր խլացնելու Իկլէային՝ իր սիրեցեալի աղաչանքները չըլսելու համար:

Երկար վարանումներէից յետոյ, Սպէրօն որոշեց իր հետ տանել նրան և պատրաստեց, Քրիստինայի համալսարանում, մի վերելք՝ հէնց այն գիշերուայ համար, երբ հիւսիսափայլը պէտք է երևար:

V

Հ Ի Ի Ս Ի Ս Ս Փ Շ Յ Լ Ը

Մագնիսացրած սլաքի ճօճումներն աւետում էին հիւսիսափայլի կամ բևեռային արշալոյսի մօտենալը նոյն իսկ արեւի մայր մտնելուց առաջ և արդէն սկսել էին օդավարիկը ջրածին դադով լցնել, երբ, իրօք, երկնքի վրա, մագնիսական հիւսիսում, նկատուեց այն թափանցիկ կանաչ ոսկեայ գունաւորութիւնը, որ միշտ բևեռային արշալոյսի ստոյգ նշանն է: Մի քանի

ժամում պատրաստութիւնները վերջացել էին: Մթնոլորտը, բոլորովին ազատ որևէ ամպից, կատարեալ պարզ էր. աստղերը պսպղում էին երկնքում, խորին մթութեան ծոցում, առանց լուսնի լոյսի. միայն, դէպի հիւսիս, մի մեղմ լոյս, բարձրանալով կամարակապ մութ հատուածով, արձակում էր մթնոլորտի բարձրութիւնների մէջ թեթեւ շառաւիղներ՝ վարդագոյն և մի քիչ կանաչ, որոնք կարծես մի անծանօթ կեանքի ճօճումներն էին: Իկլէայի հայրը, որ ներկայ էր օդապարիկի ուղուցման, ամենեին չէր կարծում, որ իր աղջիկն ևս գնալու է. բայց վերջին բոպէին աղջիկը մտաւ նաւակի մէջ իբրեւ թէ այցելելու. Սպէրօն մի նըշան արեց և օդապարիկը բարձրացաւ ծանրութեամբ, վեհափառութեամբ Քրիստինիա քաղաքի վրա և քաղաքն երևաց լուսաւորուած հաղարաւոր լոյսերով, երկու օդաչու ուղևորների ներքեւ, և սեւ մթութեան մէջ հետզհետէ հեռանալով՝ սկսեց փոքրանալ:

Հուտով երկնային խութը սաւառնեց սև դաշտերի վրայով և դողդոջուն լուսա-

ւորութիւններն անհետացան: Քաղաքի ժխորը գաղարել էր նոյնպէս. մի խորին լուութիւն, բարձրութիւնների բացարձակ լուութիւնը շրջապատեց օդային նաւը: Այդ աննման լուութեամբ տպաւորուած, գուցէ մանաւանդ իր վիճակի նորութեան պատճառով, Իկլէան սեղմուել էր իր անվեհեր բարեկամի սրտին: Նրանք բարձրանում էին արագաբար: Հիւսիսափայլը կարծես իջնում էր, փռուելով աստղերի տակ իբրեւ ոսկէ և ծիրանի կերպասի մի ծփալից վարագոյր, որ ծփում է ելեքտրական ցնցումներից: Բիւրեղեայ և լուսատու որդերով լցուած մի փոքր գնդակի միջոցով Սպէրօն դիտում էր իր գործիքները և արձանագրում էր տետրակի մէջ նրանց ցուցմունքները զանազան բարձրութիւնների վրա: Օդաչու նաւը միշտ վեր էր ելնում: Որպիսի՜ անհուն ուրախութիւն հետազօտողի համար: Նա մի քանի բոպէից յետոյ պէտք է սաւառնէր հիւսիսափայլի գաղաթի վրա, նա պէտք է գտնէր այդ արշալոյսի բարձրութեան հարցի պատասխանը, որ զուր տեղ դրել էին այնքան ֆիզիկոսներ և մանաւանդ

իր սիրեցեալ ուսուցիչները, երկու մեծ «հոգեբանները և փիլիսոփաները» — Էրչ-Թէզը և Ամպերը:

Իկլէայի յուզմունքը խաղաղել էր. «Մի-թէ վախեցար, հարցրեց նրան իր բարեկամը: Օգապարիկն ապահով է: Ոչ մի պատահարքի վախ չըկայ: Ամեն բան հաշուի է առնուած: Մենք կիջնենք մի ժամից յետոյ: Երկրի վրա քամու հետքն անգամ չըկայ»:

— Ոչ, պատասխանեց նա, մինչ մի երկնային վարդազոյն լոյս շառագունում էր նրա գէմքը. բայց այնքան օտարոտի է, այնքան գեղեցիկ է, այնքան աստուածային է այս ամենը: Եւ այնքան մեծ է ինձ, փոքրիս համար: Ես մի վայրկեան սարսուռացի: Ինձ թւում է, որ քեզ սիրում եմ աւելի շատ քան երբ և իցէ:...

Եւ ձգելով թիւը նրա պարանոցով, գրկեց նրան կրքոտ, երկար, անվերջ սեղմումով:

Միայնակ օգապարիկը լռութեամբ ծփում էր օգային բարձրութիւններէ մէջ, իրրեւ թափանցիկ գազի մի գունդ փակուած մի բարակ մետաքսեայ ծրարի մէջ:

Այն մութ շողքը, որ ընկնում է աստղերից, որի մասին խօսում է Կորնէյլը, բաւական էր, առ ի չգոյէ հիւսիսափայլի ճառագայթների՝ որոշելու համար օդապարիկի ամբողջութիւնը: Նաւակը կախ էր ընկած մետաքսէ գունդը պատող թելից, կապուած ութ ամուր շուաններով: Լռութիւնը խորին էր, հանդիսաւոր. կարելի էր լսել նրանց սրտերի բարախումները: Երկրի վերջին աղմուկները դադարել էին: Լողում էին հինգ հազար մէտր բարձրութեան վրա, մի անսովոր արագութեամբ. վերեւից փչող քամին տանում էր օդաչու նաւն այնպէս որ ամենափոքր շշուկ չէր լսվում. օգապարիկն ընկզմում լինելով օդի հոսանքի մէջ, գունդը, ինչպէս և ամենափոքր հիւլէն, գտնվում էր յարաբերական հանգստութեան մէջ: Այդ վեհ գաւառների միակ բնակիչները — մեր երկու ճանապարհորդները, վայելում էին այն ընտիր երջանկութիւնը, որ ծանօթ է օդաչուներին, երբ շնչում են առոյգ և թեթեւ օդը, երբ տիրապետում են ստորին գաւառների վրա, երբ մոռանում են տարածութիւն-

ների այդ լուսթեան մէջ երկրային կեանքի բոլոր գոեհկութիւնները. և ոչ մինը նրանց նախորդներից այնպէս լաւ չէր գրահատում այդ եղական կացութիւնը, ինչպէս նրանք, կրկնապատկելով, տասնապատկելով այդ կացութիւնն իրանց սեպհական երջանկութեան զգացումով: Նրանք խօսում էին ցածր ձայնով, կարծես վախենալով որ հրեշտակները չըլսեն իրանց և չըշքանայ այն մոգեկան հմայքը, որ նրանց կախ ընկած պահում էր երկնքի դրացիութեան մէջ...: Երբեմն յանկարծակի լոյսեր, հիւսիսափայլի ճառագայթները խփում էին նրանց երեսն ի վեր. յետոյ ամեն բան նորից ընկնում էր աւելի խորին և անզննելի մթութեան մէջ:

Այդպէս ծփում էին նրանք իրանց աստղային երազի մէջ, երբ յանկարծ մի ձայն խփեց նրանց աւանջին, ինչպէս մի խուլ շփոց: Ականջ գրին, կախ ընկան նաւակից դուրս: Այդ ձայնն երկրից չէր գալիս: Գուցէ նա հիւսիսափայլի ելեքտրական մի մըմունջ էր. գուցէ բարձրութիւնների մէջ որ և իցէ մի մագնիսական մըրիկ էր: Կարծես փայլակներ էին՝ գալիս տար-

ածութեան խորքից, շրջապատում նրանց և անհետանում: Նրանք սկսեցին ունկնդրել շնչասպառ: Զայնը բոլորովին իրանց մօտին էր... Այդ գազն էր, որ փախչում էր օդապարիկից:

Կամ խողովակն ինքն իրան էր բացուել, կամ նրանք իրանց շարժման մէջ ճնշում էին գործել պարանի վրա, ինչ և իցէ, զազը դուրս էր վազում:

Սպէրօն շուտ նկատեց այդ անհանգըստացնող աղմուկի պատճառը, բայց սարսափը տիրեց նրանց, որովհետեւ խողովակը ծածկել անկարելի էր: Քննեց բարձրագույնը, որ սկսել էր յամբարար բարձրանալ— ուրեմն օդապարիկն ցած էր իջնում: Եւ անկումը, առաջ ծանր, բայց անխուսափելի, պէտք է կատարուէր, աճելով մատեմատիքական յարաբերութեամբ: Ջննելով ստորին անջրպետը, նա տեսաւ հիւսիսափայլի բոցերի ցոլանալը մի ահագին լճի վճիտ հայելու մէջ:

Օդապարիկն իջնում էր արագութեամբ և երեք հազար մետր էր միայն հեռու: Պահելով ըստ երեւոյթին իր հանդարտութիւնը, բայց վտանգի մեծութեան մասին

որեւէ խարուսիկ յոյս չունենալով, թշնուառ օղաշուն հետզհետէ վայր ձգեց ինչ որ կար օղապարիկի մէջ, քսակները, ծածկոցները, գործիքները և դատարկեց նաւակը, սակայն այդ անբաւարար թեթեացումը միայն մի բոլէ կարողացաւ արագութիւնը յամբացնել: Իջնելով կամ աւելի լաւն ասած՝ ընկնելով այժմ մի անյուր արագութեամբ, օղապարիկն շուտով հասաւ մի լճի, որ երկրից մի քանի հարիւր մետր մօտ էր: Մի սաստիկ քամի սկսեց փչել ներքից վերեւ և փչել իրանց ալանջների մէջ:

Օղապարիկն ինքն իր վրա պտոյտ եկաւ կարծես մրրկից տանուելով: Յանկարծ Գէորգ Սպէրօն զգաց մի սաստիկ սեղմում, մի երկար համբոյր իր շրթունքների վրա. «Իմ Տէրս, իմ Աստուածս, իմ Ամենս, ես քեզ սիրում եմ», գոչեց Իլլէան: Եւ բաժանելով երկու շուան, նա դահալիժեց իրան դատարկութեան մէջ:

Օղապարիկն թեթեացած, վեր բարձրացաւ իրրեւ մի նետ. Սպէրօն ազատուած էր:

Իլլէայի մարմնի անկումը լճի խոր

ջրերի մէջ առաջ բերաւ մի խուլ, օտարոտի դարհուրելի աղմուկ գիշերուայ լուսութեան մէջ: Գժուած կսկծից և յուսահատութիւնից, զգալով որ մաղերը դիք դիք կանգնել են գանգի վրա, բանալով աչքերը ոչինչ չը տեսնելու համար, տարուելով օղապարիկից աւելի քան հազար մետր բարձր, Սպէրօն կախ ընկաւ խողովակի պարանից, յուսով՝ իսկոյն ընկնելու արկածի կէտատեղին. բայց պարանը չօգնեց: Նա որոնեց, ձեռքով տնտղեց, բայց զուր: Իր ձեռքի տակ պատահեց իր սիրունու քօղին, որ մնացել էր կաած պարանների մէկից, մի թեթեւ անուշաբոյր քօղ, գեռ միտղ իր գեղեցիկ ընկերուն հոտով. նա լաւ նայեց պարանները, կարծեց տեսնել նրանց վրա սեղմուած փոքր ձեռքերի գրոշմը և գնելով իր ձեռներն այնտեղ, ուր մի բոլէ առաջ Իլլէան զրել էր իր ձեռները՝ նա ձգեց իրան—օղապարիկից դուրս:

Մի վայրկեան նրա ոտքը մնաց բռնուած պարաններից, բայց ոյժ ունեցաւ ազատելու և ընկաւ տարածութեան մէջ գլխի վրա պտոյտ գալով:

Մի ձկնորսի նաւակ, որ ներկայ էր գրամայի վախճանին, ոյժ էր տուել իր առագաստներին, որ գայ հասնի լճի այն կէտը, ուր նորատի աղջիկը վահաժիժուել էր և կարողացել էր ժամանակին հասնել և վերցնել նրան: Նա մեռած չէր: Բայց չը նայելով նրան շռայլած բոլոր հոգացողութեան, ջերմը վրա հասաւ և վերջ ի վերջոյ մահը տարաւ նրան: Ձկնորսներն առաւօտեան եկան լճի եզրերի մի փոքր նաւահանգիստը և փոխադրեցին Իկլէային իրանց համեստ խրճիթը, առանց որ նրա գիտակցութիւնը վրա գար:

«Գէորգ», գոչում էր նա բանալով աչքերը, «Գէորգ» և այդ էր միայն: Երկրորդ օրը նա լսեց գիւղի զանգակի տխրահրնչիւն ձայնը. «Գէորգ», կրկնում էր, «Գէորգ»: Գէորգի մարմինը դտել էին տաճ զանգուածի վիճակի մէջ, գետափից մի փոքր հեռու. նրա անկումը մօտ հազար մետր բարձրութիւնից, սկսուել էր լճի վրա, բայց մարմինը, պահպանելով օդապարիկից ընդունած հորիզոնական արագութիւնը, չէր ընկել ուղղահայեաց—նա ընկել էր կոր, որպէս թէ սահած լինէր

օդապարիկին հետեող մի թելի երկարութեամբ և ընկել էր իրրե երկնքից գահաժիժուած մի կոյտ, լճի եզրերը շրջապատող մի մարգագետնի վրա, խոր կերպով ապաւորել էր հողի վրա իր գրոշմը և ցայտել էր անկման կէտից մի մետր աւելի հեռու, բայց ոսկրները ջարդ ու փշուր էին եղել և ուղեղը թափուել էր զանգից: Հազիւ նրա գերեզմանը ծածկուել էր, որ ստիպուեցան նրա կողքին պեղել Իկլէայի գերեզմանը, որ մեռաւ կրկնելով մարած ձայնով. «Գէորգ, Գէորգ»:

Մի հատիկ վէժ ծածկեց նրանց երկուսի գերեզմանը և միեւնոյն նոճին տարածեց իր ստուերը նրանց հանգստեան վրա: Դեռ այսօր, Տիրեֆիօրգէն գեղեցիկ լճի եզրաբնակները պահպանում են իրանց սրտի մէջ դժբախտ արկածի մեղամագձիկ յիշատակը, որ պրեթէ լեզենդական է զարձել և առանց ափսոսանքի ցոյց չեն տալիս ճանապարհորդին դամբարանի վէմը:

VI

ՄՅՏՆՋՆՆԵՐԸ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Օրերը, շաբաթները, ամիսները, եղանակները, տարիները անցնում են շուտով այս մոլորակի վրա և, անկասկած, միև մոլորակների վրա ևս: Քսան անգամից աւելի արդէն երկիրը կատարել է իր տարեկան թաւալումը արեգակի շուրջը այն օրից սկսած, երբ ճակատագիրն այնպիսի ողբերգական կերպով փակեց այն գիրքը, որ իմ երկու երիտասարդ բարեկամներս կարդում էին գրեթէ մի տարի. նրանց երջանկութիւնն արագ եղաւ, նրանց առաւօտը չքացաւ իրեն մի արշա-

լոյս: Ես նրանց եթէ ոչ մոռացել^{*)}, գէթ աչքիցս կորցրել էի, երբ նորերս հիպնոտիզմի մի նիստի մէջ նանսիում, որտեղ կանգ առի մի քանի օր, Վօզէդ գնալիս, բանն այնպէս բերաւ, որ ես պէտք է հարցաքննէի մի «առարկայ», որի օգնութեամբ տեղական գիտնականները ձեռք էին բերել մի քանի այնպիսի զարմանալի հետեանքներ, որոնց մասին մի քանի տարուց ի վեր խօսում էր մեր գիտնական

*) Երբեմն տարօրինակ պատահմունքներ են լինում: Այն օրը՝ երբ Սպէրօն կատարեց իր շաբաթախոս վերելքը, ես Պարիզում էի և իմացայ նրա օգային ճանապարհորդութեան մասին շնորհիւ մազնիսական սլաքի տարօրինակ զոգումն, որ ցոյց էր տալիս սաստիկ հիւսիսափայլի գոյութիւնը: Յայտնի է, որ իրօք, հիւսիսափայլները հեռուից երևան են հանում իրանց գոյութիւնը մազնիսական ալեկոծումներով: Բայց ինձ ամենից շատ զարմացնողը, և այն բանը, որի բացատրութիւնը դեռ մինչև այժմ չեմ կարողացել ունենալ, այն է, որ նոյն իսկ դժբախտ արկածի ժամին ես յզում էի մի անվերջ ցաւ, յետոյ մի տեսակ նախազգացում՝ թէ նրան մի դժբախտութիւն է պատահել: Նրա մտնը ինձ ծանուցանող հեռագիրը համարեա ինձ պատրաստ գտաւ այդ գոյժը լսելու:

մամուլը: 2ը գիտեմ ինչպէս պատահեց, որ իմ և նրա մէջ հրատ մոլորակի մասին խօսակցութիւն սկսուեց:

Երբ ինձ նկարագրեց «Աւագոտ ծով» անունով աստղադէտներին յայտնի մի ծովի եզրային կողմերը, ինչպէս և մի առանձնակի կղզի, որ բարձրանում է այդ ովկիանոսի ծոցում, նկարագրեց նոյնպէս այդ ծովափները զարդարող կարմրաւուն բուսականութիւնը և գեղանկար դաշտերը, այդ հիպնոտիկը, ծայրագոյն զգայականութեան տէր, յանկարծ գունատուեց և ձեռքը տարաւ ճակատին. նրա աչքերը փակուեցին, արտեանունքները մօտեցան, կարծես կափնում էր բռնել մի թռուցիկ միտք, որ կամենում էր փախչել: «Տեսէք, գոչեց նրան հրամայաբար փորձ անող բժիշկ Բ..., կանգնելով նրա առաջ, տեսէք, այդպէս եմ կամենում:

— Դուք այնտեղ բարեկամներ ունիք, ասաց ինձ:

— Այդ ինձ շատ չէ դարմանում, պատասխանեցի ես ծիծաղելով, ես նրանց համար շատ բան եմ արել:

— Երկու բարեկամներ, յարեց նա, ո-

րոնք այս ընդէին ձեր մասին են խօսում:

— Ոհ, ոհ, ինձ ճանաչող մարդիկ են:

— Այո:

— Եւ ինչպէս այդ:

— Ձեզ այստեղ են ճանաչել:

— Այստեղ:

— Այստեղ, երկրի վրա:

— Ո'հ, վաղուց է՞ այդ:

— 2ը գիտեմ:

— Վաղուց բնակում են հրատի վրա:

— 2ը գիտեմ:

Երիտասարդներ են:

— Այո, երկու սիրահարներ են, որոնք պաշտում են միմեանց:»

Այդ ժամանակ իմ ափսոսալի բարեկամների չքնաղ ղէմքերը կենդանի կերպով գծազրուեցին մտքիս մէջ: Բայց հազիւ սկսել էի տեսնել նրանց, որ հիպնոտիկը գոչեց, այս անգամ աւելի ապահով ձայնով:

«Այդ նրանք են:»

— Ի՞նչպէս էք իմանում:

— Տեսնում եմ, միևնոյն հոգիներն են:

Միևնոյն գոյները:

— Ինչպէս միևնոյն գոյները:

—Այո, հոգիները լոյսեր են:»

Մի քանի վայրկեան յետոյ աւելացրեց.

«Սակայն մի՛ զանազանութիւն կայ:»

Յետոյ լռեց, մտքերը կարծես կեդրոնացնում էր: Բայց երբ դէմքը վերստացաւ իր բոլոր հանդարտութիւնը և պայծառութիւնը, նա աւելացրեց. «Տղամարդը դարձել է կին, իսկ կինն՝ տղամարդ: Եւ միմեանց աւելի են սիրում, քան առաջ:»

Որպէս թէ ինքն ևս չհասկանալով ինչ է ասում, կարծես որոնում էր մի բացատրութիւն, դժուարին ջանքեր էր անում և դատելով իր դէմքի բոլոր մկանունքների կծկումից, նա ընկաւ մի տեսակ ուղղադարձութեան մէջ, որից նրան ազատեց բժիշկ Բ...: Բայց երազատեսութեան փորձը վերջացաւ և այլևս չը վերադարձաւ:

Ես աւանդում եմ այս վերջին իրողութիւնն իմ ընթերցողներին, այնպէս՝ ինչպէս անցել է իմ աչքիս առաջ և առանց մեկնաբանութեան: Արդեօք «առարկան» ենթարկուեց իմ սեփական մտածմունքի ազդեցութեան, երբ պլոֆէսորը հրամայեց նրան ինձ պատասխանել, ինչպէս ենթա-

դրում են շատ հիպնոտիստներ, թէ անկախ այդ բանից, նա ճշմարիտ որ «արձակուել էր» և «է» էր այն, ինչ որ մեր աշխարհի սահմաններից դուրս է: Ես չեմ կարող որոշել: Գուցէ կարելի լինի իմանալ այս գրքի շարունակութիւնից:

Սակայն պէտք է խոստովանեմ ամենայն անկեղծութեամբ, որ իմ բարեկամիս և իր պաշտեցեալ ընկերուհու վերածնութիւնը Հրատի աշխարհի վրա, մերինին դրացի և մեր բնական աշխարհին այնքան զարմանալի կերպով նման, բայց աւելի հին և աւելի առաջացած, անկասկած, առաջադիմութեան ճանապարհում, կարող է մտածողի աչքում երևալ իբրեւ նրանց այնպէս շուտ խորտակուած հողային գոյութեան բնական և լոգիկական շարունակութիւնը:

Ո՞վ գիտէ, գուցէ Սպէրօն ճշմարիտ էր, երբ ասում էր թէ նիւթն այն չէ, ինչ որ երևում է, թէ երևոյթները խաբուսիկ են, թէ իրականը — աներևոյթն է, թէ կենդանական զօրութիւնն՝ անեղծանելի է, թէ բացարձակի մէջ անսահման մեծը հաւասար է անսահման փոք-

րին, թէ երկնային տարածութիւնները անանցանելի չեն և թէ հոգիները մոլորակային մարդկութիւնների սերմերն են: Ո՞վ գիտէ, արդեօք չի գալ մի օր, երբ գլխամիզմի փխխսովայութիւնը կը յայտնագործէ և աստղագիտութեան առաքեալներին ապագայի կըօնը: Միթէ՞ ՌԻՐԱՆԻՍ չէ կրում այն ջահը, առանց որի ամեն մի խնդիր անլուծելի է, առանց որի ամբողջ բնութիւնը կը մնար մեղ համար անթափանցելի խաւարի մէջ:

Երկինքը պէտք է բացատրէ Երկիրը, անսահմանը պէտք է բացատրէ հոգին և նրա աննիւթական զօրութիւնները:

Այսօրուայ անծանօթը վաղուայ ճշմարտութիւնն է:

Յետագայ էջերը գուցէ մեզ գուշակել տան այն խորհրդաւոր կապը, որ միացնում է անցողականը յաւիտենականի հետ, երևելին աներևոյթի հետ, երկիրը երկրնքի հետ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԵՐԿՐԵՔ ԵՐ ԵՐԿՐԵՔ



I

Տ Ե Լ Ե Պ Ա Թ Ի Ա

Նանսիի մագնիտիական նիստը մի զօ-
րեղ տպաւորութիւն էր թողել մտքիս
վրա: Հատ անգամ ես մտածում էի իմ
անհետացած բարեկամի մասին, բնու-
թեան և կեանքի չըհետադոտուած շրջան-
ների մէջ նրա կատարած խուզարկու-
թիւնների մասին, նրա անկեղծ և ինքն-
ուրոյն վերլուծական ուսումնասիրութիւն-
ների և անմահութեան խորհրդաւոր առեղ-

ծուածի մասին: Բայց ես չէի կարողանում մտածել նրա մասին առանց յատկացնելու նրան չրատ մոլորակի մէջ նորից մարմանալու հնարաւորութիւնը:

Այդ միտքը ինձ թւում էր խիզախ, յանդուգն, պարզապէս երեւակայական, բայց ոչ անհեթեթ: Այստեղից մինչև չրատը եղած տարածութիւնը հաւասար է զրօի՝ ձգողութեան փոխանցման համար. նա գրեթէ աննշան է լոյսի փոխանցման համար, որովհետև մի քանի վայրկեաններ բաւական են լոյսի ճառագայթին՝ այդ միլլիօնաւոր մղոնները անցնելու: Ես մտածում էի հեռագրի, տելեֆօնի, ֆօնօգրաֆի մասին. մտածում էի այն հանգամանքի մասին, երբ մի մագնիսացնող (մագնիզատօր) փոխանցում է իր կամքը իր ենթակային բաղմաթիւ կիլօմետր տարածութեան միջոցով և երբեմն հասնում էի այնտեղ, որ հարցնում էի ինձ թէ արդեօք գիտութեան որևէ մի հրաշայի առաջադիմութիւն չէ կարող յանկարծ մի երկնային կամուրջ ձգել մեր երկրի և նրա երկնային համասեռների մէջտեղ:

Հետագայ գիշերները, ես դիտում էի հեռագիտակով չրատը՝ հազարաւոր օտարոտի մտածմունքներով պաշարուած: Սակայն մոլորակը սքանչելի էր, ինչպէս այդպէս եղել է 1888 թուի ամբողջ զարնան և ամառուայ ժամանակ: Ընդարձակ յորդութիւններ տեղի էին ունեցել նրա ցամաքներից մինի, Լիբիայի վրա, ինչպէս արդէն աստղագէտները նկատել էին այդ 1882 թուին և զանազան պարագաներում: Յայտնի է, որ նրա օդերևոյթաբանութիւնը, կլիմաբանութիւնը նոյնը չեն ինչ որ մերը, որ այդ մոլորակի մակերևոյթի գրեթէ կէսը ծածկող ջրերը տարօրինակ տեղափոխութիւններ և պարբերական փոփոխութիւններ են կրում, որոնց մասին մեր երկրային աշխարհագրութիւնը որևէ զաղափար չէ կարող տալ: Հիւսիսային բևեռի ձիւները շատ նուազել էին, և այդ ապացուցանում էր թէ այդ կիսագնդի ամառը շատ տաք է եղել, թէև նուազ սաստիկ քան հարաւային կիսագնդի ամառը: Արդէն մեր գիտողութիւնների ամբողջ ժամանակամիջոցում շատ քիչ ամպեր կային չրատի վրա: Բայց, գրեթէ

անհաւատալի բան, ինձ ամենից շատ հետաքրքրողն այդ աստղագիտական իրողութիւններն չէին, թէ և նրանք շատ կարեւոր էին և բոլոր մեր ենթադրութիւնների հիմն էին կազմում, այլ այն էր, ինչ որ մագնիսացածը ասել էր ինձ Գէորգի և Իկլէայի մասին: Այն ֆանտաստիկական պատկերները, որոնք անցնում էին իմ ուղեղի միջով, արգելում էին ինձ մի խական գիտնական ուսումնասիրութիւն կատարել: Ես յամառութեամբ հարցնում էի ինձ՝ մի՞թէ կարող չէ հաղորդակցութիւն լինել մէկմէկուց շատ հեռացած երկու էակների մէջ և մինչև անգամ մի մեռածի և կենդանու մէջ և ամեն անգամ ես ինձ պատասխանում էի թէ այդպիսի մի հարց հէնց ինքն իր մէջ հակա-գիտնական և մի դրական մտքի անարժան հարց է:

Սակայն այդ բոլորից յետոյ, ինչն ենք մենք կոչում «գիտութիւն»: Ինչ բան «գիտնական» չէ բնութեան մէջ: Որտեղ են դրական ուսումնասիրութեան սահմանները: Մի թուշունի կամքը մի՞թէ աւելի «գիտնական» բնաւորութիւն ունի

քան նրա գունաւոր և շողշողուն փետուրը և նրա նուրբ ելէջներով դայլայլիկը: Մի գեղեցիկ կնոջ կմախքը մի՞թէ արժան է ուշադրութեան աւելի քան նրա մարմնի կազմը և նրա կենդանի ձևը: Մի՞թէ հոգու յուզմունքների վերլուծութիւնը «գիտնական» չէ: Մի՞թէ գիտնական չէ որոնել և իմանալ թէ իրօք հոգին կարող է տեսնել հեռուն և ինչպէս: Եւ յետոյ, այդ ինչ օտարոտի սնապարծութիւն է, այդ ինչ միամիտ ենթադրութիւն է կարծել թէ գիտութիւնը արտասանել է իր վերջին խօսքը, թէ մենք արդէն գիտենք, ինչ որ գիտնալու բան կայ, թէ մեր հինգ զգայարանները բաւական են տիեզերքի բնութիւնը ճանաչելու և զնահատելու համար: Եթէ մեր շուրջը գործող զօրութիւններից մենք որոշում ենք միայն ձգողութիւնը, տաքութիւնը, լոյսը, էլեքտրականութիւնը, այդ գեռ չէ նշանակում թէ շրջան ուրիշ զօրութիւններ, որոնք մեզ անծանօթ են մնում, որովհետեւ նրանց ըմբռնելու համար մենք զգայարաններ չունենք: Անհետեւիցե՞ր այդ ենթադրութիւնը չէ, այլ մանկավարժների

և կլասիքների պարզամտութիւնը: Մենք ծաղրում էինք երեք դար առաջ աստղագէտների, ֆիզիկոսների, բժիշկների, աստուածաբանների գաղափարները. երեք դարից յետոյ, մեր ժառանգները գիտութեան մէջ նոյնպէս պիտի ծաղրեն նրանց, որոնք այսօր պնդում են թէ ամեն բան գիտեն:

Այն բժիշկները որոնց ես հաղորդեցի տասնհինգ տարի առաջ դանազան փորձերի ժամանակ իմ դիտած մագնիսական երևոյթների պատմութիւնը, ուրանում էին ամենքը, համոզմունքով, գիտուած իրողութիւնների խկականութիւնը: Նորերումս պատահեցի նրանցից մէկին ճամարանում. «Ոհ, ասաց, ոչ առանց խորամանկութեան, այն ժամանակ մագնիսականութիւն էր, այսօր հիպնոսիզմն է և մենք ենք նրան ուսումնասիրողը: Այդ բոլորովին սարբեր է:»

Ահա զրանից ինչ բարոյական խրատ է առաջ գալիս.— 2րհերքենք ոչ մի բան կանխակալ կարծիքով: Ուսումնասիրենք իրողութիւնը, արձանագրենք, բացատրութիւնը յետոյ կը գայ:

Հոգուս այս տրամադրութեան մէջ էի, երբ իմ գրատան երկարութիւնը և լայնութիւնը չափելով, աչքս ընկաւ Գիկերոնի մի զեղեցիկ հրատարակութեան վրա, որին վաղուց չէի նկատել: Վերառի մի հատոր, մեքենաբար բաց արի առաջին պատահած էջը և ահա ինչ կարդացի. «Երկու բարեկամներ հասնում են Մէգար և գնում են իջևանելու առանձին առանձին: Հազիւ նրանցից մէկի քունը տարել էր, ահա երազում տեսնում է որ իր ուղեկիցն տխուր դէմքով յայտնում է նրան թէ իր հիւրընկալը մտքում գրել է սպանել իրան և աղերսում է նրան շատ շուտով իրան օգնութեան հասնել: Ընկերը զարթնում է, բայց համոզուելով թէ տեսածը երազ էր, շուտով դարձեալ քնի մէջ է ընկղմվում: Բարեկամը նորից ելնում է նրան և երգմենցնում է շտապել, որովհետեւ մարդասպանները շուտով կը մանեն իր սենեակը: Աւելի շատ յուզուելով նա զարմանում է այդ երազի տեղականութեան վրա, տրամադրվում է գնալ բարեկամին գտնել, բայց յոգնածութիւնը, մտմտութիւնը յաղթում են

ներան և նա նորից քնում է: Այն ժամանակ բարեկամը երևում է նրա առաջ սփրթնած, արիւնաթաթախ և կերպարանափոխ: «Թշուառական, ասում է նրան, դու չեկար ամենեին երբ ես պաղատեցի քեզ. այժմ ամեն բան վերջացաւ, դոնէ վրէժս առ: Արեգակի ծագելուն, դու կը պատահես քաղաքի դռան թրիքով լի մի սայլի. կանգնեցրու և հրամայիր, որ թափեն. դու կը գտնես մարմինս մէջին թագցրած. ինձ թաղել տուր օրինաւոր կերպով և հետամուտ եղիր սպանողներին պատժել տալու:»

«Այդպիսի մի յամառ տեսիլք, այդպիսի մանրամասն բացատրութիւններ այլևս կասկածի տեղ չէին թողնում. բարեկամը վեր է կենում, վաղում է գալիս ցոյց տուած դուռը. այդտեղ գտնում է սայլը. կանգնեցնում է սայլապանին, որ շփոթվում է և նոյն իսկ առաջին խուզարկութիւնից յետոյ իր բարեկամի մարմինը յայտնվում է:»

Այդ պատմութիւնը կարծես հէնց յատկապէս յօրինուած էր հաստատելու իմ կարծիքներս գիտնական առեղծուածի

անյայտութիւնների մասին: Անտարակոյս շատ են թաղբութիւններ կան, որոնք կարող են պատասխան տալ այդ հարցին: Կարող են ասել, թէ այդ պատմութիւնը գուցէ այնպէս չէ պատահել, ինչպէս Գիկերոնն է պատմում, թէ նա չափազանցըրում է, աւելացրուած, թէ երկու բարեկամները, հասնելով մի քաղաք կարող էին վախենալ պատահաւորից, թէ երկիւղ կրելով բարեկամի կեանքի համար, ճանապարհորդութեան յոգնութիւններից յետոյ և գիշերային լուսութեան մէջ ընկերը կարող էր երազ տեսնել թէ նրան սպանում են: Գալով սայլի գէպքին, ճանապարհորդները կարող էին մի սայլ տեսած լինել պանդոկի բակում և նա ևս կարող էր երևալ երազում մտքերի ընկերակցութեան շնորհիւ: Այո, կարելի է անել այդ բոլոր բացատրող ենթադրութիւնները, բայց նրանք կը մնան միշտ ենթադրութիւններ: Ընդունել որ իրօք մեռած և կենդանի ընկերի մէջ հազորդակցութիւն է տեղի ունեցել՝ այդ ևս մի ուրիշ ենթադրութիւն է:

Սակայն գուցէ հաղուադիւտ են այդ

տեսակ իրողութիւնները: Կարծում եմ ոչ: Ես յիշում եմ, ի միջի այլոց, մի պատմութիւն, որ ինձ պատմել է իմ երիտասարդութեան մի հին բարեկամը, Ժան Բէստ, նա, որ հիմնեց 1833-ին Magasin pittoresque հանդէսը, իմ ականաւոր բարեկամ Չարտօնի հետ միասին և որ մեռաւ մի քանի տարի առաջ: Նա մի լուրջ, պաղարիւն, մեթօդիկ մարդ էր (ճարպիկ փորագրիչ-տպագրող, բարեխիղճ վարչական անձն). բոլոր նրան ճանաչողները գիտեն թէ նրա տեմպերամէնտը ինչքան քիչ ջղային էր և նրա միտքը ինչքան հեռու էր երեւակայական բաներից: Բանն այն է, որ հետեւեալ անցքը հէնց նրա հետ է պատահել, երբ բոլորովին մանուկ էր, հինգ կամ վեց տարեկան ժամանակ:

Այդ եղել է Տուլում, նրա հայրենիքում: Մի գեղեցիկ երեկոյ նա պառկած էր իր փոքր անկողնում և գեռ քնած չէր, երբ տեսաւ որ իր մայրը մտաւ իր սենեակը, անց կացաւ և գնաց կողքի սրահը, որի դուռը բաց էր և որտեղ իր հայրը թուղթ էր խաղում մի բարեկամի հետ: Արդ իր մայրը, հիւանդ, այդ վայրկեանին գտնվում

էր Պօ քաղաքում: Նա խսկոյն ցատկեց անկողնից և վազեց մօր ետեկց մինչև սրահ... ուր զուր որոնեց: Հայրը բարկացաւ վրան և յետ ուղարկեց պառկելու, ասելով որ երազ է տեսել:

Այն ժամանակ երեխան հաւատալով որ ճշմարիտ, երազել է, փորձեց քնելու: Բայց քիչ ժամանակից յետոյ, նորից բանալով աչքերը, երկրորդ անգամ տեսաւ մօրը և շատ որոշ կերպով, որ իր կողքով անցկացաւ. այդ անգամ նա վազեց դէպի նա և կամեցաւ գրկել: Բայց մայրը չբացաւ: Այլևս չըկամեցաւ քնել և մնաց սրահում, ուր հայրը շարունակում էր թուղթ խաղալ:

Միևնոյն օրը, միևնոյն ժամին, մայրը մեռնում էր Պօ քաղաքում: Այդ պատմել է ինձ ինքն պ. Բէստը, որի յիշողութեան մէջ անջնջելի էր մնացել այդ դէպքը: Կարելի է ասել, որ երեխան իմանալով իր մօր հիւանդութիւնը շատ անգամ մրտածում էր նրա մասին, որ նա հալլուսինասիօն (զառանցանք) ունէր, որը զուգադիպութեամբ իր մօր մահուան օրն է տեղի ունեցել: Կարելի է: Բայց կարե-

լի է մտածել նաև թէ մի համակրական կապ կար մօր և երեխայի մէջ և թէ այդ հանդիսաւոր ըոպէում այդ մօր հոգին իրողապէս հաղորդակցութեան մէջ է եղել իր որդու հոգու հետ: Ինչպէս, կը հարցնեն մեղ: Այդ չըգիտենք: Բայց ինչ որ չըգիտենք այն համեմատութիւնը ունի մեր գիտեցածի հետ, ինչ որ ովկիանոսի խորութիւնը մի կաթիլ ջրի հետ:

Հաւատալիս! ինչ հեշտ է ասել: Որքան բժշկական աշխատութիւններ կան այդ մասին գրուած: Ամեն մարդ գիտէ Բրիէր դը-Բուամոնի գրուածը: Նրա մէջ եղած անթիւ դիտողութիւններէց յիշենք հետեւեալ երկուսը:

«Դիտող. 84.—Երբ ժակ թագաւորն եկաւ Անգլիա, Լոնդօնի ժանտախտի ժամանակ, գտնուելով ամառանոցում, Սիր Բորեքտ Կօտտոնի տանը, ծերունի Կամբրէյի հետ, նա երազում տեսաւ իր անդրանիկ որդուն, որ դեռ երեխայ էր և կենում էր Լոնդօնում, ճակատի վրա մի արինալի խաչ, կարծես թէ՛ վիրաւորուած լինէր սրով: Ջարհուրած այդ տեսիլքից, թագաւորը սկսեց աղօթել և ա-

ռաւօտեան զնաց սըր Կամբրէյի սենեակը, որին պատմեց զիշերուայ անցքը. վերջինս հանգստացրեց թագաւորին ասելով որ երազի խաղալիք է դարձել և զուր տեղն է անհանգստանում: Մինեոյն օրը թագաւորը ստացաւ իր կնոջից մի նամակ, որ գուժում էր նրա որդու մահը ժանտախտից: Երբ երեխան երկաց հօրը, նա կատարեալ աղամարդի հասակ և կերպարանք ունէր:»

Դիտող. 87.—Օրիորդ Թ... ընտիր դատողութեան տէր, բարեսլաշտուհի առանց կեղծաւորութեան, ընտելում էր ամուսնութիւնից առաջ իր հօրեղբօր Դ...ի տանը, որն մի հռչակաւոր բժիշկ էր և ճեմարանի անդամ: Նա բաժանուած էր իր մօրից, որ մի ծանր հիւանդութեամբ տառապում էր գաւառում: Մի գիշեր, նորատի աղջիկը երազում տեսաւ մօրը սփրթնած, այլակերպ, վերջին շունչը փչելու վրա. նա արտայայտում էր իր խոր ցաւը, որ չըշապատուած չէ իր զաւակներով, որոնց մինը, Պարիզի մի ծուխի քահանայ, զաղթել էր Սպանիա, իսկ միւսը գտնուում էր Պարիզում: Զուտով նա

լսեց որ մայրը մի քանի անգամ կանչեց նրան իր մկրտութեան անունով. նա տեսաւ երազում իր մօրը շրջապատող անձանց, որոնք կարծում էին թէ հիւանդը իր թոռն է ուզում, որն միեւնոյն անունն էր կրում, ուստի և վազեցին բերելու նրան միւս սենեակից. բայց հիւանդը նշան արաւ որ ուզում է տեսնել ոչ թէ թոռան, այլ աղջկան, որ բնակւում էր Պարիզում. նրա դէմքը արտայայտում էր վիշտ այդ բացակայութեան առիթով. յանկարծ նրա դժերը կաղմալուծուեցին, մեռնողի նման գունաթափ եղան և նա ընկաւ անկողնի վրա մեռած:

«Երկրորդ օրը, օրիորդ Թ... տխրադէմ երեաց Դ...ի առաջ, որ խնդրեց նրան յայտնել իր տխրութեան պատճառը. նա պատմեց նրան բոլոր մանրամասնութիւններով իրան տանջող երազը:

Դ... գտնելով նրան հոգու այդ արամադրութեան մէջ, սեղմեց իր կուրծքի վրա, խոստովանելով որ լուրը, դժբաղտարար, ճիշդ է, որ մայրը մեռել է, միայն ուրիշ բացատրութիւններ չը տուեց:

«Մի քանի ամսից յետոյ, օրիորդ

Թ... օգուտ քաղելով իր հօրեղբօր բացակայութիւնից կամեցաւ կարգի դնել նրա թղթերը,—որոնց նա, շատ ուրիշ գիտնականների նման, չէր ցանկանում որ ձեռք տան. այդ թղթերի մէջ նա գտաւ մի նամակ, որ պատմում էր հօրեղբօրը իր մօր մահուան պարագաները: Որքան եղաւ օրիորդի զարմանքը կարգալով այդտեղ իր՝ երազի՝ բոլոր մանրամասնութիւնները:»

Հալլուսինասիօն! պատահական զուգադիպութիւն! Միթէ այդ բաւարար բացատրութիւն է: Յամենայն դէպս դա մի բացատրութիւն է որ ոչինչ չէ մեկնում:

Տգէտների մի խումբ ամեն հասակի, ամեն արհեստի, բանտիէներ, վաճառականներ կամ երեսփոխաններ, սկէպտիկ իրանց տեմպերամենտով կամ ցեղով, պարզապէս յայտնում են որ չեն հաւատում այդ բոլոր պատմութիւններին և ոչ մի բան ճշմարիտ չէ: Այդ ևս մի լուրջ լուծում չէ: Հետազօտութեան ընդեւ-

ցած մտքերը չեն կարող բաւականանալ այդպիսի մի թեթեւ հերքումով:

Մի իրողութիւն միշտ իրողութիւն է: 2է կարելի չընդունել նրան, երբ մինչև անգամ անհնարին է բացատրել նրան, մեր գիտութեան ներկայ վիճակում:

Անշուշտ, բժշկական աստղագրութիւնները վկայում են, որ իւրօք, կան մի քանի տեսակ հալլուսիմասիօններ և որոշ ջղային օրգանիզմներ խաբւում են նրանցից: Բայց այդ տեղից մինչև այն կարծիքը, թէ մինչև այժմ չը բացատրուած բոլոր հոգե-կենդանախօսական (սփիսօ-բիօլոգիական) երևոյթները հալլուսիմասիօններ են, մի ահագին անդունդ կայ:

Մեր դարի գիտնական ոգին ամենայն իրաւամբ աշխատում է ազատել բոլոր այդ իրողութիւնները գերբնականութեան խաբուսիկ մշուշից, ի նկատի ունենալով, որ գերբնական ոչինչ չըկայ և որ ընութիւնը, որի թաղաւորութիւնը անսահման է, ըմբռնում է ամեն բան: Մի քանի տարիներից ի վեր, մանաւանդ Անգլիայում հիմնուել է մի գիտնական ընկերութիւն՝ յատկապէս այդ երևոյթների ուսումնա-

սիրութեան համար, որ կոչւում է «Society for psychical research». Նրա գլուխն են անցած Անգլիայի ամենանշանաւոր գիտնականներից մի քանիսը և նա արդէն լոյս է ընծայել մի քանի կարեւոր հրատարակութիւններ: Այդ անջրպետային տեսիլքների երևոյթները դասաւորուած են տելեպաթիա (télépathie, հեռազգացողութիւն) ընդհանուր վերնագրով (տելե—հեռու, պատօս—զգացողութիւն): Վկայութիւնները ստուգելու համար խիստ հարցաքննութիւններ են լինում: Բաղմադանութիւնը ահագին է: Մի բոլէ միասին թերթենք այդ ժողովածունների մինը*) և դուրս հանենք նրա միջից մի քանի գիտնականօրէն հաստատուած և ինչպէս հարկն է ստուգուած դօկումենտներ:

Հետեւալ դէպքը, որ գիտուել է նորերս, պատահել է զիտողի արթուն ժամա-

*) Phantasms of the Living. (կենդանիների երևոյթներ), հեղինակ E. Gurney և Fr. Myers, Գէյթրիջի համալսարանի պրօֆէսորներ և Frank-Podmor. Լոնդօն 1886: «Պսիխիական հետազօտութիւնների ընկերութեան» նախագահն է Պալֆուր Ստուարտ պրօֆեսորը:

նակ, ինչպէս դուք և ես այս բողոքիս: Դիտողն՝ Ռօբէրդ Բի անունով մի անձն է, Վիգանի (Անգլիա) բնակիչ: Ահա այդ հետաքրքիր դէպքը, որ գրել է ինքը դիտողը:

1873 թ. դեկտեմբերի 18-ին, ես և կինս գնացինք կնոջս հայրական տունը Սուտֆօրտ, թողնելով ծնողներին կատարեալ առողջութեան մէջ: Երկրորդ օրը, կէսօրից յետոյ, մենք տնից դուրս էինք եկել և գնացել ման գալու ծովի ափում, երբ ինձ վրա մի այնպիսի տխրութիւն եկաւ, որ անկարելի եղաւ ինձ հետաքրքրուել որ և է բանով, այնպէս որ շուտով վերադարձանք տուն:

Յանկարծ կինս մի տեսակ վիշտ զգաց և ասաց ինձ որ գնում է իր մօր սենեակը մի քանի բողոքով: Մի վայրկեան յետոյ ես ինքս վեր կացայ տեղիցս և անցայ սրահը: Մի տիկին, հագուած այնպէս, որ կարծես պատրաստուած էր դուրս գնալու տնից, եկաւ դէպ ինձ, մօտակայ ննջարանից դուրս գալով: Ես նրա գծագրութիւնը չընկատեցի, որովհետեւ իմ կողմս չէր նայում, սակայն խոկոյն ես նրան

խօսք ուղղեցի ողջունելով, բայց չեմ յիշում թէ ինչ ասացի:

Միևնոյն բողոքին և երբ նա անցնում էր իմ առաջից, կինս վերադառնում էր իր մօր սենեակից և անցնում էր ճիշդ այն տեղով, որտեղ տեսնում էի այդ տիկնոջ, առանց նրան նշմարելու: Ես խոկոյն գոռացի զարմացքի մի կենդանի զգացումով. «ով է՞ այդ տիկինը, որի առաջը կտրեցիր այս բողոքին»:—Բայց ես ոչ ոքի չը հանդիպեցի, պատասխանեց կինս, ինձանից աւելի զարմացած:—Ինչպէս, կրկնեցի ես, դու չըտեսար այս բողոքիս մի տիկին, որ անցաւ հէնց քո կանգնած տեղով և որն, անտարակոյս, դուրս եկաւ մօրդ սենեակից և այժմ գաւթում կըլինի:

—Այդ անկարելի է, պատասխանեց նա, այս բողոքիս տանը՝ բացի ինձանից և մօրիցս ոչ ոք չը կայ:

Եւ ճշմարիտ, ոչ մի օտար մարդ չէր եկել և մեր անմիջապէս արած խուզարկութիւնը ոչ մի բան երևան չը հանեց:

Այդ ժամանակ ժամը ութն էր, տասը բողոք պակաս: Երկրորդ օրը առաւօտեան մի հեռագիր մեզ գուժեց մօրս յանկար-

ծակի մահը, սրտի հիւանդութիւնից, ճիշդ միևնոյն ժամին: Նա այդ ժամանակ փողոցում է եղել և հագուած ճիշդ այնպէս, ինչպէս իմ տեսած անծանօթ տիկինը:

Այդպէս է գիտողի պատմածը: Պսիխիական հետազօտութիւնների ընկերութեան արած քննութիւնը հաստատել է վկայութիւնների բացարձակ վաւերականութիւնը և համաձայնութիւնը: Այդ մի դէպք է նոյնչափ դրական, որքան մի մետեօրօլոգիական, աստղագիտական, ֆիզիքական կամ քիմիական գիտողութիւն: Ինչպէս բացատրել: Զուգադիպութիւն, կասեն մեզ: Բայց ճշմարիտ, միթէ մի խիստ գիտնական կրիտիկա կարող է բաւարարութիւն ստանալ այդ խօսքով: Ելի մի ուրիշ դէպք:

Պ. Ֆրէդէրիկ Վինֆելդ գրում է, որ 1880 թ. մարտի 25-ին պառկելով քնելու, գիշերուայ մի մասը կարդալուց յետոյ, նա երազում տեսաւ, որ Անգլիայում ապրող իր եղբայրը իր մօտն էր, բայց փոխանակ պատասխանելու իրան ուղղած մի հարցմունքին, նա գլուխը թափ տուեց, վեր կացաւ աթոռից և գնաց: Տպաւորու-

թիւնը այնքան սաստիկ է եղել, որ Ֆրէդէրիկն կիսաքուն վեր թռաւ անկողնուց և զարթնեց այն բուպէին, երբ ոտքը դնում էր անկողնուց դուրս և կանչում էր եղբորը: Երեք օր յետոյ նա լուր ստացաւ, որ եղբայրը սպանուել էր ձիուց ընկնելով, միևնոյն օր, 1880 թ. մարտի 25-ին երեկոյեան (ժամ ութ և կէսին), իր տեսած հրազից մի քանի ժամ առաջ:

Քննութիւնը ցոյց տուեց, որ այդ մահուան թուականը ճիշդ է և որ այդ պատմութեան հեղինակը գրել էր իր երազը յիշատակագրում դէպքը պատահած օրը և ոչ թէ յետոյ:

Ելի մի դէպք:

Պ. Ս... և Պ. Լ... երկուսն էլ ծառայողներ մի վարչութեան մէջ, ութ տարուց ի վեր մտերիմ բարեկամական յարաբերութեան մէջ էին: 1883 թ. մարտի 19-ին, երկուշաբթի, Լ... իր գրասենեակը գնալիս, մի անհանգստութիւն ունեցաւ. նա մտաւ ճանապարհին մի դեղարան, որտեղ նրան մի դեղ տուին ասելով, որ փայծեաղի ցաւ ունէր: Եկող հինգ-չարթի, աւելի լաւ չէր. այդ միևնոյն շաբ-

Թի վերջին օրը դեռ բացակայ էր գրասենեակից:

Հարաթ օր երեկոյեան մարտի 24-ին, Ս... իր տանն էր և գլխի ցաւ ունէր. նա պառկեց և մի վայրկեան յետոյ տեսաւ իր բարեկամ Լ...ին կանգնած իր առաջ իր սովորական շորերը հագին: Ս...ը լաւ նկատեց մինչև անգամ Լ...ի հագուստի այն մանրամասնութիւնը, որ նրա գլխարկը սև շղարշ ունէր, որ նրա վերարկուն կոճկուած չէր և որ նա ձեռքին փայտ ունէր: Լ... նայեց ակնադէտ Ս...ին և անցաւ: Ս...ը յիշեց այն ժամանակ այն խօսքը, որ կայ Յորի գրքի մէջ, «Մի հոգի անցաւ իմ դէմքիս առաջից և մարմնիս մաղը ցից կանգնեց»: Այդ ըոպէին նա մի սարսուռ զգաց ամբողջ մարմնի մէջ և նրա մաղերը ցից ցից կանգնեցին: Այն ժամանակ նա ասաց կնոջը. «—Ժամը քանի՞սն է» — սա պատասխանեց. «Ժամըն իննից տասներկու վայրկեան պակաս»: Նա ասաց, «Եթէ ես հարցնում եմ քեզ, որովհետև Լ...ը մեռաւ, ես տեսայ այս ըոպէին»: Կինը աշխատեց համոզել, թէ այդ կատարեալ ցնորք է, բայց նա ամե-

նահանդիսաւոր ձեռով պնդեց, որ ոչ մի գատողութիւն չէ կարող նրա կարծիքը փոխել տալ:»

Այդպէս է պ. Ս...ի պատմածը: Նա իմացաւ իր բարեկամ Լ...ի մահը երկրորդ օրը, կիրակի, կէս օրից յետոյ ժամը երեքին:

Լ... իրօք վախճանել էր Հարաթ երեկոյեան, ժամը մօտ իննին, տասն ըոպէ պակաս:

Դրան մօտ մի իրողութիւն է և այն պատմական դէպքը, որ առաջ է բերում Ագրիպպա Դ՝ Օրինէն՝ Լորենի կարգինալի մահուան ըոպէին:

«Թագաւորը գտնուելով Ալինիօնում, 1574 թ. դեկտ. 23-ին այդտեղ մեռաւ Հարը, Լօրէնի կարգինալը: Թագուհին (Կատարինէ Մեդիչէ) անկողին էր մտել սովորականից աւելի վաղ և նրա քուն մտնելուն ներկայ էին ի միջի այլ նշանաւոր անձերի նաև Նաւարայի թագաւորը, Լիօնի արքեպիսկոպոսը, Բէյ, Լիյնըրօլ, Սօն տիկինները, որոնցից երկուսը հաստատել են այս խօսակցութիւնը: Երբ նա, թագուհին, պատրաստուած էր

բարի գիշեր ասելու, յանկարծ թուա, վեր կացաւ պառկած տեղից, ձեռքերով ծածկեց երեսը և զօրեղ աղաղակով օգնութեան կանչեց ներկայ եղողներին, կամենալով ցոյց տալ նրանց մահճակալի ներքե կանգնած կարգինալին, որ ձեռքը պարզում էր նրան: Թագուհին գոռաց մի քանի անգամ. «պարոն կարգինալ, ես ձեզ պէտք չունիմ»: Նաւարրայի թագաւորը իսկոյն ուղարկում է իր աստիճանաւորներին մէկին կարգինալի բնակարանը, որ վերադառնալով յայտնում է թէ ինչպէս մի և նոյն բոլբոլին կարգինալը աւանդել էր հոգին:»

Աղօլֆ Դ՝ Ասիէ իր «Ապագայ մարդկութիւնը» գրքի մէջ, որ հրատարակուեց 1882-ին նրա մահից յետոյ, երաշխաւոր է լինում հետեւեալ իրողութեան իսկակաւորութեան մասին, որ պատմել է նրան մի հաւատարմի անձն:

«Ես դեռ ջահել աղջիկ էի, ասում է նա, և պառկում էի ինձանից աւելի մեծ քրոջս հետ միասին: Մի երեկոյ մենք մտանք անկողին և հանգցրինք ճրագը: Վառարանի կրակը, կատարելապէս մա-

րած՝ դեռ լուսաւորում էր սենեակը աղօտ կերպով: Դարձնելով աչքերս դէպի օջախը, նկատեցի, ի մեծ դարմանս իմ, որ մի քահանայ նստել է վառարանի առաջ և տաքանում է: Նա մեր հօրեղբայրների մինի չաղութիւնը, շարժուածքը և գծադրութիւնն ունէր, որն մերձակայում տալում էր և աւագ քահանայ էր: Ես իսկոյն հաղորդեցի իմ տեսիլքը քրոջս: Սա ևս նայեց օջախի կողմը և նկատեց մի և նոյն տեսիլքը: Նոյնպէս ճանաչեց, որ նա մեր հօրեղբայր՝ աւագ քահանան է: Այն ժամանակ մի աննկարագրելի սարսափ տիրեց մեր վրա և մենք գոռացինք «օգնութիւն» մեր բոլոր ոյժերով: Հայրս, որ քնած էր յարակից սենեակում, զարթելով այդ յուսահատ աղաղակներից, վեր է կենում շտապով և գալիս է մեզ մօտ, մոմը ձեռքին: Տեսիլքը անհետացել էր. մենք այլ ևս ոչ ոքի չէինք տեսնում սենեակում: Երկրորդ օրը, մենք իմացանք մի նամակից, որ մեր հօրեղբայր աւագ քահանան մեռել է երեկոյեան:»

Էլի մի ուրիշ դէպք, որ առաջ է բերում Օգիւստ Կօնտի նոյն աշակերտը, որ

և պատահել է Ռիօ-ժանէյրօում նրա եղած ժամանակ:

1858 թուին էր. այդ մայրաքաղաքի ֆրանսիական գաղթականութեան մէջ դեռ խօսում էին մի տարօրինակ տեսիլքի մասին, որ տեղի էր ունեցել մի քանի տարի առաջ: Ալլասեյի մի ընտանիք, բաղկացած տղամարդից, կնոջից և մի փոքր աղջիկ թուրք նաւ մտաւ գնալու Ռիօ-ժանէյրօ, որտեղ հաստատուած էին նրա հայրենակիցները: Ճանապարհորդութիւնը երկար լինելով կինը հիւանդացաւ և, անտարակոյս, խնամքի կամ յարմար սնունդի պակասութեան պատճառով, մեռաւ տեղ հասնելուց առաջ: Իր մահուան օրը, նա ուշքից գնաց, երկար ժամանակ այդ վիճակում մնաց և երբ ուշքի եկաւ, ասաց ամուսնուն. «ես մեռնում եմ հանգիստ սրտով. որովհետեւ այժմ մեր երեխայի վիճակը ապահով է: Ես գալիս եմ Ռիօ-ժանէյրօից, ես այնտեղ տեսայ մեր բարեկամ հիւան ֆրիցի փողոցը և տունը: Նա կանգնած էր իր տան շէմքում. ես նրան ներկայացրի փոքրիկին. ապահով եմ որ երբ հասնես, նա նրան

կը ճանաչի և նրան կը խնամի:» Ամուսինը զարմացաւ այդ պատմութիւնը լսելով և կարեւորութիւն չընծայեց: Մի և նոյն օրը, մի և նոյն ժամին, հիւան ֆրիցը, ալլասեյին, որի մասին ասացի այժմ, կանգնած էր իր դրան շէմքում Ռիօ-ժանէյրօի փողոցում, երբ նրան թուաց թէ տեսնում է իր հայրենակցուհիներից միին, որ խտտած ունէր մի փոքր աղջիկ: Գինը նայում էր նրան աղերսալի դէմքով և կարծես ներկայացնում էր իր խտտած երեխային. նրա կերպարանքը, թէև շատ լղարած էր երևում, բայց յիշեցնում էր Լատտայի, իր բարեկամ և հայրենակից Չմիտի կնոջ գծադրութիւնը: Նրա դէմքի արտայայտութիւնը, նրա շարժումների տարօրինակութիւնը, որ նման էր աւելի տեսիլքի քան իրականութեան, կենդանի տպաւորութիւն թողեցին ֆրիցի վրա: Կամենալով միամտանալ, որ ենթակայ չէ ցնորքի, նա կանչեց իր գործաւորներից միին, որ աշխատում էր խանութում և որն նոյնպէս ալլասեյի էր մի և նոյն տեղից:

«Նայիր, ասաց նրան, չնս տեսնում

արդեօք որ փողոցով անցնում է մի կին, գրկին մի երեխայ և որն կարծես մեր երկրացի Չմիտի Լատաա կինը լինի:»

— Չեմ կարող ձեզ ասել, լաւ չեմ որոշում». պատասխանեց գործուորը:

Փրիցն էլ ոչինչ չասեց. բայց այդ իրական կամ երևակայական երևոյթի զանազան պարագաները խոր կերպով տպաւորվեցին նրա մտքում. մանաւանդ ժամը և օրը: Մի քանի ժամանակ դրանից յետոյ, ահա գալիս է իր հայրենակից Չմիտը մի փոքր աղջիկ գրկած: Այդ ժամանակ Լատաայի այցելութիւնը կենդանանում է նրա մտքում և առաջ քան որ Չմիտը բերանը բանար, ինքն ասում է նրան:

«Իմ խեղճ բարեկամս, ես ամեն բան գիտեմ. կինդ մեռել է ուղեւորութեան ժամանակ և մեռնելուց առաջ նա եկաւ ինձ ներկայացնելու իր թոռան, որ ես խնամեմ նրան: Ահա թուականը և ժամը:»

Ճիշդ այն օրը և վայրկեանն էր, որ Չմիտը նշանակել էր նաւի վրա:



1864-ին հրատարակած՝ Մոգութեան բարձր երևոյթների մասին իր աշխատութեան մէջ, Գուգնո դէ Մուսսօ առաջ է բերում հետեւեալ իրողութիւնը, որի իսկականութեան մասին վկայում է բացարձակապէս:

Սըր Բօրէյրօ Բրուշ, այդ անունով սկոթլանդական աղանաւոր ընտանիքից, մի նաւի երկրորդ նաւապետն է լինում. մի օր նաւելով Նոր-Երկրի մօտերում, և զբաղուելով իր հաշիւներով, նա կարծում է տեսնել իր նաւապետին գրասեղանի առաջ, բայց երբ ուշադրութեամբ է նայում, տեսնում է որ իր նշմարածը մի օտարական է, որի նայուածքը՝ յառած պտղութեամբ իր վրա, զարմացնում է նրան: Նաւապետը, որի մօտ նա գնում է, նկատում է նրա զարմանքը և հարց ու փորձ է անում նրան: «Բայց ով է ձեր գրասեղանի առաջ կանգնած, ասում է նրան Բրուշը. — «Ոչ որ: — Ինչպէս չէ, մի մարդ կայ. օտարական է... եւ ինչպէս:

— Գուք երազում էք... կամ ծաղրում էք:

— Ամենին. հաճեցէք իջնել և զայ տեսնել:

Իջնում են, ոչ ոք նստած չէ գրասեղանի առաջ: Նաւը խուզարկում են ամեն կողմից. ոչ մի օտարական չեն գտնում:

«Սակայն նա, որին ես տեսայ, գլորում էր ձեր քարետախտակի վրա. նրա գլորածքը պէտք է այդտեղ մնացած լինի:»

Նայում են քարետախտակին. նա կրում է այս խօսքերը. Steer to the north-west, այսինքն նաւարկեցէք դէպի հիւսիս-արեւմուտք: «Բայց այդ գլորածը ձերն է կամ նաւորդներից մէկինը:»

— Ոչ:

Այն ժամանակ խնդրում են նաւի մէջ բոլոր գտնուածներին գրել մի և նոյն նախադասութիւնը և ոչ մէկի ձեռագիրը չէ նմանում քարետախտակի ձեռագրին:

«Ուրեմն հնազանդենք այդ բառերի իմաստին. դեկտալրեցէք նաւը դէպի հիւսիս-արեւմուտք. քամին լաւ է և թոյլ է առաջի այդ փորձը փորձել:»

Երեք ժամից յետոյ, պահակը նշմարեց մի սառցալեռ, որի մօտ քաշ էր գալիս մի նաւ քայքայուած, մարդիկներով լի, որ նաւարկում էր դէպի Լիվէրպուլ և

որի անցորդները ազատուելով բերուեցին Բրուչի նաւը նաւակներով:

Այն բոլորին, երբ այդ ազատուածներին մինը ոտքը դնում էր ազատարար նաւի տախտակամածի վրա, Բրուչը դուրաց և յետ քաշուեց խորապէս զգացուած: Նա ճանաչեց այն օտարականին, որին տեսել էր քարետախտակի վրա գրելիս: Իսկոյն պատմեց նաւապետին նոր գէպը:

«Հաճեցէք գրել steer to the north-west խօսքերը այս քարետախտակի վրա, ասաց նորեկին նաւապետը, ներկայացնելով նրան քարետախտակի այն երեսը, որի վրա ոչինչ գրուած չէր: Օտարականը գլորում է պահանջած խօսքերը:

«Լաւ, դուք վստահ էք որ այդ ձեր սովորական ձեռագիրն է, ասում է նաւապետը, զարմացած որ երկու գրութիւններն էս համանման են:

— Բայց չէ որ ձեր առաջ գրեցի: Մի-թէ այլեւ կարող էք կասկածել:»

Պատասխանի փոխարէն նաւապետը դարձնում է քարետախտակը և ցոյց է տալիս միւս երեսը. օտարականը բոլորո-

վին շփոթվում է, տեսնելով երկու երեսների վրա իր սեպհական ձեռագիրը:

«Արդեօք երազում տեսաք, որ գրում էիք այս քարետախտակի վրա, ասաց գրողին նաւարեկուած նաւի նաւապետը:

— Ամենեկն ոչ, գոնէ ոչ մի յիշողութիւն չունեմ այդ մասին:

— Բայց ի՞նչ էր անում կէսօրին այս անցորդը, հարցրեց իր ընկերից աղատիչ նաւապետը:

Չատ յոգնած լինելով, այս անցորդի բունը տարաւ և որքան յիշում եմ, կէսօրից մի քիչ առաջ էր: Չատ շատ մի ժամից յետոյ զարթնեց և ասաց ինձ. «Նաւապետ, մենք հէնց այսօր կադատուենք»: Աւերացնելով, «երազումս տեսայ, որ մի նաւի վրա եմ գտնվում և նա հասնում է մեր օգնութեան»: Նա նկարագրեց նաւը և նրա կազմակերպութիւնը և մեծ եղաւ, երբ տեսնելով ձեր նաւելը գէպի մեզ, իմացանք նրա նկարագրութեան ճշդութիւնը:

Վերջապէս այդ անցորդը ասաց իր կողմից. «Ինչ որ ինձ օտարոտի է թւում, այդ այն է, որ ինչ որ այստեղ տեսնում

եմ ինձ ընտանի է թւում և սակայն երբէք այստեղ չեմ եղած:»

Բարօն Դիւպլոմէն «Կենդանական մագնիսականութիւն» անունով իր շարադրութեան մէջ յիշում է հետեւել իրողութիւնը, որ 1814 թուին հրատարակել է հռչակաւոր Իունգ-Չտելինգը, որին հաղորդել էր ինքը դիտողը, Բարօն Սուլցան, Ջուէզիայի թագաւորի սենեկապահը:

Վերադառնալով տուն ամառը, կէս գիշերին մօտ, այն ժամին, երբ Ջուէզիայում դեռ այնքան լոյս է անում, որ մարդ կարող է ամենամանր գրութեան կարգալ,— ««Երբ հասայ, ասում է նա, մեր տունը, հայրս եկաւ ինձ ընդ առաջ պարտիդի մուտքում. նա հազնուած էր սովորականին պէս և ձեռքին բռնած ունէր մի գաւազան, որ եղբայրս է քանդակել: Ես նրան ողջունեցի և մենք երկար ժամանակ զրոյց արինք: Այդպէս հասանք մինչև տան դուռը և նրա սենեակի մուտքը: Մտնելով սենեակը, տեսայ հօրս՝ շորերը հանած և պառկած. միևնոյն բոլորին երևոյթը չքացաւ. քիչ յետոյ հայրս զարթնեց և ինձ նայեց մի տեսակ հարցաքննին

աչքով. «Իմ սիրելի էդուարդ, ասաց ինձ, Աստուած օրհնեալ լինի, որ քեզ ողջ և առողջ եմ տեսնում, որովհետեւ շատ մտաւորանջովում էի քո պատճառով, երազիս մէջ. ինձ երևում էր, որ դու ընկել ես ջրի մէջ և քիչ էր մնում խեղդուէիր:» Արդ, այդ օրը, աւելացրեց Բարօնը, ես գնացել էի բարեկամիս հետ գետում խեց-գետիններ որսալու և քիչ էր մնում, որ հոսանքը տանէր ինձ: Ես պատմեցի հօրս, որ իր նմանութիւնը տեսել էի մեր տան խօսեցած ժամանակ և որ մենք միասին մի երկար խօսակցութիւն ունեցանք: Նա ինձ պատասխանեց, որ այդ տեսակ բաներ շատ են պատահում:»

Այս դանաղան պատմութիւնների մէջ դուք տեսնում էք, որ կան ինքնածին երեւոյթներ, կան և այնպիսիներ, որոնք այսպէս ասած կանչվում են կամքի ցանկութիւնով: Բայց միթի մտքի ներշնչումը կարող է մինչև այդտեղ գնալ: «Phantasms of the living» գրքի հեղինակները դրական պատասխան են տալիս եօթն, բոլորովին հաստատուած օրինակներով, որոնց միջից դարձեալ մինը կը ներկայացնեմ ըն-

թերցողներին ուշադրութեան: Ահա այն:

Արժանապատիւ հայր Գօգֆրէյ, ընակիչ Էսքուրնի, Սուսէքս նահանգում, կարգալով նախամտածած տեսիլքի մի պատմութիւն, այնքան գրաւուեց նրանով, որ վճռեց փորձել նոյնը: 1886 թ. նոյեմբ. 15-ին, երեկոյեան ժամը 11-ին, նա սկսեց լարել իր երեակայութեան բոլոր զօրութիւնը և իր կամքի բոլոր սաստկութիւնը իր բարեկամուհիներից մէկին երևալու գաղափարի վրա, իր անկողնու ներքեւ, ոտքի կանգնած մնալով: Այդ ճիգը տեղեց գրեթէ ութ վայրկեան, որից յետոյ գեր. Գօտֆրէյն իրան յոգնած զգաց և քունը տարաւ: Երկրորդ օրը, նրա փորձին ենթակայ եղող տիկինը ինքնակամ կերպով եկաւ պատմելու հայր Գօգֆրէյին ինչ որ տեսել էր: Հրաւիրուելով գրով հաղորդելու իր տեսածը, նա այս կերպով յայտնեց.

«Վերջին գիշերը, քնիցս յանկարծ ծլունկ եղայ, այն զգացումով թէ իբր մէկը մտել է սենեակս:

«Ես լսեցի նոյնպէս մի աղմուկ, բայց կարծեցի որ պատուհանից դուրս դրած

վանդակներն մէջ եղած թռչուններն են: Յետոյ ես զգացի մի տեսակ անհանգըստութիւն և մի տեսակ ցանկութիւն դուրս գալու սենեակից և իջնելու ներքին յարկը: Այդ ցանկութիւնը այնքան սաստկացաւ, որ վերջապէս, տեղիցս վեր կացի, վառեցի մի մոմ և իջտյ ներքեւ այն դիտաւորութեամբ, որ մի բան ընդունեմ հանգստանալու համար: Վերադառնալով սենեակս, ես տեսայ հայր Գօգֆրէյին ոտքի կանգնած սանդուխները լուսաւորող մեծ լուսամտտի ներքեւ: Նա հագնուած էր սովորականին պէս և դէմքի այն արտայայտութիւնն ունէր, որն ես նկատում եմ նրա վրա, երբ նա խիստ ուշադրութեամբ նայում է մի բանի: Նա այնտեղ կանգնած էր անշարժ, մինչ ես, մոմը բարձր բռնելով, ծայրայեղ զարմացքով նայում էի նրան: Այդ տեղեց երեք կամ չորս վայրկեան, որից յետոյ, երբ ես շարունակեցի վերեւ դնալ, նա անհետացաւ: Ես բնաւ չէի վախեցել, բայց շատ յուզուել էի և չրկարողացայ քնանալ:»

Հայր Գօգֆրէյն կարծեց արդարացի կերպով, որ իր արած փորձը աւելի մեծ

կարևորութիւն կստանար, եթէ կրկնէր: Երկրորդ փորձը չ'աջողուեց, բայց երրորդը աջողուեց:

Տարակոյս չըկայ, ի հարկէ, որ այն տիկինը, որի վրա կատարվում էր այդ փորձը, այս անգամ ևս ոչ մի տեղեկութիւն չունէր, ինչպէս և առաջին անգամը: «Վերջին գիշերը, զրեց նա, երեքշաբթի, դեկտեմբերի 7-ին, ես բարձրացի վերեւ, սենեակս, պառկելու, ժամը տասն և կէսին: Հուտով քնեցի: Յանկարծ, ես լսեցի մի ձայն, որ ասում էր. «զարթնեցէք», և ես զգացի մի ձեռք որ դրուեց գլխիս ձախ կողմի վրա: (Հայր Գօգֆրէյի դիտաւորութիւնն եղել էր զգալ տալ իր ներկայութիւնը ձայնի և շոշափողութեան միջոցով): Ես իսկոյն բոլորովին արթնացի: Սենեակի մէջ մի հետաքրքիր հնչիւն կար, ինչպէս գիմրալդի (երաժշտական գործիք) հնչիւնը: Միևնոյն ժամանակ ես զգացի, որ մի ցուրտ շնառութիւն շրջապատում էր ինձ, սիրտս սկսեց ուժգնութեամբ բաբախել և ես որոշակի տեսայ մի դէմք՝ հակուած ինձ վրա: Սենեակը լուսաւորվում էր դրսում վառած մի

լապտերի միայնակ լոյսով, որ մի երկար լուսաւոր շերտ էր կազմում արդուզարդի սեղանի վերեւի պատի վրա: այդ շերտը մթնացած էր տեսածս դէմքով: Ես արագութեամբ երեսս դարձրի և ձեռքը կարծես գլխիցս ընկաւ կողքիս բարձի վրա: Դէմքը կռացած էր դէպի ինձ և ես նրան զգում էի յենուած անկողնուս կողմը: Ես տեսնում էի ամբողջ ժամանակ բարձի վրա դրած ձեռքը: Ես նշմարում էի դէմքի շրջափակը, բայց կարծես թէ մշուշով պատուած: Պէտք է կէս գիշերից մօտ կէս ժամ անցած լինէր. դէմքը թեթեւ կերպով քաշել էր վարագոյրը, բայց այս առաւօտ ես տեսայ, որ նա կախուած էր ինչպէս միշտ: Ոչ մի տարակոյս չունէի, որ դա հայր Գոգֆրէյի դէմքն է. ես նրան ճանաչեցի դէմքի գծադրութիւնից և ուսերի դարձուածքից: Ամբողջ այն ժամանակ, որ կանգնած էր այնտեղ, սենեակի մէջ, մի պաղ օդի հոսանք էր տիրում, այնպէս որ կարծես թէ երկու լուսամուտները բաց լինէին:»

Դրանք էրան լէւնէր եմ:

Մեր ունեցած դիտողութիւնների ներ-

կայ վիճակում բոլորովին յանդգնութիւն կըլինի դրանց բացատրութիւնը որոնել: Մեր հոգեբանութիւնը շատ առաջ չէ գրնացել: Զատ բաներ կան որ մենք ստիպուած ենք ընդունել առանց կարողանալու որ և է կերպով բացատրելու: Ուրանալ ինչ որ չենք կարող բացատրել՝ կատարեալ անխեղութիւն կըլինի:

Միթէ հազար տարի առաջ կարողանում էին բացատրել աշխարհի սխտեմը: Նոյն իսկ այսօր կարողանում ենք բացատրել ձգողութեան ոյժը: Բայց դիտութիւնը առաջ է ընթանում և նրա առաջադիմութիւնը անսահման կըլինի:

Արդեօք ճանաչում ենք մարդկային կարողութիւնների ամբողջ տարածութիւնը: Թէ ընութեան մէջ կան զօրութիւններ, դեռ մեզ անծանօթ, ինչպէս էր, օրինակ, մի դար առաջ, ելեքտրականութիւնը, թէ աիւզերքի մէջ կան էակներ, ուրիշ զգայարաններով, և ուրիշ զօրութիւններով օժտուած—այդ մասին մտածողը մի վայրկեան անգամ չէ կարող տարակուսել: Բայց նոյն իսկ հո-

դեղէն մարդը ծանօթ է մեզ լիակատար կերպով: Դժուար թէ:

Կան իրողութիւններ, որոնց իրականութիւնը ստիպուած ենք ճանաչել առանց կարողանալու որ և է ձեռով բացատրել:

Զվէգէնօրգի կեանքն այդպիսի երեք օրինակ է ներկայացնում: Մի վայրկեան մի կողմ թողնենք նրա մոլորակային և աստղային տեսիլքները, որոնք աւելի ենթակայական են երևում, քան առարկայական (սիւրեկտիվ, քան օբեկտիվ). նկատենք միայն որ Զվէտէնօրգը մի առաջնակարգ գիտնական էր երկրաբանութեան, հանքաբանութեան, բիւրեղագրութեան մէջ, անդամ էր Ուսսարի, Ստոկհօլմի և Պետերբուրգի գիտութեան ճեմարաններին և բաւականանալով առաջ բերելու հետեւալ երեք ղեւքերը:

1759 թ. յուլիսի 19-ին վերադառնալով Անգլիայում արած ճանապարհորդութիւնից, այդ փիլիսոփան իջաւ Գօտտենրուդում և զնաց ճաշելու մի ոմն Վիլլիամ Կօտտէլի տանը, որտեղ բազմաթիւ ընկերութիւն կար: Երեկոյեան ժա-

մը 6-ին, պ. Զվէգէնօրգը, որ դուրս էր եկել, մտաւ սրահը, գունաթափ և սարսափած և ասաց որ հէնց այդ ըոպէին Ստոկհօլմում մի հրդեհ է տեղի ունեցել, իր բնակած փողոցում և որ կրակը սաստկութեամբ տարածվում էր դէպի իր տունը: Նա նորից դուրս եկաւ և վերադարձաւ, ողբալով որ իր բարեկամների մէկի տունը բոլորովին մոխիր է դարձել և իր տունը մեծ վտանգի է ենթարկուած: Ժամը 8-ին նորից դուրս գալով և վերադառնալով գոչեց ուրախութեամբ. «Փառք Աստուծու, հրդեհը հանգցրին. իմ տան հասնելու համար դեռ երեք տուն էր մնում:»

Լուրը տարածուեց ամբողջ քաղաքում, որ սկսեց յուզուել, մանաւանդ որ նահանգապետը ուշադրութիւն էր դարձրել և շատ անձինք երկիւղ էին կրում իրանց կամ իրանց բարեկամների կայքի մասին... երկու օրից յետոյ թաղաւորական սուրհանդակը բերաւ Ստոկհօլմից հրդեհի լուրը. ոչ մի տարբերութիւն չըկար նրա ցուցմունքների և Զվէգէնօրգի տուածի մէջ. հրդեհը հանգցրուել էր ժամը 8-ին:

Այս պատմութիւնը գրի է առնուել հռչակաւոր Էմմանուէլ Գանտի ձեռքով, որ կամեցել էր մի քննութիւն կատարել այդ իրողութեան մասին և որն ասում է. «Ընչ կարելի է առարկել այս գէպքի վաւերականութեան դէմ:»

Արդ, Գօտտէնրէրգ քաղաքը հեռու է Ստօկհօլմից երկու հարիւր կիլօմէտր:

Զվէդէնթորգը այդ ժամանակ 72 տարեկան էր:

Ահա երկրորդ իրողութիւնը:

1761-ին, տիկին Մատարվիլ, Ստօկհօլմի հօլլանդական դեսպանի այրին, ստանում էր իր ամուսնու մի պարտատէրից քսանհինգ հազար հօլլանդական ֆլօրինի (յիսուն հազար ֆրանկ) մի պահանջ. այրին այդ պարտքը իր ամուսնու ձեռքով վճարուած էր կարծում, ուստի այդ կրկնակ պահանջը նրան մեծ դժուարութեան մէջ էր ձգում և գրեթէ աղքատացնում էր: Անկարելի էր նրան գտնել կորցրած անդորրագիրը: Նա գնում է այցելելու Զվէդէնթորգին և ութ օրից յետոյ, տեսնում է երազում իր ամուսնուն, որ ցոյց է տալիս այն պահարանը, որ-

տեղ պահուած է անդորրագիրը, մի ականակուռ գնդասեղի հետ միասին, որն այրին կարծում էր թէ կորցրել է: «Այդ պատահեց գիշերուայ ժամը երկուսին. ուրախացած՝ նա վեր է կենում անկողինից և գտնում է բոլորը ցոյց տուած տեղում: Նորից պառկելով՝ նա քնեց մինչև առաւօտեան ժամը իննը: Տասն և մէկ ժամին մօտ, պ. Զվէդէնթորգը զալիս է և առանց որ տիկինը մի բան յայտնէր եղածի մասին, նա պատմում է թէ ինչպէս նախընթաց գիշերը տեսել է պ. Մարտըվիլի ոգին, որ յայտնել էր իրան թէ գնում է այրու մօտ:»

Ահա երրորդ իրողութիւնը:

1772 թ. փետրուար ամսին, գտնուելով Լոնդօնում, նա ուղարկեց մի տոմսակ՝ ձօն Վէլսի վարդապետին, յայտնելով որ շատ կը ցանկանար նրա հետ ծանօթանալ: Եռանդուն քարոզիչը ստացաւ այդ տոմսը այն ըսպէին, երբ պէտք է գնար մի տեղ պաշտօն կատարելու և պատասխանեց թէ կօգտուի այդ շնորհալի թոյլտուութիւնից և պաշտօնատեղից վերադառնալուց յետոյ, որ պէտք է անէր վեց.

ամիս, կը գնայ նրան այցելութեան: Զվէդէնրօրզը պատասխանեց. «Այդ պարագայում, մենք այս աշխարհում միմեանց հետ տեսնուել չենք կարող: Երբեք առաջիկայ մարտ ամսի 29-ին ինքն ախար է մեռնի:»

Եւ ճշմարիտ, Զվէդէնրօրզը մեռաւ միևնոյն օրը, որի թուականը մի ամիս առաջ նշանակել էր ինքն:

Այդ երեքը այնպիսի իրողութիւններ են, որոնց իսկականութիւնն ուրանալ անկարելի է, բայց մեր ունեցած գիտութեան ներկայ վիճակում ոչ ոք յանձն չի առնի բացատրել:



Մենք կարող էինք բաղմապատկել անսահման կերպով այդ երեքը՝ զեկուցումները: Վերեւում յիշուած իրողութիւններին համանման դէպքեր, տարածութեան մէջ հաղորդակցութեան դէպքեր թէ մահուան ըսպէտմ, թէ կեանքի կանոնաւոր պայմաններում այնքան էլ հազուադիւս չեն, որ մեր ընթերցողներին ամեն մի-

նը լոսած չըլինէր նրանց մասին կամ գուցէ ինքն զիտած չըլինէր մի որ և իցէ պարագայում: Բացի զրանից, մագնիսականութեան շրջանում արած փորձերը նոյնպէս վկայում են, որ մի քանի որոշ հոգեբանական դէպքերում փորձ անողը կարող է ազդել իր ենթակայի վրա տարածութեան միջոցով, ոչ միայն մի քանի մէտրով հեռու, բայց մի քանի կիլոմէտրով և մինչև անգամ հարիւր կիլոմէտրով աւելի հեռու, նայելով ենթակայի զգայականութեան և պայծառատեսութեան և, ի հարկէ, նաև մագնիսացնողի կամքի սաստկութեան: Միւս կողմից, տարածութիւնը այն չէ, ինչ որ մենք կարծում ենք: Պարիզից Լոնդօն եղած տարածութիւնը կամ անջրպետը մեծ է օտքով գնացողի համար և նա մինչև անգամ անանցանելի էր նաւերի հնարեւուց առաջ. բայց նա ոչինչ է ելեքտրականութեան համար: Երկրից Լոսանը եղած տարածութիւնը մեծ է շարժողութեան մեր ներկայ վիճակի տեսակէտից. նա ոչինչ է ձգողական զօրութեան համար: Իրողապէս բացարձակի տեսակէտից, այն

անջրպետը, որով մենք բաժանուած ենք Սիրիուսից անասամանութեան առաջ նոյնքան նշանակութիւն ունի, որքան մեզ համար Պարիզից Վէրսայլ եղած տարածութիւնը կամ մեր աջ աչքի ձախ աչքի մէջ եղած հեռաւորութիւնը:

Դրանից աւելի լաւն կայ. Երկրի և Լուսնի, կամ Երկրի և Հրատի, կամ նոյն իսկ Երկրի և Սիրիուսի մէջ եղած առեւելոյթ հեռաւորութիւնը միայն մի պատճառն է (իլլուզիա), որ մեր ըմբռնողութեան անբաւարարութեան ենք պարտական: Լուսինը շարունակ ազդում է Երկրի վրա և նրան շարժում է մշտնջենապէս: Հրատի քարշողական զօրութիւնը նոյնպէս զգալի է մեր մոլորակի համար և մենք ևս խանգարում ենք Հրատին իր ընթացքի մէջ, կրկնելով լուսնի ազդեցութիւնը: Մենք ներգործում ենք նոյն իսկ իրա Արեգակի վրա և շարժեցնում ենք, որպէս թէ կաշում ենք նրան: Քարշողութեան զօրութեամբ, Լուսինը հոլովել է տալիս իւրաքանչիւր ամիս Երկիրը իրանց ծանրութեան ընդհանուր կենդրոնի շուրջը, մի կէտ որ գտնվում է տա-

րածութեան մէջ երկրազնդի մակերևոյթից 1700 կիլոմէտր հեռաւորութեան վրա: Երկիրը թաւալել է տալիս ամեն տարի Արեգակը իրանց ծանրութեան ընդհանուր կենդրոնի շուրջը, որ արեգակային կենդրոնից 456 կիլոմէտր հեռու է կանգնած. բոլոր աշխարհները մշտնջենաւորապէս ներգործում են մէկ մէկու վրա, այնպէս որ չըկայ անջատումն, իրական բաժանումն նրանց մէջ: Փոխանակ լինելու աշխարհները մէկ մէկուց բաժանող մի դատարկութիւն, տարածութիւնը աւելի հաղորդակցութեան մի կապ է: Արդ, եթէ ձգողութիւնը կամ քարշողութիւնը հաստատում է այդպիսի մի իրական, մշտնջենական, ներգործական և անհրաքելի հաղորդակցութիւն Երկրի և անասամանութեան նրա քոյրերի մէջ, մի հաղորդակցութիւն, որ հաստատվում է աստղագիտական դիտողութիւնների ճշգրտութեամբ, մենք չենք հասկանում այն ժամանակ, թէ ո՞ր իրաւունքով պօղիտիվիստ համարվողները կարող են յայտարարել թէ ոչ մի հաղորդակցութիւն հնարաւոր չէ երկու, միմեանցից չափ կամ

քիչ հեռացած էակների մէջ, թէ երկրիս վրա, թէ նոյն իսկ երկու զանազան աշխարհների վրա:

Երկու ուղեղներ, որոնք ճօճում են համաձայն, մի քանի կիլօմէտր անջրպետով միմեանցից հեռու, մի՞թէ չեն կարող շարժուել միեւնոյն պոխիսիական ոյժով: Մի ուղեղից գնացած գրգռւը մի՞թէ չէ կարող եթերի միջոցով, ինչպէս և ձգողութիւնը, գնայ խփէ մի ուրիշ ուղեղի, որ ճօճում է մի քիչ հեռու, ինչպէս մի ձայն, որ հնչելով մի ուրիշ սենեակից ճօճեցնում է դաշնամուրի կամ կիթառի լարերը: Զրմուռանք որ մեր ուղեղները բաղկացած են այնպիսի մասնիկներից, որոնք չեն կաշում միմեանց և մշտնջենաւոր ճօճման մէջ են:

Եւ ինչի՞ ենք խօսում միայն ուղեղի մասին: Մտածմունքը, կամքը, պոխիսական ոյժը, ինչ և լինի նրա բնութիւնը, մի՞թէ չէ կարող ներգործել անջրպետով մի էակի վրա, որ յարուած է իրան մտաւոր ազգականութեան անշուծելի և համակրական կապերով: Սրտի բախումները մի՞թէ յանկարծ չեն փոխանցվում այն

սրտին, որ բաղխում է մերինին համաձայն:

Արդեօք պէտք է ընդունենք, վերև յիշուած երևոյթների գէպըում, թէ մեռեալի ոգին իրօք ընդունում է մարմնաւոր ձև գիտողի հարևանութեան մէջ: Դէպքերի մեծագոյն մասում այդ ենթադրութիւնը հարկաւոր չէ թւում: Մեր երազների մէջ մենք կարծում ենք տեսնել այնպիսի անձանց, որոնք բնաւ մեր աչքի առաջ չեն, այն ևս փակուած աչքի. բայց մենք նրանց տեսնում ենք կատարելապէս, այնպէս լաւ, ինչպէս լոյս ցերեկով. մենք նրանց հետ զրոյց ենք անում: Անշուշտ, այդ ոչ մեր ցանցային թաղանթն է, ոչ մեր տեսողական ջիղը, որ տեսնում է նրանց: Միայն մեր ուղեղային խշտիկներն են, որ խաղում են:

Երևոյթներից ոմանք կարող են լինել առարկայական, արտաքին, նւթական. ոմանք կարող են լինել ներքին. այդ գէպըում այն էակը, որ երևան է գալիս, կարող է ներգործել հեռուից տեսնող էակի վրա, և այդ ներգործութիւնը նրա ուղեղի վրա կարող էր որոշել ներքին տեսիլքը, որն թւում է արտաքին, ինչպէս

երազները մէջ, բայց կարող է զուտ ենթակայական լինել, առանց որ դրա համար ցնորական կամ անբնական համարուի:

Փորձառական ուսումնասիրութիւնները, որոնք կատարուել են նորերումս հիպնոստիզմի, ներազգման, քնածէութեան (սոմնամբուլիզմ) երեւոյթների վերաբերմամբ, հայթայթում են մեզ միջոց եթէ ոչ մեկնելու այդ երեւոյթները, գոնէ իրողութիւնների մի ամբողջ խումբ ընդունելու իբրեւ բանական: Անշուշտ այստեղ կատարվում է մի մտքի ներգործութիւնը միւսի վրա: Անտարակոյս, հոգին չէ փոխադրվում ընդունելով իրականապէս մի անձնաւորութեան տեսքը, անձնաւորութեան, որ հագուած լինի և տեսնող ենթակայի առաջ կանգնած չէ լինում իբրեւ աւելի կամ քիչ լայն վերաբերու, չըզգեստ հագած էակ, ձեռքին բռնած հովանոց կամ եղէգնափայտ և այլն: Բայց գուցէ երևացող ոգին ներգործում է ուղղակի միւսի վրա և այնպիսի տպաւորութիւն է ներշնչում նրան որ սա կարծում է տեսնել, լսել, մինչև անգամ շօշափել մի անձն, պատկերացնելով նրան իր

առաջ ճիշդ այն ձևով, որով ճանաչում է նրան:

Ինչպէս մի մտածողութիւն, մի յիշողութիւն դարթեցնում է մեր մտքի մէջ մի պատկեր, որ կարող է լինել շատ ակնյայտ և շատ կենդանի, նոյնպէս մի էակ, որ ներգործում է միւսի վրա, կարող է երևացնել տալ նրա մէջ մի պատկեր, որին նա մի վայրկեան իրականութեան պատրանքը կարող է տալ: Այժմ փորձառական (էքսպերիմէնտալ) եղանակով ստացվում են այդ իրողութիւնները ներազգման և հիպնոստիզմի ուսումնասիրութիւնների մէջ, որոնք թէև դեռ նոր են սկսուել, բայց սակայն ամենամեծ ուշադրութեան արժանի արդիւնքներ են արտադրում, թէ հոգեբանական և թէ ֆիզիոլոգիական տեսակէտից: Ոչ թէ աչքի թաղանթն, որ հարուածվում է մի խակական իրականութիւնից, այլ ուղեղի տեղական խաւերն են, որոնք զբաղվում են մի պսիխական ոյժից: Նոյն խակինքն մտաւոր էակն է, որ տպաւորվում է: Ի՞նչ ձևով, ահա այդ չըզգիտենք:

Այդպէս են այն ամենաբանական հե-

տեղում թիւնները, որոնք կարող են եղբայրացնուել այն կարգի երևոյթներէց, որոնցով զբաղուեցինք, երևոյթներ, որոնք մնացել են անբացատրելի, բայց շատ հին են, որովհետեւ ըստը ազգերի պատմութիւնը, ամենահին ժամանակից սկսած, պահպանել են այնպիսի օրինակներ, որ դժուար կը լինի ուրանալ կամ ֆնջել:

Բայց ի՞նչպէս, կասեն մեզ, միթէ՞ կարող ենք մեր այս դրական գիտութեան և փորձառական մեթօդի դարում ընդունել, որ մի մեռնող, կամ նոյն իսկ մեռեալը, կարողանայ հաղորդակցուիլ իւր ունեւնայ:

Սակայն ինչ է մի մեռեալ:

Ամեն մի մաներկրորդում մեռնում է մի մարդկային էակ ամբողջ երկրագնդի վրա, ուրեմն օրական մօտ ութսուն վեց հազար չորս հարիւր, տարեկան մօտ երեսուն և մի միլիոն կամ ամեն մի դարում աւելի քան երեք միլիարդ մարդ: Տասն դարի կամ 1000 տարուայ ընթացքում,

տւելի քան երեսուն միլլիարդ դիալիներ յանձնուել են հողին, ընդհանուր չըջանառութեան համար, ջրի, գազի և գանազան արտադրութիւնների ձեռք: Եթէ ի նկատի տունենք մարդկային հասարակութեան նուազումը պատմական հասակներում, մենք կը գտնենք որ տասն հազար տարիների կամ հարիւր դարերի ընթացքում ամենաքիչը երեւ հարիւր միլլիարդ հարմին հարմին կազմուել են հողից և օդից, շէշառւելու միջոցով և վերադարձել են այնպէս: Թթուածնի, ջրածնի, բորակածնի և այլ այն հիւլէները, որոնք կազմել են այդ մարմինները, պարարտացրել են հողը և վերադարձել են մթնոլորտային շրջանառութեան:

Այո, Երկիրը, որի վրա մենք բնակում ենք, այսօր բազկացած է մասամբ այն միլիարդաւոր ուղեղներէից, որոնք մտածել են, այն միլիարդաւոր գործարանաւորութիւններէից, որոնք ապրել են: Մենք ման ենք գալիս մեր նախահայրերի վրա, ինչպէս և ման կը գան մեր վրա: Մտածողներ, ճակատները, այն աչքերը որոնք դիտել են, ժպտել են, լա-

ցել են, այն սրտերը, որոնք սիրել են և տանջուել, այն բերանները, որոնք երգել են սէր, վարդազոյն շրթունքները և մարմարիօնէ կուրծքերը, մարմարիօնէ երկկամունքները, աշխատողների բազուկները, պատերազմողների մկանունքը, յաղթուածների արիւնը, երեխաները և ծերերը, բարիները և չարերը, հարուստները և աղքատները, ամեն ինչ որ ապրել է, ինչ որ մտածել է, հանգստանում է միևնոյն հողի մէջ: Դժուար կը լինէր այսօր մի հատ քայլ անել մեր մոլորակի վրա առանց մեռեալների աճիւնների վրա ման գալու. դժուար կը լինէր ուտել և խմել առանց վերածնելու այն՝ ինչ որ արդէն հաղարաւոր անգամ կերուել ու խմուել է. դժուար կը լինէր շնչելու առանց իւրացնելու մեռեալների շունչը: Մարմնի բազկացուցիչ տարերքը, քաղուած բնութիւնից, վերադարձել են բնութեան և մեզանից իւրաքանչիւրը կրում է իւր մէջ այն հիւլէները, որոնք առաջ պատկանում էին ուրիշ մարմինների:

Լաւ, ուրեմն կարծում էք, որ հէնց այդ է ամբողջ մարդկութիւնը: Կարծում

էք, որ նա չէ թողել աւելի աղնիւ, աւելի մեծ, աւելի հոգեւոր մի բան: Մեզանից ամեն մինը միթէ տալիս է տիեզերքին, փշելով վերջին շունչը, միայն վաթսուն կամ ութսուն քիլօ միս և ոսկր, որոնք կը լուծուեն և կը վերադառնան տարերքին: Միթէ մեզ կենդանացնող հողին չէ մնում այնպէս ինչպէս ամխածնի, թթուածնի, երկաթի իւրաքանչիւր հիւլէն: Եւ միթէ այն բոլոր հողիները, որոնք ապրել են, միշտ գոյութիւն չունեն:

Մենք ոչ մի իրաւունք չունենք հաստատելու, թէ մարդը բաղկացած է միայն նիւթական տարերքից և թէ մտածելու կարողութիւնը միայն նրա օրգանիզմի յատկութիւնն է: Ընդհակառակը, մենք ամենաբանական պատճառներ ունենք ընդունելու թէ հողին մի անհատական գոյացութիւն է և նա է որ կառավարում է հիւլէները՝ մարդկային մարմնի կենդանի ձեւ կազմակերպելու համար:

Այն լուսաւոր և զրեթէ ժպտացող պայծառութիւնը, որ երևում է նոր մեռած մարդի գէմքի վրա, պայծառութիւն, որ յաջորդում է հոգեւարքի անձ-

կութիւններին իբրև խաղաղ երջանկութեան մի ճառագայթ, միթէ մեզ ցոյց չէ տալիս, որ այդ գերագոյն ժամին հոգու վերջին տպաւորութիւնը բաժանման ընկերին եղել է լոյսի տպաւորութիւն և իբրև ազատութեան մի ասիւլը:

Ի՞նչ են լինում կամ ուր են գնում այն աներեւոյթ և անշօշափելի մասնիկները, որոնցից բաղկացած է եղել մեր մարմինը կեանքի ընթացքում. նրանք գնում են պատկանելու ուրիշ մարմիններին: Ի՞նչ են լինում նոյնպէս աներեւոյթ և անշօշափելի հոգիները: Կարելի է կարծել, որ նրանք ևս վերստին մարմնանում են նոր օրգանիզմների մէջ, ամեն մինը ըստ իւր ընտելութեան, զօրութեան և նախասահմանութեան:

Հոգին պատկանում է պսիխիական աշխարհին: Անտարակոյտ, Երկրի վրա կայ հոգիների անհամար թիւ, որոնք ղեռ ծանր են, կոպիտ, հազիւ բաժանուած նիւթից, անընդունակ ըմբռնելու մտաւոր իրականութիւնները: Բայց կան և ուրիշներ, որոնք ապրում են ուսումնասիրութեան մէջ, պսիխիական կամ հոգեւոր աշխարհի մշակման մէջ:

Այդ տեսակ հոգիները կարող են բնականտարեկուծ շրմնալ Երկրի վրա և նրանց ճակատագիրն է ապրել ուրանական (կօսմիական) կեանքով:

Ուրանական հոգին ապրում է մինչև անգամ իր երկրային մարմնացումների ժամանակ, ընցարձակի և աստուածայինի աշխարհի մէջ: Նա իմանում է, որ բնականելով հանդերձ Երկրում, ապրում է, իրողապէս, Երկնքի մէջ և թէ մեր մոլորակը Երկնքի մի աստղն է:

Ո՛րն է հոգու բուն ընտելութիւնը, որոնք են նրա արտայայտման կերպերը, երբ նրա յիշողութիւնը դառնում է մշտական և պահպանում է արդեօք հաստատութեամբ գիտակցական համանմանութիւնը. ինչ տեսակ ձևերով և ինչ տեսակ նիւթերից բաղկացած կարող է ապրել, որքան տարածութիւն կարող է անցնել, ո՞րն է այն մտաւոր ազգականութեան սիւնը, որ գոյութիւն ունի միևնոյն սիւն տեմի զանազան մոլորակների մէջ, ո՞րն է այն արարչագործ զօրութիւնը, որ սերմանում է աշխարհները. երբ կարող ենք հաղորդակցութեան մէջ մտնել զբացի

հայրենիքների հետ. երբ կը թափանցենք ճակատագրերի խորին գաղտնիքը: Դրանք գաղտնիքներ են և այսօր անյայտ: Բայց երբեք ահա անձանքը վաղուց ճշմարտութիւնն է:

Պատմական և գիտնական տեսակէտից բացարձակ կերպով անհերքելի մի իրողութիւն է հետեւեալը. բոլոր դարերում, բոլոր ազգերի մէջ եւ ամենակերպ կրօնական երեւոյթների ներքոյ, անմահութեան գաղափարը դրուած է անխոցելի կերպով մարդկային խղճմտանքի խորքում: Դաստիարակութիւնը տուել է նրան հազար տեսակ ձևեր, բայց չէ հնարել նրան:

Այդ գաղափարը, որ անկարելի է արմատախիլ անել, գոյութիւն ունի ինքն ըստ ինքեան: Ամեն մի մարդկային էակ, աշխարհ գալով, բերում է իր հետ, աւելի կամ նուազ անորոշ ձևով, այդ մտերիմ զգացումը, այդ ցանկութիւնը, այդ յոյսը:

II

Iter extaticum coeleste

Այն ժամերը, այն օրերը, որ ես նուիրում էի հոգեբանութեան և տէլեպաթիայի այդ խնդիրների ուսումնասիրութեան, չէին արգելում ինձ դիտել Նշրաթը հեռագրաւորով և վեր առնել նրանից աշխարհագրական նկարներ ամեն անգամ, երբ մեր յաճախ սեպացած կամ ամպամած մթնոլորտը թոյլատրում էր ինձ: Եւ սակայն, պէտք է իմանալ որ ոչ միայն բո-

լոր խնդիրները շփոխում են միմեանց բնութեան և գիտութեան ուսումնասիրութեան մէջ, այլ նաև միմեանց հետ, ի նկատի ունենալով, որ պոխիսիական տիեզերքը բնական նիւթական տիեզերք է, որ աստղագիտութեան առարկան յաւիտենական կեանքի երկիրների ուսումնասիրութիւնն է և որ մենք չենք կարող որևէ գաղափար կազմել այդ երկիրների մասին, եթէ մենք նրանց չճանաչենք աստղագիտականօրէն: Բայց ճանաչելիս լինենք թէ ոչ, իրօք, դարձեալ մենք բնակվում ենք հէնց նոյն իսկ այս բոսայէին երկնքի մի գաւառում և նրա վրայի բոլոր էակները յաւիտենականապէս երկնքի քաղաքացիներն են: Իրերի գաղտնի նախագուշակութեան պէտք է վերաբերել այն հանգամանքը, որ հնութիւնը նկատում էր ՈՒՐԱՆԻՆԵՆ իրրև բոլոր գիտութիւնների մոլուսին:

Ուրեմն իմ միտքս երկար ժամանակ զբաղուած էր մեր զրացի Հրատ մոլորակով, երբ մի օր, ման գալով մի անտառի մէջ, յուլիսի տաք ժամերից յետոյ, նստեցի կաղնի ծառի տակ և շուտով նիրհեցի:

Տաքութիւնը ճնշող էր, ամեն կողմ լուութիւն էր տիրում. Սէն գետը կարծես կանգ էր առել իրրև մի ջրանցք հովտի մէջ: Ես զարմացայ, մի քանի վայրկեան յետոյ քնից զարթնելով, երբ այլ ևս չճանաչեցի տեղը, ոչ մօտակայ ծառերը, ոչ ևս բլրակի ներքև հոսող վտակը և ոչ ևս ալեծովի մարգագետինը, որ գնում անհետանում էր հորիզոնի մէջ: Արևը մար էր մտնում, աւելի փոքր, քան մենք սովոր ենք տեսնել: Օդը դողում էր երկրին անծանօթ ներդաշնակ աղմուկներից և թռչունների նման մեծ միջատներ թռչկոտում էին անտերև, հսկայական կարմիր ծաղիկներով ծածկուած ծառերի վրա: Ես վեր կացայ, մղուած զարմանքից, իրրև ուժանակից, և այնպիսի սաստիկ ոստիւնով, որ յանկարծ ոտքի վրա կանգնած տեսայ ինձ և մի տարօրինակ թեթեւութիւն զգացի: Հաղիւ մի քանի քայլ էի անցել, որ ինձ թուաց, թէ մարմնիս ծանրութիւնը կէսից աւելի շոգիացել է քնած ժամանակս. այդ ներքին զգացումը ինձ աւելի խոր կերպով զարմացրեց քան իմ աչքիս առաջ

կատարուած ընութեան կերպարանափոխութիւնը:

Հաղիւ ես հաւատում էի աշքերիս և զգացումներիս. բացի դրանից, ես այլ ևս նոյն աշքերը չունէի, ես այլ ևս նոյն տեսակ չէի լսում և մինչև անգամ առաջին բուռներում նշմարեցի, որ մարմինս օժտուած է բազմաթիւ նոր զգայարաններով, նոր լարերով, բոլորովին տարբեր նրանցից, որոնք լսվում են այն կենդանի տաւիղից, որ երկրային մարդ անունն է կրում. մանաւանդ, ես զարմացայ, տեսնելով ինձ օժտուած մի մագնիսական զգացումով, որի օգնութեամբ մի էակ կարող է հաղորդակցութիւն կապել միւս էակի հետ, առանց որ հարկաւոր լինի թարգմանել մտածմունքները լսելի խօսքերով. կարծես այդ այն զգացումն լինի, որով օժտուած է մագնիսացրած սլաքը, որը գտնուելով Պարիզի դիտարանի նկուղի խորքում, սկսում է երերալ և գողգոթալ ամեն անգամ, երբ Սիբերիայում վառվում է մի հիւսիսափայլ և կամ մի ելեկտրական պայթիւն փայլում է Արեգակի վրա:

Արեգակը նոր էր մայր մտել մի հե-

ռաւոր լճի մէջ և երեկոյեան աղջամղջի վարդագոյն շողերը լուսաւորում էին երկրնքի խորքերը իբրև լոյսի մի վերջին երազ: Երկու լուսին վառուեց տարբեր բարձրութիւնների մէջ, մէկը նեղ մանգաղի ձևով այն լճի վրա, որի ծոցում անհետացել էր Արեգակը, իսկ երկրորդը՝ առաջին քառեակի կիսաշրջանի ձևով, աւելի բարձր, երկնքի արևելեան կողմում: Երկուսն էլ շատ փոքր էին և միայն հեռաւոր կերպով յիշեցնում էին երկրային գիշերների ահագին ջահերը: Կարծես թէ նրանք ամսոսալով՝ թափում էին իրանց աղօտ, բայց շողշողուն լոյսը: Ես ապշած նայում էի նրանց փոփոխակի: Ամենատարօրինակը այդ տեսարանի ամբողջ տարօրինակութեան մէջ գուցէ այն արեւմտեան Լուսինն էր, որ երեք անգամ աւելի մեծ էր, քան իր արևելեան ընկերը, լինելով միևնոյն ժամանակ մեր երկրային լուսնից հինգ անգամ աւելի փոքր. այդ լուսինը շարժվում էր երկնքում այնպէս արագ, որ նրա շարժումը բոլորովին տեսանելի էր աշքի համար և կարծես նա փախչում էր աջից ձախ, շտապելով պա-

տաճել արեւելքում իր երկնային քրոջը: Երեկոյեան արշալոյսի հանգչող ճառագայթների մէջ երեսաց մի երրորդ Լուսին կամ աւելի ճիշդը՝ մի պայծառ աստղ: Լինելով աւելի փոքր քան երկու արեւնեակները, նա մինչև անգամ նկատելի սկաւառակ չունէր, բայց նրա լոյսը շատ փայլուն էր: Նա սաւառնում էր երեկոյեան երկնքում մեր երկնքի Աստղիկի նման, երբ այս «հովուի աստղը» իր ամենափառաւոր փայլի օրերում իբրև դշտոյ թագաւորում է երկնքում գարնանային հովասուն երեկոներին, քնքոյշ երազներ մըրմընջալով:

Երկնակամարի վրա արդէն սկսել էին վառուել ամենապայծառ աստղերը. նրանց մէջ կարելի էր ճանաչել ոսկէճաճանշ Արքատորոսին (Եգարած), սպիտակ և անարատ Վէդային (Քնար), Եօթնաստեղի աստղերը և շատ զօդիական համաստեղութիւններ: Երեկոյեան աստղը, նոր Վեսպէրը (գիշերավար) փայլում էր այդ ժամանակ Զկան համաստեղութեան մէջ: Երբ ես մի քանի վայրկեան ուսումնասիրեցի նրա դրութիւնը երկնքում և ինքս

որոշեցի իմ ուղին, ի նկատի ունենալով համաստեղութիւնները, քննեցի երկու արեւնեակները և զգացի իմ մարմնի կշռի նուազելը, ես եկայ այն համոզման, թէ ես գտնվում եմ Հրատ մոլորակի վրա և իմ տեսած չքնաղ երեկոյեան աստղը... Երկիրն էր:



Նայուածքս սեւեռեցի նրա վրա, համակուած սիրոյ այն մելամաղձոտ զգացումով, որ շարժում է մեր սրտի լարերը, երբ մեր միտքը թռչում է գէպի մեր այն ժիրեցեալ էակը, որ բաժանուած է մեզանից մի անգուլթ տարածութեամբ. ես երկար զննում էի իմ հայրենիքը, ուր այնքան տարբեր զգացումներ խոնվում են և վխտում կեանքի ալեծփումների մէջ, և մտածեցի.

«Ի՞նչքան ցաւալի է, որ այդ փոքր տարածութեան վրա ապրող անթիւ մարդկային էակները չգիտեն, թէ սրտեղ են գտնվում: Ո՞րքան չքնաղ է այդ փոքրիկ Երկիրը, որ այսպէս լուսաւորվում է Արե-

գակից իր աւելի փոքր Ղուսնի հետ, որը նրա կողքին միայն մի կէտ է երևում: Անսահմանութեան, բայց... ներդաշնակութեամբ լի ամբողջութեան այդ հիւլէն լողում է... երկնքում, տարուելով ձգողութեան առողաածային օրէնքների ուժով և ներկայանում է իրրեւ մի հրեշտակաբնակ կղզեակ: Բայց այդ բանը անյայտ է նրա բնակիչներին: Տարօրինակ մարդկութիւն! Նա գտել է Երկիրը շատ մեծ, բաժնուել է խմբերի և անց է կացնում իր ժամանակը միմեանց ջարդելով: Երկնային այդ կղզում նոյնքան զինուորներ կան, որքան և բնակիչներ. նրանք բոլորը սպառազինուած են և պատրաստ յարձակուել մէկ մէկու վրա, մինչ շատ հասարակ բան կլինէր ապրել հանդարտ: Նրանք փառաւոր գործ են համարում փոխել ժամանակ առ ժամանակ երկրների անունները և գրօշակների գոյները: Դրա մէջ է կայանում ազգերի ամենասիրելի զբաղմունքը և քաղաքացիների սկզբնական դաստիարակութիւնը: Դրանից դուրս ամբողջ նրանց կեանքը նուիրուած է լիւում նիւթապաշտութեան: Նրանք չեն

գնահատում մտաւոր կեանքը, անտարբեր են մնում դէպի ստեղծագործութեան ամենահրաշալի առեղծուածները և ապրում են առանց նպատակի: Որքան ցաւալի է: Որքան ցաւալի կլինէր պատահել Պարիզի մի բնակչի, որ լսած չլինէր այդ քաղաքի անունը, նոյն իսկ Ֆրանսիայի անունը, և սակայն, այդ դժբախտները հանդարտ ապրում են, չճանաչելով իրանց հայրենիքը: Ո՛հ, եթէ նրանք կարողանային տեսնել Երկիրը այստեղից, սրբիսի բերկրութեամբ կվերադառնային այնտեղ և սրբան կերպարանափոխուած կլինէին բոլոր ընդհանուր և մասնաւոր գաղափարները: Այն ժամանակ գոնէ նրանք կճանաչէին իրանց բնակած Երկիրը. այդ կլինէր սկիզբն. ապա յաջորդաբար կուսումնասիրէին իրանց շրջապատող վեհ իրականութիւնները, փոխանակ բոյսի պէս աճելու մի անհորիզոն մշուշի տակ և շուտով նրանք կ'ապրէին իսկական կեանքով, մտաւոր և հոգեւոր կեանքով:»

«Ո՛րքան պատիւ է անում նա նրան! ճշմարիտ, կարելի է կարծել, որ նա բարեկամներ է թողել այդ հեղձուցիչ բանտում:»

Ես ամենեկին չէի խօսել. բայց ես շատ որոշ կերպով լսեցի այդ բառերը, որոնք կարծես համապատասխանում էին իմ մըտածքմունքներին: Հրատի երկու բնակիչներ նայում էին ինձ և հասկացել էին մտածմունքս, մագնիտիական ըմբռնողութեան այն վեցերորդ զգայարանի շնորհիւ, որի մասին վերևում խօսեցի: Ես մի քիչ զարմացայ և խոստովանում եմ, մինչև անգամ վերաւորուեցի այդ խօսքերից. ես մտածում էի. «25-ը որ ինչ որ էլ լինի, ես սիրում եմ Երկիրը, նա իմ հայրենիքն է և ես հայրենասիրութիւն ունեմ:»

Իմ երկու զբաղմունքները այս անգամ միատեղ ծիծաղեցին:

«Այո, ասաց նրանցից մէկը մի անակընկալ բարութեամբ, դուք հայրենասիրութիւն ունէք: Իսկոյն երևում է, որ Երկրից էք գալիս:»

Եւ աւելի հասակաւորը աւելացրեց.

«Թողէք հանդիստ ձեր հայրենակիցներին, նրանք միշտ կմնան նոյն անխոհեմները և կոյրերը, ինչպէս և այօր: Արդէն 80,000 տարի կայ, որ նրանք այնտեղ են և դուք ինքներդ էք խոստովա-

նում, որ նրանք դեռ ընդունակ չեն մըտածելու...: Դրանից յետոյ զարմանալի է, թէ ինչպէս դուք կարող էք նայել Երկրին այդպիսի քնքշութեամբ. ձեր կողմից այդ միտմտութիւն է:»

Արդեօք չէ՞ պատահել ձեզ, սիրելի ընթերցող, հանդիպել այնպիսի մարդկանց, որոնք տոգորուած են մի անխոհ վելի հպարտութեամբ և որոնք անկեղծ և անխախտ կերպով իրանց բոլոր մնացած մարդկանցից աւելի բարձր են կարծում: Երբ այդ հպարտ անձինք պատահում են մի այնպիսի անձնաւորութեան, որ աւելի բարձր է իրանցից, նրանք իսկոյն հակադրութիւն են զգում դէպի նրան և չեն կարողանում տանել նրան: Այդպէս էլ ինձ պատահեց. իմ նախկին անուրջների ժամանակ (որոնց մասին ես ձեզ մի շատ թոյլ հասկացողութիւն տուի) ես ինձ շատ բարձր էի զգում երկրային մարդկութիւնից, որովհետեւ վերաբերվում էի նրան ցաւակցաբար և ցանկանում էի նրա համար աւելի լաւ օրեր, բայց երբ Հրատի այդ երկու բնակիչները ըստ երեւութին նոյնպէս ցաւակցաբար նայեցին ինձ

վրա, երբ ես նկատեցի, որ նրանք ինծանից բարձր են, ես վայրկենապէս դարձայ այդ սնապարծ հպարտներից մինը. արիւնը խփեց գլխիս և շրնայելով իմ ֆրանսիական քաղաքավարութեան, ես բաց արի բերանս, նրանց ասելու համար.

«Բայց, պարոններ, Երկրի բնակիչները այնքան էլ ապուշ չեն, ինչպէս դուք կարծում էք և գուցէ ձեզանից էլ լաւ են:»

Դժբախտաբար, նրանք չթողեցին, որ նոյն իսկ սկսեմ այդ նախադասութիւնը, որովհետեւ նրանք գուշակեցին իմ միտքը, երբ նա դեռ նոր էր կազմվում իմ ուղեղի մասնիկների ճօճումների մէջ:

«Թոյլ տուէք ձեզ ասել իսկոյն, նկատեց կրտսերը, որ ձեր մոլորակը մի արմատական պակասութիւն ունի, շնորհիւ մի հանգամանքի, որ տեղի ունեցաւ 10 միլիոն տարի սրանից առաջ: Այդ պատահեց երկրային գոյութեան նախնական շրջանում: Արդէն կային բոյսեր և նոյն իսկ հրաշալի բոյսեր և ծովերի խորքերում, ինչպէս և եղբերում երևում էին առաջին անասունները, անգլուխ, խուլ, համր և անսեռ մօլլիւսկներ (կակղամար-

միւններ): Դուք գիտէք, որ շնչառութիւնը բաւական է ծառերին՝ նրանց սննդեան համար, որ ձեր ամենահզօր կաղնիները, ամենահսկայական եղևնիները երբէք ոչինչ չեն կերել և այնուամենայնիւ աճել, մեծացել են: Նրանք սնանվում են միայն շնչառութեամբ: Դժբախտաբար, ճակատագիրը այնպէս բերեց, որ առաջին մօլլիւսկի մարմնով մի կաթիլ ջուր անցաւ, աւելի հոծ, քան շրջապատող միջավայրը: Ո՞վ գիտէ, գուցէ ճակատագիրը այդ բարիք համարեց: Եւ այդպէս ծագեց առաջին սննդամարս խողովակը, որին վիճակուած էր այնպիսի աղէտալի ազդեցութիւն գործել երկրի ամբողջ կենդանական կեանքի և ապա նոյն իսկ իրան, մարդկութեան վրա: Այն մօլլիւսկը, որ սկսեց ուտել, առաջին սպանողն եղաւ Երկրի վրա:

«Այստեղ ոչ ոք չէ ուտում, երբէք չէ կերել և երբէք չըպէտք է ուտի: Ստեղծագործութիւնը զարգացել է այստեղ աստիճանաբար, խաղաղութեամբ, ազնուութեամբ, ինչպէս և սկսուել էր: Գործարանաւորութիւնները այստեղ սնանվում

են, կամ այլապէս ասած՝ վերանորոգում են իրանց հիւլէները միայն մի պարզ շնչառութեամբ, ինչպէս այդ անում են ձեր երկրային ծառերը, որոնց ամեն մի տերեւ մի փոքրիկ ստամոքս է: Ձեր սիրելի հայրենիքում մի օր անգամ չէք կարող ապրել առանց սպանելու: Ձեզ մօտ կեանքի օրէնքը մահուան օրէնքն է, այսինքն՝ կեանքը հնարաւոր է միայն ուրիշների կեանքի հաշուով, իսկ այստեղ մեզ մօտ ոչ ոքի մտքից չէ անցել նոյն իսկ մի թռչուն սպանել:

«Դուք ամենքդ, աւելի կամ նուազ դահիճներ էք: Ձեր ձեռքերը թաթախուած են արեան մէջ. ձեր ստամոքսները լցուած են կերակրով: Ի՞նչպէս էք կամենում, որ դուք այդպիսի կոպիտ գործարանաւորութեամբ կարողանաք ունենալ մաքուր, ազնիւ, նոյն իսկ—ներեցէք համարձակութեանս—վեհ մտքեր: Ո՞ր հոգիները կարող են բնակուել այդպիսի մարմինների մէջ: Մտածեցէք մի բոլորէ և դուր տեղ մի օրօրէք ձեզ քաղցը երազներով, որոնք շատ իդէալական են այդպիսի մի աշխարհի համար:»

—Ի՞նչպէս, աղաղակեցի ես, ընդհատելով նրան, դուք թոյլ էք ապլիս ձեզ ենթադրել, թէ մենք չենք կարող ունենալ վեհ մտքեր: Ուրեմն դուք մարդկանց անասունների տեղ էք ընդունում: Ուրեմն դուք կարծում էք, որ չոմերոսը, Պլատոնը, Ֆիդիասը, Սենեկան, Վիրգիլիան, Դանտը, Կոլումբը, Բեկօնը, Գալիլէյը, Պասկալը, Նիւտոնը, Բաֆայէլը, Մօցարտը, Բեթհովէնը երբէք չեն ունեցել վեհ ներշնչումներ: Դուք գտնում էք, որ մեր մարմինները կոպիտ են և զդուելի, բայց եթէ դուք տեսնէիք ձեր առաջ անցնելիս չեղինէին, Փրինէյրին, Ասպազիային, Սաֆօին, Կլէօպատրային, Լիւկրեցա Բօրջիային և նրանց չքնաղ ախոյեաններին, գուցէ դուք ձեր կարծիքը փոխէիք: Ա՛հ, չբատի սիրելի բնակիչ, թոյլ տուէք ինձ ևս ավստասլ, որ դուք ճանաչում էք Երկիրը միայն հեռուից:

—Չէնց այդ բանի մէջ էլ դուք սխալվում էք. ես ապրել եմ ձեր աշխարհում ամբողջ յիսուն տարի: Այդ բաւական է ինձ և ես ձեզ հաւատացնում եմ, որ այլ ևս այնտեղ չեմ վերադառնայ: Ձեզ մօտ

շատ կարևոր պակասութիւններ կան նոյն իսկ այն բանի մէջ... որ ձեզ ամենաշքնաղ է երևում: Միթէ դուք երևակայում էք, որ Երկնքի բոլոր երկրներում ծաղիկները տալիս են միատեսակ պտուղներ: Այդ մի քիչ անգութ կլինէր: Գալով ինձ, ես աւելի սիրում եմ ծիլերը և վարդի կոկոնները:

— Բայց, սակայն, կրկնեցի ես, չնայելով այդ բոլորին, միթէ հերքում էք, որ Երկրի վրա գոյութիւն ունեն մեծ մտքեր և ճշմարիտ հիանալի արարածներ: Միթէ չէ կարելի օրօրել մեզ այն յուսով, որ ֆիզիքական և բարոյական զեղեցկութիւնը հետզհետէ կը կատարելագործուի, ինչպէս այդ եղել է մինչև այժմ և մարդկային իմացականութիւնն ևս հետզհետէ աւելի կ'ալայծաւանայ: Հօ ամբողջ ժամանակը չե՞ն անցկացնում ուտելով: Մարդիկ վերջապէս հնար կ'գտնեն, չնայելով իրանց կենցաղական հոգսերին, ամեն օր մի քանի ժամ նուիրել իրանց իմացականութեան զարգացման: Այն ժամանակ, ի հարկէ, նրանք չեն շարունակի այլևս ստեղծել փոքրիկ աստուածներ

իրանց պատկերի նման և գուցէ կվերացրեն նաև իրանց ծաղրելի միջազգային պատուարները և թոյլ կը տան, որ Երկրի վրայ թագաւորեն ներդաշնակութիւնն ու եղբայրութիւնը:

— Ո՛չ, բարեկամս, որովհետև եթէ մարդիկ այդ ցանկանային, նրանք հէնց այսօրուանից այդ կ'անէին: Նրանք յետ են պահում իրանց այդպիսի ձգտումներից: Երկրային մարդը մի փոքր անասուն է, որ մի կողմից մտածելու ոչ մի կարիք չէ զգում, որովհետև նա չունի նոյն իսկ հոգու անկախութիւն, իսկ միւս կողմից՝ սիրում է կռուել և հիմնում է իր իրաւունքը բացարձակապէս ուժի վրա: Ահա նրա մեծ գուարճութիւնը, ահա նրա բնութիւնը: Դուք երբէք չէք կարող քաղել զեղծեր փշերի մացառից:

Երկրային մոլորակը դեռ գտնվում է բարբարոս վիճակի մէջ: Պատուի խնդրի համար դուք անմիտ և յիմար մենամարտութիւնից աւելի լաւ բան դեռ չէք գտել: Ձեր ընկերական հաստատութիւնները հիմնուած են ուժեղի իրաւունքի կամ կռուի մեծամասնութեան վրա:

Երկրի ամենաքաղաքակրթուած կողմը
Եւրոպան է. բոլոր նրա քաղաքացիները
կրթուած են միջազգային սպանութեան
սկզբունքներով և համոզուած են, թէ
պէտք է սարսափելի հարկեր, տարեկան
5 միլիարդ, կամ օրական 16 միլիօն
փող ծախսել անօգուտ զօրանոցների վրա:
Մշտական պատերազմը փոքրերի ապուշ
ուրախութիւնն է կազմում և մեծերի տի-
րապետութիւն ամենալաւ եղանակը: Եթէ
քաղաքացիները, ինչ ազգութեան և պատ-
կանէին նրանք, խելք ունենային մերժել
ամենքն առանց բացառութեան զինուո-
րական ծառայութիւնը, նրանք այն ժա-
մանակ արժանի կը լինէին խելացի էակ-
ների կոչման: Բայց նրանք այդ չեն ու-
զում, որովհետեւ նրանք սիրում են ստրկու-
թիւնը, որովհետեւ իրանց մոլորակը որ-
քան էլ միջակ լինի, մարդկային գաղանի
համար գեւ շատ ընտիր բնակարան է
կազմում:

— Չատ լաւ, առարկեցի ես, բայց ես
կարծում եմ, որ դրա համար մենք չենք
դատապարտուած մնալ մշտական անզրդ-
ջացող մեղաւորներ: Կը գայ մի օր, գու-

ցէ 100,000 տարուց յետոյ, երբ մարդ-
կութիւնը հասունանալով, կը կազմի միայն
մի ընտանիք, որ կը խօսի մի լեզուով և
որի մէջ նրան բաժանող հայրենաոիրու-
թեան զգացումները տեղի կը տան միակ
մի ընդհանուր բացարձակ զգացման՝ հա-
մամարդկային համերաշխութեան զգաց-
ման: Այն ժամանակ միայն մեր մոլորակը
կը կերպարանափոխուի և կապրի մտա-
ւոր կեանքով:

— Երբէք, կրկնեց չրատեան բնակիչը,
երբէք ձեր միջակ մոլորակը չի հասնի
մերինի կատարելութեան. դրա համար
դուք շատ կոպիտ էք և ծանր: Մտածե-
ցէք, որ ձեր երկրային ամենաչքնաղ գե-
ղեցկուհիները, որոնց մասին այժմ դուք
ակնարկեցիք, միայն կոպիտ հրէշներ են
մեր չրատի եթերային կանանց կողքին,
որոնք ապրում են մեր դարունների օդով,
մեր ծաղիկների բուրումներով: Միայն
նրանց թեւերի թրթուման մէջ, նրանց
չրթունքների աստուածային համբոյրի
մէջ, այն չրթունքների, որոնք երէք չեն
դիպչում որեւէ կերակուրի, այնքան կիրք
կայ, որ եթէ Դանտի Բէատրիչէն այգալիսի

բնութիւն ունենար, անմահ ֆիօրենտիացիներ բերէր չէր կարող գրել իր Աստուծային Զօրութեան երկու երգը. նա կ'սկսէր գրախօսից և այնտեղից երբէք չէր իջնի: Մտածեցէք, որ մեր պատանիները այնքան բնածին գիտութիւն ունեն, որին հազիւ կարողացել են հասնել Պիլթագորը, Նիւտօնը, Լապլասը և Դարվինը բազմամեայ անխոնջ աշխատութիւններից յետոյ: Մեր 12 զգայարանները մեզ ուղղակի յարաբերութեան մէջ են զնում արեգակի հետ. մենք զգում ենք այստեղից, 100 միլիօն մղոնից, Լուսնի թափի ձգողութիւնը. մենք տեսնում ենք հասարակ աշքով Նրեակի օղակները. մենք զգում ենք գիսաւորի գալուստը և մեր մարմինը լցուած է արեգակնային ելեկտրականութեամբ, որ ճօճեցնում է ամբողջ բնութիւնը: Այստեղ չեն եղել ոչ կրօնական ֆանատիկոսութիւն, ոչ դահիճներ, ոչ մարտիրոսներ, ոչ միջազգային պառակտումներ, ոչ պատերազմներ, բայց հէնց իւր առաջին օրերից, մարդկութիւնը, բնականաբար, խաղաղ և ազատ նիւթական որևէ պէտքերից՝ ապրել է անկախ հոգով

և մարմնով մտաւոր յարատեւ գործունէութեան մէջ. անընդհատ բարձրանալով դէպի ճշմարտութեան գիտակցութիւնը: Բայց աւելի լաւ է եկէք դէպի մեզ:»

Ես մի քայլ արի իմ խօսակիցների հետ դէպի սարի գագաթը և երբ մենք հասանք նրա հակառակ լանջավայրին, ես տեսայ զանազան գոյնի բազմաթիւ լոյսեր, որոնք թռչկոտում էին օդում: Դրանք բոլորը բնակիչներ էին, որոնք գիշերը լուսաւոր էին դառնում, երբ կամենում էին: Օդային կառքեր կազմուած էին երեւում ֆոսֆորածին ծաղիկներից և տանում էին երգեցիկ և երաժշտական խմբեր. նրանցից մէկն եկաւ մեր մօտից անցնելու և մենք տեղաւորուեցինք անուշ բուրումների մշուշի մէջ: Այն զգացումները, որ ես կրում էի, բոլորովին տարբեր էին նրանցից, որ ես ճաշակել էի Նրկրի վրա և այդ առաջին գիշերը Հրատի վրա անցաւ իբրեւ մի արագ երազ, որովհետեւ արշալուսին ես ինձ գտայ դեռ օդային կառքի մէջ, ճառելով իմ խօսակիցներին, նրանց բարեկամների և նրանց աննման ընկերների հետ: Եւ ինչ պանօրամա բաց-

ուեց իմ առաջ արեգակը ծագելիս: Ծաղիկներ, պտուղներ, անոյշ բուրումներ, կախարդական պալատներ, որոնք բարձրանում էին նարնջագոյն բոյսեր ունեցող կղզիների մէջ. վճիռ ջրեր, որոնք անդրադարձնում էին այդ բոլորը իբրև հայելու մէջ. ուրախալի օդային զոյգեր, որոնք իջնում էին և սաւառնում այդ հրաշալի ափերի վրա: Այդտեղ, բոլոր նիւթական աշխատութիւնները կատարվում են մեքենաներով, որ կառավարում են մի տեսակ կատարելագործուած կենդանիների ցեղեր, որոնց իմացականութիւնը գրեթէ նոյն կարգիցն է, ինչ որ երկրի մարդերի իմացականութիւնը: Այդտեղ բնակիչները ապրում են միայն ոգով և ոգոյ համար. նրանց ջղային սիստեմը զարգացման այնպիսի աստիճանի է հասել, որ այդ էակներից ամեն միւնը միաժամանակ և շատ քնքոյշ և շատ ուժեղ մի ելքաորակա գործիք է երևում և նոյն իսկ նրանց ամենազգայական տպաւորութիւնները, որ նրանք զգում են աւելի իրանց հոգով քան մարմնով, հարկւր անգամ աւելի զօրեղ են քան թէ մեր երկրային հինգ

ղգայարանները միացած կարող են տալ մեզ... Մի տեսակ ամառային պալատ, լուսաւորուած ծագող արեգակի ճաճանչներով, երևում էր մեր օդային փօնդոլի ներքև: Իմ դրացուհիս, որի թեւերը թրթռում էին անհամբերութիւնից, դրեց իւր քնքոյշ ոտքը ծաղիկների մի փնջի վրա, որ բարձրանում էր անուշաբոյր հեղուկների երկու շաւորուանի մէջ: «Այժմ էլ կը վերադառնաս երկիրը, ասաց նա պարզելով ինձ իւր բազուկները:

— Երբէք, կոչեցի ես... և նետուեցի դէպի նրան...



Բայց միևնոյն ըոպէին ամեն բան անհետացաւ. ես ինձ գտայ միայնակ իմ ծառի տակ, այն բլուրի զառիվայրի վրա, որի ստորոտում օձապառլոյտ կերպով հոսում էր Սէն գետը:

Երբէք... կրկնեցի ես, կարծես թէ կամենում էի բռնել թռչող քաղցր երազը: Հրատը, այն ժամանակ, շատ պայծառ վառվում էր երկնքում:

«Ո՛հ, ես այնտեղ էի, յանկարծ փայլակի նման ծագեց իմ մէջ այդ միտքը: Երկու դրացի մոլորակները օրօրուելով, կարծես որրանի մէջ ձգողութեան միևնոյն հրաշալի դժբութեամբ նայում են այժմ միմեանց, թափանցիկ տարածութեան միջով: Արդեօք այդ երկնային եղբայրութիւնը չի՞ կարող ծառայել մեզ համար իբրեւ նախապատկեր մեր յաւիտենական ճանապարհորդութեան: Երկիրը միայնակ չէ աշխարհում: Անսահմանութեան պանօրամաները սկսվում են բացուել: Որտեղ էլ որ մենք բնակուելիս լինենք, այս կամ այն եղբում, մենք կմընանք ոչ թէ մի որևէ երկրի, նոյն իսկ որևէ մի աշխարհի, այլ ԵՐԿՆՔԻ ԻՇԵՂԱՔԵՆՆԵՐ:»

III

ՀՐԱՏ ՄՈՂՈՐԱԿԸ

Բայց մի՞թէ երազի խաղալիք էի դարձել:

Արդեօք, իրողապէս փոխադրուել էի հոգով Հրատ մոլորակի վրա կամ թէ մի երեակայական իլլիդիայից խաբուել էի:

Իրականութեան զգացումն այնքան կենդանի, այնքան սաստիկ էր եղել իմ մէջ և տեսածներս այնքան կատարելապէս համապատասխանում էին հրատեան

աշխարհի ֆիզիքական բնութեան մասին մեր ունեցած գիտնական տեղեկութիւններին, որ ես չէի կարող որեւէ կասկած ունենալ այդ առիթով, ես ապշած էի այդ ճանապարհորդութիւնից ու ինձ տալիս էի հաղարաւոր հարցեր, որոնք հակասում էին միմեանց:

Այդ տեսիլքի մէջ ամենից շատ ինձ դարմացնողը Սպէրօի բացակայութիւնն էր: Ես ինձ այնքան մտերիմ կերպով կապուած էի զգում նրա սիրելի յիշատակի հետ, որ ինձ թւում էր, թէ ես պէտք է գուշակէի նրա ներկայութիւնն այնտեղ, թռչէի ուղիղ դէպի նրան, տեսնէի նրան, խօսէի հետը և լսէի նրան: Բայց գուցէ նանսիի մազնիսացրուածը եղել էր կամ իմ կամ իր սեփական և կամ փորձ անող անձի երեւակայութեան խաղալիք: Միւս կողմից, ընդունելով հանդերձ, որ իրապէս, իմ երկու բարեկամներս նորից մարմնացել էին այդ դրացի մոյորակի վրա, ես ինձ հանգստացնում էի նրանով, որ այնքան էլ հեշտ չէ հանդիպել ծանօթներին մէկին մի քաղաքում, ևս առաւել մի ամբողջ աշխարհում: Եւ սակայն, ներ-

կայ դէպքում, հաւանականութիւնները թէօրիան անգործադրելի էր, որովհետեւ ձգողութեան մի այնպիսի զգացումն, որ մեզ միացնում էր, պէտք է անխուսափելի կերպով առաջ բերէր հանդիպումն:

Այդպէս խօսելով ինձ հետ, ես մտայ իմ գիտարանը ծիւլիղիում, որտեղ պատրաստել էի մի քանի ելեքտրական գործիքներ՝ Մօնլէրիի աշտարակի հետ մի օպտիական հաղորդակցութիւն փորձելու համար: Երբ ապահով եղայ, որ ամեն բան կարգին է, ես յանձնեցի իմ օգնականին՝ որոշուած նշանները տալու 10-ից մինչև 11 ժամը, իսկ ինքս գետցի և բարձրացայ այդ հին աշտարակի վրա, որտեղ և տեղաւորուեցի մի ժամ դրանից յետոյ: Արդէն գիշեր էր: Հին աշտարակի բարձրութիւնից հորիզոնը կատարելապէս կլորակ էր երևում և բաց էր բոլոր շրջապատով, որի շառաւիղը 20-ից մինչև 25 կիլոմէտր աւելի էր. մեզ հետ հաղորդակցութեան մէջ էր նաև մի երրորդ դիտողական կայարան, որ շինուած էր Պարիզում: Փորձի նպատակն էր իմանալ, թէ արդեօք միատեսակ արագութեամբ

են տարածվում լուսաւոր սպեկտրի* զանազան գունաւոր ճառագայթները, թէ՛ ձիւ: Հետեանքը դրական եղաւ:

Ժամը 11-ին, երբ փորձերը վերջացած էին և լուսինը սկսել էր ծագել, աստղադարդ գիշերը այնքան հրաշալի էր, որ ես, փակելով գործիքները աշտարակի ներսում, բարձրացայ աշտարակի գլուխը՝ ծագող լուսնի առաջին ճառագայթներով լուսաւորուած անհուն տարածութիւնը զննելու համար: Մթնոլորտը խաղաղ էր, գաղջ, գրեթէ տաք:

Քայց ոտքս դեռ վերի աստիճանի վրա էր, երբ ես կանդ առայ, քարացած սարսափից և մի աղաղակ արձակեցի, որ կարծես խեղդուած մնաց կոկորդուս: Սպէրօն, այո՛, նոյն ինքն Սպէրօն այնտեղ էր, իմ առաջ, վանդակապատի եզրի վրա նստած: Ես բարձրացրի թևերս դէպի երկինքը և քիչ մնաց ուշաթափ լինէի, բայց նա ինձ ասաց քաղցր ձայնով, որին այնքան սովոր էի ես.

«Մի՛թէ ինձանից վախենում ես:»

* Սպեկտ կոչվում է լոյսի գունաւոր պատկերը:

Ես ոյժ չունեցայ ոչ պատասխանելու և ոչ առաջ գնալու: Սակայն ես համարձակուեցի նայել իմ բարեկամի երեսին, որ ժպտում էր: Նրա սիրելի դէմքը, լուսաւորուած լուսնեակով, այնպէս էր, ինչպէս ես տեսել էի, երբ նա Պարիզից գըպէս ես տեսել էի, երբ նա Պարիզից գըպէս էր Քրիստափանիա, մատաղ, հաճելի, խոհուն և փայլուն նայուածքով: Ես թողեցի սանդուխքի վերջին աստիճանը և մի ներքին մղում ունեցայ գնալ դէպի նրան և գրկել, բայց ես չհամարձակուեցի և կանգնած մնացի նրա առաջ, նայելով նրա երեսին:

Քիչ-քիչ վրա եկայ և գոռացի. «Սպէրօ, մի՛թէ այդ դու...»

«Ես այդտեղ էի այն ժամանակ, երբ դու փորձեր էիր կատարում, պատասխանեց նա, և այդ ես էի, որ քեզ միտք ներշնչեցի համեմատել ծայրայեղ մանիշակագոյն գոյնը ծայրայեղ կամրի հետ, լուսաւոր կոհակների արագութիւնը որոշելու համար: Միայն ես աներեւոյթ էի, անդրամանիշակագոյն ճառագայթների նման:

— Տեսնե՞ք, մի՛թէ այդ հնարաւոր է, թող տեսնեմ և շօշափեմ քեզ:»

կութիւն, որի մէջ իզական սեռը թագաւորում է իբրեւ վեհապետ և անկասկած գերակշռութիւն ունի արական սեռի վրայ: Այդտեղ էակները թեթեւ են և քնքոյշ. նրանց մարմնի հոծութիւնը նուազ է, իսկ կշիռը՝ ևս աւելի նուազ. այդ աշխարհի երեսին նիւթական ոյժը միայն երկրորդական դեր է խաղում բնութեան մէջ. ամեն բան վճռողը՝ զգայութիւնների նրբութիւնն է: Այդտեղ կան կենդանիների բազմաթիւ տեսակներ և մարդկային շատ ցեղեր: Այդ բոլոր տեսակների և ցեղերի մէջ իզական սեռը աւելի գեղեցիկ է և աւելի ուժեղ (ոյժը կայանում է զգայութիւնների գերազանցութեան մէջ) քան արական սեռը և նա է, որ զեկավարում է աշխարհը:

Այդ նոր կեանքը ճանաչելու սաստիկ ցանկութիւնը ստիպեց նրան այլ ևս երկար ժամանակ չմնալ իբրեւ դիտող ոգի, այլ վերածնունել մարդկային մի մարմնաւոր ձևի տակ և այդ մոլորակի օրգանական պայմանների զօրութեամբ՝ վերածնունել, իզական ձևի տակ:

Արդէն Հրատի մթնոլորտում միացող

երկրային հոգիների մէջ⁴ նա հանդիպել էր (որովհետեւ հոգիները զգում են միմեանց) Իկլէայի հոգուն, որին հետեւէր՝ դեկավարում մի մշտական ձգողութեամբ: Իկլէան ևս իւր կողմից հակում էր զգացել վերածնունել արական կերպարանքի տակ:

Այդպէս նրանք միացել էին միմեանց այս աշխարհի ամենօրհնեալ երկրներից մէկում իբրեւ միմեանց զրացի և նրանց սահմանուած էր նորից հանդիպել կեանքի մէջ և բաժանել միմեանց հետ միևնոյն զգացմունքները, միևնոյն մտածմունքները, միևնոյն զբաղմունքները: Եւ թէև նրանց երկրային գոյութեան յիշատակը մնում էր վարազւորուած և կարծես ջնջուած նոր կերպարանափոխութեամբ, բայց հոգևոր ազգականութեան և փոխադարձ համակրութեան մի աղօտ զգացում նորից միացրեց նրանց, հէնց որ նրանք միմեանց տեսան: Նրանց պսիխիական գերազանցութիւնը, նրանց սոփական մտածմունքների յատկութիւնը, նրանց ոգու սովորութիւնը՝ որոնել միշտ նպատակը և պատճառը, յատկացրել էին

երկուսին ևս մի տեսակ մտերիմ պարզատեսութիւն, որ թօթափում է նրանցից ապրողների ընդհանուր տգիտութիւնը: Նրանք սիրեցին միմեանց այնպէս յանկարծակի, նրանք այնպէս սաստիկ կերպով ենթարկուեցին կայծակի նման փայլող մագնիսիական աղդեցութեան, երբ միմեանց հանդիպեցին, որ նոյն բոլէին կարծես միեւնոյն էակը դարձան և միացան այնպէս, ինչպէս երկրային բաժանման բոլէին: Նրանք յիշում էին, որ արդէն մի տեղ հանդիպել են միմեանց և նոյն խոսք համոզուած էին, որ այդ եղել է Երկրի վրա, այդ դրացի մոլորակի վրա, որ այնպէս պայծառ փայլում է երեկոները Հրատի երկնքի վրա. երբեմն իրանց եթերային թռիչքի ժամանակ եթերային բոյսերով ծածկուած բլուրների վրայով, նրանք դիտում էին այդ «երեկոյեան աստղը», աշխատելով կապել իրանց յիշողութիւնների կտրուած թելերի ծայրերը:

Մի անակնկալ դէպք վրա հասաւ և բացատրեց նրանց իրանց յիշողութիւնները և նրանք համոզուեցին, որ չեն սխալվում այդ բանի մէջ:

Հրատի ընակիչները Երկրի ընակիչներին աւելի գերագոյն են իրանց կադմակերպութեամբ, իրանց զգայարանների թւով և նրբութեամբ ու իրանց մտաւոր կարողութեամբ:

Այն իրողութիւնը, որ այդ աշխարհի վրա խտութիւնը շատ աննշան է և մարմինների բաղկացուցիչ նիւթերը այնքան ծանր չեն, ինչպէս Երկրի վրա, պատճառ է եղել, որ այդտեղ կարողացել են երեւալ անհամեմատ աւելի թեթեւ, աւելի օդային, աւելի քնքոյշ և աւելի զգայուն էակներ: Այն իրողութիւնը, որ այդտեղ մթնոլորտը անդարար է, ազատել է հրատային գործարանաւորութիւններն երկրային կոպիտ հոգսերից՝ անդեան մասին: Այդտեղ բոլորովին ուրիշ դրութիւն է. այդտեղ յոյսը այնքան զօրեղ չէ, որովհետեւ այդ մոլորակը աւելի հեռու է արեգակից, քան մենք և տեսողական ջիղը այդտեղ աւելի զգայուն է: Ելեկտրական և մագնիսական ներգործութիւններն այդտեղ աւելի սաստիկ լինելով՝ այդտեղի ընակիչներն այնպիսի զգայարաններ ունեն, որոնք անյայտ են երկրային գոր-

Ժարանաւորութիւններին և որոնք նրանց հաղորդակցութեան մէջ են դնում այդ ներգործութիւնների հետ: Բնութեան մէջ ամեն բան փոխադարձ կերպով շաղկապուած է. էակներն ամեն տեղ յարմարացրուած են միջավայրերին, որտեղ բնակվում են և որոնց մէջ ծնուել են: Գործարանաւորութիւնները Հրատի վրա չեն կարող երկրային լինել, ինչպէս նրանք չեն կարող օդային լինել՝ ծովի խորքում:

Բացի դրանից, իրերի այդ կարգից առաջ եկած գերագոյն վիճակը ինքն իրան զարգացել է այն հանգամանքի շնորհիւ, որ այդտեղ ամեն մի մտաւոր աշխատանք հեշտութեամբ է իրագործվում: Բնութիւնը կարծես հնազանդվում է մտքին: Ճարտարապետը՝ որ կամենում է մի շինութիւն կանգնեցնել, ինժիները՝ որ կամենում է կարգի բերել հողի մակարդակը, թէ փոսեր պեղելով և թէ բլուրներ բարձրացնելով, այստեղի նման չեն հանդիպում նիւթերի ծանրութեան և նիւթական դժուարութիւնների: Այդ պատճառով, արուեստը հէնց սկզբից ամենամեծ առաջադիմութիւն է գործել:

Հրատի մարդկութիւնը երկրային մարդկութիւնից հարիւր հազարաւոր տարիներով առաջ յայտնուած լինելով արդէն վաղուց անցել է իր զարգացման բոլոր փազերից: Մեր այժմեան ամենածայրայեղ գիտնական առաջադիմութիւնները միայն երեսայական խաղեր են, համեմատելով այդ մոլորակի բնակիչների գիտութեան հետ:

Մանաւանդ աստղագիտութեան մէջ նրանք անհամեմատ մեղանից աւելի շատ են առաջացած և աւելի շատ են ճանաչում Երկիրը, քան մենք ճանաչում ենք նրանց հայրենիքը:

Ի միջի այլոց նրանք հնարել են մի տեսակ տելեֆօնօգրաֆիական (հեռալուսանկարչական) գործիք, որի մէջ կերպասից ոլորուած մի գլանակ քիչ-քիչ բացուելով՝ մշտապէս ընդունում է իր վրա մեր աշխարհի պատկերը, որը տպաւորվում է նրա վրա՝ անփոփոխ կերպով: Մի ահադին մուգէոն, որ նուիրուած է յատկապէս արեգակային սիստեմի մոլորակներին, պահպանում է ժամանակագրական կարգով բոլոր այդ ընդ միշտ տպաւոր-

ընդամենը ֆոտոգրաֆիական պատկերները: Այդպես զուրկ դառնալը Երկրի ամբողջ պատմութիւնը. մեծն Կարլոսի ժամանակի Ֆրանսիան, Ալէքսանդր Մակեդոնացու ժամանակի Յունաստանը, Բամբէսի ժամանակի Եգիպտոսը. խոշորացոյցները թոյլ են տալիս ճանաչել նոյն իսկ պատմական մանրամասնութիւնները, ինչպէս Պարիզը՝ Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ, Հռոմը՝ Բօրջիայի քահանայապետութեան ժամանակ, Քրիստաֆոր Կոլումբի սպանիական նաւատորմիդը՝ Ամերիկա հասնելիս, Գաղղիան գրաւող Կլօվիսի ֆրանքները, Յուլիոս Կեսարի զօրքը, որ Անգլիայի տիրապետութեան ժամանակ ստիպուեց կանգ առնել ծովային մակընթացութեան ժամանակը, որ քշեց տարաւ նրա բոլոր նաւերը, ինչպէս և պատմական տեսարաններից շատերը, որ հեշտ է ճանաչել իրանց բնորոշ նշաններից:

Մի օր, երբ երկու բարեկամները այցելում էին այդ մուգէտներ, նրանց յիշողութիւնը, որ մինչև այդ ժամանակ աղօտ էր, լուսաւորուեց յանկարծ, ինչպէս կայծակը լուսաւորում է մի բոպէ մթութեան

մէջ ծածկուած առարկաները: Յանկարծ նրանք ճանաչեցին Պարիզի տեսքը 1867 թուի աշխարհանդէսի ժամանակ: Նրանց յիշողութիւնը թարմացաւ. նրանցից իւրաքանչիւրը զգաց առանձնապէս, որ ապրել է այդտեղ և այդ սաստիկ տպաւորութեան տակ նրանք հաւաստիացան, որ այդտեղ ապրել են միասին: Նրանց յիշողութիւնը լուսաւորուեց աստիճանաբար, ոչ թէ ընդհանուր շողերով, այլ աւելի այն լուսով, որ հետզհետէ մեծանում է արշալուսի սկզբում:

Նրանք երկուսն էլ յիշեցին կարծես ներշնչմամբ Աւետարանի այս խօսքը.

«Ջատ բնակարաններ կան իմ չօր տան մէջ:»

Եւ մի ուրիշ խօսք, որ Յիսուս ասաց Նիկողիմոսին.

«Ամեն, ամեն ասում եմ ձեզ, եթէ մի մարդ նորից չըծնուի, նա չի կարող տեսնել Աստուծոյ արքայութիւնը... պէտք է, որ զուր նորից ծնուէք:»

Այդ օրից, նրանք այլ ևս ոչ մի կասկած չունէին իրանց նախկին երկրային գոյութեան մասին և համոզուեցին, որ շա-

բունակում են հրատ մոլորակի վրա իրանց նախկին կեանքը: Նրանք պատկանում էին բոլոր դարերի այն մեծ մտքերի դասին, որոնք գիտեն, որ մարդկային ճակատագիրը կանգ չէ առնում այս երկրում և շարունակվում է երկնքում և որոնք գիտեն նոյնպես, թե ամեն մի մոլորակ՝ Երկիր, հրատ կամ մի ուրիշը, նոյնպես Երկնքի մի աստղ է:

Սեռի փոփոխութեան տարօրինակ իրողութիւնը, որ ինձ շատ կարևոր էր թվում, ինչպէս երևում էր, նրանց համար ոչ մի կարևորութիւն չունէր: Հակառակ նրան, ինչ որ ընդունուած է մեր մէջ, նա ինձ հասկացրեց, որ հոգիները այդտեղ անսեռ են և հաւասար նշանակութիւն ունեն: Ես իմացայ նոյնպէս, որ մերինից նուազ նիւթական այդ մոլորակի վրա էակները ոչնչով նման չեն երկրային մարմիններին: Յղութիւնը և ծնունդը այդտեղ կատարվում է բոլորովին ուրիշ կերպով, որ յիշեցնում է ծաղիկների պտղաբերութիւնը և զարգացումը, բայց հոգեկան ձևով: Այդտեղ հաճոյքը առանց դառնութեան է. այդտեղ չըգիտեն ամե-

նեին ոչ երկրային հոգսի ծանր բեռները և ոչ ևս վշտի կսկիծները: Այդտեղ ամեն բան աւելի օդային, աւելի եթերական, աւելի աննիւթական է: Հրատի բնակիչներին կարելի է անուանել կենդանի ծաղիկներ, բայց թեաւոր և մտածող: Իսկապէս երկրային ոչ մի էակ չէ կարող ծառայել մեզ իբրև համեմատութիւն և օգնել մեզ ըմբռնելու նրանց ձևը և նրանց կենցաղավարութիւնը:



Ես լսում էի հանգուցեալ Սպերօի հոգու պատմութիւնն առանց գրեթէ ընդհատելու նրան, որովհետեւ ինձ թվում էր, թէ նա կարող էր յանկարծ անհետանալ այնպէս, ինչպէս և եկել էր: Սակայն, մտաբերելով երազս, որի մասին յիշեցրեց ինձ նախկին նկարագրութիւնների զուգադիպութիւնը իմ տեսածի հետ, ես չը կարողացայ չհաղորդել իմ երկնային բարեկամին այդ հիանալի երազը և յայտնել նրան իմ զարմացքը այն մասին, որ ես չտեսայ նրան իմ ճանապարհորդութեան

ժամանակ չբաժնի վրա, և հենց այդ բանը ստիպեց ինձ կասկածել այդ ճանապարհորդութեան իրականութեան մասին:

«Բայց, պատասխանեց նա, ես կատարելապէս քեզ տեսայ և դու ևս ինձ տեսար և ինձ հետ խօսեցիր, որովհետեւ այդ ես էի...»

Նրա ձայնը այնքան տարօրինակ հրնչեց այդ վերջին խօսքերը արտասանելիս, որ յանկարծ ես ճանաչեցի չորստի այն գեղեցիկ բնակչուհու մելոդիական ձայնը, որ իմ վրա այնքան սուստիկ ապաւորութիւն էր թողել:

«Այո, շարունակեց նա, այդ ես էի, ես հետամուտ էի, որ դու ինձ ճանաչես, բայց դու չլացած մի տեսարանից, որ գերել էր քո միտքը, չէիր կարողանում ազատուել երկրային զգացումներից, դու շարունակում էիր մնալ երկրային, զգայական էակ և դու չկարողացար բարձրանալ մինչև մաքուր ըմբռնողութեան աստիճանը: Այո, այդ ես էի, որ մեկնեցի քեզ իմ բազուկները, որպէս զի իջեցնեմ քեզ եթերական կառքից դէպի մեր բնականութիւնը, երբ դու յանկարծ զարթնեցիր:

—Բայց այն ժամանակ, բացականչեցի ես, եթէ դու ես այն հրատեան կինը, ուրեմն ինչպէս ես այստեղ երևում ինձ Սպերօի կերպարանքով, որ այլ ևս գոյութիւն չունի:

—Բայց ես ներգործում եմ, առարկեց նա, ոչ թէ քո ցանցակերպ թաղանթի, ոչ թէ քո տեսողական շղի վրա, այլ քո ուղեղի և քո մտածողական կարողութեան վրա: Ես այս միջոցիս հաղորդակցութեան մէջ եմ քեզ հետ. ես ազդում եմ ուղղակի քո զգայութեան ուղեղային կենդրոնի վրա: Էսպէս, իմ հոգեկան էակը առանց ձեռքի, ինչպէս քոնը և բոլոր միւս հոգիները: Բայց երբ ես, ինչպէս այս բոլորիս, ուղղակի հաղորդակցութեան մէջ եմ մտնում քո մտքերի հետ, դու կարող ես ինձ տեսնել միայն այն ձևով, ինչպէս ճանաչում էիր ինձ առաջ: Այդպէս է նաև երազի ժամանակ, այսինքն ձեր երկրային կեանքի աւելի քան մի քառորդի ժամանակ—քսան տարիների ժամանակ՝ եթեմնասուն տարուայ մէջ—դուք տեսնում էք, դուք լսում էք, դուք խօսում էք, դուք շօշա-

փում էք միևնոյն տպաւորութեամբ, միևնոյն պարզութեամբ, միևնոյն արագութեամբ, ինչպէս և կանոնաւոր կեանքի ժամանակ և սակայն ձեր աչքերը փակուած են, ձեր թմբկային թաղանթը մընում է անզգայ, ձեր բերանը համր է, ձեր բազուկներն անշարժ են: Նոյն բանն է լինում նաև քնածէութեան (սօմնամբիւրիզմ), հիպնօտիզմի և ներշնչման ժամանակ: Դու ինձ տեսնում ես, դու ինձ լսում ես, դու ինձ շօշափում ես իմ ազդեցութեամբ գրգռուած քո ուղեղի միջոցով, բայց ես չունեմ այն ձևը, որով դու տեսնում ես ինձ, ինչպէս ծխածանը գոյութիւն ունի միայն նրա տեսնողի աչքերում:

— Իսկ դու կարող ես ինձ երևալ քո հրատեան ձևով:

— Ո՛չ, միայն թէ՛ դու խկապէս հոգով տեղափոխուես այդ մոլորակի վրա, այն ժամանակ մեր մէջ հաղորդակցութեան ուրիշ եղանակ կհաստատուի: Այստեղ, մեր խօսակցութեան մէջ, ամեն բան քեզ համար ենթակայական է: Իմ հրատեան ձևի տարրերը գոյութիւն չու-

նեն երկրային մթնոլորտում և քո ուղեղը չէ կարող պատկերացնել նրանց: Դու կարող ես ինձ տեսնել միայն այն կերպարանքով, որով ես ներկայացայ քո այսօրուայ երազում, բայց, հէնց որ դու հետամուտ կլինես վերլուծել մանրամասնութիւնները, պատկերը կանհետանայ: Դու չես տեսել մեզ ճիշդ այնպէս, ինչպէս մենք կանք, որովհետև քո միաջր կարող է դատել միայն քո երկրային աչքերով, որոնք զգայուն չեն բոլոր ճառագայթների համար և որովհետև դուք չունէք բոլոր մեր զգայարանները:

— Խոստովանում եմ, պատասխանեցի ես, որ լաւ չեմ ըմբռնում ձեր հրատեան կեանքը վեցմարմնեան էակների ձևով:

— Եթէ այդ ձևերը այնքան չքեղ չլինէին, նրանք կարող էին քեզ հրէշային թուալ: Ամեն մի աշխարհ ունի իւր գործարանաւորութիւնները, յարմարեցրած իւր գոյութեան պայմաններին: Ես քեզ խոստովանում եմ իմ հերթին, որ Հրատի բնակիչների համար Քելվեդերեան Ապօլլօնը և Վեներան ուղղակի հրէշներ են իրանց անասնական և ծանր ձևերի պատճառով:

«Մեզ մօտ ամեն բանի մէջ նկատուում է շքեղ թեթևութիւն: Թէև մեր մոլորակը ձերինից աւելի փոքր է, սակայն նրա էակներն աւելի մեծ են, քան այստեղ, որովհետև ծանրութիւնն աւելի նուազ է և գործարանաւորութիւնները կարող են բարձրանալ աւելի վերև, առանց արգելքների հանդիպելու իրանց ծանրութեան կողմից և առանց կորցնելու իրանց կապութիւնը:

«Նրանք աւելի մեծ են և աւելի թեթև, որովհետև այդ մոլորակի բաղկացուցիչ նիւթերը շատ քիչ հոծութիւն ունեն: Այդտեղ պատահեց այն, ինչ որ կարող էր պատահել երկրի վրայ, եթէ ծանրութիւնը այնտեղ այնքան նշանաւոր չըլիներ: Թեաւոր էակները փոխանակ կորցնելու իրանց ընդունակութիւնը, դարգացման հնարաւորութիւն չունենալու պատճառով, կըտիրէին աշխարհին: Հրատի վրա օրգանական դարգացումն իրագործուել է մի շարք թեաւոր արարածների մէջ: Հրատեան մարդկութիւնն իրօք վեցոտեան էակների մի ցեղ է, բայց նա այժմ երկոտանի է և կարելի է ասել երկ-

թեանի, որովհետև այդ էակները երկու թև ունեն:

«Կեանքի եղանակը բոլորովին տարբեր է երկրային կեանքից, առաջին, որովհետև այդտեղ ապրում են օդի և օդային բոյսերի մէջ նոյնքան ժամանակ, ինչքան և հողի երեսին. երկրորդ՝ որովհետև այդտեղ չեն ուտում, քանի որ մթնոլորտը սնուցիչ է: Գլքերն այդտեղ այլ են: Սպանութիւնը այդտեղ անծանօթ է: Այդտեղի մարդկութիւնը չունենալով նիւթական կարիքներ, երբէք չէ ապրել բարբարոսութեան, աւարաւորութեան և պատերազմի մէջ, նոյն իսկ իր ամենասկզբնական դարերում: Գաղափարները և զգացումներն այդտեղ բոլորովին մտաւոր յատկութիւն ունեն:

«Այնուամենայնիւ այդ մոլորակի կեանքում կարելի է գտնել եթէ ոչ նմանութիւններ, գոնէ անալոգիաներ երկրային կեանքի հետ: Այսպէս, այդտեղ ևս կայ, ինչպէս երկրի վրա, օրերի և գիշերների յաջորդական փոփոխութիւն, որ նոյն իսկ էապէս չէ տարբերվում երկրի փոփոխութիւնից, որովհետև ցերեկուայ և գիշե-

բուայ տեղում թիւնն այդտեղ 24 ժամ 39 րոպէ 35 վայրկեան է: Որովհետեւ այդ տեսակ օրեր 658 են հրատեան տարուայ մէջ, ուստի մենք ձեզանից աւելի ժամանակ ունենք մեր աշխատանքների, մեր հետազոտութիւնների, մեր ուսման, մեր գումարնութեան համար: Տարուայ եղանակները մեզ մօտ գրեթէ երկու անգամ ելկար են ձերինից, բայց նրանց յատկութիւնները միևնոյնն են: Կլիմաները շատ տարբեր չեն. հրատի երկիրները հասարակածային ծովի եզրերի վրա այնքան չեն տարբերվում իրանց կլիմայով ֆրանսիայից, ինչպէս նուրիան Լապօնիայից:

«Երկրի բնակիչն այդտեղ իրան տարագրուած չի համարի: Ամենախոշոր տարբերութիւնը երկու աշխարհների մէջ կայանում է, ի հարկէ, մեր մարդկութեան ձերինի վրա ունեցած ահագին գերազանցութեան մէջ:

«Այդ գերազանցութիւնն առաջ է եկել գլխաւորապէս շնորհիւ այն առաջադիմութեան, որ գործել է աստղագիտութիւնը և այդ գիտութեան ընդհանուր տարածումը մոլորակի բոլոր բնակիչների

մէջ, որովհետեւ առանց այդ գիտութեան անկարելի է մտածել ուղիղ, որովհետեւ առանց նրան կարելի է միայն կեղծ գաղափար ունենալ կեանքի, ստեղծագործութեան և ասպագայ ճակատագրի մասին: Մենք շատ նպաստաւոր պայմանների մէջ ենք գտնվում թէ մեր զգայաւորանների սրութեան և թէ մեր երկնքի պայծառութեան պատճառով: Հրատի վրա աւելի քիչ ջուր կայ, քան Երկրի վրա, ուստի և աւելի քիչ ամպեր: Երկնքն այդտեղ միշտ պայծառ է, մանաւանդ բարեխառն գոտու տակ:

—Սակայն, չէ՞ որ ձեզ մօտ յաճախ ջրհեղեղ է լինում:

—Այո, և դեռ նորերս ձեր հեռագիտակները նկատեցին մի այդպիսի մեծ ջրհեղեղ, որ տարածուել էր այդ ծովի ափերով, որին քո ընկերակիցները տուել են մի անուն, որ միշտ թանկ կը մնայ ինձ համար, թէև ես այժմ շատ հեռու եմ երկրից: Մեր ծովափերից շատերը բոլորովին հարթ տարածութիւն են ներկայացնում: Սարեր մենք քիչ ունենք և ծովերը խորունկ չեն. բնակիչներն օգտը

վում են այդ ջրհեղեղներից ընդարձակ դաշտերը ջրելու համար: Նրանք հարթել, լայնացրել են գետերը, ջրանցքներ են շինել և ցամաքի բոլոր տարածութեան վրա ահագին ջրանցքների մի խիտ ցանց են կապել: Մեր ցամաքները բոլորովին այնպիսի բարձրութիւններ չունեն, ինչպէս Հիմալայեան կամ Ալպեան բարձրութիւնները, այլ անհատաբար են, որոնց վրայով դանադան ուղղութեամբ անցնում են վտակներ և ջրանցքներ, որոնք հազորդակցութեան մէջ են դնում բոլոր ծովերը միմեանց հետ:

«Առաջ այստեղ մոլորակի ծաւալի համեմատութեամբ գրեթէ նոյնքան ջուր կար, ինչպէս և Երկրի վրայ: Բայց անդգայաբար, դարից դար անցնելով, անձրեային ջրերի մի մասը ծծուեց հողի խոր խաւերի մէջ և այլևս դուրս չեկաւ նրա երեսը: Նա քիմիապէս միացաւ նրա ժայռերի հետ և դուրս գցեց իրան մթնոլորտային շրջանառութիւնից: Դարից դար նոյնպէս անձրևները, ձիւները, հողմերը, ձմեռուայ խիստ ցրտերը և ամառուայ տոթերը հետզհետէ աւերեցին սարերը

և ջրի հոսանքները, տանելով ու թափելով հովտի մէջ այդ բեկորները, քիչ-քիչ բարձրացրին ծովերի յատակը: Այժմ մենք չունենք ոչ մեծ ովկիանոսներ, ոչ խոր ծովեր, այլ միայն միջերկրական ծովեր: Մենք ունենք շատ նեղուցներ և ծոցեր, Լամանշի, Կարմիր, Ագրիական, Բալդիկ և Կասպից ծովերի, ծոցերի և նեղուցների նման: Մեր ծովափները հաճելի են, նաւահանգիստները խաղաղ, ամեն տեղ լճեր և լայն գետեր, իսկ մեր նաւատորմիդը աւելի եթերական է, քան ջրային, մեր երկինքը միշտ պայծառ է, մանաւանդ առաւօտները. Երկիրը չունի այնպիսի հոյակապ առաւօտներ, ինչպէս մեր մոլորակը:

«Մեր մթնոլորտաբանութիւնը բոլորովին տարբեր է երկրայինից, որովհետեւ մթնոլորտը աւելի նոսր լինելով, մալերեւոյթի ջրերը աւելի շուտ և հեշտ են չոգիանում և նորից հոծանալով, փոխանակ տեղական ամպեր կազմելու, նրանք ուղղակի գաղային վիճակից անցնում են հոսանուտ վիճակին: Քիչ ամպեր և քիչ մշուշներ:

«Աստղագիտութիւնն այստեղ մշակուած է երկնքի պարզընկայութեան պատճառով: Մենք երկու արբանեակ ունենք, սրանցից մէկը ծագում է արեւմուտքում և մայր է մտնում արեւելքում, անցնելով երկինքը արեւմուտքից արեւելք հինգ ու կէս ժամում և անցնելով մի ֆազիսից միւսը հազիւ երեք ժամում: Այդ մի եղական տեսարան է բոլոր արեգակնային սիստեմի մէջ, ուստի և շատ նպաստել է գրաւելու բնակիչների ուշադրութիւնը դէպի երկնքի ուսումնասիրութիւնը: Բացի դրանից, մենք գրեթէ ամեն օր լուսնի խաւարումներ ունենք, բայց երբէք չունենք արեգակի ամբողջական խաւարումն, որովհետեւ մեր արբանեակները շատ փոքր են:

«Երկիրը մեզ երևում է, ինչպէս Արուսեակը երևում է ձեզ: Նա մեզ համար առաւօտեան և երեկոյեան աստղն է և հին ժամանակներում, տեսողական գործիքների հնարուելուց առաջ, որոնք մեզ սովորեցրին, որ նաեւ մերինի նման բնակուած մի մոլորակ է,—թէև մերինից աւելի ստոր,—մեր նախնիքը պաշտում էին

նրան, տեսնելով նրա մէջ մի կարեւոր աստուածութիւն: Բոլոր աշխարհներն իրանց դիցաբանութիւններն ունեն մանկական հասակում և այդ դիցաբանութիւնը իր ծագումը, հիմքը և առարկան ունեցել է միշտ երկնային մարմինների առերևութային տեսքի մէջ:

«Երբեմն երկիրը, լուսնի ընկերակցութեամբ, անցնում է մեզ համար արեգակի առաջից և գծագրվում է նրա սկաւառակի վրա իբրև մի փոքր սև բիծ, որի մօտ գտնվում է մի ուրիշ աւելի փոքր բիծ: Այստեղ ամեն մարդ հետաքրքրվում է այդ երկրային երևոյթներով: Մեր օրագիրները աւելի շատ գիտութեամբ են զբաղվում, քան թատրոններով, գրական ֆանտազիաներով, քաղաքական վէճերով կամ դատարաններով:

«Արեգակը մեզ թվում է մի քիչ աւելի փոքր և մենք նրանից աւելի քիչ լոյս և ջերմութիւն ենք ստանում: Մեր աչքերը աւելի զգայուն են և ձերինից աւելի լաւ են տեսնում. մեր օդի աստիճանը ձերինից մի քիչ աւելի բարձր է:

—Ի՞նչպէս, առարկեցի ես, դուք Արե-

զակից աւելի հեռու էք և մեզանից աւելի տաքութիւն էք զգում:

— Ինչ անենք, չէ որ Չամուռի հովիտը աւելի հեռու է արեգակից, քան Մօն-Բլանը, պատասխանեց նա: Եղանակի վրաներգործողը միայն Արեգակի հեռաւորութիւնը չէ. պէտք է ի նկատի ունենալ նաեւ մթնոլորտի կազմութիւնը: Մեր բեռային սառույցները աւելի շատ են հալվում, քան ձերը մեր ամառային Արեգակի տակ:

— Հրատի որ երկիրները շատ բնակուած են:

— Միայն բեռային երկիրները (որտեղ դուք տեսնում էք Երկրից ձիւները և սառույցները հալուելիս իւրաքանչիւր գարնան) անբնակ են: Բարեխառն կողմերի բնակչութիւնը շատ խիտ է, բայց ամենից շատ խիտը հասարակածային երկիրներն են, մանաւանդ ծովափնեայ երկիրները, չնայելով յոճախ ջրհեղեղներին: Քաղաքների մեծ մասը շինուած է գրեթէ ջրի վրա, և մի տեսակ կախ է բնկած օդում, երկիւղ չունենալով ջրհեղեղներից, որոնք առաջուց գուշակուած են և սպասվում են:

— Ձեր արուեստները, ձեր արդիւնաբերութիւնները նման են մերիններին: Ունէք երկաթուղիներ, շոգենաւեր, հեռագիր, հեռախօս:

— Ո՛չ, մեզ մօտ ուրիշ տեսակ է: Մենք չենք ունեցել երբէք ոչ շոգենաւ, ոչ երկաթուղի, որովհետեւ մենք միշտ ճանաչել ենք ելեքտրականութիւնը և օդային նաւարկութիւնը մեզ համար բնական է. մեր նաւերը շարժվում են ելեքտրականութեամբ և աւելի օդային են, քան ջրային: Մենք ապրում ենք գլխաւորապէս մթնոլորտում և չունենք փայտաշէն, երկաթաշէն և քարաշէն տներ: Մենք չըգիտենք ձմեռուայ խստութիւնը, որովհետեւ ոչ որ չէ ենթարկում իրան ցրտի. հասարակածային երկրներում բնակվողները գաղթում են ամեն աշնան, ինչպէս ձեր թռչունները: Ձեզ համար շատ դժուար կը լինի մի ճշգրիտ գաղափար կազմել մեր կեանքի եղանակի մասին:

— Արդեօք հրատի վրա շատ կան այնպիսի էակներ, որոնք առաջ ապրել են Երկրի վրա:

— Ո՛չ. ձեր մոլորակի քաղաքացիներ-

բի մէջ, շատերը կամ տգէտ են, կամ անտարբեր, կամ սկեպտիկ և պատրաստուած չեն հոգեւոր և մտաւոր կեանքի համար: Նրանք յարած են Երկրին և յարած են շատ երկար ժամանակով: Զատ հոգիներ կատարելապէս քնած են: Միայն այն հոգիներն են կոչվում զիտակցական անմահութիւն, որոնք ապրում են, գործում են, ծարաւի են ճշմարտութեան, որոնց հետաքրքրում է աննիւթական աշխարհը և որոնք ընդունակ են ըմբռնելու այդ աշխարհը: Այդ հոգիները կարող են թողնել Երկիրը և նորից ապրել ուրիշ հայրենիքներում: Զատերը գալիս են մի առ ժամանակ բնակվում են Հրատի վրա, որ առաջին կայարանն է նրանց անդրերկրային ճանապարհորդութեան գէպի Արեգակը, կամ Արուսեակի վրա, որ նոյնպէս առաջին բնակարանն է Երկրի միւս կողմից. բայց Արուսեակը երկրի համանման մի աշխարհ է և նոյն իսկ նրանից վատ, որովհետեւ եղանակներն այդտեղ շատ կարճ են և այդ պատճառով գործարանաւորութիւններն ենթակայ են այդտեղ օդի սաստիկ փոփոխութիւններին:

Մի քանի ոգիներ անմիջապէս փախչում են մինչև աստղային շրջանները: Ինչպէս դու գիտես, տարածութիւն ասած բանը չկայ: Ընդհանրապէս, բարոյական աշխարհի սիստեմի մէջ թագաւորում է անպայման արդարութիւն, ինչպէս ֆիզիքական աշխարհի սիստեմի մէջ թագաւորում է հաւասարակշռութիւն և հոգիների ճակատագիրը միայն նրանց ընդունակութիւնների, ձգտումների և հետեւաբար նրանց մշտական արդիւնքն է: Ուրանային ճանապարհը բաց է ամենքի համար, բայց հոգին ուրանային (երկնային) է միայն այն ժամանակ, երբ նա թօթափում է իր վրայից նիւթական թօթափում է իր վրայից նիւթական կեանքի բեռը: Կը գայ մի օր, երբ և ձեր մոլորակի վրա չըլինի ուրիշ ոչ մի հաւատ, ոչ մի կրօն, բացի տիեզերքի ճանաչողութիւնը և անմահութեան հաւատը նրա անսահման երկրներում, նրա յաւիտենական տէրութեան մէջ:

—Որպիսի տարօրինակ և զարմանալի բան է, ասացի ես, որ ոչ ոք Երկրի վրա չէ իմանում այդ վսեմ ճշմարտութիւնները: Ոչ ոք չէ նայում երկնքին:

Այդտեղ ապրում են այնպէս, որ կարծէք թէ մեր կղզեակը միայն գոյութիւն ունի աշխարհում:

— Երկրային մարդկութիւնը երիտաւարդ է, պատասխանեց Սպէրօն, չպէտք է յուսահատուել: Նա մանուկ է և դեռ նախնական տգիտութեան մէջ: Նա զուարճանում է չնչին բաներով, հնազանդում է այն տէրերին, որոնց ինքն է ստեղծում իր համար: Դուք սիրում էք բաժանուել աղգերի և փաթաթուել աղգային զգեստների մէջ ու կոտորել միմեանց ի ձայն երաժշտութեան: Ապա դուք արձաններ էք կանգնեցնում նրանց, որոնք ձեզ առաջնորդել են սպանդանոց: Դուք ինքներդ ձեզ կործանում էք և անձնասպան լինում և սակայն դուք չէք կարողանում ապրել առանց կորզելու երկրից ձեր հաւնապաղօրեայ հացը: Այդ՝ մի տեսակ վիճակ է, բայց այդ վիճակը գոհացնում է կատարելապէս ձեր մոլորակի բնակիչների շատերին: Եթէ ձեզանից մի քանիսը, աւելի վեհ ներշնչումներով օժտուած, սկսել են երբեմն մտածել բարձր կարգի խնդիրները՝ հոգու բնութեան, Աստծու

գոյութեան մասին, հետեանքը աւելի լաւ չէ եղել, որովհետեւ նրանք սկսել են քրննել հոգին, իբրեւ մի գերբնական, բնութիւնից դուրս բան և հնարել են այլանդակ և անհեթեթ աստուածներ, որոնք գոյութիւն են ունեցել միայն իրանց ապականուած երեակայութեան մէջ և որոնց անունով նրանք գործել են ոճիրներ մարդկային խղճմտանքի դէմ, օրհնել են բոլոր ոճիրները և ենթարկել են տկար մտքերը այնպիսի ստրկութեան, որից դժուար է ազատուել: Ամենափոքր կենդանին չբատի վրա աւելի լաւ, գեղեցիկ, քաղցր, իմացական և մեծ է Դաւթի, Կոնստանդինի, Ջարլըմանի պատերազմական Աստծուց և բոլոր ձեր թագաւիր մարդասպաններից: Ուրեմն դարմանալու ոչինչ չկայ, տեսնելով երկրայինների ապուշութիւնը և կոպտութիւնը: Բայց աշխարհը կառավարողը պրօգրէսի օրէնքն է: Դուք աւելի առաջադէմ էք այսօր, քան քարէ տարեշրջանի ձեր նախնիքը, որոնց թշուառ գոյութիւնը կայանում էր նրանում, որ զիշեր և ցերեկ վայրենի գազանների հետ կռիւ էին մղում: Մի քա-

նի հաղարաւոր տարիներէից յետոյ, դուք աւելի առաջադէմ կլինէք, քան այսօր: Այն ժամանակ Ուրանիան կը թագաւորի ձեր սրտերում:

— Մարդկանց լուսաւորելու և համոզելու համար, հարկաւոր է մի նիւթական, կոպիտ փաստ: Եթէ օրինակ, մենք կարողանայինք մի օր հաղորդակցութեան մէջ մտնել քո բնական զբոսի երկրի հետ, ոչ թէ այն հոգեկան և եղական հաղորդակցութեան ձեռով, որի մէջ այս բոսիւնս գտնվում եմ ես քեզ հետ, այլ նոյն իսկ մոլորակի հետ, հարիւրաւոր և հաղարաւոր վկաների ներկայութեամբ, այդ մի հսկայական թռիչք կը լինէր դէպի առաջադիմութիւնը:

— Դուք կարող էք այժմ էլ կատարել, եթէ կամենաք, որովհետեւ մեզ մօտ, Հրատի վրա, մենք արդէն պատրաստուած ենք այդ բանին և նոյն իսկ շատ անգամ փորձել ենք բանակցութեան մէջ մտնել ձեզ հետ, բայց դուք երբէք չէք պատասխանել մեզ: Արեգակնային ցօլացուցիչներ (րէֆլէկտօր), որոնք գծագրվում են մեր ընդարձակ դաշտերի վրա իբրև

գիծմեղրիական պատկերներ, ապացուցանում են ձեզ, որ մենք գոյութիւն ունենք: Դուք ևս կարող էք պատասխանել մեզ այդպիսի պատկերներով, գծագրուած ձեր դաշտերի վրա, թէ ցերեկը՝ արևով և թէ գիշերը՝ ելեքարական լոյսով: Բայց դուք չէք էլ մտածում այդ մասին և եթէ ձեզանից մէկը առաջարկէր ձեզ այդ փորձը անել, ձեր դատաւորներն իսկոյն նրան իրանց խնամակալութեան տակ կառնէին, որովհետեւ այդ իդէան այնքան անմատչելի է նրանց, որ չէ կարող կանոնաւոր կերպով լուծուել ձեր մոլորակի բնակիչներին ընդհանուր քուէարկութեամբ: Ի՞նչով են զբաղուած ձեր գիտնական ժողովները. — պահպանել անցեալը: Ի՞նչով են զբաղուած ձեր քաղաքական ժողովները. — աւելացնել հասարակական տուրքերը: Կոյրերի թագաւորութեան մէջ՝ շիրերն էլ թագաւորներ են:

«Բայց չըպէտք է բոլորովին յուսահատուել: Առաջադիմութիւնը կը քշի ձեզ ձեր կամքի հակառակ: Մի օր էլ դուք կիմանաք, որ երկնքի քաղաքացիներ էք: Այն ժամանակ դուք կապրէք գիտութեան

և լոյսի մէջ՝ իրական մտաւոր աշխարհում:»

Մինչ հրատի բնակիչը ծանօթացնում էր ինձ այդպէս իր նոր հայրենիքի գըլխաւոր յատկութիւնների հետ, երկրագունդը շրջուել էր դէպի արևելք, հորիզոնը հակուել էր և լուսինը բարձրացել էր հետզհետէ երկնքում, ու լուսաւորում նրան իր փայլով: Յանկարծ, խոնարհեցնելով աչքերս դէպի այնտեղ, ուր Սպէրօն նստած էր, ես չըկարողացայ դտել զարմանքս: Լուսնի փայլը տարածում էր իր լոյսը նրա անձի վրա, ինչպէս և իմ անձի վրա և սակայն, իմ մարմնի ստուերն ընկած էր պարապետի վրա, իսկ նրա մարմինը ստուեր չունէր:

Ես յանկարծ ցատկեցի տեղիցս իրողութիւնը ստուգելու համար. ես դարձայ դէպի Սպէրօն և մեկնեցի ձեռքս մինչև նրա ուսը, հետևելով ձեռքիս ստուերին, բայց իմ այցելուն վայրկենապէս անհետացաւ: Ես բոլորովին միայնակ էի լռակեաց աշտարակի վրա: Իմ ստուերը, խիստ սև, պարզ գծագրուած էր պարապետի վրա: Լուսինը պայծառ փայլում էր: Գիւ-

ղը խոր քնով քնած էր: Օդը մեղմ էր և ամենափոքր քամի անգամ չէր փչում:

Սակայն ինձ թուաց, թէ քայլեր եմ լսում: Ես ականջ դրի և իրօք, որ լսեցի բաւական ծանր քայլեր մօտենում էին ինձ: Անշուշտ մէկը բարձրանում էր աշտարակի վրա:

«Պարոնը դեռ չէ իջել, ասաց պահապանը վեր բարձրանալով: Ես շարունակ սպասում էի, որպէսզի դռները փակեմ. ես կարծում է, թէ փորձերը վաղուց վերջացել են:»

IV

ԱՆՇԱՐԺ ԿԵՏԸ ՏԻԵՋԵՐՔԻ ՄԷՋ

Ուրանիայի և այն ճանապարհորդութեան յիշատակը, որի մէջ նա տեղափոխել էր ինձ, այն ճշմարտութիւններն, որ նա զգացնել էր տուել, Սպէրօի պատմութիւնը, նրա անգուսպ ձգտումը՝ ըմբռնելու վերացականը, նրա երեայը, նրա պատմութիւնը մի օտար աշխարհի մասին, այդ բոլորը շարունակ զբաղեցնում էր իմ մտածողութիւնը և մշտապէս կանգնեցնում

էր իմ մտքի առաջ այնպիսի խնդիրներ, որոնք մասամբ արդէն լուծուած են, մասամբ դեռ մնում են ծածկուած հողի տակ մեր գիտութիւնների անորոշութեան պատճառով: Ես զգում էի, որ ես աստիճանաբար բարձրացել եմ ճշմարտութեան ըմբռնողութեան մէջ և որ տեսանելի տիեզերքը իսկապէս լոկ մի ուրուական է, որից պէտք է անցնել՝ իրականութեան հասնելու համար:

Ամեն բան, որ գոյութիւն ունի, լոկ մեր զգայարանների պատրանք է: Երկիրն ամենեւին այն չէ, ինչ որ մենք կարծում ենք:

Նոյն ֆիզիքական տիզերքում սրտեղ է այն անշարժ կէտը, որի վրա յենվում է ամբողջ նիւթական ստեղծագործութիւնը:

Բնութեան գննողութիւնը տալիս է մեզ այն անմիջական և քնական տպաւորութիւնը, թէ մենք ապրում ենք մի անխախտ, կայուն և տիեզերքի կեդրոնում հաստատուած անշարժ Երկրի երեսին: Միայն երկար դարերի հետազոտութիւնների և մտքի յանդուգն համարձա-

կութեան շնորհիւ, մարդկութիւնը կարողացաւ թօթափել իրանից այդ բնական տպաւորութիւնը և ճանաչել, որ մեր բնական աշխարհը առանձնացած է տարածութեան մէջ, առանց որևէ յենարանի և արագաբար թաւալում է ինքն իր վրա ու արեգակի շուրջը: Բայց գիտնական հետազոտութիւնից առաջ եղած դարերի, նախնական ժողովրդների և նոյն իսկ դեռ այսօր մարդկային սեռի երեք քառորդի հասկացողութեան համաձայն, մեր ոտները յենուել են և յենվում են մի ամուր Երկրի վրա, որ անշարժ հաստատուած է տիեզերքի կենդրոնում և նրա հիմունքը տարածվում են մինչև անսահմանութիւն՝ խորութիւնների մէջ:

Սակայն այն օրը, երբ իմացուեց, որ ամեն օր միևնոյն արեգակն է ծագում և մայր մտնում, որ միևնոյն լուսինը, միևնոյն աստղերը, միևնոյն համաստեղութիւններ են պտոյտ գալիս մեր շուրջը, մարդիկ, հէնց դրանով ստիպուեցան ընդունել իբրև մի անհերքելի իրողութիւն, թէ Երկրի տակը կայ մի դատարկութիւն, որ անհրաժեշտ է երկնային հաստատու-

թեան բոլոր լուսատուների անցման համար, նրանց մայր մանեղուց սկսած մինչև ծագելը: Այդ իրողութիւնը հասկանալը շատ մեծ կարևորութիւն ունեցաւ: Տարածութեան մէջ Երկրի կղզիացման ենթադրութիւնը, աստղադիտութեան ամենամեծ յաղթութիւնը եղաւ: Այդ առաջին քայլն էր և ամենագիտարբ խեղապէս: Եւ ճշմարիտ, մտածեցէք խզել յենարանը, ոչնչացնել Երկրի հիմքը: Այդպիսի մի միտք երբէք չէր կարող յղացուել ոչ մի ուղեղի մէջ, առանց աստղերի զննողութեան, առանց մթնոլորտի թափանցկութեան: Մըշտապէս ամպամած երկնքի տակ, մարդկային միտքը միշտ կը մնար անշարժ կպած Երկրին, ինչպէս խեցգետինը կպած է լինում ժայռին:

Մի անգամ, որ Երկիրը առանձնացրուեց տարածութեան մէջ, առաջին քայլն արուած էր: Այդ յեղափոխութիւնից առաջ, որ հաւասար արժէք ունի թէ գիտութեան և թէ փիլիսոփայութեան համար, լուսնի տակ գտնուած մեր բնական րանին ամեն տեսակ երևակայական ձևեր էին տալիս: Ամենից առաջ նկատում էին

Երկիրը իբրև մի կղզի, որ գուրս է գալիս մի անսահման ուղիղանոսից և անվերջ արմատներ ունի: Ապա, սկսեցին երեւելայել, որ Երկիրը իր ծովերով մի տափարակ կըր սկաւառակի ձև ունի, որի շրջապատի վրա յենվում է երկնականարը: Դրանից յետոյ ուրիշ ձեւեր հնարեցին—խորանարդ, գլանակաձև, բազմակողմ և այլն: Սակայն, նաւարկութեան առաջագիմու-թիւններն սկսեցին ցոյց տալ նրա գլնդակաձև լինելը և երբ որ անհերքելի փաստերով իմացուեց նրա մեկուսացումը, այն ժամանակ նրա գնդակաձև լինելը ընդունուեց իբրև նրա այդ մեկուսացման բնական հետեանք, որ հաստատվում է նաև երկնային շրջանների բոլորաձև շարժումով նրա շուրջը, իբրև կենդրոնի:

Եւ մի անգամ որ իմացուեց թէ երկրագունդը մեկուսացած կախ է ընկած դատարկ տարածութեան մէջ, նրան շարժին այլևս դժուար չէր: Առաջ, երբ Երկինքը համարում էին Երկիրը ծածկող մի բազմակոյտ և անսահման գմբէթ, միանգամայն անհեթեթ և անհիմն էր թւում այն գաղափարը, թէ նա կարող է շար-

ժուել: Բայց այն օրը, երբ մարդիկ մըտքով երեւելայեցին Երկիրը իբրև մի գունդ, դրուած երկնային շարժումների կենդրոնում, բնականաբար ամեն մասածողի մըտքում ծագեց այն գաղափարը, թե գուցէ այդ գունդը կարող է ինքն ևս թաւալուել, փոխանակ որ նա ստիպի ամբողջ Երկինքին, անհուն տիեզերքին, ամեն օր կատարել այդ շարժումը: Եւ իրօք, մենք տեսնում ենք, որ երկրագնդի մի օրեայ թաւալման ենթադրութիւնը գոյութիւն ունէր հին աշխարհի բոլոր քաղաքակիրթ ազգերի—յոյների, եգիպտացիների և հնդիկների մէջ: Բաւական է կարդալ մի քանի գլուխ Պտղոմէից, Պլուտարքից, Սուրիա-Սիդհանդայից և մենք կը հանդիպենք այդ տեսակ ցուցմունքների: Բայց այդ նոր ենթադրութիւնը թէև բոլորում էր առաջինից, այնու ամենայնիւ չափազանց համարձակ էր թւում, որովհետև սաստիկ հակասում էր այն զգացման, որ ծագում է բնութեան ուղղակի դննողութիւնից: Մտածող մարդկութիւնը ստիպուեց սպասել մինչև մեր դարեգլխի տասնութեցերորդ կամ ուոյն իսկ տասնեակութներորդ

դարը, որպէս զի իմանայ մեր մոլորակի իսկական դրութիւնը տիեզերքի մէջ և հասկանայ, ունենալով ձեռքին հաստատ ապացոյցներ: Թէ նա թաւալվում է կրկնակի շարժումով—ամեն օր մի անգամ իր շուրջը և տարին մի անգամ Արեգակի շուրջը: Եւ միայն այդ տարեշրջանից սկսած, այն է, սկսած Կոպէրնիկից, Գալիլէյից, Նիւտոնից, դրուեց իսկական աստղագիտութեան հիմքը:

Եւ սակայն, դա դեռ սկիզբն էր, որովհետեւ աշխարհի սխտեմի մեծ վերանորոգիչը, ինքն Կոպէրնիկը կասկած անգամ չունէր ոչ Երկրի ուրիշ շարժումների և ոչ ևս աստղերի մեզանից ունեցած հեռաւորութեան մասին: Միայն մեր դարում առաջին անգամ աստղերի հեռաւորութիւնը կարողացան չափել և միայն մեր օրերում աստղային գիւտերը տուին մեր ձեռքը հարկաւոր ապացոյցները և թոյլ տուին մեզ փորձել, մի գաղափար կազմել այն զօրութիւնների մասին, որոնք պահպանում են Ստեղծագործութեան հաւասարակշռութիւնը:

Հնրի գաղափարը, թէ Երկիրն ան-

վերջ արմատներ ունի, անտարակոյս, կարօտ էր շատ բացատրութիւնների այն մարդկանց տեսակէտից, որոնք սովոր են թափանցել իրերի խորքը: Մեզ համար բացարձակապէս անհնարին է երեւոյցել մի նիւթական սիւն, ինչ հաստութեան և լայնութեան էլ լինի (թէկուզ Երկրի տրամագծով) որ խրուած լինի անվերջանալի տարածութեան մէջ, ինչպէս չենք կարող երեւոյցել մի գաւաղան, որ միայն մի ծայր ունենայ: Որքան էլ մեր միտքը կամենայ շատ երկար երեւոյցել այդ նիւթական սիւնի հիմքը, այնու ամենայնիւ նա պէտք է հասնի մի կէտի, որտեղից կարողանայ տեսնել նրա վերջը: Այդ բանը հասկանալու դժուարութիւնը մի քիչ քողարկում էին նրանով, որ երեւկայում էին մի երկրագունդ և զետեղում էին նրա մէջ Երկիրն այնպէս, որ նա բռնում էր այդ երկրագնդի ամբողջ ստորին մասը: Բայց այն ժամանակ մի կողմից դժուար էր բացատրել աստղերի շարժումը, իսկ միւս կողմից՝ այդ նիւթական տիեզերքը ինքը փախուած մի բլրեղեայ անսահման գնդի մէջ, ոչ մի բանի վրա

չէր յենվում, որովհետեւ դարձեալ նրա ամեն կողմը, վերեւ, ներքեւ, պէտք է տարածուէր անսահմանութիւնը: Խուզարկում տքերը պէտք է առաջ դէն գցէին իրանցից ծանրութեան մասին ունեցած գոեհիկ գաղափարը:

Կողիացած տարածութեան մէջ, իբրեւ մի երեխայական գնդակ, որ ծփում է օդի մէջ եւ կղզիացած եւ մեծ շափով այն պատճառով, որ գնդակը տարվում է օդային կոհակներէ, մինչ աշխարհները թաւալվում են դատարկութեան մէջ, երկիրը հանդիսանում է մի խաղալիք այն աներեւոյթ կօսմիտական զօրութիւնների առաջ, որոնց նա հնազանդում է իբրեւ մի խակական օճառի բշտիկ, որ փշելուց կարող է չքանալ: Եւ մենք հեշտութեամբ կարող ենք մի գաղափար կազմել այդ մասին, եթէ մի ընդհանուր ակնարկ ձեռքենք նրա տառնումէկ գլխաւոր շարժումների վրա: Գուցէ այդ շարժումները օգնեն մեզ գտնել այն «հաստատ կէտը», որ մեր փիլիսոփայական հայեացքները պահանջում են:

Զգուած լինելով արեգակի շուրջը 37

միլլիոն մղոն հեռաւորութեան վրա երկիրը կատարում է այդ տարածութեան վրա իր տարեկան շարժումը լուսաճաճանչ աստղի շուրջը, անցնելով ուրեմն օրեկան 600043 մղոն տեղ կամ 26800 մղոն մի ժամում եւ կամ 29,450 մետր մի վայրկեանում: Այդ արագութիւնը 1100 անգամ աւելի մեծ է, քան ելէկտրական գնացքի արագութիւնը, որ մի ժամում 200 կիլօմետր տեղ է անցնում:

Այդ մի գնդակ է, որ 75 անգամ աւելի արագ է վազում ումբից, որ թռչում է անգաղար եւ երբէք չէ հասնում իր նպատակին. 365 օրում, 6 ժամում, 9 րոպէում, 10 վայրկեանում երկրագունդը վերադառնում է իր պարունակի միևնոյն կէտին Արեգակի վերաբերմամբ եւ շարունակում է վազել: Արեգակն իր կողմից տեղափոխվում է տարածութեան մէջ, հետեւելով մի շեղ գծի, որ հակուած է դէպի Երկրի տարեկան շարժման մակարդակը, մի գծի, որ ուղղուած է դէպի Հերկուլէսի համաստեղութիւնը: Դրանից առաջ է գալիս այն, որ Երկիրը—փոխանակ գծագրելու մի փակուած կօր գիծ,

գծում է մի սպիրալ (պարուրաձև կամ պտոյտագիծ) և իր գոյութեան օրից երբեք երկրորդ անգամ չէ անցել միևնոյն ճանապարհով: Ուրեմն, արեգակի շուրջը ունեցած նրա տեսքեկան թաւալման վրա աւելանում է մշտապէս իբրև երկրորդ շարժում, իրա Արեգակի շարժումը, որ նրան քաշում տանում է ամբողջ արեգակնային սիստեմի հետ դէպի Հերկուլէսի համաստեղութիւնը:

Այդ ժամանակամիջոցում մեր փոքրիկ երկրագունտը պտտում է ինքն իր վրա 24 ժամում և առաջ է բերում մեզ համար յաջորդաբար ցերեկն ու գիշերը: Ամենօրեայ թաւալումը—Երկրի երրորդ շարժումն է:

Սակայն, Երկիրը պտտում է ինքն իր վրա ոչ այնպէս, ինչպէս պտտում է սեղանի վրա ուղղահայեաց դրած հոլը, այլ նրա շարժման առանցքը, ինչպէս ամեն մարդ գիտէ, թեքուած է $23^{\circ}27'$: Այդ հակումը նոյնպէս մշտական չէ. նա փոխվում է տարէց տարի, դարէ դար, դանդաղ կերպով թեքուելով այս և այն կողմը մի դարի ընթացքում, դա շարժման չորրորդ տեսակն է:

Այն ճանապարհը, որ մեր մոլորակը ամեն տարի անցնում է Արեգակի շուրջը բոլորաձև չէ, այլ էլիպտիկան. այդ էլիպսի ձևը փոխվում է տարէց տարի, դարէ դար. երբեմն նա մօտենում է գնդակի շրջատարին, երբեմն նա երկարում է, ներկայացնելով սաստիկ արտակենդրոնութիւն: Կարծես նա մի առաձգական շրջակապ լինի, որի ձևը կարելի է շատ կամ քիչ փոխել: Դա Երկրի շարժումների հինգերորդ լրացումն է: Ինքն այդ էլիպսը անշարժ չէ տարածութեան մէջ, այլ պտտում է իր սեփական մակարդակի մէջ 21000 տարուայ ժամանակամիջոցում: Այն մերձակէտը (périhélie), որ մեր տարեթուի սկզբում երկարութեան 65 աստիճանի վրա էր զարնանամտի հասարակածից սկսած, այժմ 101 աստիճանի վրա է: Ապսիդեան գծի այդ դարեւոր տեղափոխութիւնը կազմում է մեր մոլորակի վեցերորդ շարժումը:

Բայց ահա և եօթներորդ շարժումը: Մենք իսկոյն ասացինք, որ մեր երկրագնդի հոլովման առանցքը թեքուած է և ամեն մէկը գիտէ, որ այդ առանցքի երե-

ւակայական շարունակութիւնը յանգում է բեւեռային աստղին: Այդ առանցքը ինքն անշարժ չէ: Նա պատում է 25765 տարուայ ընթացքում, պահելով իր հակումը 23—24 աստիճանի մէջ. այնպէս, որ նրա շարունակութիւնը գծում է երկնաշրջանի վրա, էկլիպտիկի բեւեռի շուրջը, 44—48 աստիճան տրամագիծ ունեցող մի շրջան, նայելով. դարեշրջաններին: Բեւեռի այդ տեղափոխութեան պատճառով, Վէգան բեւեռային աստղ կը դառնայ 12000 տարուայ յետոյ, ինչպէս նա բեւեռային աստղ էր 14000 տարի առաջ: Այդ՝ շարժման եօթներորդ տեսակն է:

Ութերորդ շարժումն առաջ է գալիս Լուսնի աղղեցութիւնից Երկրի հասարակածային կորնթարթի վրա. այդ այսպէս կոչուած «նոտացիոն» է (Երկրի առանցքի ճօճումն, nutation), որ ստիպում է հասարակածի բեւեռին գծագրել մի փոքր էլլիպս, 18 տարուայ և 8 ամսուայ ընթացքում:

Իններորդ շարժումը, որ առաջ է գալիս նոյնպէս Լուսնի ձգողական զօրութիւնից, փոխում է անդադար երկրա-

գլոխի ծանրութեան կենդրոնի դիրքը և Երկրի տեղը տարածութեան մէջ. երբ Լուսինը մեր առաջին է, նա արագացնում է երկրագնդի ընթացքը, իսկ երբ մեր ետեւումն է՝ նա զսպում է, ընդհակառակն, այդ ընթացքը իբրև մի սանձ: Չարժման այդ ամսական բարդութիւնը պէտք է աւելացնել բոլոր նախընթաց շարժումներին վրա:

Երբ որ Երկիրը անցնում է Արեգակի և Լուսնի թագի միջով, վերջինս, չընայելով, որ 155 միլիոն մղոն հեռու է, իր ձգողական զօրութեամբ շեղեցնել է տալիս նրան իր բացարձակ պարունակից դուրս, 2,10 մէտր տեղ (երկու արշին 15 վերջոյ): Արուսեակի ձգողական զօրութիւնը շեղեցնել է տալիս նրան դէպի ներս 1,25 մէտր տեղ (1 արշին 13 վերջոյ): Երեակը և Հրատը նոյնպէս ներգործում են, բայց աւելի թոյլ կերպով: Դրանք արտաքին յեղափոխութիւններ են, որոնք կազմում են տասներորդ տեսակ շարժումը, որ պէտք է աւելացնել մեր երկնային մակոյկի շարժումներին:

Որովհետև բոլոր մոլորակների ամբող-

ջութեան ծանրութիւնը հազիւ կազմում է Արեգակի կշռի եօթն հարիւրերորդ մասը, ուստի ծանրութեան կենդրոնը, որի շուրջը դառնում է ամեն տարի Երկիրը, ամենակին չէ բռնում Արեգակի կենդրոնի հետ, այլ այդ կենդրոնից հեռու է և շատ անգամ նոյն իսկ արեգակային գնդից դուրս է։ Ուրեմն, իսկապէս ասելով, Երկիրը չի դառնում արեգակի շուրջը, այլ երկու աստղերը, այն է Արեգակը և Երկիրը դառնում են իրանց ծանրութեան ընդհանուր կենդրոնի շուրջը։ Ուրեմն, մեր մոլորակի միամեայ շարժման կենդրոնը շարունակ փոփոխում է իր տեղը և այդ մենք կարող ենք նկատել իբրեւ տասնեմէկերորդ շարժում, որ պէտք է աւելացնել բոլոր նախընթաց շարժումների վրա։

Մենք կարող էինք դեռ էլի ուրիշ շարժումներ աւելացնել, բայց մինչև այժմ բերածն էլ բաւական է ըմբռնելու համար, թէ մինչև ո՞ր աստիճան թեթեւ և շարժուն է մեր ծփուն կողին, որ ենթակայ է, ինչպէս մենք տեսանք, երկնային ազդեցութիւնների բոլոր քմահաճութիւններին։

Մատեմատիկական վերլուծութիւնը աւելի խոր է թափանցում շարժումների այդ հարցի մէջ, որը մենք բացատրեցինք այստեղ, միայն համառօտ կերպով. միայն Լուսնի վրա, որը ըստ երևոյթին այնքան խաղաղ կերպով դառնում է մեր շուրջը, վերլուծութիւնը գտել է վաթսուներից աւելի զանազան տեսակ շարժումներ։

Ուրեմն, մեր առածը չափազանցած չէ. մեր մոլորակը ուրիշ բան չէ, եթէ ոչ մի խաղալիք կօսմիական զօրութիւնների համար, որոնք քաշում տանում են նրան տարածութեան անապատների մէջ. նոյնը կարելի է ասել և բոլոր ուրիշ աշխարհների և այն ամենի մասին, ինչ որ գոյութիւն ունի արեգեքրում։ Նիւթը անմռնէ կերպով հնազանդում է զօրութեան։

Ուրեմն, սրտեղ է այն անշարժ կէտը, որի վրայ մենք այնքան կը ցանկանայինք յենուել։

Մեր մոլորակը, որ առաջ համարվում էր ամբողջ աշխարհի հիմքը, ինքը պահպանվում է հեռաւորութեան վրա Արեգակից, որ նրան թաւալել է տալիս իր շուրջը, այդ հեռաւորութեան համապա-

տասխան արագութեամբ: Այդ արագութիւնը, որ ծագում է իրա, Արեգակի կոյտից, պահում է մոլորակը միևնոյն միջին հեռաւորութեան վրա կենդրոնական լուսատուից. եթէ այդ արագութիւնը նուազ լինէր, դրանից առաջ կը գար ծանրութեան, ուրեմն և ձգողական զօրութեան գերակշռութիւնը, իսկ դրա հետեանքը կը լինէր այն, որ երկիրը կ'ընկնէր Արեգակի վրա. ընդհակառակը աւելի մեծ արագութիւնը կը հեռացնէր յաջորդաբար և անսահման կերպով մեր մոլորակը այն օջաղից, որ նրան կեանք է տալիս: Բայց շնորհիւ այն հանգամանքի, որ այդ արագութիւնը համաչափ է ձգողութեան, մեր թափառուն ընակարանը պահւում է կայուն հաւասարակշռութեան մէջ: Նոյնպէս և Լուսինը պահւում է տարածութեան մէջ Երկրի ձգողական ոյժով, որ թաւալել է տալիս նրան իր շուրջը մի աֆելիսի արագութեամբ, որ կշռուած և չափուած է, նրան մշտապէս միևնոյն հեռաւորութեան վրա պահելու համար: Երկիրը և Լուսինը կազմում են ուրեմն տարածութեան մէջ մոլորակային մի զոյգ,

որ գտնւում է մշտական հաւասարակշռութեան մէջ, արեգակային ձգողութեան գերազոյն աղղեցութեամբ: Եթէ մեր երկրագունդը գոյութիւն ունենար աշխարհում միայնակ, նա յաւիտեան անշարժ կը մնար անսահման դատարկութեան այն կէտում, ուր նա դետեղուել է սկզբից և չէր կարող երբէք ոչ իջնել, ոչ բարձրանալ, ոչ որևէ կերպով դիքքը փոխել և նոյն իսկ իջնել, բարձրանալ, աջ ու ձախ խօսքերը ոչ մի նշանակութիւն չէին ունենայ: Եթէ այդ միևնոյն Երկիրը միայնակ գոյութիւն ունենալով որևէ մի մղում ստանար և նետուէր տարածութեան մէջ որևէ մի արագութեամբ և ուղղութեամբ, նա յաւիտեան կը փախչէր ուղիղ գծով այդ ուղղութեամբ և երբէք չէր կարող ոչ կանգ առնել, ոչ նուազեցնել և ոչ ևս փոխել իր շարժումը: Նոյն բանը կը լինէր և այն ժամանակ, եթէ Երկրի հետ գոյութիւն ունենար միայն Լուսինը, այն ժամանակ նրանք երկուսն ևս պտոյտ կը գային իրանց ծանրութեան ընդհանուր կենդրոնի շուրջը, կատարելով իրանց պաշտօնը տարածութեան միևնոյն տեղում և փախ-

չնշով միասին այն ուղղութեամբ, որ տուել է նրանց ճակատագիրը: Բայց որովհետեւ Արեգակը գոյութիւն ունի և ամբողջ սիստեմի կենդրոնն է, ուստի երկիրը բոլոր մոլորակները և բոլոր նրանց արբանեակները կախումն ունին նրանից և նրանց ճակատագիրը անդառնալի կերպով կապուած է նրա ճակատագրի հետ:

Արդեօք այն անշարժ կէտը, այն հաստատ հիմքը, որ մեզ այնքան հարկաւոր է տիեզերքի կայունութիւնը ապահովելու համար, չէ՞նք կարող որոնել այդ հրակայական գնդի, այդ սարսափելի ծանր Արեգակի մէջ:

Անտարակոյս ոչ. որովհետեւ Արեգակն ինքը հանգիստ չէ, որովհետեւ նա մեզ տանում է իր ամբողջ սիստեմի հետ դէպի Հերկուլէսի համաստեղութիւնը: Բայց չը լինի, որ հէնց ինքը մեր Արեգակը ենթակայ է մի աւելի մեծ արեգակի ազդեցութեան, որի ձգողական զօրութեան աստիճանը հասնում է մերինին և ղեկավարում է նրա ճակատագիրն այնպէս, ինչպէս նա ղեկավարում է մոլորակների ճակատագիրը: Արդեօք աստղային աստ-

ղագիտութեան շրջանում կատարուած հետազօտութիւնները իրաւունք չեն տալիս մեզ մտածել, որ այսպիսի մի հզօր աստղ կարող է գոյութիւն ունենալ այն ուղղութեան վրա, որ գտնվում է մեր դէպի Հէրկուլէսը ունեցած շարժման ուղիղ անկիւնի տակ: Ո՛չ. մեր Արեգակը ենթարկվում է, ի հարկէ, աստղների ձգողական զօրութեան, բայց նրանցից ոչ մէկը ըստ երևոյթին, այնքան գերակշռութիւն չունի միւս աստղների վրա, որ կարողանայ գերազոյն կերպով թաքաւորել մեր կենդրոնական աստղի վրա:

Թէեւ կատարելապէս հնարաւոր է ենթադրել, կամ աւելի լաւն ասել, անկասկած է, որ մեր Արեգակը և նրան ամենամօտ Ալֆա-Յուլի աստղը զգում են նրանց փոխադարձ ձգողական զօրութիւնը, բայց այնուամենայնիւ անկարելի է նկատել այդ երկու սիստեմները իրրեկրկնակ աստղերի համանման սիստեմ կազմող մի զոյգ. նախ, մեզ յայտնի կրկնակ աստղների բոլոր սիստեմները բաղկացած են միմեանցից շատ աւելի մօտ աստղերից. երկրորդ, որովհետեւ, այդ են-

Թաղրութեան համաձայն այդ աստղերի
զծած օրրետի (պարունակ) անհունու-
թեան մէջ, դրացի աստղերի ձգողական
զօրութիւնը չէր կարող առանց ազդե-
ցութեան մնալ. վերջապէս այն իրական
արագութիւնը, որով խօստուած են այդ
երկու աստղերը, անհամեմատ աւելի մեծ
է, քան այն արագութիւնը, որ կարող էր
ծագել նրանց փոխադարձ ձգողութիւնները:

Բայց այստեղ միջամտում է մի ուրիշ
գործօն, աւելի կարեւոր, քան բոլոր նա-
խընթացները, Կաթնածիրը, իւր 18 մի-
լիոն արեգակներով, որոնց համաթաւալ-
ման կենդրոն որոնելը անշուշտ շատ մեծ
յանդգնութիւն կը լինէր:

Բայց ինչ նշանակութիւն ունի և ամ-
բողջ այդ Կաթնածիրը այն միլիարդաւոր
աստղների առաջ, որ մեր միտքը դի-
տում է աստղային տիեզերքի ծոցում:
Արդեօք ինքն այդ Կաթնածիրը չէ՞ տե-
ղափոխվում ինչպէս ծփուն կղզիների մի
արշիպելագոս: Արդեօք ամեն մի միգա-
մած, աստղերի ամեն մի կոյտ մի Կաթ-
նածիր չէ, որ շարժվում է ուրիշ տիե-
զերքների ձգողական ազդեցութեամբ, ո-

րոնք կանչում են նրան անսահման հե-
ռաւորութիւնից, յաւիտենական գիշեր-
ուայ մթութեան միջով:

Այդպէս, մեր միտքն անցնում է աստ-
ղից աստղ, սխտեմից՝ սխտեմ, տարա-
ծութիւնից տարածութիւն, նկատելով
ամեն տեղ անմատչելի մեծութիւն, դի-
տելով երկնային այնպիսի շարժումներ,
որոնց արագութիւնը թէև սկսել ենք չա-
փել, բայց անհասանելի է մեր երևակա-
յութեան համար: Ալֆա-Ցուլ արեգակի
սեփական տարեկան շարժումը 1488 միլ-
լիոն մղոնից անցնում է: Կարապի (երկ-
րորդ արեգակ հեռաւորութեան կարգով)՝
61-րդ աստղի սեփական շարժումը հա-
ւասար է 370 միլլիոն մղոնի տարեկան,
կամ օրեկան զրեթէ մի միլլիոն մղոնի:
Կարապի Ալֆա աստղը վազում է դէպի
մեզ ուղիղ զծով, տարեկան 500 միլլիոն
մղոն արագութեամբ: Գրումբիջի ցուցա-
կի № 1839-րդ աստղի սեփական շար-
ժումը հասնում է տարեկան 2590 միլ-
լիոն, մի ժամում՝ 115,000 կիլոմետր կամ
մի վայրկեանում 320,000 մետր... Դրանք
դեռ իրական հաշուից քիչ են, որովհե-

տե այն տեղափոխութիւնները, որ մենք, չափում ենք, ներկայանում են ոչ թէ ուղղակի երեսի կողմից,—այլ փոքր ի շատէ շեղ կերպով:

Ահա ի՞նչ տեսակ ռումբեր են, որոնք աւօսում են տարածութեան անդունդները: Եւ դրանք բոլորը արեգակներ են, հազարաւոր և միլլիոնաւոր անգամ Երկրից ծանր: Ձգուած լինելով անսահման դատարկութեան մէջ այդպիսի գլուխ պտտեցնող արագութեամբ, նրանք թաւալում են անհունութեան մէջ տիեզերքի բոլոր աստղերի ձգողական զօրութեան ազդեցութեան տակ: Եւ այդ միլլիոնաւոր, միլլիարդաւոր արեգակները, մոլորակները, աստղակոյտերը, միգամածները, նոր ծագող և հանգչող աշխարհները, զահալիւթում են նոյնպիսի արագութեամբ դէպի իրանց անծանօթ նպատակակէտը, այնպիսի ուժգնութեամբ, այնպիսի եռանդով, որոնց առողջ վառօդի և գինամիտի ոյժը միայն ծծկեր երեսաների շունչ է:

Եւ այսպէս, ամենքը վազում են, գուցէ յաւիտենականութեան համար, առանց

երբէք կարողանալու մօտենալ անվախճանութեան անգոյ նմաններին... Ամեն տեղ շարժում, գործունէութիւն, լոյս և կեանք: Եւ փառք Աստուծոյ, որ այդպէս է: Եթէ բոլոր այդ անհամար արեգակները, մոլորակները, երկիրները, լուսինները, գիսաւորները մի տեղ կանգնած և անշարժ լինէին, իրանց յաւիտենական գերեզմանների մէջ քարացած մումիաների նման, ո՞րքան զարհուրելի և ողբալի կը լինէր այդպիսի մի տիեզերքի տեսքը: Երեակայեցէք ձեզ ամբողջ Ստեղծագործութիւնը կանգ առած, քարացած, մումիացած: Նոյն իսկ այդպիսի մի միտք կարող է գերեզմանային սարսուռ առաջ բերել:

Եւ ո՞վ է այդ շարժումների պատճառը. ո՞վ է պահպանում այդ շարժումները. ո՞վ է ղեկավարում նրանց:—Տիեզերական ձգողութիւնը, այն աներևոյթ զօրութիւնը, որին հնազանդում է տեսանելի տիեզերքը (այն, ինչ որ մենք կոչում ենք նիւթ): Անսահմանութեան միջից երկրի քալած մի մարմինը իւր անկման ժամանակ կը ստանայ 11,300 մետր արագու-

թիւն մի վայրկեանում: Նոյնպէս Երկրից այդ արագութեամբ ձգած մի մարմին այլ եւ երբէք յետ չի ընկնի Երկրի վրայ: Անսահմանութեան միջից Արեգակից քաշուած մի մարմին կը հասնի 608,000 մետր արագութեան. նոյնպէս Արեգակի վրայից այդ արագութեամբ ձգած մի մարմին երբէք չի վերադառնայ իր նախկին տեղը: Աստղակոյտերը կարող էին աւելի նշանաւոր արագութիւն առաջ բերել, բայց որքան էլ նշանաւոր լինի այդ արագութիւնը, նա կը բացատրուի ձգողութեան թէօրիայով: Բաւական է մի ակնարկ ձգել աստղների սեփական շարժումների քարտէզի վրա, որ մարդ գաղափար կազմի այդ շարժումների բազմաղանութեան և մեծութեան մասին:

Սակայն ձգողութիւնը չէ բացատրում շարժման ծագումը. եթէ նա միայն գոյութիւն ունենար յաւիտենական, այն ժամանակ տիեզերքը կը կազմէր միայն մի զանգուած: Հարժման ծագումը մի սկզբնական պատճառ ունի:

Այդպէս աստղները, արեգակները, մոլորակները, աշխարհները, գիսաւորները,

ասուպները, ուրանօլիտները, մի խօսքով այս անսահման տիեզերքը կազմող բոլոր մարմինները հաստատուած են ոչ թէ ամուր հիմքեր կամ պատուանդանների վրա, ինչպէս ըմբռնում էր մեր նախնիքների մանկական և նախնական հասկացողութիւնը, այլ այն աներեւոյթ և աննկատական զօրութիւնների վրա, որոնք դեկավարում են նրանց շարժումները: Այդ միլիարդաւոր երկնային մարմինների կայունութեան պատճառը իրանց փոխադարձ շարժումներն են. նրանք յենվում են փոխադարձաբար միմեանց վրա, չընայելով, որ դատարկութեան անդունդները բաժանում են նրանց: Եթէ մի միտք կարողանար իրան ազատ զգալ ժամանակի և տարածութեան գաղափարից, նա կը տեսնէր, որ Երկիրը, մոլորակները, Արեգակը, աստղերը թափվում են անձրևի նման մի անեղր երկնքից և թափվում են ամեն տեսակ երևակայելի ուղղութեամբ, իբրև անձրևի հսկայական կաթիլներ, որոնք տարվում, քշվում են մի ահագին փոթորկի մրրիկներից և ընկնում են ոչ թէ ներքև, այլ հնազանդում են ամենքի և առանձ-

նապէս իւրաքանչիւր ձգողական զօրութեան: Այդ կօսմիական կաթիլներից իւրաքանչիւրը, այդ աշխարհներից ամեն մէկը, այդ արեգակներից ամեն մէկը այնպիսի զարմանալի արագութեամբ է վազում, որ նրա համեմատութեամբ թնդանօթի գնդակների արագութիւնը կատարեալ անշարժութիւնը կարելի է համարել մի վայրկեանում այդ արագութիւնը ոչ թէ 100, 500, 1000 մետր է, այլ 10,000 20,000, 50,000, 100,000 և նոյն իսկ 2 կամ 3 հարիւր հազար մետր է:

Բայց ինչպէս, միթէ ընդհարումներ չեն պատահում այդպիսի շարժումներից: Գուցէ և պատահում են. այն «ժամանակաւոր աստղերը», որոնք կարծես ծնվում են իրանց ածիւնից, գրեթէ այդպիսի մի բան են ցոյց տալիս, բայց իրօք ընդհարումները շատ դժուարութեամբ կարող են պատահել, որովհետեւ անջրպետը երկնային մարմինների տարածութեան համեմատութեամբ անհուն է և որովհետեւ ամեն մի մարմնի ունեցած շարժումը թոյլ չէ տալիս նրան ենթարկուել կրաւորապէս մի ուրիշ մարմնի ձգողական

զօրութեան և ընկնել նրա վրա. նա պահում է իւր սեփական շարժումը, որ չէ կարող ոչնչանալ և սաւառնում է իրան գրաւող օջախի շուրջը իբրեւ մի թիթեռնիկ, որ գրաւում է լոյսի զօրութիւնից, բայց չէ ընկնում կրակի մէջ: Բացի դրանից, բացարձակութեան տեսակէտից, այդ շարժումները նոյն իսկ «արագ» չեն:

Իրօք, այդ բոլորը վազում է, թռչում է, ընկնում է, գլորվում է, գահավիժում է անդնդի մէջ, բայց այնպիսի փոխադարձ հեռաւորութեամբ, որ ամեն բան կարծես անշարժ է երևում: Եթէ մենք կամենայինք զետեղել բոլոր աստղերը, որոնց տարածութիւնները մինչև այժմ չափուած են, Պարիզի տարածութիւն ունեցող մի շրջանակի մէջ, ընտրելով որևէ մի կէտ Արեգակի համար և զետեղելով նրան ամենամօտ աստղը 2 կիլօմետր հեռաւորութեան վրա, մենք պէտք է զետեղէինք երկիրը նրանից 1 սանտիմետր հեռաւորութեան վրայ: Լուսնի թաղը — 5 սանտիմետր, Նեպտունը — 30 սանտիմետր: Գարապի 61-րդ աստղը պէտք է զետեղէինք 4 կիլօմետր, Սերիուսը — 10 կիլո-

մետր և Բևեռային աստղը—27 կիլոմետր հեռաւորութեան վրա և այդ ժամանակ աստղերի ահագին մեծամասնութիւնը Սէնի դէպարտամենտից դուրս կը մնար: Ապա, հաղորդենք բոլոր այդ կէտերին իրանց յարաբերական շարժումները և մենք կը տեսնենք, որ Երկիրը մի ամբողջ տարի պէտք է գործադրի անցնելու համար իւր 1 սանտիմետր շառաւիղ ունեցող պարունակը (օրբիտ). Լուսնի թափը պէտք է գործադրի 12 տարի իւր 5 սանտիմետր շառաւիղ ունեցող պարունակը անցնելու համար, իսկ Նեպտունը—165 տարի: Արեգակի և աստղերի սեփական շարժումները միեւնոյն կարգով կը լինէին. այդ կը նշանակէր, որ ամեն բան անշարժ կը թուար, նոյն իսկ խոշորացոյցով նայելիս: Ուրանիան թաղաւորում է խաղաղ և պայծառ, տիեզերքի անհունութեան մէջ:

Այդ աստղային տիեզերքի կազմութիւնը օրինակ է բոլոր այն մարմինների կազմութեան համար, որ մենք կոչում ենք նիւթական: Ամեն մի մարմին, գործարանական, թէ անգործարանական—մարդ, անասուն, բոյս, քար, երկաթ,

բրոնզ—բաղկացած է մասնիկներից, որոնք մշտական շարժման մէջ են գտնվում և երբեք միմեանց չեն կաշում: Այդ մասնիկներն իրանք ևս բաղկացած են հիւլէներից, որոնք չեն կաշում միմեանց: Այդ հիւլէներից իւրաքանչիւրն անսահման կերպով փոքր է և չէ տեսնվում ոչ միայն աչքով, ոչ միայն խոշորացոյցով, այլ նոյն իսկ ըմբռնել չի կարելի մտքով: Հաշուել են, որ մի գնդասեղի ծայրում 8 սեքստելիոն հիւլէ կայ, այսինքն՝ 8000 միլլիարդների միլլիարդ, որ մի խորանարդ սանտիմետր օդի մէջ 1 սեքստիլիոնից պակաս մասնիկ չըկայ: Բոլոր այդ մասնիկները շարժվում են իրանց ղեկավարող զօրութիւնների ազդեցութեամբ և իրանց անջրպետի համեմատութեամբ, բաժանվում են միմեանցից մեծ տարածութեամբ: Մենք կարող ենք նոյն իսկ մտածել, որ սկզբունքով միայն մի տեսակ սկզբնական հիւլէ կայ, էսպէս պարզ և միակերպ և միայն այդ պարզ և միակերպ հիւլէների թիւը, դիրքը և շարժումը առաջ են բերում մասնիկների բազմազանութիւնը. ոսկու, երկաթի մի մասնիկը զանազանվում

է ծծմբի, թթուածնի, ջրածնի մի մասնիկից միայն նրան բաղկացնող սկզբնական հիւլէնների թուով, գիրքով և շարժումով. ուրեմն ամեն մի մասնիկ հանդիսանում է մի ամբողջ սիստեմ, մի փոքրիկ տիեզերք, միկրոկոսմ (microcosme):

Քայց, ինչ և լինի մեր գաղափարը մարմինների ներքին կազմութեան մասին, այսօր կարելի է իբրև ճանաչուած և անհերքելի ճշմարտութիւն համարել, որ մեր երևակայութեան որոնած անշարժ կէտը ոչ մի տեղ գոյութիւն չունի: Ուրջան էլ աշխատի Արքիմէդը, նա չէ կարող գտնել յենակէտը՝ ամբողջ աշխարհը բարձրացնելու համար: Աշխարհը, ինչպէս և հիւլէնները հասարակած են տիեզերքի վրա, աննիւթական զօրութեան վրա: Ամեն բան շարժվում է, հարկադրուած ձգողական զօրութիւնից և կարծես հետամուտ է լինում գտնել այն անշարժ կէտը, որին որքան մօտենում ես, այնքան անհետանում է աչքից և որը գոյութիւն չունի, որովհետև անսահմանութեան մէջ կենդրոնը ամեն տեղ է և ոչ մի տեղ է: Իրանց դրական համարող մտքերը, որոնք այն-

քան հաւաստի կերպով հաստատուն են, թէ «ամեն տեղ թափաւորում է միայն նիւթը իւր յատկութիւններով» և որոնք արհամարհանքով ժպտում են մտածողների հետազօտութեան վրա, պէտք է ամենից առաջ մեզ ասեն, ինչ են նրանք հասկանում այդ հուշակաւոր «նիւթ» խօսքը ասելով: Եթէ նրանք վերաբերուէին խնդրին ոչ այդպէս թեթեւութեամբ, եթէ նրանք մի քիչ մտածէին, որ իրականութիւնը թափնուած է առ երևոյթ և խաբուսիկ կերպարանքի ետև և անմատչելի է մեզ, անշուշտ նրանք մի քիչ աւելի համեստ կը լինէին:

Իսկ մենք, որ որոնում ենք ճշմարտութիւնը առանց կանխակալ կարծիքների և չենք ղեկավարվում կուսակցական ոգւով, կարծում ենք, որ նիւթի էութիւնը նոյնչափ խորհրդաւոր է; ինչպէս և զօրութեան էութիւնը, որովհետև երբևէ թական տիեզերքը բոլորովին այն չէ, ինչ որ երևում է մեր զգայարաններին: Եւ իրօք, այդ երևութական տիեզերքը բաղկացած է աներևոյթ հիւլէններից. նա յենուած է զատարկութեան վրա և նրան

դեկավարող զօրութիւնները նոյնպէս ան-
նիւթական են և աներևոյթ: Աւելի քիչ
համաձայնութիւն կը լինէր մտածել, թէ
աշխարհում ամենեւին նիւթ չկայ, թէ ա-
մեն բան գինամիզմ է, քան թէ հաստա-
տել, թէ տիեզերքում ոչինչ չկայ, բացի
նիւթից: Ինչ վերաբերում է աշխարհի
նիւթական յենակէտին, պէտք է նկատել,
որ նա չքացաւ հէնց այն ժամանակ, երբ
մեքենագիտութիւնը յաղթական կերպով
հանդէս գուրս եկաւ, հռչակելով աներե-
ւոյթի յաղթութիւնը: Հաստատ անշարժ
կէտը չքանում է զօրութիւնների համաշ-
խարհային հաւասարակշռութեան մէջ,
եթերի ճօճումների իդէալական ներդաշ-
նակութեան մէջ. որքան շատ որոնես
նրան, այնքան քիչ կը գտնես, և մեր
մտքի վերջին ջանքը իբրեւ վերջին յենա-
րան, իբրեւ գերազույն իրականութիւն, ու-
նի միայն Անհատականը:

V

ՕԴԱՋԳԵՍՏ ՀՈԳԻ

Վերջին գարնան մի գեղեցիկ օր, կէս
օրից յետոյ, ես և Փալէրօ նկարիչը պտտում
էինք ծովի ափում. մենք անցանք ձիթե-
նիւների այն պուրակների մէկի միջով,
որոնց մարդ հանդիպում է նիցցայի և
Մօնակօի մէջ տեղ և աննկատելի կերպով
մտանք մի մասնաւոր ամարանոց, որ նա-
յում էր ծովի վրա. մի գեղանկար օձա-
պտոյտ շաւիղ տանում էր դէպի բլուրը:

Բարձրանալով այդ շաւղով, մենք անցանք նալնջենիների մի պուրակի վրայով, որի ոսկէգոյն պտուղները յիշեցնում էին Հեսպերիդների այգիները. օդը անուշաբոյր էր, երկինքը ջինջ կապուտակ և մենք խօսում էինք գիտութեան և արուեստի մասին, երբ ուղեկիցս յանկարծ կանգ առաւ տեղն ի տեղը՝ շլացած, և նշան արեց ինձ լուել ու նայել: Մի քանի քայլ մեղանից հեռու, մեր առաջ, կակտուսների և Բարբարիայի թզենիների ետեւ գտնւում էր մի չքեղ լողարան, որ շոգում էր բաց լուսամտից մանող արեգակի ճառագայթներով. ուղղակի լուսամտի դէմ, մարմարեայ աւազանի մօտ, որի մէջ թափւում էր ջուրը մեղմ կարկաշիւնով, կանգնած էր մի անծանօթ երիտասարդ աղջիկ մի մեծ հայելու առաջ, որ ցօլացնում էր նրա պատկերը գլխից մինչև ոտքը: Անտարակոյս, ջրի կարկաշիւնը արգելում էր նրան լսել մեր քայլերը: Մենք համեստ կերպով, կամ աւելի լաւ է ասել անհամեստ կերպով կանգ առանք կակտուսների ետեւ և անշարժ ու լուռ նայում էինք նրան:

Նա գեղեցիկ էր և, ըստ երևոյթին,

իր գինը չէր իմանում. սա ները դրած վագրի մորթու վրա, նա շատ էլ չէր շտապում վերջացնել իր արդուգարդը: Գտնելով, որ իր երկուր վարսերը դեռ շատ թաց էին, նա սկսեց քանդել հիւսուածքը և մազերը թափուեցին նրա մարմնի վրա. ապա նա դարձաւ դէպի մեր կողմը և վեր առաւ մի վարդ լուսամտի մօտ դրած մի սեղանի վրայից. նորից դառնալով դէպի հայելին, սկսեց ծամերը հիւսել, վերջացրեց, դնելով վարդը իր ծամերի մէջ և մէջքը դարձնելով արեգակին, մի քիչ թեքուեց, երևի շապիկը վեր առնելու համար: Այդ բոլորէին, նա յանկարծ մի ճիշարձակեց, ցատկեց և գլուխը բռնելով ձեռներով, վազեց դէպի սենսակի մութ անկիւնը:

Մենք մտածեցինք, որ մեր գլուխների մի շարժումը ցոյց էր տուել մեր ներկայութիւնը կամ հայելու մի խաղով նա մեղ նկատել էր: Ինչևիցէ, մենք անմիջապէս հեռացանք մեր տեղից և միևնոյն շաւղով իջանք վաղը դէպի ծովը:

«Ո՛հ, ասաց ընկերս, խոստովանում եմ, որ բոլոր իմ օրինակների մէջ, ես

դրանից աւելի կատարեալը չեմ տեսել: Իսկ դուք ի՞նչ էք մտածում: Այդ տեսիլքը շատ յարմար ժամանակին վրա հասաւ, իմ ասածներս հաստատելու համար: Ինչքան էլ պերճախօս կերպով փառաբանէի գիտութեան վայելչութիւնները, խոստովանեցէք, որ արուեստն ևս իւր հմայքն ունի: Երկրային աստղերը յաջող կերպով կարող էին մրցել Երկնքի գեղեցկութիւնների հետ: Միթէ դուք մեզ պէս չէք հիանում այդ չքնաղ ձևերը տեսնելով: Ի՞նչ հրաշալի գծեր. ի՞նչ հիանալի մարմին:

— Ես այնքան էլ վատ ճաշակ չունեմ, որ չըհիանամ գեղեցկութեամբ, պատասխանեցի ես, և ես ընդունում եմ, որ մարդկային գեղեցկութիւնը և մանաւանդ կանացի գեղեցկութիւնը ներկայացնում է ամենակատարեալ բանը, ինչ որ բնութիւնը արտադրել է մեր մոլորակի վրա: Բայց գիտէք, թէ ամենից աւելի ի՞նչ է ինձ հիացնում այդ էակի մէջ: Ինձ հիացնողը ոչ թէ նրա գեղարուեստական կամ էսթետիքական տեսքն է, այլ այն գիտնական ապացոյցը, որ նա տալիս է մի հրաշալի իրողութեան մասին: Այդ չքնաղ մարմնի

մէջ ես տեսնում եմ մի օղազգեստ հոգի:

— Ո՛հ. դուք սիրում էք առեղծուածներ: Մի օտարազգեստ հոգի, այդ արդէն շատ իղէալական է մի այդպիսի իրական մարմնի համար: Թէ այդ չքնաղ անձը հոգի ունի, այդ մասին ես ամենեկին կասկած չունեմ, բայց թոյլ տուէք ինձ, իրբև գեղարուեստագէտի, պաշտել այդ կենդանի մարմինը և նրա գոյնը:

— Ես այդ ձեզ չեմ արգելում ամենեւին, բայց հէնց այդ ֆիզիքական գեղեցկութիւնն է, որ ստիպում է ինձ հիանալ այն հոգով, որ թագնուած է նրա մէջ և ստեղծել է նրան:

— Ի՞նչ էք ուզում ասել դրանով. մենք այստեղ տեսնում ենք միայն մարմին, հոգու գոյութիւնն այնքան էլ չօշափելի չէ:

Մեր զգայարանների համար, այո՛, իսկ մտքերի համար, ո՛չ: Այդ զգայարանները մեզ խաբում են բացարձակապէս ամեն բանի վերաբերմամբ, երկրի շարժման, երկնքի բնութեան, մարմինների հաստատութեան, էակների և իրերի վերաբերմամբ: Գամենում էք մի լուպէ լսել իմ դատողութիւնը:

«Երբ ես ծծում եմ վարդի բուրմունքը, երբ ես հիանում եմ այդ ծաղկի ձևի գեղեցկութեամբ, նրա գունաւորութեամբ և շքեղութեամբ այն ժամին, երբ նա կոկոնից բացվում է, ինձ ամենից աւելի զարմացնողը այն գաղտնի, անծանօթ խորհրդաւոր զօրութեան գործն է, որ ղեկավարում է այդ բոյսի կեանքը, ցոյց է տալիս նրան թէ ի՞նչ միջոցով պահպանի իր գոյութիւնը, ընտրի օդի, ջրի և հողի այնպիսի մասնիկներ, որոնք պէտքական են նրա սննդառութեան համար և մանաւանդ ձուլի այդ մասնիկները, համախմբի նրանց քնքոյշ կերպով այնպէս, որ նրանցից կազմի այս շքեղ ցօղունը, այս փոքրիկ կանաչ և բարակ տերեւները, այս քրնքոյշ վարդային թերթիկները, այս հիանալի բուրմունքը և գոյները: Այդ խորհրդաւոր զօրութիւնը բոյսի հոգեկան, կենդանական սկիզբն է կազմում: Դրէք հողի մէջ, մէկ մէկու կողքին, չուշանի, կաղնի, ցորենի և գեղձի սերմերն ու կորիզները, ամեն մի սաղմ կը կազմի իր գործարանաւորութիւնը:

Ես գիտեմ մի դպրի ծառ, որ գրեթէ

մեռնում էր մի հին պատի փլատակների տակ, մինչ մի քանի մէտր հեռու, մի փոսում, լաւ հող կար. յուսահատուած, նա արձակեց իրանից մի արմատ, հասաւ նրա օգնութեամբ այդ ցանկալի փափուկ հողին, խրուեց նրա մէջ, տեղ հաստատեց և անդգալի կերպով, նա, այդ անշարժը, տեղափոխուեց, թողնելով, որ իր նախկին արմատները մեռնեն, թողեց քարերը և ապրեց յարութիւն առած, կերպարանափոխուած իր ազատարար արմատի օգնութեամբ: Ես գիտեմ մի քանի կնճնիներ, որոնց զրկեցին սննդից, պեղելով նրանց մօտ մի լայն և խոր փոս: Եւ զըրկելով նրանց այն պտղաբեր դաշտի հողից, որից նրանք պէտք է սնունդ առնէին, նրանք որոշեցին անցկացնել իրանց չըկտրուած արմատները փոսի վրայից և այդ նրանց յաջողուեց, այնպէս, որ նրանք դարձեալ սկսեցին կերակրուել իրանց նախկին սեղանից, ի մեծ զարմանս այգեպանի, ես գիտեմ նոյնպէս մի յասմիկ, որ կատարեալ հերոսութեամբ ամբողջ ութն անգամ անցաւ մի ծակծկած տախտակից, որ զրկում էր նրան լոյսից և որը մի ան-

գութ զննող միշտ դարձնում էր դէպի մութը այն յուսով, որ դադարեցնի այդ ծաղկի եռանդը. բայց այդ նրան չ'աջողուեց:

«Բոյսը շնչում է, խմում է, ուտում է, ընտրում է, մերժում է, որոնում է, աշխատում է, ապրում է, գործում է իր բնազդումների համաձայն. մի բոյս իրան լաւ է զգում, միւսը տանջվում է, երբորդը ջղային է, յուզուած է: Պատկառուկը դողդողում է և թառամած ընկնում է ամենափոքր հպումից: Հաճոյքի որոշ ժամերում նուիճը տաք է. մեխակը փայլում է փոսփորական լոյսով. պտղաբերուած իջնում է ջրի խորքը՝ հասունացնելու համար իր սիրոյ պտուղը: Այդ անծանօթ կեանքի բոլոր արտայայտութիւնների մէջ, փիլիսոփան չէ կարող չըլսել բոյսերի աշխարհում նոյն համերգը, որ հնչում է ամբողջ տիեզերքում:

«Այդ տեղից ինձ համար շատ էլ հեռու չէ այս բոլակին անցնել մարդկային հոգուն, թէև նա անհամեմատ գերազոյն է, քան բոյսերի հոգին, թէև նա ստեղծել է մի մտաւոր աշխարհ, նոյնչափ բարձր երկրային կեանքի մնացած կեան-

քից, որքան աստղերը բարձր են երկրից: Բայց ես կը քննեմ նրան ոչ թէ նրա հոգեւոր ընդունակութիւնների տեսակէտից, այլ իբրև մի զօրութիւն, որ կենդանացնում է մարդկային էակը:

«Լաւ, միթէ դարմանալի չէ այն զօրութիւնը, որ խմբաւորում է մեր ներշնչած կամ սննդառութեան միջոցով իւրացրած հիւլէները և կազմում է նրանցից այս չքնաղ էակը: Երեւակայեցէք ձեզ այս երիտասարդ աղջկան իր ծնած օրը և հետեցէք մտքով այդ փոքր մարմնի աստիճանական զարգացման մանկութեան անհոգ տարիներից սկսած մինչև պատանեկութեան առաջին ծիլը և կատարեալ հասունութեան ձևերը: Ինչպէս է պահպանվում մարդկային գործարանաւորութիւնը այդ ժամանակ, զարգանում և բաղկանում: Դուք գիտէք ինչպէս. — սննդառութեամբ և շնչառութեամբ:

«Արդէն շնչառութեան միջոցով օդը կերակրում է մեզ երեք քառորդ չափով: Օդի թթուածինը պահպանում է կեանքի կրակը և մարմինը նման է մի բոցի, որ անդադար վերանորոգվում է նոր վա-

ռեկանիւթով: Թթուածնի պակասութիւնը հանգցնում է կեանքը, ինչպէս հանգցնում է ճրագը: Զնշառութեան շնորհիւ, երակներին մոյգ արիւնը կերպարանափոխվում է բազկերակների ալ արեան և վերածնվում: Թոքերը ներկայացնում են մի ամենաբարակ մազանման հիւսուածք, որ 40-ից մինչև 50 միլլիոն փոքրիկ ծակեր ունի. այդ ծակերը այնքան փոքր են, որ արիւնը չէ կարող նրանց միջով ծծուել, բայց այնքան մեծ են, որ օդը կարող է թափանցել նրանց միջով: Օդի և արեան մէջ տեղի է ունենում գազերի մշտական փոխանակութիւն, որի ժամանակ օդը հայթայթում է արեան թթուածին, իսկ արիւնը դուրս է տալիս օդի մէջ ածխաթթու: Մի կողմից մթնոլորտային թրթուածինը այրում է թոքերի մէջ ածխածինը, իսկ միւս կողմից թոքերը արտաշնչում են ածխաթթու, բորակածին և ջրային գոլորշի: Բոյսերը շնչում են (ցերեկը) բոլորովին հակառակ ձևով, ծծում են ածխածին և արտաշնչում են ածխաթթու, և այդ հակասական գործողութեամբ պահպանում են երկրային կեանքի

քի ընդհանուր հաւասարակշռութեան մի մասը:

«Ինչից է բաղկացած մարդկային մարմինը: Չափահաս մարդը կշռում է միջին թուով 70 կիլօգրամ: Այդ քանակութեան մօտ 52 կիլօգրամը ջուր է, արեան և մարմնի մէջ: Վերլուծեցէք մեր մարմնի նիւթը և դուք կը գտնէք նրա մէջ ալբումին, ֆիբրին, կազէին և ժելիատին, այսինքն այնպիսի օրգանական նիւթեր, որոնց տարրական բաղկացուցիչ մասերը կազմում են 4 տեսակ գազ—թթուածին, բորակածին, ջրածին և ածխաթթու: Դուք կը գտնէք նրա մէջ նաև բորակածին չունեցող նիւթեր, ինչպէս խէժ, շաքար, օսլա և ճարպ. այդ նիւթերը նոյնպէս անցնում են մեր մարմնով. նրանց ածխածինը և ջրածինը կլանվում են այն թթուածնից, որ մենք ներս ենք ընդունում շնշառութեան ժամանակ և ապա արտաշնչվում են իբրև ածխաթթու և ջուր:

«Դուք գիտէք անշուշտ, որ ջուրը երկու գազերի—թթուածնի և ջրածնի բաղադրութիւն է. օդը երկու գազերի—թրթուածնի բորակածնի խառնուրդ է, որին

միանում են, թէև փոքր չափով, ջուրը իբրև շողի, ածխաթթու, ամմիակ և օգոն: Վերջինս, սակայն, խտացած թթուածին է:

«Ուրեմն մեր մարմինը բաղկացած է կերպարանափոխուած գազերից:

— Բայց, ընդհատեց ինձ ընկերս, չէ որ մենք չենք ապրում միայն օդով: Մեզ հարկաւոր է որոշ ժամերում, երբ խմացնում է մեզ այդ մասին մեր ստամոքսը, աւելացնել մի քանի բաներ, որոնք նոյնպէս իրանց արժէքն ունեն, ինչպէս փասեանի մի թէւ, մի կտոր միս, մի բաժակ գինի կամ շամպայն, կամ նայելով մեր ճաշակին, ծներէկ, խաղող, դեղձ...

— Այո, այդ բոլորը անցնում է մեր գործարանաւորութեան միջով և վերանորոգում է հիւսուածները, այն եւ շատ արագ, որովհետեւ մի քանի ամսում (և ոչ 7 տարում, ինչպէս կարծում էին առաջ) մեր մարմինը ամբողջովին վերանորոգվում է: Ես էլի վերադառնում եմ այն չքնաղ էակին, որ հէնց իսկոյն մեր աչքի առաջին էր. մեզ հիացնող այդ մարմինը գոյութիւն չունէր 3 կամ 4 ամիս առաջ. այդ

ուսերը, այդ դէմքը, այդ աչքերը, այդ բերանը, այդ բազուկները, այդ վարսերը և նոյն իսկ եղունգները, մի խօսքով այդ ամբողջ գործարանաւորութիւնը միայն մասնիկների մի հոսանք է, շարունակ վաւիղ մի բոց, մի գետ, որին մենք նայում ենք մեր ամբողջ կեանքի ընթացքում, կարծելով, թէ միևնոյնն է, թէև ջուրը շարունակ փոխվում է նրա մէջ: Արդ, այդ բոլորը միայն դադ է եռացրած, խտացած, կերպարանափոխուած և գլխաւորացած, իսկ ոսկրները, որոնք պէս՝ օդ է: Նոյն իսկ ոսկրները, որոնք այսօր կարծր են, նրանք էլ կազմուել և կարծրացել են կամաց-կամաց, անդգալի կերպով: Մի մոռացէք, որ մեր մարմինը ամբողջովին բաղկացած է աներեւոյթ մասնիկներից, որոնք չեն շփվում միմեանց, բայց անդադար վերանորոգվում են:

«Եւ ճշմարիտ, եթէ մեր սեղանի վրա մենք վայելում ենք բանջարեղէն կամ պտուղ, եթէ մենք բանջարակեր ենք, մենք սպառում ենք այնպիսի նիւթեր, որոնք գրեթէ ամբողջովին քաղում ենք օդից. այս դեղձը—միայն ջուր է և օդ. այս տանձը, այս խաղողը, այս նուշը նոյն-

պէս ջուր և օդ են, գաղային կամ հոսանաւ տարրեր, որոնց կենդրոնացրիլ են այստեղ ծառի հիւթը, արեգակի տաքութիւնը, անձրեւը: Իսկ ծներէկը, հաղարը, սիսեւը, կանկարը, կեռասը, ելակը, մորին—այդ ամենը ապրում են օդում և կենդանի են միայն օդով: Այն, ինչ որ տալիս է հողը, ինչ որ պարունակում է սննդահիւթի մէջ, նոյնպէս գաղեր են և միկնոյն գաղերը—բորակածին, թթուածին, ջրածին, ածխածին և այլն:

«Իսկ եթէ մենք ուտում ենք բիֆշտեքս, վառիկ կամ մի ուրիշ որևէ միս, տարբերութիւնը մեծ չէ: Ոչխարը, եղը կերակրուել են նոյնպէս խոտով և ինչ որ մենք ուտենք, լինի այդ կաքաւ՝ կաղամբով յարդարուած, թէ խորոված թռչուն կամ հնդկահաւ կամ նապաստակի խորոված, բոլոր այդ նիւթերը, որոնք ըստ երևոյթին, շատ տարբեր են, իսկապէս միայն կերպարանափոխուած բոյսեր են. իսկ այդ բոյսերը ուրիշ ոչինչ են, եթէ ոչ մասնիկների համախմբումն. իսկ այդ մասնիկները ստացուած են միկնոյն գաղերից, որոնց մասին այժմ խօսեցինք, այն է՝

օդից, ջրի տարրերից—այնպիսի մասնիկներից և հիւլէներից, որոնք գրեթէ անկըշուկի են, և, յամենայն դէպս, բացարձակապէս անտեսանելի են մերկ աչքի համար:

«Ուրեմն, ինչ և լինի մեր սննդի տեսակը, մեր մարմինը, որ կազմվում, պահպանվում, զարգանում է շնչառութեամբ և սննդառութեամբ, ձեռք բերուած մասնիկների իւրացմամբ, վերջ ի վերջոյ ուրիշ բան չէ, եթէ ոչ մի հոսանք, որ անդադար վերանորոգվում է այդ ձուլման շնորհիւ և ուղղվում, կառավարվում, կազմակերպվում է մեզ կենդանացնող աննիւթական զօրութեամբ: Ամենայն վստահութեամբ մենք կարող ենք այդ զօրութեան հոգի անունը պարզել: Նա համախմբում է իրան յարմար հիւլէները, դէն է զցում անպէտքականները և սկսելով մի աննշմարելի կէտից, մի անշոշափելի սաղմից, հասնում է մինչև այնտեղ, որ ստեղծում է Բելվատերեան Ապոլլօն կամ Կապիտօլեան Վեներան: Ֆիդիասը միայն մի կոպիտ ընդօրինակող է այդ ներքին և խորհրդաւոր զօրութեան հետ համեմատած: Դիւցարանութիւնն հաստատում է,

որ Պիգմալիոնը կեանք ներշնչեց իր ստեղծած արձանին և նրա սիրականը դարցաւ. այդ սխալ է: Պիգմալիոնը, Պրաքսիդէլը, Միքէլ-Անջելօն, Բենվենուտօն, Կանօվան ստեղծել են միայն անկենդան արձաններ: Նրանցից անսահման բարձր է այն զօրութիւնը, որ կարող է ստեղծել տղամարդի և կնոջ կենդանի մարմինը:

«Բայց այդ զօրութիւնը աննիւթական է, անտեսանելի է, անօշափելի է, անկըշուելի է, ինչպէս ձգողական զօրութիւնը, որ օրօրում է աշխարհները տիեզերական ներդաշնակութեան մէջ. մեր մարմինը, որքան էլ նա նիւթական երեայ մեզ, ներկայացնում է իսկապէս մի ներդաշնակաւոր համախմբումն, որ կազմվում է այդ ներքին զօրութեան ձգողութեամբ: Դուք տեսնում էք ուրեմն, որ ես ամենեկին չեմ շեղում դրական գիտութիւնների սահմաններից, երբ այդ երիտասարդ աղջկան անուանում եմ օդազգեստ հոգի, ինչպէս ենք և մենք, դու և ես, ոչ աւելի, ոչ պակաս:

«Մարդկութեան ծագումից սկսած մինչև վերջին դարերը, ամենքը ենթադրում էին, որ ամեն մի զգայութիւն գրտ-

նըվում է հէնց այնտեղ, որտեղ մենք զգում ենք: Մատի ծայրին զգացած ցաւը կարծում էին, թէ հէնց մատի մէջն է: Երեսաները և շատ անձինք մինչև այժմ ևս այդէս են կարծում: Սակայն, ֆիզիօլօգիան ապացուցեց, որ տպաւորութիւնը մատի ծայրից հաղորդվում է ուղեղին ջղային սխտեմի միջոցով: Կտրեցէք ջիղը և դուք կարող էք ձեր մատը այրել կրակի վրա ինչքան կամենաք և ոչ մի ցաւ չըզգալ: Մինչև անգամ որոշել են այն ժամանակը, որ տպաւորութիւնը գործ է դնում մարմնի մի որևէ կէտից ուղեղին հաղորդելու համար և մենք գիտենք, որ այդ հաղորդման արագութիւնը գրեթէ 28 մէտր է մի վայրկենում: Այդ օրից զգայնութիւնը վերագրում են ուղեղին. բայց կանգ են առել կէս ճանապարհի վրա:

«Ուղեղը նոյնպիսի մի նիւթ է, ինչպէս և մատը և երբէք մի անփոփոխ հաստատ նիւթ չէ. նա մի նիւթ է էականապէս փոփոխվող և երբէք միևնոյնը չըմնացող:

«Ուղեղային զանգուածի մէջ չըկայ, չէ կարող լինել ամենեկին մի հատ խորշիկ, մի հատ մասնիկ, որ չըփոփոխուի: Եթէ

չարժումը, չըջանառութիւնը, կերպարանափոխութիւնը կանգ առնի, խտրոյն մաս կը լինի: Ուղեղը կարող է գոյութիւն ունենալ և զգալ մնացած բոլոր մարմնի նման միայն այն պայմանով, որ կենսական չըջանառութիւնը բաղկացնող օրգանական նիւթը անընդհատ կերպարանափոխութեան ենթարկուի:

«Ուրեմն, ոչ այդտեղ, ոչ ուղեղային նիւթի որևէ մի տեղում, ոչ ևս մասնիկների որոշ համախմբութեան մէջ չէ կայանում և չէ կարող կայանալ մեր անձնաւորութիւնը, մեր համանմանութիւնը, մեր անհատական էությունը, մեր այն էությունը, որ ձեռք է բերում և պահպանում է անձնական արժանաւորութիւնը, զարգանում է մտաւորապէս և բարոյապէս, շարունակ աճեցնում է իր գիտութիւնը ուսման միջոցով, այն էությունը, որ իրան պատասխանատու է զգում, մի ամիս, մի տարի, տասն տարի, քսան տարի, յիսուն տարի առաջ կատարած իր գործողութիւնների համար, շնայելով, որ այդ ժամանակի ընթացքում մարմնի ամբողջ մասնիկային կազմութիւնը փոխուել է մի քանի անգամ:

«Այն ֆիզիոլոգները, որոնք հաստատում են թէ հոգին գոյութիւն չունի, նմանում են իրանց այն նախնիքներին, որոնք հաստատում են թէ զգում են ցաւը մատի ծայրին կամ ոտքին: Նրանք մի քիչ մօտ են ճշմարտութեան, բայց կանգ առնելով ուղեղի վրա և զետեղելով մարդկային էակը ուղեղային տպաւորութիւնների մէջ, նրանք մնում են կէս ճանապարհի վրա: Այդ ենթադրութիւնը շատ քիչ ներելի է մանաւանդ նրանց, որովհետեւ այդ միկնոյն ֆիզիոլոգները շատ լաւ գիտեն, որ անձնական զգայութիւնը միշտ միացած է լինում նիւթի փոփոխութեան հետ: Ուրիշ խօսքերով, անհատի եսը պահպանում է իր միանմանութիւնը միայն այն ժամանակ, երբ նրա նիւթի նմանութիւնը յարատեւութիւն չունի:

«Ուրեմն, մեր զգացողութեան սկզբունքը չէ կարող մի նիւթական առարկայ լինել. նա հաղորդակցվում է արտաքին աշխարհի հետ ուղեղային տպաւորութիւնների միջոցով, այն քիմիական զօրութիւնների միջոցով, որոնք առաջ են գալիս այդ օրգանի մէջ նիւթական մասնիկներին

զուգաւորութեամբ: Բայց նա հարկէ է:

«Եւ մեր օրգանական կազմակերպութիւնը մշտապէս փոփոխվում է մի որեւէ պսիխիական սկզբունքի ղեկավարութեամբ:

«Որեւէ մի մասնիկ, որ այժմ գտնվում է մեր գործարանաւորութեան կազմութեան մէջ, մի րոպէից յետոյ փախչում է մեղանից արտաշնչութեան կամ արտաթորութեան միջոցով և աւելի կամ քիչ ժամանակ մնալով միջնորդում, մարմնանում է մի ուրիշ գործարանաւորութեան մէջ, մի բոյսի, անասնի կամ մարդի մէջ: Ձեր մարմինը այժմ բաղկացնող մասնիկները երէկ ամենեւին չէին գտնվում ձեր անձի մէջ և ոչ մէկը նրանցից այդտեղ չէր մի քանի ամիս առաջ: Հապա սրտեղ էին նրանք: Նրանք կամ օդի կամ մի ուրիշ մարմնի մէջ էին: Բոլոր այն մասնիկները, որոնք այժմ կազմում են ձեր օրգանական հիւստւածքը, ձեր թոքերը, ձեր աչքերը, ձեր ուղեղը, ձեր ազդրերը, արդէն դրանից առաջ ծառայել են ուրիշ օրգանական հիւստւածքներ կազմելով...: Մենք ամենքս յարութիւն առած մեռելաներ ենք, շինուած մեր նախնիքների փո-

շուց: Եթէ մինչև այժմ ապրած բոլոր մարդիկ յարութիւն առնէին, հողի ամեն մի քառակուսի ոտքի վրա հինգ հոգի կ'ընկնէր և նրանք պէտք է նստէին միմեանց ուսերի վրա՝ տեղ չըլինելու պատճառով, բայց նրանք բոլորը չեն կարող միատեղ յարութիւն առնել, որովհետև մասնիկները միայն յաջորդաբար են կազմում զանազան մարմիններ: Նոյնպէս և մեր այժմեան օրգանները բաժանուելով մի օր իրանց վերջին մասնիկներից, կը մարմնանան մեր յաջորդների մէջ:

«Օդի ամեն մի մասնիկը յաւիտեան անցնում է մի կեանքից միւսը և վազում է մի մահից միւս մահ: Լինելով փոփոխաբար քամի, կոհակ, հող, կենդանի կամ ծաղիկ, նա յաջորդաբար մարմնանում է անհամար գործարանաւորութիւնների գոյացութեան մէջ: Օդը, լինելով մի անըսպառելի աղբիւր, որով շունչ է առնում ամենն, ինչ որ կենդանի է, ներկայացնում է միևնոյն ժամանակ և մի անհուն շտեմարան, ուր թափվում է ամեն մի մեռնողի վերջին շունչը. նրա ծոցում բոյսեր, կենդանիներ և զանազան գործա-

լանաւորութիւններ ծնւում են և ապա՝ ոչնչանում: Կեանքը և մահը հաւասարապէս գտնւում են մեր շնչած օդի մէջ և մշտապէս յաջորդում են միմեանց՝ գազային մասնիկների փոխանակութեամբ. թթուածնի մասնիկը, որ դուրս է գալիս այդ ալեւոր կաղնի ծառից, վազում է օրօրոցի երեսայի թոքերի մէջ. մեռնողի վերջին հառաչանքները հիւսում են ծաղկի փառաւոր պսակը կամ տարածւում են իւրեւ մի ժպիտ կանաչ մարգագետնի մէջ. և այդպէս, մասնաւոր մահերի անսահման շղթայի միջոցով մթնոլորտը անդադար կերակրում է աշխարհիս երեսին սփռւած ընդհանուր կեանքը:

«Եթէ դուք դարձեալ որեւէ առարկութիւն կանէք ինձ, ես աւելի հեռու կը գնամ և կաւելացնեմ, որ նոյն իսկ մեր զգեստները բաղկացած են մեր մարմնի նման այնպիսի նիւթերից, որոնք սկզբում գազային են եղել: Ահա ձեզ մի թել. քաշեցէք այդ թելը. ինչքան ամուր է: Բայց որքան աչդալիսի ամուր հիւսուածներ՝ մետաքսի, կտաւի, բամբակի, բրդի կազմել է արդիւնաբերութիւնը այդպիսի թելե-

րից: Եւ սակայն ինչ է ներկայացնում այդ կանեփի, վուշի կամ բամբակի թելը: Դրանք օդի գնդակներ են, շարուած միմեանց կողքին և կապուած միմեանց հետ մասնիկային ձգողութեան զօրութեամբ: Ի՞նչ բան է այդ մետաքսի կամ բրդի թելը. դարձեալ մասնիկների մի ուրիշ շարայարութիւն: Համաձայնեցէք, որ նոյն իսկ մեր զգեստները ուրիշ բան չեն, եթէ ոչ գազ. այնպիսի նիւթեր, որոնք փոխ են առնուած մթնոլորտից, այն է՝ թրթուածին, բորակածին, ածխածին, ջրի շոգի կային:

—Ես հաճութեամբ տեսնում եմ, ասաց Փալէրօն, որ գեղարուեստը այնքան էլ հեռու չէ գիտութիւնից, ինչպէս ենթադրում են մի քանի շրջաններում: Եթէ ձեր թէօրիան ձեզ համար զուտ գիտնական է, ինձ համար նա գեղարուեստ է և ամենավեհ գեղարուեստ. բացի դրանից, միթէ բնութեան մէջ բոլոր այդ բաժանումները գոյութիւն ունեն: Ո՛չ, բնութեան մէջ չկայ ոչ գեղարուեստ, ոչ գիտութիւն, ոչ նկարչութիւն, ոչ քանդակագործութիւն, ոչ երաժշտութիւն, ոչ ֆիզիքա, ոչ

քիմիա, ոչ աստղագիտութիւն, ոչ մեքենագիտութիւն, ոչ մթնոլորտաբանութիւն: Տեսէ՞ք այս երկիրը, այս ծովը, Ալպեան սարերի այդ լանջերը, այդ վարդագոյն երեկոյեան ամպերը—այդ բոլորը մի է և անբաժան: Եւ թէ՛ն մասնիկային ֆիզիքան ապացուցանում է մեզ, որ մարմին ասած բանը գոյութիւն չունի մեր աշխարհում, որ կապարի և պլատինայի նոյն իսկ մի ձողի մէջ հիւլէները չեն շփվում միմեանց, բայց դրա փոխարէն մեզ մնում են հոգիները, և վերջ ի վերջոյ ոչ ոք ոչինչ չէ կորցնում:

—Այո, այդ մի փաստ է; որի դէմ անգործ է որեւէ նախապաշարումն. կենդանի էակները ուրիշ բան չեն, եթէ ոչ օդազգեստ հոգիներ... Ես ափսոսում եմ այդ աշխարհները՝ որոնք զուրկ են մթնոլորտից:»

Այդ երկու զրօսանքից յետոյ, վերադառնալով ծովի ափով, մենք արդէն մօտեցել էինք մեր բնակարանին, երբ հանդիպեցինք ճանապարհին շքեղ հագնուած երկու տիկնանց: Իշխանուհի Վ.-ն էր իր աղջկայ հետ, որոնց մենք տեսել էինք անցեալ հինգշաբթի պարահանդէսում,

քաղաքապետի տանը: Մենք ողջունեցինք նրանց և անհետացանք ձիթենիների տակ: Եւայի անգիտակ աղջիկը, գեղանի օրիորդը նայեց մեր կողմը և ինձ թուաց, որ նրա դէմքը յանկարծակի շառագունեց. դա անտարակոյս մայր մտնող արեգակի ճառագայթների ցոլացումն էր...

—Գուցէ դուք կարծում էք, ասաց գեղարուեստագէտը, յետ նայելով նոյնպէս, որ կարողացանք նուաղացնել այն հիացումը, որ տածում եմ գեղեցկութեան համար: Ամենևին ոչ. ես այժմ գեղեցկութիւնը աւելի շատ եմ գնահատում. ես ողջունում եմ նրա մէջ ներդաշնակութիւնը և խոստովանում եմ ձեզ, որ մարդկային մարմինը, նկատուած իբրեւ մի ղեկավարող հոգու զգայական արտայայտութիւն, դրանով ձեռք է բերում աւելի մեծ գեղեցկութիւն, ազնուութիւն և փայլ:

VI

Ad veritatem per scientiam

(ԳԻՏՈՒԹԵԱՄԲ Ի ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ)

Ես աշխատում էի իմ մատենադարանում և ուսումնասիրում էի կեանքի պայմանները այն աշխարհների մակերևույթի վրա, որոնք կառավարվում և լուսաւորվում են տարբեր մեծութեան և գոյների բազմաթիւ արեգակներով, երբ աչքերս բարձրացնելով դէպի ծխնելոյղը, ես հիացայ՝ տեսնելով իմ սիրելի Ուրանիայի դէմքի արտայայտութիւնը կամ աւելի լաւն՝ ասեմ, կենդանութիւնը: Այդ այն կենդանի և

շնորհալի արտայայտութիւնն էր, որը առաջ — ոհ, Երկիրը ինչքան արագ է շրջում և ինչպէս մի քառորդ դարը քիչ է տևում — որը առաջ — և ինձ թւում է, որ այդ երէկ էր — որը առաջ այնպէս արագ թռած պատանեկական օրերում, մոլորեցրել էր միտքս և բորբոքել սիրտս: Ես չըկարողացայ մի անգամ էլ չնայել նրան և չյառել աչքերս նրա վրա: Ճշմարիտ, նա միշտ գեղեցիկ էր և իմ տպաւորութիւններս չէին փոխուել: Նա ինձ քաշում է, ինչպէս լոյսը քաշում է միջատին: Ես վեր կացայ սեղանիցս և մօտեցայ նրան՝ դիտելու համար այն եղակի ներգործութիւնը, որ ցերեկուայ լոյսը անում էր նրա փոփոխուող դէմքի վրա և մոռանալով աշխատութիւնս, ես կանգնած մնացի նրա առաջ:

Նրա նայուածքը կարծես թափառում էր հեռու, բայց այնուամենայնիւ, նա սեւեռուած էր և ոգևորուած: Ինչի՞ վրա. ում վրա: Ես այն ներքին տպաւորութիւնը ունեցայ, որ նա իրօք տեսնում էր և հետեւելով այդ անշարժ, ուղղահայեաց, հանդիսաւոր թէև ոչ դաժան նայուածքին, աչքերս դարձրի ուղղակի Սպէրօի պատ-

կերի վրա, որ կախուած էր երկու գրա-
դարանների մէջտեղ:

Եւ ճշմարիտ, Ուրանիան նրան նայում
էր շեշտակի:

Յանկարծ, պատկերը կտրուեց պատից
և ընկաւ, փշրելով իր շրջանակը:

Ես վրա պրծայ: Պատկերը ընկած էր
գորգի վրա և Սպերօի քաղցր դէմքը նա-
յում էր ինձ: Վերցնելով նրան, ես գտայ
մի մեծ դեղնած թուղթ, որ բռնում էր
պատկերի ամբողջ տարածութիւնը և գըր-
ուած էր երկու կողմից ևս Սպերօի ձե-
ռագրով: Ի՞նչպէս ես առաջ չէի նկատել
այդ թուղթը: Ճշմարիտ է, նա կարող էր
աննկատելի մնալ, գրուած լինելով շրջա-
նակի ետեւը, նրան ծածկող թղթի տակ:
Այն օրից, երբ ես բերի այդ պատկերը
Քրիստիանեայից, ոչ մի անգամ էլ մտքիս
չեկաւ մանրամասն քննել նրա շրջանակը:
Բայց սլ էր յղացել այդ տարօրինակ միտ-
քը այդ թերթը այդպեղ զետեղելու հա-
մար: Ամենամեծ զարմանքով ես ճանաչե-
ցի իմ բարեկամի ձեռագիրը և աչքից անց-
րի այդ երկու էջը: Ըստ ամենայն հաւա-
նութեան, այդ էջերը գրուած պէտք է լի-

նէին երիտասարդ մտածողի երկրային
կեանքի վերջին օրը, այն օրը, նրբ նա
կատարում էր իր վերելքը դէպի հիւսի-
սափայլը և, անտարակոյս, Իկէայի հայ-
րը կարծել էր, որ այդ վերջին մտած-
մունքները աւելի ապահով կերպով կը
պահպանուեն, եթէ նա թերթը շրջանա-
կի մէջ դնի Սպերօի պատկերի հետ: Նա
մոռացել էր ինձ յայտնել այդ մասին, երբ
եւ ուխտի գնացած լինելով այդ երկու
սիրահարների գերեզմանին, նա նուիրեց
ինձ իբրեւ յիշատակ այդ պատկերը:

Ինչ և իցէ, զգուշութեամբ դնելով
պատկերը սեղանիս վրա, ես խոր կերպով
ղգածուեցի, ճանաչելով այդ սիրելի դէմ-
քի ամեն մի մանրամասն գիծը. այն, նրա
քաղցր և խորունկ աչքերն էին, միշտ խոր-
հրդաւոր. նրա լայն ճակատն էր այնքան
խաղաղ ըստ երեոյթին. նրա՝ նուրբ և կի-
սաղգայական շրթունքներն էին. նրա դէմ-
քի, պարանոցի և ձեռքերի պայծառ գու-
նաւորութիւնն էր. նրա նայուածքը հե-
տեւում էր ինձ, որ կողմից որ դարձնում
էի պատկերը. այդ նայուածքը ուղղուած
էր նոյնպէս դէպի Ուրանիան և ուղղուած

էր միևնոյն ժամանակ դէպի ամեն կողմ: Ինչ տարօրինակ միտք է յղացել նկարիչը: Այդ միջոցին, ես մտածում էի, որ դիցուհու նայուածքն ևս ցաւակցաբար շոյում էր իր երիտասարդ երկրպագուի դէմքը: Ինչպէս միջնադր միջնացնում է պայծառ օրը, նոյնպէս մի տեսակ աստուածային թախիժ տարածուած էր դիցուհու գեղեցիկ դէմքի վրա:

Բայց ես մտածեցի խորհրդաւոր թերթի մասին: Նա գրուած էր որոշ, մաքուր, առանց որևէ ջնջուածների: Ես արտագրում եմ նրան այստեղ, ինչպէս գտայ, չրփոխելով ոչ մի բառ, ոչ մի ստորակէտ, որովհետև նա ինձ թվում է լինել այս աշխատութեան առարկայ դարձած զրոյցների բոլորովին բնական եզրակացութիւնը:

Ահա նրա պատճէնը բառացի:

Սա գիտնական կտակ է մի մտքի, որ նոյն իսկ Երկրի վրայ իր բոլոր ջանքերը գործադրել է ազատուած մնալու համար նիւթի ծանրութիւնից եւ յոյս ունի ազատուելու նրանից:

Ես կը կամենայի թողնել ափօրիզմների ծեւով, իմ հետազօտութիւնների արդիւնքը: Ինձ թվում է, որ միայն բնութեան ուսումնասիրու-

թեամբ, այսինքն՝ գիտութեան միջոցով կարելի է հասնել ժամարտութեան: Ահա այն մակաբերութիւնները, որոնք, ինչպէս ինձ թվում է, հիմնուած են նկատողութիւնների վրա:

I

Տեսանելի, կշռելի, շօշափելի և յարաշարժ տիեզերքը բաղկացած է աներևոյթ, անշօշափելի, անկշռելի և անզործ (իններտային) հիւլէներէից:

II

Մարմիններ բաղկացնելու և էակներ կազմակերպելու համար պէտք է, որ այդ հիւլէները հեկավարուեն զօրութիւններով:

III

Զօրութիւնը աննիւթական մի էութիւն է:

IV

Տեսանելութիւնը, շօշափելիութիւնը, հաստատութիւնը, ամրութիւնը, կշիռը յարաբերական յատկութիւններ են և ոչ բացարձակ իրականութիւններ:

V

Մարմինները բաղկացնող հիւլէները մարդկային զգայարանների համար անսահման փոքր են:

Այն փորձերը, որոնք կատարուել են ոսկէ թիթեղներ շինելու վրա, ցոյց են տալիս, որ

տասն հազար այդպիսի թիթեղների շերտը մի միլլիմետրի հաստութիւն ունի: Այժմ կարողանում են բաժանել մի միլլիմետրը մի ապակեայ թերթի (պլաստիկայ) վրա 1000 հաւասար մասերի և կան այնպիսի փոքր ինֆուզորներ, որ նրանց ամբողջ մարմինը դրուելով այդպիսի երկու բաժանումների մէջ, չէ կաշոււմ նրանց. այդ էակների մարմինները, օրգանները բաղկացած է բջիջներից, սրանք էլ բաղկացած են մասնիկներից, իսկ սրանք էլ հիւլէներից: Քսան խորանարդ սանդիմէտը իւր թափուած լճի վրա ծածկուած է 4000 քառակուսի մէտր տարածութիւն, այնպէս, որ այդպէս թափուած իւղի խաւը միայն մի 200000-րդ միլլիմետր հաստութիւն ունի:—Լոյսի սպեկտրալ վերլուծութիւնը ցոյց է տալիս բոցի մէջ սօդիումի մի միլլիօներորդ միլլիգրամմի ներկայութիւնը:—Լոյսի ալիքները շորսից մինչև ութ 10000-րդ միլլիմետրի երկարութիւն ունեն կանաչից մինչև կարմիրը: Պէտք է 2300 լոյսի ալիքներ, մի միլլիմետր տեղ ծածկելու համար: Մի վայրկեանի ընթացքում, եթերը, որ հաղորդում է լոյսը, կտատարում է 700000 միլլիարդ ճօճումներ, որոնց ամեն միւնը մաթեմատիկապէս որոշուած է:—Հոտառութիւնը զգալուն է դէպի $\frac{1}{84,000,000}$ միլլիգրամմը, չնչած օդի մէջ:—Հիւլէները տրամագիծը պէտք է միլլիմետրի մի միլլիօներորդ մասից քիչ լինի:

VI

Անշոշափելի, անտեսանելի հիւլէն, որ հազիւ մատչելի է հարեանցի դատողութիւնների սովորած մեր մօքին, ներկայացնում է միակ իրական նիւթը և ինչ որ մենք նիւթ ենք կոչում, միայն ազդեցութիւն է, որ զործում են մեր զգայարանների վրա հիւլէների շարժումները, այսինքն՝ նա զգայութիւնների անընդհատ հնարաւորութիւնն է:

Դրանից հետեւում է, որ նիւթը, ինչպէս էնէրգիայի արտայայտութիւն, ուրիշ բան չէ, եթէ ոչ շարժման մի տեսակը: Եթէ այդ շարժումը կանգ առնի, եթէ զօրութիւնը ոչնչանայ, եթէ մարմինների ջերմութեան աստիճանը վերածուի բացարձակ զրօի, այն ժամանակ նիւթը, ինչպէս մենք նրան ճանաչում ենք, կը դադարի գոյութիւն ունենալուց:

VII

Տեսանելի տիեզերքը բաղկացած է անտեսանելի մարմիններից: Այն, ինչ որ տեսնում ենք, կազմուած է այնպիսի իրերից, որոնք չեն տեսնվում:

Միայն մի տեսակ նախնական հիւլէներ կան. զանազան մարմինների բաղկացուցիչ մասնիկները—երկաթ, ոսկի, թթուածին, ջրածին և

այլն, տարբերվում են միայն իրանց բաղկացնող հիւլէնների թուով, համախմբութեամբ և շարժումով:

VIII

Ինչ որ մենք կոչում ենք նիւթ, անհետաւում է իսկոյն, երբ գիտնական վերլուծութիւնը կարծում է, թէ գրաւել է նրան, բայց մենք տեսնում ենք ամբողջ տիեզերքի յենարանը և բոլոր ձևերի էութիւնը զօրութեան մէջ, դէնամիական տարրի մէջ: Իմ կամքի ջանքով, ես կարող եմ շեղել լուսինը իր ընթացքից:

Ամեն մի հիւլէի շարժումները մեր Երկրի վրա, ներկայացնում են եթերական այն բոլոր ալիքների մատէմատիկական հաւասարող օրը, որոնք հասնում են նրան ժամանակի ընթացքում, անսահման տարածութեան անդունդներից:

IX

Մարդկային էակը իբրև հիմնական սկզբունք, ունի հոգի: Մարմինը անցողական է և առերեւոյթային:

X

Հիւլէները անեղծանելի են:

Այն զօրութիւնը, որ շարժում է հիւլէները և կառավարում է տիեզերքը, անեղծանելի է: Մարդկային հոգին անեղծանելի է:

XI

Հոգու անհատականութիւնը նորագոյն երեւոյթ է Երկրի պատմութեան մէջ:—Մեր մոլորակը առաջ եղել է մշուշային, ապա՝ արեգակ, ապա՝ քառու. այն ժամանակ ոչ մի հողեղէն էակ զոյութիւն չունէր: Կիանքը սկսուել է ամենանախնական գործարանաւորութիւններով. նա առաջադիմել է դարէ դար և հասել է իր այժմեան վիճակին, որ վերջնական չէ: Իմացականութիւնը, բանականութիւնը, խղճմտանքը, այն բոլորը, ինչ որ մենք անուանում ենք հոգու կարողութիւններ, նորագոյն ժամանակի ծնունդ են: Միտքը աստիճանաբար ազատուել է նիւթից, ինչպէս—եթէ միայն համեմատութիւնը կոպիտ չէ—գազը ազատվում է քարածուխից, հոտը՝ ծաղկից, բոցը՝ օջախից:

XII

Պսիխիական զօրութիւնը սկսեց յայտնուել երկրային մարդկութեան բարձրագոյն շրջաններում միայն երեսուն կամ քառասուն դարերից ի վեր. նրա գործողութիւնը դեռ իր արշաւոյսի մէջն է:

Իրանց անհատականութիւնը ճանաչող կամ դեռ չճանաչող հոգիները, իրանց բնութեան համաձայն, գտնվում են տարածութեան և ժամա-

նակի պայմաններից դուրս: Խէ մարմնի կենդանութեամբ և թէ նրա մահից յետոյ, նրանք զոնքէ տեղ չեն բռնում. մի քանիսները նրանցից գուցէ զաղթում են ուրիշ աշխարհներ:

Միայն այն հոգիները գիտակցութիւն ունեն իրանց անգըամարմնային և անմահ գոյութեան մասին, որոնք ազատուել են նիւթական կապանքներից:

XIII

Երկիրը միայն յաւիտենական հայրենիքի մի գաւառն է. նա երկնքի մի մասն է. երկինքը անվերջ է. բոլոր աշխարհները երկնքի մասն են:

Մեր մոլորակն ինքը մի եկեղեցիին նաւ է, որ փոխադրում է երկնքի միջով հոգիները մի ամբողջ ժողովուրդ, օրը 643000 մղոն արագութեամբ, աստղի շուրջը և մօտ 185 միլիոն մղոն արագութեամբ տարին՝ դէպի չերկուկէսի հաստեղութիւնը:

XIV

Մոլորակային և աստեղային սիստեմները, որոնցից կազմուած է տիեզերքը, ներկայացնում են կազմակերպութեան և զարգացման զանազան աստիճաններ: Նրանց բազմազանութիւնն անսահման է. էակները ամեն տեղ յարարեցութեան մէջ են գտնվում աշխարհների հետ:

XV

Բոլոր աշխարհներն այժմ բնակուած չեն: Ներկայ դարերջնանը աւելի մեծ կարեւորութիւն չունի, քան նախնիքից և յաջորդ դարերջնաները: Եյդ աշխարհներից ոմանք բնակուած են եղել անցեալում միլիարդաւոր դարեր ուրանից առաջ, ոմանք բնակուած կը լինեն ապագայում, միլիարդաւոր դարեր ուրանից յետոյ: Մի օր ոչինչ չի մնայ երկրից և նրա աւերակները նոյն իսկ ոչնչացած կը լինեն:

Բայց տիեզերքը երբէք ոչնչութիւն չի դառնայ: Եթէ յիշեր և էակները չվերածնուէին իրանց աճիւններից, երբէք մի հաա աստղ չէր լինի այժմ երկնքում, որովհետեւ ստեղծագործութիւնը զոյգութիւն ունենալով յաւիտենականութիւնից, բոլոր աստղերը պէտք է հանգած լինէին:

Երկրային մարդկութեան ամբողջ տեսողականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ընդէյն յաւիտենականութեան մէջ:

XVI

Երկրային կեանքը միւս կեանքերի տիպարը չէ: Մի անսահման բազմազանութիւն թագաւորում է տիեզերքի մէջ: Կան այնպիսի բնակարաններ, ուր ծանրութեան լարումը տհազին է, ուր լոյսը անծանօթ է, ուր շօշափելիքը, հոտոտելիքը

և տեսանելիքը միակ զգայարաններն են, որ տեսողական ջիզը կազմուած չլինելով, բոլոր էակները կոյր են, կան այնպիսի աշխարհներ, ուր ծանրութիւնը հազիւ զգալի է, ուր էակները այնքան թեթեւ և այնքան բարակ են, ուր անտեսանելի են հրկրային աշխարհի համար, ուր ամենաքնքոյշ և ամենանուրբ զգայարաններ ցոյց են տալիս առանձնաշնորհալ մտքերին այնպիսի զգացողութիւններ, որոնք բնութիւնից մերժուած են երկրային մարդկութեան:

XVII

Այն տարածութիւնը, որ կայ անհուն տիեզերքի մէջ սփռուած աշխարհների մէջ տեղ, չէ առանձնացնում նրանց մէկ մէկուց: Նրանք ամենքը մշտական հաղորդակցութեան մէջ են միմեանց հետ ձգողութեան միջոցով, որ ներդրածում է վայրկենապէս, բոլոր տարածութիւնների միջոցով և որը մի անլուծելի կապ է հաստատում բոլոր աշխարհների մէջ:

XVIII

Տիեզերքը կազմում է մի հստ միութիւն:

XIX

Ֆիզիքական աշխարհների սիստեմը բարոյական կամ հոգեոր աշխարհի սիստեմի բնական

բանն և նիւթական հիմքն է: Ուրեմն, աստեղագիտութիւնը պէտք է լինի բոլոր փիլիսոփայական և կրօնական հաւատի հիմքը:

Ամեն մի մտածող էակ կրում է իր մէջ անսահմանութեան անորոշ զգացումն: Այդ այն պատճառով, որ մենք ներկայանում ենք իբրեւ այնպիսի մեքենայի միկրօսկոպիական անիւներ:

XX

Մարդ ինքն է ստեղծում իւր ճակատագիրը: Նա բարձրանում է կամ ընկնում, նայելով իր զործերին: Նիւթական շահերին յարած էակները, ազահները, փառասէրները, կեղծաւորները, ստախօսները, Տարտիֆի որդիներն ապրում են իբրեւ անմաքուրներ ստորին շրջաններում:

Բայց մի սկզբնածին և բացարձակ օրէնք կառավարում է ստեղծագործութիւնը — Առաջիմութեան օրէնքը: Ամեն բան բարձրանում է անսահմանութեան մէջ: Սխալներն՝ անկումներ են:

XXI

Հոգիների վեր համբարձման ժամանակ, բարոյական յատկութիւնները ոչ նուազ նշանակութիւն ունեն, քան մատուր որակութիւնները: Բարութիւնը, անձնասիրութիւնը, ինքնազոհութիւնը մաքրում են հոգին և բարձրացնում են նրան նոյնչափ, որչափ գիտութիւնն և ուսումը:

XXI.

Տիեզերական ստեղծագործութիւնը մի անհուն ներդաշնակութիւն է, որի մի ամենատանշան հատրն է կազմում երկիրը, բաւական կոշտ և անարժէք:

XXIII

Բնութիւնը յաւիտենական ապագայ է: Նրա հիմնական օրէնքը Առաջդիմութիւնն է: Կատարելագործութիւնը պէտք է անդի ունենայ յաւիտեան:

XXIV

Հոգու յաւիտենական զոյութիւնը բաւական չէր լինի ամբողջ անսահմանութիւնը այցելելու և ամեն բան իմանալու համար:

XXV

Հոգու ճակատադիրն է հետզհետէ ազատուել նիւթական աշխարհից և պատկանել վերջնականապէս գերագոյն Ուրանայի կեանքին, որ տեղից նա կը տիրապետի նիւթին և այլևս տանջանք չի կրի:

Էակների վերջնական նպատակն է անընդհատ մօտենալ բացարձակ կատարելութեան և Աստուածային երջանկութեան:

Այդպէս էր Սպերօի գիտնական և փիլիսոփայական կտակը: Արդեօք չէ թվում, որ նրան թեկադրել է ինքն Ուրանիան:

Հին դիւցարանութեան ինն Մուսաները քոյրեր էին: Նորագոյն գիտնական հասկացողութիւնները ձգտում են նոյնպէս միութեան: Աստղագիտութիւնը կամ աշխարհի ճանաչողութիւնը և պոիլոլոգիան կամ էակի ճանաչողութիւնը, միանում են այսօր, հաստատելու համար այն միակ հիմքը, որի վրա կարող է կառուցանուել վերջնական փիլիսոփայութիւնը:

P. S.—Նախընթաց դէպքերը, նրանց կցուած ուսումնասիրութիւններն և խորհրդածութիւնները միացրուած են այստեղ իբրեւ մի հոգի, որի նպատակն է մի քանի գլխաւոր գծեր բերել լուծելու համար այն ամենամեծ առեղծուածները, որոնցով հետաքրքրվում է մարդկային միտքը: Այդ նպատակով և ներկայ աշխատութիւնը յանձնարարում ենք այն անձանց ուշադրութեան, որոնք գոնէ երբեմն կանգ են առնում, ինչպէս ասում է

Գանտէն, «Կեանքի ճանապարհի կիսում» և հարցնում են իրանց, թէ ուր են, ինչն են, որոնք որոնում են, մատածում և երազում:

Ի յիշատակ այս գրքի իզելա անունը տրուել է 286-րդ փոքրիկ մոլորակին, որ գտնուեց չրատի և Լուսնի մէջ տեղ, 1889 թ. Օգոստոսի 3-ին Վիէնայի գիտարանի աստղագէտ Պալիսայի ձեռքով:—Ուրանիայի, աստղագիտութեան Մուսայի անունը արդէն դրուել էր, թէև շատ ուշ, 1854-ին, այն փոքրիկ մոլորակներին 30-րդին, որոնց առաջինը գտնուեց 1801 թ. յունվարի 1-ին:



ԲԱՎԱՆ ԳԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿԵԳԻ ՄՈՒՍԱՆ

- I Պատանեկութեան երազ. 4—12
- II Երկնքի Մուսան: Ծանապարհորդութիւն տիեզերքի եւ աշխարհների միջով: Անծանօթ մարդկութիւնները 13—31
- III Երկնքի անսահման քաղմակերպութիւնը: Մետամորֆոզները 32—43
- IV Անսահմանութիւնը եւ Յաւիտենականութիւնը: Ժամանակը: Անջրպետը եւ Կեանքը: Երկնային յորհրդոնները. 44—58
- V Անցեալի լոյսը: Մուսայի յայտնութիւնները 59—71

ՄԱՍՆ ԵՐԿԵՐԳԻ

ԳԵՈՐԳ ՍՊԵՐՕ

- I Կեանքը: Հետազոտութիւնը: Ուսումնասիրութիւնը. 75—92
- II Տեսիլը: Ծանապարհորդութիւնը Նորվեգիայում: Անտէլեան: Մի հանդիպում երկնքում. 93—109
- III To be or not to be. Ինչ է մարդկային էակը. բնութիւնը, տիեզերքը. 110—136

- IV *Amor*. Իկէա: Զգողական զօրութիւնը 137—160
- V Հիւսիսափայլը: Աէրօստիկական վերհամբարձումը: Օդի մէջ: Աղէտ 161—171
- VI Յաւիտենական առաջադիմութիւնը: Մագնէտիական սէանս 172—178

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ե Ր Վ Ի Ն Ք Ը Ե Ի Ե Ր Վ Ի Ր Ը

- I Տելեպատիա. Երեկուայ անծանօթը. «Գիտնականը». Երեւոյթները. Անբացատրուած փենսմէններ. Պսիխիական կարողութիւններ. Հոգին եւ ուղեղը 181—238
- II *Iter extaticum coeleste* 239—262
- III Հրատ մոլորակը. Սպէրօի երեւալը. Պսիխիական հաղորդակցութիւնները. Հրատի բնակիչները 263—301
- IV Տիեզերքի անշարժ կէտը. Բնութիւնը մարմնացած ղինամիզմէ 302—334
- V Օղազգեստ հոգին 335—359
- VI *Ad Veritatem per Icientiam*. Սպէրօի գիտնական կտակը. 360—376

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

210

5 JUN 2013

1
6

062000

ՀՀ Ազգային գրադարան



NL0578690

